ՎԱՐԴԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՔԱՂԲԱՆՏԱՐԿՅԱԼԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Այստեղ դրվագներ են իմ կյանքի ընդամենը ութ տարուց: Տարիներ, որ հանուն Հայաստանի անկախության անցկացրել եմ խորհրդային կալանավայրերում: Թե ինչքան է եղել իմ ներդրումն անկախության կայացման գործում, ես չէ, որ պետք է ասեմ ու գնահատեմ: Թե ինչքան են եղել իմ դերն ու նշանակությունը այդ գործում, կրկին իմ գնահատելիքը չէ: Ես մենակ չեմ եղել: Մենք շատ էինք: Խոսքս միայն հայերի ու հայաստանցիների մասին չէ: Խորհրդային միություն կոչվող պետության ու համակարգի դեմ բոլոր պայքարողները նպաստել են Հայաստանի անկախության կայացմանը: Եւ ազատ աշխարհն էր իր արժեքները կոմունիստական ագրեսիայից պաշտպանելու նպատակով պայքարում դրանց դեմ, եւ միության ներսում ապրող այլախոհներն էին պայքարում, եւ եթե փորփրենք, այլ ուժեր էլ կգտնենք: Բոլոր ուժերի համատեղ պայքարի արդյունքն էր աշխարհի անվտանգությանն սպառնացող, մարդատյաց գաղափարախոսությամբ առաջնորդվող այդ երկրի տապալումը, ինչի արդյունքում խորհրդային հանրապետությունները, Վարշավյան պայմանագրի երկրներն անկախություն ձեռք բերեցին: Ուրախ ու հպարտ եմ, որ այդ պայքարի մասնակիցն եմ եղել:

Պատմական զարգացումները եւ արդեն գրանցված փաստը վկայում են, որ մեր այդ պայքարը հաջողությամբ է պսակվել: Կարելի է միայն ուրախանալ: Ես հաջողության եմ հասել: Այդ հաջողությունից հետո ողջ եռանդս տրամադրել եմ արդեն անկախ հռչակված Հայաստանում ժողովրդավարության կայացման գործին ու … պարտվել եմ: Հայաստանն այդպես էլ չդարձավ իմ երազած ժողովրդավարական երկիրը: Այս ճակատում հպարտանալու ոչինչ չունեմ: Անկախության հռչակումից հետո գրանցած բոլոր ձեռքբերումները փոշիացվեցին, ու մենք այս բնագավառում տարեցտարի միայն նահանջ ենք արձանագրում:

Եթե ցանկանում ես, որ քեզ ճանաչեն ու գնահատեն, ապա, առաջին հերթին, պետք է ներկայացնես այն միջավայրը, որտեղ ձեւավորվել ես, մարդկանց՝ ում հետ առնչվել, շփվել ու մտերմացել ես: Եթե կարողանաս ընկերներիդ ու մտերիմներիդ ճիշտ ներկայացնելով՝ օգնել մարդկանց ճանաչել նրանց, ապա, ճանաչելով ու գնահատելով ընկերներիդ՝ նրանք կճանաչեն ու կգնահատեն քեզ: Իսկ եթե, ընկերներիդ մոռանալով, խոսես միայն քո մասին կամ՝ որ շատ ավելի վատ է, ընկերներիդ ու աջակիցներիդ արժեզրկես, տարված այդ ֆոնին արժեքդ էլ ավելի բարձրացնելու ու սեփական ես-դ էլ ավելի ընդգծելու մոլուցքով, ապա, լավագույն դեպքում, կընկալվես որպես ուշադրության ոչ արժանի սովորական մի ինքնասիրահարված: Մարդիկ կմերժեն ու կհեգնեն քեզ: Ու ճիշտ էլ կանեն: Ինքնասիրահարվածի ինքնամեծարման որոճանքը միշտ էլ վանող է ու ձանձրալի:

Ես մտադիր եմ պատմել ընկերներիս ու ծանոթներիս մասին: Մարդկանց մասին, որոնց միջավայրում կայացել եմ: Առանց իմ ճանապարհին հանդիպած այս մարդկանց՝ ես ես չէի լինի: Նրանցից ոմանք խիստ էական ազդեցություն են թողել ինձ վրա, նպաստել են, որ լինեմ այնպիսին, ինչպիսին կամ, ոմանց բացասական կերպը տեսնելով հասկացել եմ, թե ինչպիսին լինել չի կարելի: Գոհ եմ ճակատագրից, որ ինձ այսքան շատ լավ, արժանավոր ու հետաքրքիր մարդկանց է հանդիպեցրել: Վատերն էլ են շատ եղել: Նրանք էլ իրենց տեղն ունեն: Ճակատագրից բողոքներ չունեմ:

Որտեղի՞ց եմ գալիս

1960-ական թվականների սկզբին Հայաստանում գործել է ընդհատակյա «Հայ երիտասարդների միություն» անունը կրող մի մեծ ու բազմամարդ կազմակերպություն։ Դրան անդամակցել են հասարակության տարբեր շերտեր ու տարիքային տարբեր խմբեր ներկայացնող մարդիկ՝ ե՛ւ ուսանողներ, ե՛ւ գիտնականներ ու դասախոսներ, ե՛ւ հոգեւորականներ։ Կազմակերպությունն ուներ խորհուրդ, որն, ի թիվս այլ գործերի, պետք է մշակեր կազմակերպության ծրագիրն ու կանոնադրությունը։ 1964 թ. կազմակերպության խորհրդի յոթ անդամներ հակախորհրդային ագիտացիա եւ պրոպագանդա անելու մեղադրանքով դատապարտվեցին։ Նրանց կալանավորումը, ապա՝ դատավարությունն այդ օրերին լայն արձագանք գտավ եւ ամենաքննարկվող թեման էր։ Նրանք օրվա հերոսներ էին ու հասարակության սիրելին։ Մարդիկ նրանց կնքեցին «Յոթ հայրենասերներ» անվամբ, ու նրանք՝ անկախ հետագայում իրենց ապրած կյանքի ու տարաբնույթ դրսեւորումների, հասարակության հիշողության մեջ մնացին որպես «Յոթ հայրենասերներ»։

1965 թ. Երեւանում հզոր ու մարդաշատ ցույց տեղի ունեցավ, որն ուղղակիորեն կարելի է համարել «Հայ երիտասարդների միության» ծավալած եռամյա գործունեության արդյունք։ Այդ ցույցը, ամենամեծ ցանկության դեպքում անգամ, հակախորհրդային անվանել հնարավոր չէ։ Սա իր բնույթով ազգային էր, ազգային զարթոնքի արդյունք էր եւ մեկ պահանջ ուներ՝ 1915 թ.Եղեռնի զոհերի հիշատակը հարգելու իրավունք ու հուշարձան, որտեղ հնարավոր կլինի ամեն տարի ապրիլի 24-ին այցելել։ Բայց, անկախ այն հանգամանքից, որ ցույցն ինքը քաղաքական գունավորում չուներ եւ հակախորհրդային չէր՝ նոր ու խիստ քաղաքական զարգացումների խթան հանդիսացավ։ Ցույցի հաջողությամբ ոգեւորված երիտասարդները, անգամ դպրոցականները, անլեգալ ու կիսալեգալ խմբակներ էին կազմակերպում, միավորվում ու միություններ էին ստեղծում, պատի թերթեր ու թռուցիկներ էին պատրաստում ու տարածում։ Ստալինյան շրջանի սարսափն ապրած ու այդ սարսափի ազդեցությունից դեռ մինչեւ վերջ չձերբազատված մարդիկ տեսան, որ կարելի է դուրս գալ պետության չպլանավորած, իշխանության հավանությունը չստացած ցույցի, հասկացան, որ կարելի է ազգային խնդիրներ բարձրաձայնել եւ ստիպել, որ իշխանությունը նահանջի։ 1966 թ. ակտիվիստների մի խումբ, որոնց մի մասը «Հայ երիտասարդների միության» անդամներ էին, փորձեց կրկնել մեկ տարի առաջ գրանցած հաջողությունը եւ նոր ցույց կազմակերպել։ Այս անգամ խորհրդային իշխանությունները նախապես էին պատրաստվել։ Այսօրվա Հանրապետության հրապարակում, որ Լենինի անունն էր կրում, եւ որտեղ կանգնած էր Լենինի հսկայական արձանը, մեծ միջոցառում կազմակերպել չհաջողվեց։ Կազմակերպիչները հավաքված բազմությանն առաջարկեցին իջնել Կոմիտասի այգի՝ Պանթեոն, հավաքվել Կոմիտասի շիրիմի մոտ։ Նախկինում ապրիլի 24-ին՝ Եղեռնի օրը, մինչեւ Եղեռնի հուշարձան ունենալը, մարդիկ այնտեղ են հավաքվել։ Հավաքվածներին արդեն ոստիկաններ էին սպասում։ Ցույցը ցրեցին, ոմանց՝ ձերբակալեցին, որոնցից 31-ին 10-օրյա կալանքի ենթարկեցին։ Ձերբակալվածների թվում էին նաեւ Հայաստանի Հանրապետության առաջին նախագահ Լեւոն-Տեր Պետրոսյանն իր ընկերներ Լեւոն Անանիկյանի, Ռուբեն Սաքապետոյանի, Տիգրան Գամաղելյանի, Գեղամ Քյուրումյանի, Էդվարդ Բաղդասարյանի, Սամվել Մուրադյանի հետ, ինչպես նաեւ նրանց հետ կապ

չունեցող՝ նրանց ու միմյանց անծանոթ Շահեն Հարությունյանը, Հայկազ Խաչատրյանը եւ Ստեփան Զատիկյանը։ Անցանկալի զարգացումներից խուսափելու եւ իրավիճակը չսրելու նպատակով իշխանությունները 6 օր անց վճռեցին ազատ արձակել ձերբակալվածներին։ Կալանքի տակ մնաց միայն Հայկազ Խաչատրյանը, որը ձերբակալման պահին հակադարձել էր ցույցը ցրող ու ցուցարարներին հայհոյող Լենինյան (այժմ՝ Շենգավիթ) շրջանի ոստիկանապետի հայհոյանքներին։ Խցում իրար հետ ծանոթացած Հայկազ Խաչատրյանը, Շահեն Հարությունյանը եւ Ստեփան Զատիկյանը, Հայկազի ազատ արձակվելուց հետո, որոշում են Ազգային միացյալ կուսակցություն (ԱՄԿ) անվամբ ընդհատակյա կազմակերպություն ստեղծել, որը պետք է պայքարեր Հայաստանի անկախության համար եւ իր բնույթով հակախորհրդային ու հակակոմունիստական էր։ Կազմակերպության ղեկավարը Հայկազ Խաչատրյանն էր։ Նա ծնվել է 1919-ին։ Մասնակցել էր երկրորդ համաշխարհային պատերազմին ու պարգեւատրվել «Կարմիր աստղ», «Խիզախության համար», «Փառքի» 3-րդ աստիճանի շքանշաններով եւ այլ մարտական պարգեւներով։ Հետագայում իր ծավալած ազգային ու այլախոհական գործունեության համար նա դատապարտվեց 1969, ապա՝ 1978 թվականներին։ Վախճանվել է 1989-ի սեպտեմբերի 27-ին։ Ստեփան Զատիկյանը ծնվել է 1946-ին, Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտի 5-րդ կուրսի ուսանող էր։ Հետագայում նա դատապարտվեց 1969-ին, ապա 1977-ի Մոսկվայի մետրոյում կազմակերպված պայթյունը կազմակերպելու չհիմնավորված մեղադրանքով 1979-ի հունվարի 24-ին դատապարտվեց մահապատժի, իսկ 5 օր անց՝ հունվարի 29-ին գնդակահարվեց։ 1937 թ. ծնված Շահեն Հարությունյանը նույնպես ուսանող էր։ Նա 1960-ականների սկզբից այլախոհական շարժման մասնակից էր եղել։ Համագործակցել էր «Հայ երիտասարդների միություն» կազմակերպության հետ։ Յոթ հայրենասերների դատավարության հետ կապված, ի թիվս շատերի, նաեւ նրան են հարցաքննել ու խուզարկել բնակարանը։ Առաջին անգամ դատապարտվեց իր ընկերների հետ 1969-ին, ապա՝ 1977-ին, իսկ 1986-ին ԽՍՀՄ գերագույն խորհրդի նախագահությունը որոշում է կայացնում զրկել նրան ԽՍՀՄ քաղաքացիությունից, ինչից հետո Շահեն Հարությունյանը մշտական բնակություն է հաստատում ԱՄՆ-ում, որտեղ էլ ապրում է այժմ։ Նա առանցքային դերակատարում է ունեցել 1977 թ. ապրիլին Հայաստանի հելսինկյան խմբի կազմավորման եւ դրա աշխատանքների կազմակերպման գործում։

Նրանց սկսած գործը հետագայում աներեւակայելի հաջողություններ գրանցեց։ Կազմակերպությունը դարձավ մարդաշատ, կարողացավ ընդհատակի պայմաններում գոյատեւել մինչեւ 1987-ի սեպտեմբերը, երբ խորհրդային երկիրը տապալման եզրին էր, եւ ընդհատակյա պայքարի կարիքն այլեւս չկար։ Իր գոյության 20 եւ ավելի տարիների ընթացքում ԱՄԿ-ն տվեց Հայաստանի անկախության համար պայքարող բազմաթիվ փայլուն ու անկոտրում քաղկալանավորներ։ Սա առաջին ընդհատակյա քաղաքական կազմակերպությունն էր Խորհրդային Հայաստանում, որը կոմունիստական գաղափարախոսության դեմ պայքար եւ անկախության ծրագիր էր առաջ քաշում։ Նրանից առաջ եղած, նաեւ զուգահեռ գործած կամ հետո ստեղծված կազմակերպություններից որեւէ մեկը նման հստակությամբ ու հետեւողականությամբ անկախության անհրաժեշտության խնդիրը նպատակ չէր դարձրել։ Եղել են, իհարկե, անկախության անհրաժեշտությունը գիտակցող գործիչներ։ Յոթ հայրենասերների գործով կայացած դատավճիռը վկայում է, որ նրանցից ոմանք ունեցել են անկախական հայացքներ։ Խաչիկ Սաֆարյանն անկախ

Հայաստան ստեղծելու անհրաժեշտությունից է խոսել, Գրիգոր Եղյանը 1962-63 թթ. գրած իր հոդվածներից մեկում արծարծել է առանց խորհրդային կարգերի անկախ Հայաստան ունենալու միտքը, Մերուժան Հովհաննիսյանը դատարանի դահլիճում է հայտարարել, որ ինքը Հայաստանը տեսնում է ԽՍՀՄ-ից դուրս ու անկախ հանրապետություն։ Յոթ հայրենասերների դատավարությունից հետո այլախոհական շրջանակներում անկախական ու հակախորհրդային տրամադրություններ ավելի ու ավելի հաճախ են հանդիպում։ Հայաստանում խարխլվել էր խորհրդային կարեւորագույն կարծրատիպերից մեկը՝ կասկածի տակ էր առնվել լենինյան ազգային քաղաքականությունը, որը խորհրդային երկրի հիմնաքարերից մեկն էր։ Բայց 1966 թ. Ազգային միացյալ կուսակցության հրապարակ իջնելը նորույթ ու հեղափոխություն էր։ ԱՄԿ ծրագրում հստակ ընդգծված էր կազմակերպության բնույթը.

-Կուսակցության գաղափարներին խորթ են միլիտարիզմը, թթու ազգայնականությունը, գերիշխանության ձգտումը (դիկտատուրա), ռասայական խտրականությունը եւ միջազգային օրենքների կոպիտ խախտումը:

Ապա՝

-Բոլոր ազգերի հետ ԱՄԿ-ն պետք է ձգտի բարի եւ անկեղծ եղբայրական հարաբերությունների մեջ լինել: Վիճելի բոլոր հարցերը ԱՄԿ-ն պարտավոր է լուծել խաղաղ, փոխադարձ զիջումների եւ հարգանքի միջոցով, առանց թույլ տալու մեկ ուրիշի միջամտությունը, հարգելով դրացի ազգերի սուվերենությունը եւ արժանապատվությունը:

Մի խոսքով՝ ԱՄԿ-ն ազգայնական չէ, հարգում է հարեւան ազգերին ու ճանաչում նրանց իրավունքը, հարգում է միջազգային իրավունքը եւ հենվում է դրան, խաղաղության ջատագով է:

ԱՄԿ ծրագրի 6-րդ կետը հատուկ ընդգծելու նպատակով գրված էր մեծատառերով. «ԱՄԿ-ի ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆ Է ԱԶԱՏԱԳՐԵԼ ԱԶԳԸ ՕՏԱՐԻ ԼԾԻՑ, ԴՈՒՐՍ ԳԱԼ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՍՏՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳԵՐԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ, ՀԱՅԱՍՏԱՆԸ ԴԱՐՁՆԵԼ ԱԶԱՏ, ԱՆԿԱԽ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ՉԵԶՈՔ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ»: 1967 թ. ապրիլին ԱՄԿ-ն տարածում է «Փարոս» վերնագրով իր առաջին թռուցիկը, իսկ նույն թվականի հոկտեմբերին՝ «Փարոս» վերնագրով թերթը: Անգամ այլախոհական շրջանակներում «Փարոսի» բարձրացրած հարցերը միանշանակ չեն ընդունվում: Մարդիկ դեռ պետք է հասունանային:

1967-68 թթ.եռուն գործունեություն ծավալած «Հայ հայրենասերների միության» անդամներն իրենց կազմակերպության ընդհանուր ժողովում ծանոթանալով «Փարոս» թերթի նյութերին՝ խիստ քննադատության են ենթարկել թերթի բովանդակությունը, նման թերթի ու նման գաղափարների գոյությունը հայտարարելով վնասակար եւ անընդունելի իրենց կազմակերպության համար: Ճիշտ է, հետագայում՝ դատապարտվելուց ու ազատ արձակվելուց հետո, «Հայ հայրենասերների միության» ղեկավար Հակոբջան Թադեւոսյանն անդամագրվեց ԱՄԿ-ին, բայց ակնհայտ է, որ 60-ականների վերջերին հասունացման համապատասխան աստիճանը դեռ չկար:

ՓԱՐՈՍ

№ 1 ԵՐԵՎԱՆ 1967 թ.

ՈՎ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴ՝ ՔՈ ՄԻԱԿ ՓՐԿՈՒԹՅՈՒՆԸ ՔՈ ՀԱՎԱՔԱԿԱՆ ՈՒԺԻ ՄԵՋ Է։

ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՅՅԱԼ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԵԼՆՈՒՄ ԵՆ ՆՈՐԵՐԸ

Որքան դավեր, որքան կռվեր, որքան ավեր նյութեն հայ ժողովրդի դեմ, նրա կամքը մնում է անխորտակ։ Խիզախությունը անընկճելի։ Ոմանք ասում են՝ Հայկաք։ Թե ինչպիսի խիզախությամբ ու վեհությամբ, մի ձեռքին սուր, մյուսին մուրճ այդ հանճարեղ ստեղծագործ ժողովուրդը դարեր շարունակ նվիրվել է բազմաթանակ ոսոխների դեմ, որոնք ուզում էին ազգերը ոչնչացնելու համար։ Մինչև անկախությունը պահպանելու համար։ Մինչև նույն ժամանակ չդադարելով իր ինքնուրույն գործից։ Մեծանապատիկ, հարյուրապատիկ ավելի ուժերի դեմ են եղել։ Խիզախորեն։ Չինանելով իրենց կյանքը։ Մի քանի անգամ չեն նահանջել։ Բայց վիրավորվել, մինչև այդ վերջին կաթիլը, մինչև [illegible] ... ու հաճախ ... ։ Դարեր շարունակ ... ։ Սարսափելի ... ։ Բայց ... ։ Սարսափելի ... ։ Բայց ... ։ Սարսափելի ... ։ Բայց

1968-69 թթ. Հայաստանում գործում էր նաեւ «Հանուն հայրենիքի» խումբը։ Այս կազմակերպության անդամներից ոմանք գալիս էին 1960-ականների սկզբից՝ «Հայ երիտասարդների միությունից», քաղաքականապես շատ ավելի պատրաստված էին, ունեին հստակ արտահայտված հակակոմունիստական ու հակախորհրդային տրամադրություններ, ընկալում էին անկախության անհրաժեշտությունը, բայց հիմնականում կենտրոնացել էին պահանջատիրության, ռուսիֆիկացիայի դեմ պայքարի, ազգային ինքնագիտակցության բարձրացման եւ նման այլ խնդիրների վրա եւ խուսափում էին անկախության հարցում այն հստակությունից, ինչ հստակությամբ այդ հարցը դնում էր ԱՄԿ-ն։ 1970-ականների երկրորդ կեսին՝ կալանավայրում փորձառություն ձեռք բերելուց ու ազատ արձակվելուց հետո միայն այս կազմակերպության անդամները հանգեցին անկախության գաղափարին։

Որոշ վերապահումներով նույնը կարելի է ասել նաեւ 1969 թ. հիմնադրված «Հայաստանի վերամիավորման միության» մասին։ Այս կազմակերպության արմատները նույնպես մինչեւ 60-ականների առաջին կեսն էին ձգվում։ Կազմակերպության ղեկավար Վալտեր Մելիքյանը եղել էր «Հայ երիտասարդների միության» անդամ։ Չնայած այն հանգամանքին, որ կազմակերպության ծրագրում առկա էր «անկախ Հայաստան» բառակապակցությունը, կազմակերպությունն իր գերագույն խնդիրն էր համարում հայկական կորսված տարածքների վերամիավորման եւ ազգային ինքնագիտակցության բարձրացման գործը, իսկ անկախությունը որպես իրական ծրագիր եւ հասանելի նպատակ՝ առաջնային չէր։ Կազմակերպության անվանումն էլ էր վկայում նրանց ծրագրային առաջնահերթությունների մասին։

ԱՄԿ հիմնադիրներից Շահեն Հարությունյանի եղբայրը՝ Մարզպետ Հարությունյանը, 60-ական թվականներից այլախոհական շարժման մասնակից էր, իսկ ԱՄԿ կազմավորումից հետո անդամագրվել էր այս կառույցին։ 1977-ին Շահենի, ապա՝ 1978-ին Հայկազ Խաչատրյանի հերթական դատապարտումից հետո նա ստեղծում է «Հայ երիտասարդների միություն» անվանմամբ ԱՄԿ երիտասարդական մասնաճյուղը։ Մարզպետը պատմում էր, որ նման մասնաճյուղ ունենալու ծրագիր եղել է 1975-76 թթ., բայց տարբեր պատճառներով անընդհատ ձգձգվել էր։ Ծրագրի հեղինակների կալանավորումը թելադրել էր Մարզպետին ի կատար ածել մասնաճյուղի հիմնումը։ Մի բան հաստատ է՝ «Հայ երիտասարդների միություն» անվանումն ուղղակի պատճենված է 1960-ականների առաջին կեսին գործած համանուն կազմակերպությունից։ Նոր ու բացարձակապես այլ բնույթի կազմակերպությանը նման անվանում տալու վճիռը պատկանում էր Մարզպետին, թե Հայկազ Խաչատրյանին, Շահեն Հարությունյանին կամ մեկ ուրիշի՝ ասել չեմ կարող։ Շատ ավելի հավանական է, որ համատեղ որոշում է եղել։ Մարզպետ Հարությունյանի ձեռքի տակ կային ապագա կազմակերպության պատրաստի ծրագիրը, կանոնադրությունը, երդման տեքստը, գաղտնի կազմակերպության անդամի անվտանգության կանոնները եւ այլ գրականություն։ Դրանց հեղինակը Մարզպետը չէր։ Նա պետք է միայն պահանջվող չափանիշներին համապատասխան երիտասարդներ գտներ։ Եւ 1978-79 թթ.ընթացքում գտավ մեզ։ ՀԵՄ անդամներ էինք ես, Իշխան Մկրտչյանը, Սամվել Եղիազարյանը, Հովհաննես Աղաբաբյանը, Աշոտ Մուսախանյանը, Գեւորգ Սարգսյանը, Վաչագան Հայրապետյանը։

ՀԵՄ-ը պետք է ունենար իր մասնաճյուղերը։ Սա կազմակերպության յուրաքանչյուր անդամի կարեւորագույն անելիքներից մեկն էր։ 1979-ին Իշխանն արդեն հասցրել էր մի մասնաճյուղ կազմակերպել, որի անդամներ էին Սողոմոն Պողոսյանը, Ռուսլան Զատիկյանը, Հրաչյա Թորոսյանը, Ռոմիկ Մանուկյանը։

Մարզպետն ինքը՝ չլինելով կազմակերպության անդամ, ղեկավարում էր այն։

Մինչեւ ՀԵՄ անդամ դառնալը 1978-ին ես Հայ ազգային միություն (ՀԱՄ) կազմակերպության անդամ էի։ Սա երիտասարդական, հայրենասիրական կազմակերպություն էր, ուներ իր կանոնադրությունն ու ծրագիրը։ Համաձայն այդ ծրագրի՝ կազմակերպությունը պետք է զբաղվեր Հայաստանի կորսված տարածքների վերամիավորման գործով, պայքարեր ռուսիֆիկացիայի դեմ եւ հնարավոր տարբեր միջոցներով ազգային գաղափարներ քարոզեր երիտասարդության շրջանում։ Կազմակերպությունը ղեկավարում էր Բրյուսովի անվան օտար լեզուների ինստիտուտի մի ուսանող՝ Սմբատը։ Նրա հետ ծանոթացել էի այդ ինստիտուտի ինձ ծանոթ մի ուսանողուհու միջոցով։ Հետագայում՝ շատ ավելի ուշ, պարզվեց, որ Սմբատը 1978-ին իրենց ինստիտուտում թռուցիկներ էր տարածել։ ՊԱԿ-ը տեղեկացել էր, որ տարածողը նա է։ Սմբատին բերման էին ենթարկել, բայց քրեական գործ չէին հարուցել։ Համապատասխան զրույց ունենալուց ու համապատասխան միջոցառումներ իրականացնելուց հետո ազատ էին արձակել։ Դրա մասին Սմբատը ոչ մեկի չէր պատմում։ Հետագայում պարզվեց, որ այդ շրջանից սկսած Սմբատը դարձել էր ՊԱԿ-ի գործակալ։ Անընդհատ գտնվելով նրանց հսկողության ներքո՝ կապեր էր հաստատել ակտիվ երիտասարդների ու գործող այլ կազմակերպությունների հետ։

1978-ի աշնանը ծանոթացա Արսեն Ղազարյանի հետ։ Արսենը 1952-ին ծնված 26-ամյա կարդացած ու բանիմաց երիտասարդ էր։ Մարդաշատ վայրերում, հիմնականում Կոմունաների այգում, որը հիմա Անգլիական այգի է կոչվում, ազգային հարցերի շուրջ համարձակ զրույցներ էր վարում ու ելույթ էր ունենում։ 1970-ականներին այդ այգում մարդկանց խայտաբղետ բազմություն էր հավաքվում՝ ֆուտբոլասերներից սկսած մինչեւ քաղաքական ու ազգային հարցեր քննարկողներ։ Տարիքն առած ու խորհրդային իրականությունից հիասթափված ներգաղթյալները պատմում էին իրենց թողած կապիտալիստական աշխարհի մասին։ Ուսումս շարունակելու նպատակով գյուղից Երեւան եկած պատանիս առաջին անգամ այդ այգում եմ հանդիպել սեփական աչքերով եվրոպաները տեսած մարդկանց ու նրանցից եմ լսել եվրոպական բարեկեցության ու այնտեղ տիրող ազատությունների մասին։ Մինչ այդ Խորհրդային միությունից դուրս գտնվող աշխարհի մասին իմ պատկերացումները հասարակագիտության դասագրքի շրջանակներում էին։ Այդ այգին մի տեսակ լոնդոնյան Հայդ պարկ էր հիշեցնում։ Այդտեղ էլ ծանոթացա Արսենի հետ։ Ժամանակ առ ժամանակ հանդիպում ու զրուցում էինք։ ՀԱՄ-ի մասին նրան ոչինչ չէի ասել։ Հերթական զրույցներից մեկի ժամանակ ասացի, որ պետք է զրույցների մակարդակից անցում կատարել ու լուրջ քայլ անել։ Առանց երկար մտածելու նա պատասխանեց, որ պատրաստվում է ինձ ԱՄԿ-ի տղաների հետ ծանոթացնել։ Այդպես էլ ասաց՝ ԱՄԿ-ի տղաների։ Ապա ինձ ծանոթացրեց Մարզպետի հետ։ Մարզպետի հետ ծանոթացնելուց կարճ ժամանակ անց ես հասկացա, որ կյանքս փոխվում է մեկընդմիշտ։ Հասկացա եւ ուրախացա։ Հասկացա, որ լուրջ կառույց ներկայացնող մարդու հետ եմ ծանոթացել, եւ որ այդ պահից սկսած տարբերվելու եմ իմ շրջապատում, իմ գյուղում, իմ քաղաքում, իմ ապրած երկրում

ապրող մնացած բոլոր մարդկանցից: Հետագայում՝ 1980-ի օգոստոսին Արսենը դատապարտվեց 69 (ազգային եւ ռասայական իրավահավասարությունը խախտելը) եւ 206[1] (սովետական պետական ու հասարակական կարգերն արատավորող ակնհայտ հերյուրանքներ տարածելը) հոդվածներով: Պատիժը կրել է Նովոսիբիրսկի կալանավայրում: Այսօր ապրում է Երեւանում: Ես շնորհակալ եմ Արսեն Ղազարյանին: Եթե չլիներ նա, իմ կյանքը բոլորովին այլ ուղիով կարող էր ընթանալ: Նա չի էլ պատկերացնում, թե ինչ կարեւոր դերակատարում է ունեցել իմ կյանքում: Եւ ոչ միայն՝ իմ: Արսեն Ղազարյանն է Մարզպետի հետ ծանոթացրել Իշխանին, որի անունը մինչ այդ Կնյազ էր: Նա ապրում էր Արսենի հետ նույն փողոցում: Կնյազին Մարզպետի հետ ծանոթացնելիս Արսենն ասել է.

- Ծանոթացեք, անունը Կնյազ է, այս պահից՝ Իշխան:

Բոլորը ծիծաղել են, եւ 1978 թվականից 21-ամյա Կնյազն Իշխան է վերանվանվել: Իմ լավ բարեկամ, մոսկովյան հայտնի այլախոհ ու խորհրդային տարիների քաղբանտարկյալ Ալեքսեյ Սմիրնովը, որն Իշխանի հետ եղել է Պերմի 36-րդ կալանավայրում, իր հուշերում գրում է, թե կալանավայր մտնելուց հետո են Իշխանին անվանափոխել: Բայց նա սխալվում է: Կալանավայր մտնելուց շատ ավելի առաջ նա արդեն Իշխան էր: Ինքս Իշխանի հետ արդեն որպես Իշխան եմ ծանոթացել:

Որոշ ժամանակ անց Մարզպետին ու Իշխանին ծանոթացրի Սմբատի հետ: Մի երկու հանդիպումից հետո Մարզպետն ասաց, որ նրա հետ հանդիպումները շարունակելը նպատակահարմար չէ: Դրանից հետո Սմբատի հետ միայն պատահական ու հպանցիկ հանդիպումներ եմ ունեցել: Զարմանալի էր ինձ համար, երբ մեր գործով նախաքննության ավարտին՝ քրեական գործի նյութերին ծանոթանալիս տեղեկացա, որ մեր տղաները վերականգնել են կապը նրա հետ: Ավելի ուշ տեղեկացա, որ Սմբատն է եղել կապի վերականգնման նախաձեռնողը: Այդ շրջանում Երեւանի մանկավարժական ինստիտուտում ուսանողական մի ակտիվ խմբակ էր գործում, որը զբաղված էր թռուցիկների պատրաստմամբ ու տարածմամբ: Խումբը ղեկավարում էր Աշոտ Ափիկյանը: Խմբակը բազմացրել ու տարածել էր նաեւ մանկավարժական ինստիտուտի դասախոս Ալեքսանդր Մանուչարյանի հեղինակած «Ազգային իրավունք» եւ «Империализм» (ռուսալեզու) գրքույկները: Այս խմբակի հետ Սմբատը նույնպես կապ էր հաստատել: Թե ինչպես էր նրան հաջողվել կապ հաստատել այդ խմբակի հետ՝ չգիտեմ, բայց փաստ է, որ մեր խումբը եւ ուսանողական այս խմբակը բացահայտվեցին ու ձերբակալվեցին Սմբատի օժանդակությամբ: Լավ է, որ բացահայտված ուսանողական խմբակի անդամներին չկալանավորեցին ու չդատապարտեցին: Խմբակի անդամների հիմնական մասը աղջիկներ էին: Նրանց չդատապարտելու պատճառը ոչ թե Հայաստանի ՊԱԿ-ի մարդասիրությունն էր, այլ այդ նույն ՊԱԿ-ի ցանկությունն էր՝ ամեն կերպ թաքցնել Մոսկվայից, որ Հայաստանում միաժամանակ բազմաթիվ ընդհատակյա խմբակներ են գործում: 1980 թ. դատապարտվել էր Հայաստանի հելսինկյան խմբի ղեկավար Էդուարդ Հարությունյանը, դրանից կարճ ժամանակ առաջ հելսինկյան խմբի անդամ Ռոբերտ Նազարյանը: 1980-ին կալանավորվել էինք մենք՝ ՀԵՄ հինգ անդամներս, եւ, եթե կալանավորեին նույն 80-ին բացահայտված ուսանողական խմբակի անդամներին, ապա կնշանակեր, որ հայաստանյան ՊԱԿ-ը շատ վատ է աշխատում: Հայաստանից Մոսկվա

հղված զեկուցագրերը կփաստեին, որ հայաստանյան ՊԱԿ-ի քթի տակ միաժամանակ բազմաթիվ կազմակերպություններ են ձեւավորվում ու գործունեություն ծավալում, իսկ իրենք կանխել ու ժամանակին բացահայտել չեն կարողանում։

Այս խմբից (եթե, իհարկե, խմբի անդամ չհամարենք 4 տարի ազատազրկման եւ 2 տարի աքսորի դատապարտված մանկավարժական ինստիտուտի դասախոս Ալեքսանդր Մանուչարյանին) երկու տարվա աքսորի դատապարտվեց միայն 1958 թ. ծնված Աշոտ Ափիկյանը։ Երկու տարի աքսորի դատապարտվեց նաեւ ինքը՝ Սմբատ Մելքոնյանը։ Սմբատը, կարծում եմ, խաճվել էր։ Մի կողմից նա իրոք ցանկանում էր լինել այլախոհ, գործել այդ բնագավառում, ուներ հայրենասիրական մղումներ, իսկ մյուս կողմից՝ գտնվում էր ՊԱԿ-ի վերահսկողության ներքո, պոկվել չէր կարող եւ ստիպված էր կատարել նրանց հանձնարարությունները։ Չի բացառվում, որ որոշ քայլեր էլ կատարած լիներ ՊԱԿ-ից անկախ։ Սմբատը միակը չէր, որ նման դերակատարում էր ունեցել եւ դատապարտվել էր։ Խորհրդային շրջանի այլախոհների այլ օրինակներ եւս կան, ասենք՝ մոսկովյան շրջանակներից, նաեւ այլ հանրապետություններից, որոնք համագործակցել են ՊԱԿ-ի հետ, մատնել են այլ գործիչների, նրանց երկարատեւ դատապարտման պատճառ են դարձել, բայց դա չի խանգարել, որ իրենք էլ մեկ-երկու տարի աքսորի դատապարտվեն։

Առաջին բանտախուցը

1980 թ. մարտի երկրորդ կեսերն էր կամ ամենավերջը, հիմա արդեն լավ չեմ հիշում։ Նստած էի Ռիգայից ոչ հեռու գտնվող Տուկումս քաղաքի զինվորական մասի փայտամշակման արհեստանոցում։ Սովետական բանակի զինվոր եմ, բայց, ի տարբերություն ծառայակից մյուս զինվորների, հաշվեկցված ավտոմատ չունեմ եւ պահակակետային ծառայության չեմ կանգնում։ Դրա փոխարեն աշխատում եմ այս արհեստանոցում։ Իբր հյուսն եմ կամ պետք է հյուսն դառնամ։ Մինչեւ այստեղ հայտնվելս՝ 1978 թվականից Հայաստանում գործող ընդհատակյա կազմակերպության անդամ եմ ու արդեն հասցրել եմ հայտնվել ՊԱԿ-ի տեսադաշտում։ Սունդուկյանի թատրոնին հարակից Կոմունաների այգում, որ հիմա Անգլիական այգի է կոչվում, թենիսի սեղաններ էին դրված։ Ես թենիսի ոչ սիրահար եմ եղել եւ ոչ էլ մի երեւելի խաղացող, բայց 1979 թ. ժամանակ առ ժամանակ գնում էի այնտեղ թենիս խաղալու։ Հերթական անգամ այնտեղ էի, եւ երկու անծանոթ երիտասարդ առաջարկեցին խաղալ։ Պիջակս խանգարում էր։ Կողքից դիտողն առաջարկեց հանել։ Ծոցագրպանումս դրամապանակս էր ու անձնագիրս։ Երկմտում էի՝ հանե՞լ, թե չհանել, բայց ի վերջո հանեցի ու կախեցի ծառից՝ այնպես, որ մշտապես իմ տեսադաշտում լինի։ Խաղի ավարտից հետո հագնվելիս շոշափեցի՝ դրամապանակս տեղում էր։ Միայն երեկոյան կողմ նկատեցի, որ անձնագիրս չկա։ Հաջորդ օրը գնացի բոլոր այն վայրերը, որտեղ եղել էի նախորդ օրվա ընթացքում, բայց անձնագիրս այդպես էլ չգտնվեց։ Անձնագրիս անհետանալու մասին ասացի Մարզպետ Հարությունյանին։ Թենիս խաղալու պատմությունը լսելուց հետո ասաց, որ երկու երիտասարդները չեկիստներ են եղել, ու նրանք էլ գողացել են անձնագիրս։ Մարզպետն ասում էր՝ անձնագիրս գողացել են, որ չկարողանամ հանրապետությունից բացակայել։ (Առաջ անցնելով ասեմ, որ Մարզպետը ճիշտ էր։ Շատ ավելի ուշ՝ 1986-ին, երբ ես արդեն աքսորավայրում էի, չեկիստներն անձնագիրս տվել էին հորս՝ առաջարկելով, որ ուղարկի ինձ, ինչն էլ իմ միամիտ հայրը ճշտորեն կատարել էր։ Նրանց հաշվարկն ավելի քան պարզ էր՝ վստահ էին եղել, որ ես՝ իմ ձեռքում անձնագիր ունենալով կորոշեմ հեռանալ աքսորավայրից, իսկ նրանք, բնականաբար, կձերբակալեն եւ փախուստի համար ինձ կրկին կդատապարտեն։ Բայց չաշխատեց նրանց ծրագիրը)։

Ես անընդհատ փորձում էի խուսափել բանակից։ Ոչ թե ծառայության դժվար կամ ծանր լինելու պատճառով, այլ ուղղակի չէի ցանկանում ծառայել խորհրդային բանակում։ Այդ շրջանում դա ինձ համար ավելի քան ատելի էր։ Եւ կասկածը, որ ես կհեռանամ հանրապետությունից ու կթաքնվեմ, չեկիստների գլխում կարող էր ծագել։ 1979 թ. նոյեմբերին փողոցում կանգնեցրին ինձ եւ ոստիկանական մեքենայով տեղափոխեցին զինկոմիսարիատ։ Մինչ այդ ծնողներիս հասցեով նամակ էին ուղարկել եւ տեղեկացրել, որ իմ նկատմամբ հետախուզում են հայտարարելու, եթե շարունակեմ զինկոմիսարիատ չներկայանալ։ Առանց անձնագրի եւ առանց ավելորդ հարցուպատասխանի՝ մի զինվորական արագ ձեւակերպեց փաստաթղթերս։ Անգամ չհարցրեց, թե ուր է անձնագիրս։ Հարազատներիս հրաժեշտ տալու համար մի քանի օր տվեցին ու նոյեմբերի վերջերին կրկին առանց անձնագրի զինվորական գրքույկ տալով՝ տարան Լատվիայում գտնվող հակաօդային պաշտպանության զորամասում ծառայության։

Կասկածից վեր է՝ հայաստանյան չեկիստները զորամասի հատուկ բաժնին տեղեկացրել էին իմ ով լինելու մասին, բայց ինչպես սովորաբար լինում էր ԽՍՀՄ-ում, նրանց մեքենան խափանում էր գրանցել: Կամ հայերն էին իմ մասին տեղեկությունն ուշ ուղարկել, կամ՝ ուղղակի ուշ էր տեղ հասել, կամ էլ՝ տեղում մեծ նշանակություն չէին տվել դրան: Արդեն սա կարեւոր էլ չէ: Մնացած զինվորների պես Տուկումս քաղաքում կարանտինն անցնելուց հետո ինձ էլ տեղաբաշխեցին ըստ զորամասերի: Հայտնվեցի Ռիգայում գտնվող հակաօդային պաշտպանության ոչ մեծ մի զորամասում եւ մյուս նորակոչիկների հետ միասին սկսեցի սովորել հակաօդային պաշտպանության գործը: Մեզ մասնագիտական դասախոսություններ էին կարդում, մենք պարտավոր էինք դրանք սերտել ու հաջորդ օրը պատասխանել: Նորակոչիկների մեր 15-20 հոգանոց խումբը բաժանեցին 3-4 մասի. ոմանք պետք է պայմանական հակառակորդի ինքնաթիռների բարձրությունը որոշող զինվորներ դառնային (высотометрчики), ոմանք՝ հեռավորությունը որոշողներ (дальнометрчики), իսկ մյուսները՝ հարակից այլ մասնագետներ: Ես ապագա высотометрчик էի: Ուսումնական ընթացքը պետք է 3-4 ամիս տեւեր: Նոր-նոր էինք սկսում ծանոթանալ համապատասխան մասնագիտական զինվորական տեխնիկային, երբ 1980 թ. հունվարի վերջերին ինձ կրկին տեղափոխեցին Տուկումս եւ ասացին, որ պետք է աշխատեմ հյուսնի արհեստանոցում: Երեւի Հայաստանից իմ մասին զորամասի հատուկ բաժին ուղարկված գրության իմաստը այդ բաժնի չինովնիկները հասկացել էին վերջապես:

Ցուրտ էր, եւ ես սովորականի պես միացրել էի արհեստանոցում գտնվող ինքնաշեն էլեկտրական սալիկը: Այդ սալիկը մենք միշտ էլ միացնում էինք, ու որեւէ խոսակցություն այդ կապակցությամբ չէր եղել, կարծում եմ՝ ինձանից հետո էլ չի եղել: Մեր զորամասից մի լեյտենանտի ուղեկցությամբ արհեստանոց մտան ինձ անծանոթ մի գնդապետ ու մի կապիտան: Ներս մտնելուն պես գնդապետն սկսեց առանց պատճառի հայհոյել ու բղավել, ապա հայացքն էլեկտրական սալիկին ուղղելով հայտարարեց, որ միացնելով սալիկը՝ խախտել եմ անվտանգության կանոններն ու պետք է պատժվեմ: «Յոթ օր հառուպտվախտ», - հայտարարեց ու դուրս եկավ:

«Իմ առաջին խուցը», - հպարտությամբ մտածեցի, երբ իմ հետեւից դուռը փակվեց: Միշտ եմ իմացել, որ մի օր բանտ եմ ընկնելու ու պատրաստ եմ եղել դրան: Ինքս եմ գիտակցաբար այդ ճանապարհն ընտրել: Երբ դեռ Երեւանում էի, չէի համբերում, անընդհատ ցանկանում էի ինչ-որ բան անել: Պահանջում էի, որ ինձ հանձնարարություն տան: Այն ժամանակ ամենապարզ գործը կարող էր լինել թռուցիկների տարածումը: Մարզպետը մի լավ միտք էր մտմտում: Թռուցիկներ տարածելը լավ է, բայց պետք է այնպիսի բան անել, որ կոմունիստները պատժված զգան իրենց:

-Կարելի է, -ասում էր, - կարմիր ներկով՝ որպես արյան խորհրդանիշ, ներկել քաղաքում տեղադրված կոմունիստների արձանները:

Գաղափարը շատ էի հավանել: Գործն էլ հեշտ էր թվում: Միտքը զարգացրել էինք՝ օտարազգի գործիչներին պետք է ներկել կարմիր ներկով, որովհետեւ նրանք արյուն բերեցին հայ ժողովրդին, իսկ հայազգի բոլշեւիկներին՝ մի կողմից կարմիր, իսկ մյուս կողմից՝ սեւ ներկել, որովհետեւ նրանք սեփական ժողովրդին արյուն բերելու հետ միաժամանակ, ինչպես

Մարզպետն էր ասում, սեւերես մնացին։ Որպես դավաճաններ խայտառակված են ու խայտառակված էլ մնալու են։ Քաղաքի կենտրոնական փողոցներով քայլում ու մտքումս ծրագրում էի արձանները ներկելու գործը։ Յուրաքանչյուր ներկված արձանի վրա պետք է կարճ թռուցիկ փակցվեր, որն ավարտվելու էր այսպես. «Քանի այսպես կշարունակվի՝ ձեր վիճակն էլ սա կլինի»։ Ամեն ինչ արդեն պատրաստ էր։ Թռուցիկները կային, ներկը կար։ Անգամ կոշիկներիս տակ փափուկ ռետին խփել տվեցի, որ գիշերային քաղաքում քայլելիս ձայն չլսվի։ Ես խորհրդային բանակ գնալ չէի ցանկանում։ Դա ինձ համար ամենամեծ վիրավորանքն էր այդ շրջանում։ Բանտը շատ ավելի նախընտրելի էր։ Գիտեի՝ եթե առաջին արված գործից հետո չբռնվեմ, կբռնվեմ հետո՝ այլ գործ անելիս։ Մարզպետ Հարությունյանի հետ նույնիսկ, իմ բռնվելու պարագայում, պայմանական նշաններ էինք մտածել։ Նա ասում էր, որ նախաքննության ողջ ընթացքում հարազատներս ինձ հանձնուք կարող են փոխանցել։ Կարող եմ տնից անհրաժեշտ ինչ-ինչ բաներ խնդրել եւ խնդրածս իրերը կոնկրետ նշանակություն պետք է ունենան։ Այսօր արդեն լավ չեմ հիշում բոլոր նրբությունները, բայց նասկի (գուլպա) խնդրելը պետք է նշանակեր, որ ես ամուր եմ եւ դրսում մնացածներին վտանգ չի սպառնում իմ պատճառով։ Մարզպետն ինքն էլ նստելուց չէր վախենում, բայց զգուշանում էր։ Ասում էր.

-Դեմը ձմեռ է, եղբայրս՝ Շահենը էլ բանտում է։ Իմ ու եղբորս ընտանիքի համար պետք է ձմեռվա պաշար ապահովեմ, այլ խնդիրներ կան՝ լուծեմ, որ գոնե մինչեւ գարուն հոգս չունենան։ Հետո նա ազատ կարձակվի ու հեշտ կլինի։

Մտահոգ էր, որ երիտասարդությանս ու անփորձությանս պատճառով նախաքննության ընթացքում չեկիստները կկարողանան խաբել ու մոլորեցնել ինձ։

Ամեն ինչ արդեն վճռված էր, բայց ամենավերջին պահին բոլորովին այլ վճիռ կայացվեց։ Մարզպետից պահանջել էին ինքնագործունեությամբ չզբաղվել եւ արգելել էին ինձ որեւէ գործ անել։ Ավելի ուշ, առանց Մարզպետի, ինձ հետ հանդիպեցին եւ բացատրեցին, որ իմ քայլով կարող եմ այլոց վտանգել, իբր՝ ավելի լուրջ ծրագրեր կան, որոնք կարող են խափանվել իմ պատճառով։ Մարզպետը վրդովված էր։ Լավ հիշում եմ, ասում էր.

-Ես դրանց հեռն (սա նրա բառն էր) եմ անիծել, սուտ են խոսում, թե ավելի լուրջ ծրագրեր կան։ Ուղղակի զգուշանում են։ Վախենում են, թե բռնվելուց հետո մենք կխոսենք, ու հետքն իրենց կհասնի։

Մարզպետը հիացմունքով պատմում էր Պարույր Հայրիկյանի մասին։ Ասում էր, որ նա նվիրյալ է ու ռոմանտիկ ու այդպիսիների հետ գործ անելը ու նրանց հետ բանտ գնալը հաճույք է։ Ամեն առիթով մնացածից առանձնացնում էր Պարույրին, իր եղբորը՝ Շահենին, Խաչատրյան Հայկազին։

Ի վերջո հայտնվեցի խորհրդային բանակում ու հիմա գտնվում եմ հաուպվախտի ահա այս խցում։ 7 օրն այնքան էլ մեծ ժամկետ չէ, կնստեմ՝ մտածեցի ու սկսեցի ուսումնասիրել իմ փոքրիկ, ցուրտ ու կեղտոտ խուցը։ Առաջինը, բնականաբար, սկսեցի կարդալ պատին փորված անհամար գրությունները։ Ինչ գրություն ասես, որ չես կարդա զինվորական բանտում։ 7 օրից հետո ինձ եւս 7 օր տվեցին՝ այս անգամ արդեն պատին գրություն

փորագրելու համար։ Իմ բողոքը, որ ես ոչինչ չեմ փորագրել, որեւէ ուշադրության չարժանացավ։ Երրորդ անգամ հերթական 7 օրը ստանալուց հետո միայն սկսեցի հասկանալ, որ իմ այստեղ հայտնվելը պատահականություն չէ եւ կարող է կապ ունենալ Հայաստանում ընթացող լուրջ դեպքերի հետ։ Մի խոսքով, մնացի այդ հաուպտվախտում մինչեւ հունիսի 5-ը։ Երկու ամսից ավելի։

Հաուպտվախտում նստածներին, ինձանից բացի, առավոտյան տանում էին աշխատելու։ Ողջ օրը միայնակ փակված էի մնում այդ խցում։ Մայիսի կեսերին հաուպտվախտ բերեցին ադրբեջանցիների ոչ մեծ խմբի։ Նրանք այստեղ էին հայտնվել ծեծկռտուքի պատճառով Ուրախ տղաներ էին։ Գարուն էր, բայց խցում ցուրտ էր, իսկ ես ողջ ընթացքում այնտեղ էի։ Աշխատանքից երեկոյան վերադառնալուց հետո ադրբեջանցիներից մեկը, որ արդեն ավարտում էր ծառայությունը, պարտադիր մոտենում էր իմ դռանը եւ հետաքրքրվում, թե ինչպես եմ, ու կատակով հարցնում էր.

-Հեյ, հայրենակից, դեռ պինգվին չե՞ս դարձել։

-Չէ, դեռ չէ, -պատասխանում էի, ու բոլորը, պահակազորի զինվորներն էլ հետները, ծիծաղում էին։

Ավելի ուշ, արդեն մայիսի վերջերին, բերեցին եւս մեկ զինվորի, որին նույնպես աշխատանքի չէին տանում եւ պահում էին իմ դիմացի խցում։ Միջին Ասիայում ծառայող ինչ-որ գեներալի որդի էր, քրեական հակումներ ուներ եւ անընդհատ զորամասից փախչելու փորձեր էր անում։ Որպեսզի բանտ չընկնի, հայրը նրան տեղավորել էր այստեղ՝ իր ընկերներից մեկի մոտ ծառայության։ Հերթական փախուստի փորձից հետո բռնել էին նրան եւ այս անգամ արդեն դաստիարակչական նկատառումներով հաուպտվախտ էին բերել։ Նրա հոր ընկեր գեներալը ամենայն հավանականությամբ խոստացել էր հորը՝ ուշադրության կենտրոնում պահել որդուն, որ փորձանքի չգա։ Մեկ անգամ նույնիսկ խրատական զրույցի նպատակով հաուպտվախտ եկավ, եւ ես լսում էի, թե ինչպես էր խնդրում այդ տղային խելքի գալ եւ պահել իրեն ինչպես հարկն է։ Այս գեներալի որդու շնորհիվ մի երկու անգամ խցից դուրս են բերել ինձ։ Դե, պարզ է, գեներալի որդուն մաքուր օդի պետք է հանեին։ Ձեռքի հետ ինձ էլ էին հանում։ Հաուպտվախտը շրջափակող փշալարերի երկայնքով փարթամ գարնանային կանաչ խոտ էր աճում։ Պառկում էինք այդ խոտերի վրա ու զրուցում՝ ես, այդ տղան ու մեր հսկիչները։ Գեներալի որդու մեջքի ողջ մակերեսը պատված էր ուղղափառ եկեղեցի պատկերող դաջվածքով՝ գմբեթներով ու խաչերով։ Կանաչի միջից սինձ էի հավաքել ու հաճույքով ծամում էի։ Զրուցակիցներս լարված սպասում էին, թե երբ թունավորվածության նշաններ ի հայտ կգան։ Բացատրում էի, որ համեղ է, եւ Հայաստանում վայրի բույսեր շատ են ուտում։ Չէին պատկերացնում։ Նրանց համար ուտելի բույսը միայն այգիներում ցանվող կանաչին էր։ Շատ ավելի ուշ Մարիետա Շահինյանի «Ճանապարհորդություն Հայաստանով» գիրքը կարդալիս տեղեկացա, որ ադրբեջանական ասացվածք կա՝ վարդի բույրը հասկանում է սոխակը, իսկ խոտի համը՝ հայը։ Չգիտեմ, կա՞ իրոք նման ասացվածք, բայց իսկեւիսկ հայերիս համար է ասված, հատկապես՝ ինձ նման բուսասերիս համար։

Մի գեղեցիկ օր, երբ բոլորին արդեն աշխատելու էին տարել, գեներալի որդին զարմացած ասաց ինձ, որ դուռս փակ չէ: Նրա դռան անցքից երեւում էր իմ դուռը: Հրեցի: Իրոք դուռը բաց էր: Ցերեկը մեր դռները փակում էին ոչ թե կողպեքով ու բանալիով, այլ միայն մետաղյա լեզվակով: Այս անգամ զինվորը երեւի մոռացել էր լեզվակը վրա բերել, ու իմ դուռը բաց էր մնացել: Այդ տղան սկսեց խնդրել, որ բացեմ իր դուռը: Խոստացավ, որ բռնվելու պարագայում ոչ մի դեպքում չի ասելու, որ դուռը ես եմ բացել: Տրված խոսքը բավարար թվաց ինձ: Բացեցի նրա խցի դուռը, ապա մտա իմ խուց, նա դրսից փակեց իմ դռան լեզվակն ու հեռացավ: Մի երկու ժամ անց հաուպտվախտ մտած զինվորները տեսան, որ նա խցում չէ: Բնական է, ասացի՝ չգիտեմ, թե ինչպես է դուրս եկել իր խցից, իմ դուռը մշտապես փակ է եղել, ու ոչնչից տեղյակ չեմ: Հաուպտվախտի ողջ տարածքում անհերեւակայելի իրարանցում էր տիրում:

Երեկոյան, երբ հաուպտվախտի բոլոր բնակիչներն արդեն տեղում էին, դաժան հսկիչ զինվորները, որոնք բոլորն էլ, չգիտես ինչու, Կոմի ինքնավար մարզից էին, հաուպտվախտի նեղլիկ միջանցքում շարեցին բոլորիս ու հայտարարեցին, որ մեկը փախել է, ու այդ փախուստի համար բոլորս ենք մեղավոր ու պետք է պատժվենք: Նրանց զայրույթն ու չարությունը սահման չունեին: Սկսեցին հարվածել մեզ: Հետո ստիպեցին կքանստած ցատկոտել տեղում: Ով թույլ էր ու վայր էր ընկնում՝ ծեծվում էր: Օրվա հերթապահ ջոկի հրամանատարը՝ մի երիտասարդ լեյտենանտ, հանեց ինձ շարքից եւ հայտարարեց, որ փախուստը կամ իմ օգնությամբ է տեղի ունեցել կամ ես գիտեմ օգնողին, եւ եթե որոշեմ ասել, թե ով է բացել դուռը, ապա ծեծը կդադարի: Հավանաբար մտածում էին, որ իրենց զինվորներից մեկն է դուռը բացել, եւ ինձանից հենց դա էին ուզում լսել: Շարունակում էի պնդել, որ ոչնչից տեղյակ չեմ: Սկսվեց չարչարանքների մի նոր փուլ: Հարվածներն ու ֆիզիկական վարժությունները հաջորդում էին իրար: Ոմանք ուժասպառ ընկնում էին գետնին, մի քանիսը փսխում էին: Ես կանգնած էի ադրբեջանցիների հետ: Կատակասեր ադրբեջանցին, որն ինձ ամեն երեկո հարցնում էր, թե դեռ պինգվին չե՞մ դարձել, ցածրաձայն ասաց.

-Եթե անգամ գիտես, թե ով է արել՝ չասես, իսկ եթե դու ես արել, ապա առավել եւս պետք է լռես, որովհետեւ կարող են դատել քեզ ու պատժիչ գումարտակ տանել:

Փոքրիկ ընդմիջումից հետո բոլորիս հրամայեցին ձեռքերով հենվել գետնին, գլխիվայր ոտքերը պատին՝ ձեռքերի վրա հակառակ ուղղությամբ ձգում վարժություն անել: Իրականում դա արդեն ոչ թե ձգում, այլ հրում վարժություն էր: Երբ իրար հետեւից ուժասպառ տապալվեցինք գետնին, հսկիչ զինվորներից մեկը հայտարարեց, թե ինչ-որ մեկի ճտքավոր կոշիկի սեւ հետքն է դաջվել պատին, եւ նա պետք է լիզի այդ հետքը: Սա արդեն չափից դուրս էր, ես չէի կարող նման բան թույլ տալ: Այդ պահին, երեւի գերլարվածությունից, ինչ-որ հանգստություն ու անհերեւակայելի ինքնավստահություն էր պատել ինձ: Էլ չեմ հիշում, թե իմ կյանքում նման իրավիճակ եղած լինի: Դուրս եկա շարքից եւ հայտարարեցի, որ զինվորը պատը չի լիզելու: Ձայնիս մեջ եղած վճռականությունը երեւի ազդեցություն գործեց: Լեյտենանտը մոտեցավ ինձ եւ առաջարկեց մտնել միջանցքի ծայրին գտնվող հերթապահի սենյակը: Սենյակի դուռը բաց էր, եւ զինվորները լսում էին, թե ինչպես է համոզում ինձ ասել, թե ով է դուռը բացել: Խոստանում էր, որ ոչինչ չի պատահի ինձ, եւ հաջորդ օրն իսկ

հաուպտվախտից դուրս կգամ ու զորամաս կվերադառնամ։ Բնականաբար, ասելիք չունեի։ Արդեն շատ ուշ էր, բոլորն էլ՝ ե՛ւ հսկիչները, ե՛ւ մենք հոգնել էինք։ Հրամայեցին մաքրել միջանցքը եւ մտնել խցերը։ Չմոռանալով հոխորտալ, որ վաղն ավելի վատ է լինելու։

Երբ հսկիչ զինվորներն արդեն գնացել էին, ադրբեջանցին կրկին նախազգուշացրեց ինձ, որ սխալ թույլ չտամ, ու եթե ես եմ արել, ապա ոչ մի դեպքում հանձն չառնեմ։ Հակառակ դեպքում, ասում էր նա, մահվան աստիճան կծեծեն, կարող են նաեւ դատել ու զինվորական տրիբունալի վճռով կարգապահական գումարտակ ուղարկել, որտեղից չխեղված վերադառնալը քիչ հավանական է։

Գիշերը քնել չկարողացա։ Իմ պատճառով էին բոլորին ծեծել։ Խղճի խայթը հանգիստ չէր տալիս, բայց ադրբեջանցու զգուշացումն ի գիտություն էի ընդունել։ Պետք է լռել։ Զարմանալի է, բայց ծեծված ու չարչարանքների ենթարկված զինվորներից ոչ մեկը չէր բողոքում ու չէր պահանջում, որ հանձն առնեմ։ Ոչ մեկը որեւէ մեղադրանք իմ հասցեին չինչեցրեց։ Ոմանք երեւի մտածում էին, որ անմեղ եմ, իսկ ոմանք էլ հավանաբար ադրբեջանցու պես մտածում էին, որ մեղքս ընդունելու դեպքում սպասվող վտանգն այնքան մեծ է, որ ճիշտը լռելն է։ Այդ զինվորներից ոչ մեկի անունն՝ անգամ այն ժամանակ, չեմ իմացել, իսկ նրանց դեմքերը վաղուց են ջնջվել հիշողությունիցս, բայց նրանց պահվածքը չեմ մոռացել։

Այս ամենը տեղի էր ունենում 1980 թ. հունիսի 4-ին։ Հունիսի 5-ի առավոտյան բոլորին, ըստ կարգի, տարան աշխատանքի, եւ ես կրկին մենակ մնացի։ Կեսօրվա կողմերը լսում եմ՝ բերում են մեր փախստականին։ Ազատության մեջ եղած այս կարճ ընթացքում հասցրել էր ինչ-որ հանցանք գործել. գողություն էր արել, թե թալան՝ արդեն լավ չեմ հիշում։ Մի խոսքով, հաուպտվախտի հրամանատարի հետ միասին մի քանի զինվորականներ մտան նրա խուց։ Նրանց ողջ զրույցը պարզորոշ լսում էի։ «Ո՞վ է բաց թողել քեզ» հարցին ի պատասխան՝ առանց երկար-բարակ մտածելու տվեց իմ անունը։ Երբ բոլորը դուրս եկան, ես՝ միամիտս, ասացի.

-Բայց դու խոսք էիր տվել։

Իսկ նա՝ անտարբեր.

-Մի վախեցիր, բան չկա։

Կարճ ժամանակ անց հսկիչ զինվորներն ուտելիք բերեցին.

-Կարգին կեր, երեկոյան հարսանիքդ է լինելու։

Ուտում էի ու պատկերացնում, թե ինչպես են երեկոյան՝ միջանցքում շարված զինվորների ներկայությամբ ջախջախում ինձ։ 30-40 րոպե էլ չէր անցել, լայն բացված աչքերով դեպի իմ խուց են վազում երկու հսկիչ զինվոր.

-Քեզ մոտ սպիտակ գայլեր են եկել։

Չգիտես ինչու՝ այդտեղ չեկիստներին «սպիտակ գայլ» էին անվանում։ Ինձ տարան հաուպտվախտի հրամանատարի սենյակ, որտեղ, ի թիվս այլ ներկաների, ինձ էր սպասում

Հայաստանի պետական անվտանգության կոմիտեի քննիչ Հրաչիկ Գրիգորյանը։ Կարճ, մի քանի րոպեանոց զրույցից հետո հանձնարարվեց, որ ինձ պատրաստեն հաուպտվախտից դուրս գալու։ Երկար ժամանակ հաուպտվախտում գտնվելու պատճառով ամենեւին օրինակելի զինվորի տեսք չունեի։ Նույն հսկիչները, որոնք երեկոյան պետք է դաժանորեն ու ցուցադրական պատժեին ինձ, իրենց հրամանատարի հրահանգով օգնում էին, որ արտաքին տեսքս կարգի բերեմ։ «Սպիտակ գայլերի» ներկայությունից սարսափած հաուպտվախտի հրամանատարությունը շուրջս էր պտտվում։ Սափրվելու նորմալ պարագաներ տվեցին ինձ, մազերս կարգի բերեցին, զինվորներից մեկը ջուր լցրեց, որ լվացվեմ։ 30-40 րոպե անց արդեն իսկական խորհրդային զինվոր էի։ Ինձ ծեծելն արդեն բացառվում էր։ Իհարկե, վատ բան է մարդկանց ծեծելն ու խոշտանգելը, բայց այդ չարաբաստիկ ու անիմաստ փախուստի պատճառով, որի մասնակիցը դարձա ես, անկասկած հսկիչ զինվորներից շատերն են պատժվել, ու դեռ հայտնի չէ, թե ինչ խստությամբ, եւ նրանք պետք է լուծեին իրենց վրեժը։ Գեներալի որդուն չէին կարող ծեծել, իսկ ես շատ էլ հարմար թիրախ էի։ Բայց «պլստացի»։

Ահա այսպես առաջին անգամ հայտնվեցի բանտախցում։ Հետագայում ես շատ բանտերում ու շատ խցերում եմ եղել։ Եղել են շատ ավելի վատ ու շատ ավելի դաժան խցեր, քան այս առաջինն էր, տեսել եմ անհամեմատ ծանր դաժանություններ, քան այս առաջինն էր, բայց երբեք չեմ հասկացել ու չեմ էլ կարողանում հասկանալ, թե ինչու՞ է երկիրն այդքան դաժան վարվում իր զինվորի նկատմամբ։ Այն մարդու նկատմամբ, որն իր կյանքի գնով, զենքը ձեռքին հենց այդ երկրի սահմանները պաշտպանելուն է կոչված, որը հանցագործ չէ, եւ որի մեղքը, որպես կանոն, կանոնակարգային փոքրիկ խախտումներն են ու մանր-մունր զանցանքները։ Ասում են՝ եղել են ու կան դաժան բանակներ։ Բայց սեփական զինվորի նկատմամբ առկա այս կարգի դաժանությունները որեւէ արդարացում ու բացատրություն ունենալ չեն կարող։

Ինչեւէ, լվացված ու, որքան թույլ էին տալիս պայմանները, հարդարված վիճակում ինձ կրկին բերեցին հաուպտվախտի հրամանատարի սենյակ, որտեղ Հրաչիկ Գրիգորյանն էր։ Նրա հետ էլ Ռիգայից ինքնաթիռով թռանք Երեւան։ Ճամփորդում էի որպես սովորական ուղեւոր՝ առանց ձեռնակապի ու հատուկ հսկողության։ Հատուկ հսկողություն չկար նաեւ օդանավակայանում։ Գուցե կային Լատվիայի ՊԱԿ-ի երիտասարդ օպերատիվ աշխատակիցներ, որոնց չեմ նկատել, բայց Հրաչիկ Գրիգորյանն ինձ լիակատար ազատություն էր տվել։ Մինչեւ ինքնաթիռ նստելն ազատ քայլում էի օդանավակայանում, ինքնաթիռում նույնպես՝ ցանկության դեպքում կարող էի տեղաշարժվել։

Ես բոլորովին չէի ցանկանում խորհրդային բանակում ծառայել, այդ բանակը համարում էի զավթիչ բանակ, ինձ համար այդ բանակի շարքերում լինելն ամենամեծ վիրավորանքն էր, բայց ստացվեց այնպես, որ, այնուամենայնիվ, ծառայեցի այդ բանակի շարքերում։ Ճիշտ է, ընդամենը 6 ամիս, որից երկու ամիսը, նույնիսկ ավելին՝ հաուպտվախտում, բայց՝ ծառայեցի։

Երբ ինքնաթիռը վայրէջք կատարեց Երեւանում, չեկիստների «Վոլգան» արդեն ինքնաթիռի տակ սպասում էր։ Հրաչիկը նստեց վարորդի կողքը, իսկ երկու երիտասարդ հետեւի նստարանին՝ իմ աջ ու ձախ կողմերում։ Երբ դուրս եկանք օդանավակայանից ու արդեն Երեւան էինք մտնում Հրաչիկը հարցրեց.

- Վարդան, քաղաքին կարոտած կլինես, ո՞ր կողմով ես ուզում, որ գնանք։

Իսկ ես քաղաքը չէի կարոտել, ու ինձ համար միեւնույն էր, թե որ փողոցով կգնա նրանց ավտոմեքենան։ Ինձ հետաքրքրողն ընկերներս էին՝ ի՞նչ է կատարվել նրանց հետ, որտե՞ղ եւ ի՞նչ վիճակում են նրանք։

Հետագայում, արդեն իմ ազատ արձակվելուց հետ, Հրաչիկ Գրիգորյանին դեպքից դեպք հանդիպել եմ։ 1989-90 թթ. ընթացքում նա Արտաշատի ՊԱԿ-ի ղեկավարն էր։ Այնտեղ մի քանի ամիս անընդմեջ լարված իրավիճակ էր։ Ջինված խմբավորումներն իրար դեմ էին ելել, եւ լարվածությունը մեղմելու ու հանդարտեցնելու կարիք կար։ Հաճախ էի լինում այնտեղ։ ՊԱԿ-ը եւ ոստիկանությունն այդ շրջանում թույլ էին, ոչինչ անել չէին կարողանում, ու Հրաչիկը հույս ուներ, որ ես ու Աշոտ Նավասարդյանը վիճակը կմեղմենք։ Ավելի ուշ նա դուրս եկավ ՊԱԿ-ից։ Իր ասելով՝ ինքը սկզբունքային է եւ եթե նախկինում ծառայել է սովետներին, ապա այսօր չի կարող ձեւացնել, թե ոչինչ չի փոխվել, ու շարունակի ծառայել բոլորովին այլ համակարգի։ Երկար տարիներ չէի հանդիպել նրան։ 2016 թ. ամռանն էր. իմ բակից, իսկ իմ բակը գտնվում է Մամուլի շենքի մոտ, քայլում էի դեպի կրկես։ Հանդիպեցի գրականագետ Իշխան Ստեփանյանին, որը Մամուլի շենքի տակ գրասենյակային ապրանքների փոքրիկ խանութ ուներ. անցնել-դառնալիս նրա հետ միշտ զրուցում էի։ Ինձ անծանոթ մեկի հետ էր։

-Ճանաչու՞մ ես զրուցակցիս, - հարցրեց Իշխանը, - ասում է, որ ինքն է բանակից քեզ կալանավորել ու Հայաստան բերել։

-Ինձ բանակից Հայաստան է բերել բոլորովին այլ մարդ՝ Հրաչիկ Գրիգորյանը, - ասացի ու բարձրահասակ անծանոթի աչքերին նայելով հեգնանքով ավելացրի, - գլուխ ենք գովում փաստորեն, հա՞։

-Ես Հրաչիկ Գրիգորյանն եմ, Վարդան, - ասաց անծանոթը։

Անասելիորեն ծերացել էր ու փոխվել։ Հրաչիկի մասին այսքան գրելուս պատճառը ոչ թե իմ կյանքում ունեցած նրա դերակատարումն է, իրականում որեւէ դեր չի ունեցել ու չէր էլ կարող ունենալ, այլ մեր այս վերջին հանդիպման ժամանակ նրա պատմածը։ Հարցիս, թե ի՞նչ է անում այս կողմերում, պատասխանեց.

- Գիտե՞ս, երբ որոշեցի դուրս գալ պետանվտանգության համակարգից, գնացի ու դիմում գրեցի։ Երկար ժամանակ դիմումս չէին ստորագրում։ Ասում էին՝ որպես փորձառու աշխատակից իրենց պետք եմ, իսկ ես իմն էի պնդում։ Վերջն ասացին՝ լավ, գնա, բայց հայրենիքին այդքան ծառայություն ես մատուցել, ի՞նչ ես ուզում ծառայությանդ դիմաց, ես էլ ասացի՝ տվեք ինձ խանութների ահա այս շարքը, - Հրաչիկը մատնացույց արեց ապակեպատ խանութների կողմը, - հիմա այս կրպակները վարձով եմ տվել ու ամեն ամսվա վերջին գալիս եմ վարձերն ստանալու, հետո մտնում եմ իմ հարեւան Իշխանի մոտ ու ներսի սենյակում մի բաժակ բան ենք խմում։

Այս պատմությունը լուրջ մտորումների տեղիք տվեց։ Իհարկե, Հրաչիկին ոչինչ չասացի, բայց հրաժեշտ տալուց հետո քայլում ու մտածում էի, որ չի եղել որեւէ քաղբանտարկյալ, որին իշխանությունները կանչեն ու ասեն՝ հայրենիքին ծառայություն ես մատուցել կամ

հայրենիքին ծառայություն եք մատուցել, ու դրա դիմաց պետությունը ցանկանում է վարձահատույց լինել: Ամենեւին դեմ չեմ, որ Հրաչիկը եւ էլի բազմաթիվ հրաչիկներ խանութներ ունենան: Թող ունենան եւ թող ապրեն: Բայց Հայաստանի անկախության ու լինելիության համար պայքարողների, Հայաստանի սահմանները պաշտպանելիս զոհվածների ու խեղվածների մոռացված ու մերժված լինելու պարագայում նման պատմություն լսելը մտածելու տեղիք էր տալիս: Նախկին չեկիստների, դատավոր-դատախազների թոշակները, «հայրենիքին մատուցած ծառայության համար» ստացած նրանց շքանշանները, շնորհներն ու պարգեւները, ապահով կյանքն ու ապահով ծերությունն իսկական զավեշտ է նրանց զոհերի անապահովության ֆոնին:

Մի քանի օրից կրկին հանդիպեցի խանութի մոտ կանգնած Իշխանին ու ժպտալով հարցրի. «Հարեւանդ ո՞նց է»:

- Պատկերացնու՞մ ես, մահացավ, - եղավ անակնկալ պատասխանը:

Մահացել էր Հրաչիկ Գրիգորյանը, որն ինձ ծանոթ այն սակավաթիվ չեկիստներից էր, որ գոնե զրույցի մակարդակով փորձում էր սկզբունքային լինել կամ իրոք սկզբունքային էր եղել՝ ասելով, որ չի կարող սովետներին նվիրված ու սովետներին ծառայելու երդում տված չեկիստը նույն եռանդով անկախ Հայաստանին ծառայել: Իրականում խորհրդային ողջ ՊԱԿ-ը սովետների տապալումից հետո դրսեւորած իր վարքագծով անսկզբունքայնության փայլուն օրինակ է: Այդ կառույցն ստեղծել էր խորհրդային երկիրն՝ իր իշխանությունը պաշտպանելու ու իրեն ծառայելու նպատակով: Բայց այս Պետական անվտանգության կոմիտե կոչված մարմինն ամենավճռական պահին լքեց ու դավաճանեց իրեն ծնած ու սնած երկրին ու իշխանությանը, ապա ամենայն թեթեւությամբ սկսեց ծառայել նոր կարգերին: Ողջ հետխորհրդային տարածքում նրանք մնացին ու շարունակում են ծառայել: Ծառայում են տարբեր տրամաչափի դիկտատորներին, ծառայում են կրոնական գունավորմամբ իշխանություններին, ծառայում են քրեաօլիգարխիկ համակարգերին: Հարկ եղած դեպքում պատրաստ են անմնացորդ նվիրվածությամբ ծառայել ցանկացած ռեժիմի ու ցանկացած մեկի՝ միայն թե իրենց կերակուրը տեղը լինի:

Իհարկե, կարող էի եւ իմ պատմությունը հաուպտվախտով չսկսել: Կյանքիս այս փոքրիկ հատվածը կարող էի ընդհանրապես չհիշատակել: Ի վերջո, սա իմ կյանքում մեծ դեր չի էլ խաղացել: Կարող էի սկսել ՊԱԿ-ի մեկուսարանից կամ իմ առաջին՝ Պերմի մարզի Պոլովինկա ավանում գտնվող 37-րդ քաղաքական կալանավայրից, բայց միշտ իմացել եմ՝ եթե երբեւէ վճռեմ մի կողմ դնել ծուլությունս ու գրեմ, ապա սկսելու եմ հաուպտվախտից: Պատճառն իմ լավ բարեկամ, հայտնի այլախոհ ու հայտնի գրող, 1986 թ. Չիստոպոլի բանտում վախճանված Անատոլի Մարչենկոն է: 1983 թ.արեւոտ մի օր նրա հետ պտտվում էինք Պերմի մարզի Վսեսվյատսկ ավանում գտնվող 35-րդ քաղաքական կալանավայրի ոչ մեծ օղակաձեւ հրապարակում, ու ես ամենայն մանրամասնությամբ պատմում էի նրան իմ կյանքի հաուպտվախտային այս արկածները: Դեպքերը հիշողությանս մեջ դեռ թարմ էին, եւ կարողանում էի ավելի շատ նրբություններ հիշել: Պատմությունս մինչեւ վերջ լսելուց հետո Տոլիկն ասաց.

-Քեզ մի վատ խորհուրդ տամ. աշխատիր հիշել այս պատմածդ։ Երբ դուրս գաս աքսոր՝ գրի առնելու հնարավորություն կունենաս։ Անպայման գրիր։ Եթե հաջողեցնես եւ ինքնահրատ մամուլում հրապարակես, շատ մեծ արձագանք կստանա։ Բայց լավ մտածիր, հրապարակելուց հետո դրա համար կրկին դատվելու ես։ Լավագույն դեպքում կրկին այս կալանավայր ես վերադառնալու, իսկ վատագույն դեպքում՝ հատուկ ռեժիմի կալանավայր։

Մենք այն ժամանակ չգիտեինք, որ իմ պատժաչափի ավարտից կարճ ժամանակ անց կավարտվի նաեւ Խորհրդային միությանը պատմության հատկացրած ժամանակը, եւ այս միությունն այլեւս գոյություն չի ունենա։ Չկան սովետները, չկա ինձ սպառնացող վտանգը, բայց հաճելի է մտածել, որ հետեւում եմ Տոլիկի խորհրդին։ Ես նրան՝ այդ լուսավոր մարդուն, հրաշալի ընկերոջը, ճիշտ ու անկոտրում քաղկալանավորին հիշելու ու ներկայացնելու առիթներ դեռ կունենամ։

Նախաքննություն

Օդանավակայանից ինձ անմիջապես տարան պետանվտանգության կոմիտեի քննչական բաժին ու սկսեցին հարցաքննել։ Ես, իհարկե, ձեւացնում էի, թե չեմ հասկանում՝ ինչու են ինձ այստեղ բերել ու ինչ հարցեր են տալիս։ Զորամասի իմ դարակից, նաեւ հյուսնի արհեստանոցում պատրաստած իմ թաքստոցից գտել էին հակախորհրդային գրառումներով լի ծոցատետրս, Մարզպետ Հարությունյանի ու Իշխան Մկրտչյանի հետ նամակագրությունս գտնվել էր նրանց հսկողության ներքո։ Երկու նամակ Մարզպետին հասնելու փոխարեն՝ «հասել էր» իրենց։ Ես պաշտպանվելու կամ խուսանավելու խնդիր չէի դրել իմ առաջ։ Գրառումներն ու ծոցատետրն իմն էին, դրանցից հրաժարվելու մտադրություն չունեի։ Նաեւ մտադիր չէի թաքցնել իմ հակախորհրդային հայացքները։ Անիմաստ էր։ Այդ հայացքները հստակորեն արտահայտված էին իմ գրառումներում։ Ինձ ավելի շատ հետաքրքրում էր, թե ի՛նչ է վերագրվում իմ ընկերներին, ի՛նչ են արել նրանք, որտե՛ղ են, ո՛վ է նրանցից կալանավորված եւ ո՛վ՝ դրսում։ Ինձ ուղղված հարցերից փորձում էի ինչ-որ բան հասկանալ կամ կռահել։

Շատ ավելի ուշ միայն կարողացա տեղեկանալ, որ մեր խմբի անդամները ձերբակալվել են 1980 թ. մայիսի վերջին տասնօրյակում։ Ես վերջին կալանավորվածն էի՝ հունիսի 6-ին։ Ինձանից առաջ կալանավորվել էին Մարզպետ Հարությունյանը, Իշխան Մկրտչյանը, Սամվել Եղիազարյանը եւ Հովհաննես Աղաբաբյանը։ Խմբի մյուս բացահայտված անդամները մնացին վկաների կարգավիճակում։ Սա արդեն, բնականաբար, կալանավորված անդամների ջանքերի շնորհիվ։ Ոմանք ընդհանրապես մնացին չբացահայտված, եւ նրանց անուններն այդպես էլ չհնչեցին ոչ նախաքննության եւ ոչ էլ դատաքննության ընթացքում։

Սամվել Եղիազարյանին ձերբակալել էին մայիսի 19-ին շինծու մեղադրանքով՝ խուլիգանություն։ Այդ օրը նրան կանչել են Շահումյանի (այսօր՝ Մալաթիա) շրջանի միլիցիայի բաժին եւ հայտարարել, թե, իբր, հասարակական վայրում նա խուլիգանական արարք է թույլ տվել՝ հայհոյել է անցորդներին։ Ապա ոստիկանական բաժնից նրան տեղափոխել են ժամանակավոր պահման մեկուսարան, իսկ երեք-չորս օրից՝ պետանվտանգության կոմիտեի մեկուսարան։ «Խուլիգանության» մասին մեկ էլ հիշել են չորս ամիս անց՝ օգոստոսին, այդ դրվագով նրան մեկ տարվա ազատազրկման դատապարտելիս։ Սամվելը պատմում էր, որ գոնե ձեւականորեն մեկ տուժող չկար դատարանում։

Հաջորդ օրը՝ մայիսի 20-ին, ձերբակալել էին Իշխան Մկրտչյանին եւ Հովհաննես Աղաբաբյանին։

Իշխանի ձերբակալումը մի ամբողջ կինո է հիշեցնում։ 1980 թ. մայիսի 21-ի առավոտյան ժամը 7-ի կողմերը, երբ տան անդամները դեռ քնած են լինում, չեկիստները գնում են Ախպարաշեն կոչվող թաղամասում գտնվող Իշխանի եղբոր տուն, որտեղ բնակվում էր նաեւ Իշխանը։ Նախորդ օրվա ուշ երեկոյան տուն տարած որոշ թղթեր թաքստոց տանելու փոխարեն՝ Իշխանը դրած է լինում բարձի տակ, առավոտյան թաքցնելու մտադրությամբ։ Բնական է, որ բարձի տակից դրանք հայտնաբերվում են։ Մինչ խուզարկություն իրականացնողները կշարունակեն իրենց գործը, օգտվելով նրանց անուշադրությունից, Իշխանը խլում է

հայտնաբերված եւ սեղանին դրված մի քանի կարեւոր փաստաթղթեր, դրանց թվում՝ հասցեների ու հեռախոսահամարների տետրն ու դուրս թռչում: Վազում է Ախպարաշենի նեղլիկ ու ծուռումուռ փողոցներով, իսկ նրա հետեւից՝ չեկիստները: Հաջողում է հասցեների ու հեռախոսահամարների տետրն անհետացնել այնպես, որ հետքն անգամ չեն կարողանում գտնել: Մնացած նյութերից ՊԱԿ-ի աշխատակիցները կարողանում են «փրկել» ոչ այնքան կարեւոր թղթեր եւ հիմնավորապես պատառոտված տետր՝ «Ընդհատակյա կազմակերպությունների անվտանգության կանոնները» վերնագրով, որը ես էի արտագրել: Այսօր այդ տետրն իմ անձնական արխիվում է: Իմ «Այլախոհությունը խորհրդային Հայաստանում» գրքում թյուրիմացաբար գրել էի, որ քրեական գործում է գտնվում: 1991-ին՝ նախկին քաղբանտարկյալներին արդարացնելուց հետո ՊԱԿ աշխատակիցներն ինձ հրավիրեցին իրենց մոտ, տվեցին քրեական գործս եւ ասացին, որ այնտեղից կարող եմ վերցնել՝ ինչ կամենամ: Այդ քրգործից վերցրի երկու ծոցատետրս, Մանուչարյան Ալեքսանդրի հեղինակած «Ազգային իրավունք» գրքույկը եւ Իշխանի պատառոտած ու չեկիստների ձեռքով կցմցած այդ տետրը: Ահա պատառոտված ու սոսնձված տետրի լուսանկարը:



Իշխանն իր այս արարքի համար մեղադրվեց քր. օր-ի 207[1] հոդ. 2-րդ մասով (միլիցիայի աշխատողին կամ ժողովրդական դրուժիննիկին դիմադրություն ցույց տալը) եւ 1980 թ. հուլիսին դատապարտվեց ազատազրկման 4 տարի ժամանակով: Նրա այս պատժաչափը հետագայում կլանեց «հակախորհրդային ագիտացիա եւ պրոպագանդա» հոդվածով ստացած պատժաչափը:

Մարզպետ Հարությունյանը ձերբակալվել էր մայիսի 31-ին: Մարզպետին տարել էին խորհրդային տարիներին Օրջոնոկիձեի շրջան կոչվող (այժմ՝ Էրեբունի) միլիցիայի բաժին եւ անձնական խուզարկության ժամանակ թմրանյութ էին դրել գրպանը: Մարզպետը պատմում էր, որ դա այնքան անթաքույց է արվել, որ ինքը հասցրել է բռնել միլիցիոների ձեռքը եւ ասել՝ սա քոնն է: Բայց բաժնում կազմում են համապատասխան արձանագրություն, թմրանյութ պահելու մեղադրանքով քրեական գործ են հարուցում ու կալանավորում նրան: Ի տարբերություն քրեական բանտերի՝ ՊԱԿ-ի մեկուսարանում աղմկելը, լուսամուտից ձայնելը, հարեւանի հետ զրուցելը խստորեն արգելվում էին: Հնարավոր է, իհարկե, լինեն նման դեպքեր, բայց աղմկողն անմիջապես կլռեցվի կամ կհայտնվի որեւէ մենախցում, որտեղից ոչ ոք նրան լսել չի կարող: Մարզպետն ուներ սուր միտք եւ արագ էր կողմնորոշվում: Նրա բոլոր ծանոթները սա կփաստեն: Նախկինում՝ 1969-ին արդեն եղել էր ՊԱԿ-ի մեկուսարանում եւ գիտեր այնտեղի դրվածքը: Ընկերներին տեղեկացնելու համար, որ ինքը նույնպես կալանավորված է եւ գտնվում է նույն մեկուսարանում, լուսամուտից բարձր ձայնով սկսում է կանչել.

- Մարզպետ, Մարզպետ, հե՜յ, Մարզպետ, էս քեզ էլ են կալանավորե՞լ, ձեն հանի, Մարզպետ:

Զարմացած հսկիչները ոչինչ չեն հասկանում: Զգում են, որ ձայնը գալիս է Մարզպետի խցից, բայց նաեւ լսում են, որ Մարզպետին են կանչում:

Ինչպես Սամվելի դեպքում՝ Մարզպետին նույնպես նույն օգոստոս ամսին են հորինված քրեական գործով դատում ու երկու տարով ազատազրկում: Դատի ժամանակ դատախազն ասում է.

- Հարությունյան Մարզպետը խորամանկ է ու իսկական հանցագործ: Նա գիտի, որ նարկոտիկ օգտագործելը վնասակար է՝ ինքը չի օգտագործում: Նարկոտիկը տարածում է: Հատկապես երիտասարդների միջավայրում՝ նրանց թունավորելու նպատակով:

Մարզպետը հակադարձում է.

- Քաղաքացի դատախազ, եթե ես ցանկանայի թունավորել երիտասարդներին, ապա ոչ թե նարկոտիկ, այլ մարքսիզմ կտարածեի:

Մեր կազմակերպության անդամներից մեկը՝ Հովհաննես Աղաբաբյանը, որին մենք Օնիկ կամ Հովիկ էինք կանչում (դատապարտվեց երեք տարվա ազատազրկման եւ ողջ պատիժը մինչեւ վերջ կրեց Մորդովիայի քաղաքական կալանավայրում), անհասկանալի պատճառով՝ գուցե մոլորվել էր, գուցե վախեցել էր, գուցե խաբվել էր չեկիստների սուտ խոսքերին, որոնք ամեն ինչ անում ու ասում էին, միայն թե քննության փուլում գտնվող եւ իրար հետ շփման հնարավորություն չունեցող նախկին ընկերներին իրար դեմ լարեն՝ ձերբակալվելուց

անմիջապես հետո ընդարձակ ցուցմունքներ էր տվել։ Ինչ գիտեր՝ պատմել էր ծայրեծայր։ Տվել էր անուններ։ Անգամ՝ Իշխանի կազմակերպած մասնաճյուղի տղաների անունները։ Նա տեղյակ չէր, թե որտեղ է գտնվում կազմակերպության թաքստոցը։ Սա է պատճառը, որ չեկիստներն այդպես էլ չկարողացան ձեռք գցել իրենց համար կարեւոր նշանակություն ունեցող մեր կազմակերպության մի շարք փաստաթղթեր եւ հասցեներ ու անուններ պարունակող ցուցակներ, որոնց գոյության մասին 100 տոկոսով գիտեին։ Ոչ Սամվելը, ոչ Մարզպետը եւ ոչ էլ Իշխանը ողջ նախաքննության ընթացքում այդ թաքստոցի մասին ոչինչ չասացին, եւ մեղադրական եզրակացությունում ու դատավճռում արձանագրվեց. «Նշված փաստաթղթերը քննության ընթացքում չեն հայտնաբերվել եւ քր. գործին չեն կցվել» ։ Ընդհանրապես մեր դատավճռում եւ քր. գործի նյութերում հաճախ են հանդիպում «քր. գործով չպարզված անձ», «քր. գործով չհայտնաբերված նյութեր» եւ այս կարգի այլ ձեւակերպումներ։ Օնիկի մասով, ընդհակառակը, մեղադրական եզրակացությունում եւ դատավճռում գրված է, որ նա օժանդակել է հանցագործության բացահայտմանը։ Ես շատ չէի ցանկանա, որ իմ ընկերներից որեւէ մեկը նման դերակատարում ստանձներ։ Հովիկը նորմալ տղա էր, եւ նրա հետ նման բան չպետք է տեղի ունենար։ Հետագայում երեք տարին կալանավայրում անցկացրեց, իսկ ավելի ուշ՝ 1987-ից հետո դարձավ հայաստանյան համաժողովրդական շարժման ամենաակտիվ մասնակիցներից մեկը։ Մինչեւ վերջերս էլ Հայաստանում կազմակերպված ցույցերի ու երթերի մշտական մասնակիցներից մեկն էր։

Նախաքննության մասին մանրամասն գրելու կարիք չկա։ Շատերն են այդ գործընթացը մանրակրկիտ նկարագրել։ Քննիչները հիմնականում աշխատել ու աշխատում են նույն ոճով՝ գտնել հարցաքննվողի խոցելի կողմերը եւ «խոսեցնել» նրան, հակադրել նրան նույն գործով անցնող իր ընկերներին. «Քեզ նրա (կամ՝ նրանց) հետ համեմատել չի լինի, դու խելոք ու կազմակերպված մարդ ես, կարող ես փայլուն ապագա ունենալ, իսկ նա (կամ՝ նրանք) ո՞վ է՝ անգրագետ, անհեռանկար մարդ»։ Եւ ամենակարեւորը. «Նա (կամ՝ նրանք) ամեն ինչ արդեն պատմել է, հիմնականում քեզ վրա է մեղքը բարդում, դու պետք է ճիշտն ասես, որ քեզ կարողանանք փրկել»։ Կամ. «Քեզանից շատ բան չի պահանջվում, քեզանից անգամ ընկերներիդ վրա ցուցմունքներ տալ չի պահանջվում, մենք ամեն ինչ գիտենք, դու միայն ճիշտն ասա»։ Եւ այս կարգի այլ հնարքներ։

Մեզանից յուրաքանչյուրն ուներ իր քննիչը։ Մի ամբողջ քննչական խումբ էր աշխատում, գումարած՝ տարատեսակ տեխնիկական ու օպերատիվ աշխատողներ։ Մեզ հետ կապված աշխատանքներում ներգրավված չեկիստներից ոմանք հետագայում՝ արդեն Անկախ Հայաստանում, դարձան բարձրաստիճան պաշտոնյաներ։ Ոմանք՝ ազգային անվտանգության ծառայությունում, ոմանք էլ՝ այլ բնագավառներում։ Ասենք՝ Իշխանի քննիչը դարձավ դատարանի նախագահ, մեկ ուրիշը՝ դատավոր, օպերատիվ ծառայության աշխատակիցներից մեկը՝ վարչության պետ, մեկ ուրիշը՝ գլխավոր վարչության պետ եւ այսպես շարունակ։ Չարժե դրանց վրա կենտրոնանալ։ Նրանք շատ են։ Այս փաստերը վկայում են ե՛ւ այս չեկիստների, ե՛ւ Անկախ Հայաստանի որակի մասին։ Իրենց ձեւախեղումներով, ցանկացած գաղափարի ու ցանկացած երկրի ծառայելու այսչափ պատրաստակամությամբ չեկիստներն անսկզբունքայնության փայլուն օրինակներ են դրսեւորում, իսկ Անկախ Հայաստանն էլ, դրանց ծառայության կարիքն զգալով ու դրանց

ծառայությունից օգտվելով, ի ցույց է դնում խորհրդային իրականությունից իր կտրված չլինելը ու դառնում է այդ արատավոր իրականության վատագույն դրսեւորումների կրողը։ Սա է նաեւ պատճառը, որ այսօր այսպիսի տխուր Հայաստան ունենք։ Սա է նաեւ պատճառը, որ նույնքան տխուր վիճակում են հետխորհրդային մյուս հանրապետությունները։ Երեւի միայն մերձբալթյան հանրապետություններն են կարողացել խորհրդային անցյալին կապող կապերը կտրել, այն էլ՝ ոչ լիարժեք։ Այս բնագավառում շատ ավելի լուրջ հաջողություններ են գրանցել Արեւելաեվրոպական նախկին սոցիալիստական երկրները։ Այս հանգամանքն էլ նրանց անկաշկանդ զարգանալու հնարավորություն է ընձեռում։

1979-ի ընթացքում մեր, կարելի է ասել՝ ամենօրյա շփումների ժամանակ Մարզպետն ինձ շատ բան էր պատմել ՊԱԿ-ի, ՊԱԿ-ի մեկուսարանի, օպերատիվ ծառայության նրբությունների մասին, բայց նախաքննության փուլն անտեսել էր։ Շատ հստակ էր ներկայացրել ինձ ձերբակալման օրը եւ թե ինչպես են ինձ ձերբակալելուց ու հարցաքննելուց հետո քննիչի սենյակից ուղեկցելու մեկուսարանի խուց։ Ոչ մի բան բաց չէր թողել։ Քննիչի սենյակը գտնվում է ՊԱԿ-ի շենքի 3-րդ հարկում, այնտեղից աստիճաններով իջեցնելու են առաջին հարկ, որտեղ մեկուսարանի տարածք մտնելու դուռ կա։ Մեկուսարանի միջանցքի աջ կողմում գտնվում է մեկուսարանի պետի առանձնասենյակը։ Այդ սենյակի նախասրահում ինձ խուզարկելու են։ (Իրականում ինձ խուզարկեցին միջանցքում)։ Ապա երկաթյա դուռը բացելով՝ ուղեկցելու են դեպի բուն մեկուսարանի տարածք, որտեղ ձախ կողմում միայն երկտեղանոց խցեր են, իսկ աջ կողմում երկուսից ավելի տեղանոց խցեր են։ Ոտնաձայները խլացնելու նպատակով միջանցքի հատակին գորգ է փռված։ Երկտեղանոց խցերում երկաթյա ցածրիկ մահճակալներ են եւ մեկ փոքրիկ պահարան։ Այնտեղ չկան զուգարան ու լվացարան։ Խցի դուռը, ինչպես այլ բանտերում ու մեկուսարաններում է, բախել չի կարելի, փոխարենը կոճակ կա, որը սեղմելուց հետո դրսի կողմից վառվում է լամպը։ Միջանցքում հերթապահող հսկիչը տեսնում է վառվող լամպը եւ մոտենում քեզ։ Օրական երկու անգամ՝ առավոտյան եւ երեկոյան տանում են զուգարան։ Այդ զուգարան կոչված վայրն էլ էր հստակ նկարագրել, որտեղ լվացարանի ծորակներից մեկը՝ դռան կողմից վերջինը, զոդված էր։

Մարզպետն այս ամենը այնքան պարզորոշ էր նկարագրել, որ ամեն քայլափոխի մի ծանոթ բան էի հայտնաբերում։ Տարիներ անց, արդեն ԽՍՀՄ փլուզումից ու Հայաստանի անկախացումից հետո, որպես իրավապաշտպան տարբեր առիթներով այցելել եմ այդ մեկուսարան։ Այնտեղ հիմա, իհարկե, շատ բան է փոխվել։ Մի անգամ 90-ականների վերջերին մեզ հետաքրքրող կալանավորներին տեսնելուց ու զրուցելուց հետո ուղեկցող հսկիչներին խնդրեցի ցույց տալ մեկուսարանի նախկին արտաքնոցը, որն այդ ժամանակ՝ խցերում զուգարան ավելացնելուց հետո, վերածվել էր պահեստի պես մի բանի, ու զարմանքով տեսա, որ այնտեղ մեր ազատազրկման ժամանակից ի վեր ամեն ինչ անփոփոխ է մնացել, նույնիսկ՝ զոդված ծորակը։ Այսօր այդ մեկուսարանում արդեն այնքան մեծ փոփոխություններ են կատարվել, որ մեր ժամանակների հետքը երեւի թե դժվար լինի գտնել։

Բազմաթիվ նախկին քաղբանտարկյալներ, խոսքս հայաստանցի քաղբանտարկյալների մասին չէ, իրենց հուշերում գրում են, որ, շփվելով իրենցից առաջ եղած ու փորձառու քաղբանտարկյալների հետ, առաջին հերթին նրանցից լսում էին, թե ինչպես պետք է կամ

ինչպես է հնարավոր, որ քաղբանտարկյալը դրսեւորի իրեն նախաքննության փուլում: Կան տարբեր մոտեցումներ. կարելի է մասնակցել նախաքննության ընթացքին՝ չտալով պահանջվող ցուցմունքներ, կարելի է ցուցմունքներ տալ, թե ինչ ես արել անձամբ ինքդ՝ ոչինչ չասելով այլոց գործունեության մասին, նաեւ սեփական ցուցմունքներով պաշտպանել կամ մեղադրանքից դուրս թողնել այլոց, հատկապես նրանց, ովքեր դրսում են, բայց կալանավորվելու վտանգի տակ, ապա՝ ամեն ինչ անել, որ ՊԱԿ-ի տեսադաշտում չհայտնվածներն անհայտ մնան: Կարելի է նաեւ ընդհանրապես չմասնակցել նախաքննությանը եւ ցուցմունքներ չտալ: Հայտարարել, որ հրաժարվում ես ցուցմունքներ տալուց, եւ թող ով ինչ ուզում է ասի կամ գրի: Փորձի նման փոխանակումն անչափ հեշտացնում է առաջին անգամ նախաքննության տակ հայտնված մարդու կյանքը: Ուրիշներից լսածը վերհիշելով ու քո իրավիճակին համադրելով՝ շատ ավելի հեշտ ես կարողանում կողմնորոշվել:

Մենք ունեինք գրավոր անվտանգության կանոններ, որտեղ բացատրվում էր, թե ինչպես պետք է իրեն դրսեւորի ընդհատակում գտնվող գործիչը հասարակության մեջ, ընտանիքում կամ բարեկամների շրջանում: Թե ինչ է պետական անվտանգության կոմիտեն, եւ ինչ սադրանքներ կարող է կազմակերպել: Թե ինչպես պարզել, որ քեզ հետեւում են եւ ինչպես խուսափել «պոչից» եւ նման այլ բաներ: Բայց նախաքննության ընթացքի մասին ոչինչ չկար՝ ոչ բանավոր եւ ոչ էլ գրավոր: Մարզպետն այս թեման չէր մանրամասնել մեզ հետ զրույցներում: Չի բացառվում, որ ասելիք չէր ունեցել: Մենք բոլորս էլ մասնակցել ենք նախաքննության ընթացքին: Արդեն ասացի, որ Աղաբաբյանից բացի՝ մեզանից ոչ ոք ավելորդ բան չի ասել: Ցուցմունքները վերաբերել են մեզ՝ կալանքի տակ գտնվողներիս, եւ մեկնումեկի ցուցմունքի հետեւանքով դրսում եղածներից ոչ ոք չի տուժել: Հակառակը՝ ամեն ինչ արվել է, որ դրսում մնացածներին վտանգ չսպառնա: Բայց ինչ էլ լինի, ՊԱԿ-ի թելադրած խաղի կանոններով խաղալով ու մեր մասնակցությամբ օգնել ենք նրանց, որ իրենց գործը համեմատաբար հեշտ անեն:

Դատելով քրեական գործերից եւ իմ ձեռքի տակ եղած դատավճիռներից, իսկ ես շատ դատավճիռներ ունեմ, հայկական այլախոհական շարժման բոլոր մասնակիցներն էլ, սկսած 60-ական թվականներից, մասնակցել են նախաքննության ընթացքին: Գուցե եղել են մեկ-երկու ինձ անհայտ բացառություններ, բայց ճնշող մեծամասնությունը մասնակցել է: Բոլորն էլ ցուցմունքներ տվել են: Սա է երեւի պատճառը, որ Մարզպետը սրա մասին մեզ հետ չի զրուցել: Հայկական այլախոհական միջավայրում ընդունված էր մասնակցել նախաքննությանը: Պատճառներից մեկը երեւի այն էր, որ հայկական միջավայրում, որպես կանոն, կալանավորվում էին խմբերով՝ մի քանի հոգի միասին: Շատ քիչ դեպքեր են եղել, երբ քրեական գործով ընդամենը մեկ մեղադրյալ է անցել: Երեւի թե կարելի է բացառություն համարել 1966-ին Զավեն Հարությունյանի դատապարտումը, երբ գործով, ճիշտ է, խումբ էր բացահայտվել, բայց որպես մեղադրյալ նա միայնակ էր ե՛ւ նախաքննության ընթացքում, ե՛ւ դատարանում: 1979 եւ1980 թթ.միայնակ են դատապարտվել Հայաստանի հելսինկյան խմբի անդամներ Ռոբերտ Նազարյանը եւ Էդիկ Հարությունյանը: 1974-ին ԱՄԿ գործով ընթացել է 9 դատավարություն, դատապարտվել է 16 մարդ: Նրանցից մեկի՝ Անդրանիկ Մարգարյանի դատավարությունը տեղի է ունեցել 1975-ին, բայց նա էլ է 74-ի հետեւանք: Այդ 16 մարդուց

ոմանց նկատմամբ (Քաջիկ Սահակյան, Անահիտ Կարապետյան, Ռուբեն Խաչատրյան, Աշոտ Նավասարդյան, Պարույր Հայրիկյան, Անդրանիկ Մարգարյան)՝ չնայած այն հանգամանքին, որ նույն կազմակերպության անդամներ են եղել, ղեկավարվել են նույն կենտրոնից ու, ըստ էության, արել են նույն գործը, ինչ-ինչ նկատառումներից ելնելով՝ հարուցվել են առանձին քրեական գործեր ու առանձին են դատապարտվել։ Բայց նույնիսկ այս դեպքում պետք է արձանագրենք, որ խումբ է կալանավորվել, եւ բոլոր կալանավորվածներն էլ, նրանց գործերն էլ փոխկապված էին։ Մեղադրյալների խմբի առկայության դեպքում արդեն շատ ավելի բարդ է դառնում միասնական լռելը, եւ սկսվում է ցուցմունքային գործընթացը։ Այսպիսով, ավանդաբար շարունակվող այս մոտեցման կրողն ենք եղել նաեւ մենք։

Այդ մոտեցման համաձայն, նախաքննության եւ դատաքննության փուլում կալանավորվածներն իրենց ցուցմունքներում, որպես կանոն, մերժում էին ներկայացված մեղադրանքները կամ հակառակը՝ իրենք էին մեղադրում ՊԱԿ-ին եւ խորհրդային իշխանություններին, պաշտպանում էին իրենց ընկերներին ու պաշտպանվում, պարզաբանում ու հիմնավորում էին իրենց տեսակետները, փորձում էին ակադեմիական վեճի բռնվել, բայց ինչ էլ որ անեին ու ասեին, վերջին հաշվով մասնակցում էին իրենց վրա հաստափոր քրեական գործեր սարքելու աշխատանքին։ Այս նրբություններին անտեղյակ ապագա ուսումնասիրողը՝ քրեական գործերը թերթելիս կարող է բոլորովին սխալ եզրահանգումներ անել ու սխալ պատկերացում կազմել քրեական գործերով անցնող մարդկանց մասին։

Օրինակ, 1968-ին ձերբակալվեցին ԱՄԿ երեք հիմնադիրները՝ Հայկազ Խաչատրյանը, Շահեն Հարությունյանը եւ Ստեփան Զատիկյանը։ Հարցաքննության առաջին իսկ օրը Հայկազ Խաչատրյանը հանձն է առնում, որ «Փարոս» թռուցիկը եւ «Փարոս» թերթը իրենք են տարածել, որ իրենք են հիմնադրել «Ազգային միացյալ կուսակցություն» կազմակերպությունը, եւ որ իրենց այս գործողությունները բխում են անկախ Հայաստան ունենալու անհրաժեշտությունից, իսկ ծավալած գործունեության համար իրեն ոչ մեղավոր է ճանաչում եւ ոչ էլ զղջում է։ Առերես հարցաքննության ժամանակ իր ընկերներին՝ հատկապես Ստեփան Զատիկյանին, որը կտրականապես հերքում էր ԱՄԿ-ի հետ իր կապը, հորդորում է ընդունել, որ իրենք են արել, եւ տալ համապատասխան ցուցմունքներ։ Նախաքննության փուլում որդեգրած իր այս մոտեցումը նա բացատրում էր դրսում գտնվող ու ՊԱԿ-ի տեսադաշտում չհայտնված ԱՄԿ մյուս անդամների անվտանգության ապահովմամբ։ «Այսպես, թե այնպես, - ասում էր նա, - նրանք արդեն գիտեն, որ մենք ենք այս գործի հեղինակները, եւ գործը փակելու ու մեզ դատելու համար իրենց միայն մեր խոստովանությունն է պետք։ Եթե մենք շարունակենք չընդունել մեր մասնակցությունն այս գործերին, ապա նրանք գործն ավարտել չեն կարող եւ մեզ ստիպելու համար, որ հանձն առնենք, էլ ավելի մեծ ծավալի ուսումնասիրություններ ու օպերատիվ աշխատանքներ պետք է կատարեն, ու չի բացառվում, որ այդ դեպքում արդեն կարողանան այլոց վրա դուրս գալ»։ Մոտեցումը պարզ էր. հայտարարում ես՝ դուք բացահայտել եք մեզ, ու մեզանից բացի մեր կառույցում այլ մարդիկ չկան, ինչ որ արվել է՝ արվել է մեր կողմից։ Եվ իրենց աշխատանքից գոհ չեկիստները սկսում են գործը դատարան ուղարկելու պատրաստությամբ զբաղվել։

Մենք գիտեինք, որ պետք է լինել հպարտ՝ չվախենալ, չնահանջել, չզղջալ, չջարդվել։ Այդպես էլ պահում էինք մեզ։ Առաջարկում էին հրաժարվել սեփական հայացքներից, զղջալ ու մեղմ պատժի արժանանալ, ինչը մերժում էինք։ Հատկապես ինձ վրա էր ճնշումը մեծ։ Ես, փաստորեն, Հայաստանում չլինելու պատճառով ընդհանրապես չէի մասնակցել կազմակերպության գործունեությանը։ Տեղյակ էլ չէի, թե մերոնք ինչ են արել։ Հետո իմացա, որ իմ բացակայության շրջանում ընկերներս ակտիվ կապերի մեջ են եղել այլ կազմակերպությունների ու գործիչների հետ։ Տարածել են Ալեքսանդր Մանուչարյանի հեղինակած «Ազգապատում» գործը, նաեւ առանձին գրքույկով «Ազգապատում»-ի մաս կազմող «Ազգային իրավունքը» եւ ռուսերեն գրված «Империализм»-ը։

Ապա՝ 1980-ի ապրիլի 24-ին՝ Եղեռնի օրվան ընդառաջ, ՀԵՄ-ը որոշում է Երեւանի կենտրոնական փողոցներում սեւ դրոշներ ու պաստառներ կախել։ Բնական է, որ դա պետք է արվեր գիշերը։ Բոլորը հավաքվել են Կիլիկիա թաղամասում գտնվող գաղտնի բնակարանում։ 23-ի գիշերը՝ մինչեւ գործողությունը սկսելը, Իշխանը նախապես պտտվում է այն տեղանքով, որտեղ դրոշները եւ պաստառները պետք է կախվեն, ու այդ տեղանքում դարաններ է նկատում։ Վերադառնում է տղաների մոտ եւ ասում, որ պետանվտանգության կոմիտեն տեղյակ է գործողությունից, որ իրենց հետեւում են, եւ դրոշները դեռ չկախած՝ կբռնվեն։ Զարմանալի էլ չէր, որ տղաներին արդեն հետեւում էին։ Չեկիստները նախապես ու հստակ տեղյակ են եղել ողջ ծրագրից։ Տեղյակ են եղել նաեւ, թե որտեղ են կախելու դրոշներն ու պաստառները։ Բանն այն է, որ դրոշներ եւ պաստառներ պատրաստելու համար սեւ գույնի կտոր գնելը եւ գործողության ծրագրավորումը, դեռեւս ապրիլի սկզբին, արվել էր Սմբատի մասնակցությամբ։ ՊԱԿ-ը որոշել էր մերոնց կալանավորել ապրիլի 23-ի լույս 24-ի գիշերը՝ դրոշներ կախելիս, բայց նրանց այդ ծրագիրը խափանվում է, որովհետեւ տղաները որոշում են ոչ միայն ծրագրված այդ գործողությունից հրաժարվել, այլեւ բնակարանում գտնվող փաստաթղթերը տեղափոխել մեկ այլ՝ ավելի ապահով թաքստոց։ Ըստ պայմանավորվածության՝ բոլորը բնակարանից դուրս են գալիս միասին, բայց բակից արդեն գնում են տարբեր ուղղություններով։ Իշխանը փաստաթղթերով աննկատ գնում է դեպի մյուս թաքստոց, որը այլ վայրում էր, եւ դրա տեղն անգամ կազմակերպության բոլոր անդամներին հայտնի չէր։ Արդյունքում, տեղյակ լինելով կազմակերպությունում շրջանառության մեջ գտնվող այլ փաստաթղթերի գոյության մասին, չեկիստներին ոչ մի կերպ չհաջողվեց դրանք ձեռք գցել։

Ես ոչ դրոշներից եմ տեղյակ եղել, ոչ թռուցիկներից եւ ոչ էլ Մանուչարյանի հեղինակած ինքնահրատ գրքույկներից։ Ինձ հետ կապված շատ բան չկար, բայց ՊԱԿ-ը վճռել էր ինձ նույնպես ներգրավել քրեական գործում։ Պատճառն իմ պահվածքն էր։ Ես չէի ժխտում իմ մասնակցությունը կազմակերպության աշխատանքներին։ Ներկայանում էի որպես համոզված հակախորհրդային ու անկախական գործիչ։ Իմ ընդգծված հակախորհրդայնությունը չեկիստներին հունից հանում էր։ Երիտասարդական ավյունով ունեցածս հակասովետիզմը ծայրահեղության էի հասցրել ու նախաքննության ընթացքում անընդհատ ի ցույց էի դնում։ ՊԱԿ-ն իմ մեղադրանքն ավելի հիմնավոր դարձնելու համար վճռեց ինձանից առգրաված ծոցատետրերին, որոնց մեջ հակախորհրդային ու հայրենասիրական բնույթի բանաստեղծություններ էին, ավելացնել նաեւ Ալեքսանդր

Մանուչարյանի գրքույկների տարածման գործը։ Այդպես էլ գրեցին մեղադրական եզրակացության մեջ ու դատավճռում. Իբր՝ ես դրանք կարդացել եմ ու տարածելու նպատակով այլոց եմ փոխանցել՝ այն դեպքում, որ դրանք մեր կազմակերպությունում են հայտնվել իմ բանակային ծառայության ընթացքում, եւ ես դրանց առնչվել չէի կարող նույնիսկ մեծ ցանկության դեպքում։ Ծիծաղելի էին գործ սարքելու այս պարզունակ հնարքները։ Վստահ էի, որ դատելու են ինձ։ Այդ նպատակով էին բանակից ՊԱԿ-ի մեկուսարան բերել։ Հակառակ դեպքում հենց այնտեղ՝ Լատվիայում կհարցաքննեին որպես վկա ու Հայաստան չէին հասցնի։ Ես դեմ չէի այս տարբերակին։ Վճռել էի՝ պետք է լինեմ ընկերներիս հետ։ Մարզպետին ու Իշխանին մեծ պատժաչափեր էին սպասվում, դա պարզ երեւում էր քննիչների վերաբերմունքից, եւ ես չէի կարող նրանց հետ ու նրանց կողքին չլինել կամ փոքրիկ պատիժով «պլստալ»։ Այս դեպքում արդեն ես՝ ես չէի լինի։ Արդյունքում, չնայած կազմակերպության աշխատանքներին չէի մասնակցել, չնայած Հայաստանից բացակայել էի, միայն ծոցատետրիս ու նախաքննության փուլում ցուցաբերած վարքիս պատճառով եղա ու մնացի ընկերներիս հետ, ինչի համար ոչ մի վայրկյան չեմ զղջացել ու չեմ զղջում։ Ծոցատետրում եղած բանաստեղծություններս թույլ էին։ Այսօր դրանք դժվարությամբ բանաստեղծություն կանվանեի։ Բայց լավ հիշում եմ, որ դրանցից մի քանիսը չեկիստներին աներեւակայելի զայրույթ էին պատճառում։ Հատկապես չարացած էին Ստեփան Զատիկյանի մասին գրված բանաստեղծությունից։ Այդ բանաստեղծությունը գրել էի Զատիկյանի գնդակահարության մասին լուրը «Իզվեստիա» թերթում տպագրելու օրը՝ 1979-ի հունվարի 31-ին։

Ստեփան Զատիկյանի հիշատակին

Դու ցանկացար հայի սրտում
Քնած վրեժն արթնացնել,
Ցույց տվեցիր այս աշխարհին՝
Մեր սրտերում դեռ վրեժը չի մեռել։

Դու եղար մեր անհավասար պայքարի
Զոհն առաջին զոհը, մարտիրոսն իսկական,
Զոհը միակ, չխոնարհվող, հույսով լի,
Միշտ կհիշենք քեզ, սիրելի Զատիկյան։

Ու գուցե գա մեր պայքարի ավարտն էլ,
Կանգնի հպարտ Հայաստանը ազատված,
Որի համար դու զոհեցիր քո կյանքը,
Դու զոհվեցիր ազատություն չտեսած։

Եւ ազատված Սեւանի ափին
Կկանգնի քո արձանը մարմարյա,
Կկանգնես դու՝ սուրը բռնած քո ձեռքին,
Սիրտդ վրեժ, ուշքդ տված պայքարին։

Այստեղ Ստեփան Զատիկյանը որպես առաջին ու միակ զոհ է ներկայացված, ինչը ճիշտ չէ։ Նրա հետ միասին գնդակահարվել էին Հակոբ Ստեփանյանը եւ Զավեն Բաղդասարյանը, բայց գնդակահարության մասին «Իզվեստիայի» հրապարակած լուրում նշված էր միայն Ստեփան Զատիկյանի անունը։

Թռուցիկների կամ ինքնահրատ գրականության մասին խոսելիս անպայման պետք է ասվի այդ տարիների տպագրական հնարավորությունների մասին։ 21-րդ դարի մարդը, որի ձեռքի տակ կան ժամանակակից հեռախոսներ, համակարգիչներ, ինտերնետ, սոցիալական ցանցեր, տարատեսակ բազմացնող հարմարանքներ, պատկերացում անգամ չունի այդ մասին։ 1960-70-80- ականների մարդը զուրկ էր այսօրվա հնարավորություններից։ Տպագրական միջոցներ չկային, ամենատարածվածը գրամեքենան էր, որը հատուկ ծառայություններում ենթակա էր խիստ հաշվառման, այն ձեռք բերելու համար մուտքագրվում էին մարդու անձնական տվյալները, իսկ գրամեքենայի շրիֆտը հնարավոր էր նույնականացնել։ Տպագրում ու բազմացնում էին ինքնաշեն տպագրական հարմարանքների օգնությամբ։ Զարտուղի ճանապարհներով շրիֆտներ էին հայթայթում, իրենք էին շրիֆտներ պատրաստում։ Մի խոսքով, տեքստ գրելը, տպագրելը, բազմացնելը եւ տարածելը աներեւակայելի աշխատատար գործ էր ու անչափ վտանգավոր։ Բայց որքան էլ դժվար ու վտանգավոր էր, թվաքիչ մարդիկ դրանով միշտ էլ զբաղվել են։ Տպագրել, բազմացրել ու տարածել են թռուցիկներ, թերթիկներ ու թերթեր, ամբողջական գրքույկներ, ինչի համար, բնականաբար, կալանավորվել ու երկար տարիների ազատազրկման են դատապարտվել։

ՊԱԿ-ի մեկուսարանում սկսված վերանորոգման պատճառով այդ մեկուսարանի բոլոր կալանավորներիս գրեթե երկու ամսով տեղափոխեցին կրկեսի մերձակայքում գտնվող Երեւանի բանտ, որի տարածքում այժմ դատապարտյալների հիվանդանոցն է։ Այսօր այդտեղից մի 150 մետր հեռավորության վրա եմ ապրում։ Մեզ համար կանանց մասնաբաժնից նախապես մի հատված էին առանձնացրել, որտեղ էլ մեզ տեղավորեցին։ Ռեժիմի իմաստով շատ բան չփոխվեց։ Ի տարբերություն ՊԱԿ-ի մեկուսարանի՝ խցերի ներսում արտաքնոց ու ծորակ կային։ Կոյուղու միջոցով հնարավոր էր զրուցել հարեւանությամբ նստած կանանց հետ։ Այլ խցերի հետ հաղորդակցվելու այս միջոցը շատ տարածված է բանտերում։ Շատ հեշտ է արվում։ Զուգարանակոնք կոչված բանտային հարմարանքը միացված է ընդհանուր կոյուղուն, եւ եթե դրա մեջ ջուր չլինի կամ եղած ջուրը դատարկես, ապա խողովակներով ձայնը հանգիստ փոխանցվում է խցից խուց։ Այստեղ կեղտոտ էր, ու տարատեսակ միջատներ էին վխտում։ Այդ նույն զուգարանակոնքի անցքից հսկայական առնետներ էին դուրս գալիս ու հետդարձի ճանապարհը կորցրած վազվզում էին խցով մեկ։ Ես ու խցակիցս, ձեռքի տակ հարմար ոչինչ չունենալով, մեր կոշիկներն էինք նետում առնետի ուղղությամբ, իսկ սա խելակորույս վազում ու վազում էր այնքան՝ մինչեւ կամ դիպուկ հարվածով նրա հարցը կլուծեինք, կամ պատահաբար կգտներ զուգարանակոնքի անցքը ու ընտանիք կվերադառնար։ Եթե ոչ ամեն օր, ապա երկու-երեք օրը մեկ սա կարող էր կրկնվել։ Ավելի ուշ մեր հագուստից խցան պատրաստեցինք ու դրանով փակում էինք զուգարանակոնքի անցքը։ ՊԱԿ-ի մեկուսարանում նման դեպքերը բացառվում էին։ Այնտեղ խցերը փոքր էին ու մաքուր, հատակն էլ, ի տարբերություն Երեւանի բանտի

բետոնե հատակի՝ փայտյա էր։ Խոսքուզրույցներում ՊԱԿ-ի մեկուսարանը ՊԱԿ-ի նկուղ են անվանում։ Իրականում նկուղ չէ, գտնվում է առաջին հարկում։ Այդ մեկուսարանի տակ՝ նկուղային հարկում կա ճիշտ նույն մեկուսարանի չափ ու նույն դասավորությամբ մեկ այլ մեկուսարան, որը մեր ժամանակներում չէր օգտագործվում։ Հավանաբար, հենց դա է եղել ստալինյան շրջանի ՊԱԿ-ի մեկուսարանը, այստեղից էլ, երեւի, պահպանվել է «ԿԳԲ-ի նկուղ» տարածված արտահայտությունը։ Մեկուսարանի բաղնիքը նկուղային հարկում էր, եւ շաբաթական մեկ անգամ բաղնիք իջնելիս անցնում էինք այդ հին մեկուսարանի դիմացով, եւ քանի որ դեպի բաղնիք տանող աստիճանավանդակի ու մեկուսարանի միջեւ դուռ չկար՝ կարողանում էինք պարզորոշ տեսնել։

Մի էական հանգամանք նույնպես արժե հիշատակել։ Ի տարբերություն քրեական ազատազրկման վայրերի, ՊԱԿ-ում ծեծ կամ ֆիզիկական բռնության այլ դրսեւորումներ չկային։ Գոնե ես ոչ ականատեսն եմ եղել, ոչ էլ լսել եմ նման դեպքի մասին։ Տարատեսակ հոգեբանական ճնշումներ, սադրանքներ որքան ասես, բայց ֆիզիկական բռնություն՝ ոչ։ Եթե նրանց խիստ անհրաժեշտ լիներ որեւէ մեկի նկատմամբ ֆիզիկական բռնություն կիրառել, ապա միշտ էլ կարող էին կարճ ժամանակով այդ մարդուն քրեական բանտ տեղափոխել եւ պատվիրել, որ այնտեղ լուծեն նրա հարցերը։ Մեր տարիների չեկիստներն աշխատում էին «սպիտակ ձեռնոցներով»։ Հսկիչները կոպիտ չէին։ Զարմանալի է, բայց միջավայրը փոխում է մարդուն եւ շատ արագ։ ՊԱԿ-ի մեկուսարանի հսկիչներից ոմանք այդ կարճ՝ 1-2 ամսվա ընթացքում, որ մեզ հետ միասին անցկացրին քրեական բանտում, փորձում էին նմանակել այնտեղի հսկիչներին։ Երեւանի բանտում նաեւ նրանց նկատմամբ մշտական ու խիստ վերահսկողությունն էր պակասել։ Իրենք զգում էին դա։ ՊԱԿ-ում նրանց խստորեն էին վերահսկում, մշտապես լարված էին ու շփումներում զգուշավոր։ Վերանորոգումն ավարտելուց հետո մեզ հետ տարան մեր «հարազատ» մեկուսարան ու տեղավորեցին մեր խցերում։ 11 ամիս մնացել ենք ՊԱԿ-ի մեկուսարանում։ Առաջին 15-20 օրը մենակ էի երկտեղանոց խցում։ Հետո Սեւանի գաղութից բերեցին սպանության համար դատապարտված կապանցի մի 27-ամյա երիտասարդի։ Սա նրա երկրորդ դատվածությունն էր։ Անմիջապես հասկացա, որ «թխսկան» է։ Ամեն ինչ ավելի քան պարզ էր։ Ավելի ճիշտ՝ պարզունակ։ Հենց առաջին օրը նա հայտարարեց, որ Սեւանի գաղութում նստած է եղել Շահեն Հարությունյանի հետ, իսկ ես գիտեի, որ Շահենը ոչ թե Սեւանում, այլ Սովետաշենում է նստած։ Կալանավայրերում այս կարգի մարդկանց «թխսկան» են անվանում։ Նախաքննական մարմինը եւ օպերատիվ ծառայությունները սրանց օգտագործում են իրենց հետաքրքրող կալանավորի ներխցային մշակման նպատակով։ Ամիսներ շարունակ նույն խցում ապրելով հետաքրքրություն ներկայացնող կալանավորի հետ, զրույցների ընթացքում թխսկանը նրանից տեղեկություններ է կորզում ու փոխանցում նախաքննական մարմնին։ Կալանավորների միջավայրում սրանց ներդնելով, օպերատիվ ծառայությունները տեղեկություններ են հավաքում չբացահայտված կամ նախապատրաստվող հանցագործությունների մասին։ Սրանց միջոցով անհրաժեշտ տեղեկություններ հավաքելուց բացի, կալանավայրի ղեկավարությունը նաեւ տարատեսակ սադրանքներ է կազմակերպում։ Մի խոսքով, կալանավորի միամտությունը օգտագործելով կամ վստահությունը չարաշահելով, սրանք տեղեկություններ են հավաքում ու մատնում։ Բացահայտվելուց հետո քրեական աշխարհում սրանց կյանքը մղձավանջի է վերածվում։ Բայց անգամ այս վտանգը

բավարար չէ, որ մարդիկ նման քայլի չդիմեն։ Ոմանք խճճվում են ու, հայտնվելով անելանելի վիճակում, ստիպված են լինում համաձայնել ու նման ամոթալի դերակատարում ստանձնել, ոմանց այդ քայլին է դրդում կալանավայրից վաղաժամ դուրս գալու հույսը, որ նրան ներշնչում է հավաքագրողը, ոմանց՝ ստամոքսը լցնելու ցանկությունն է մղում այդ քայլին, ոմանց՝ վախկոտությունը, ոմանք էլ՝ պարզապես բնույթով են այդպիսին։ Պատճառները բազմաթիվ են։ Բայց դրանցից ոչ մեկն արդարացում լինել չի կարող։ Արժանապատվության զգացում ունեցող մարդը որեւէ պարագայում նման քայլի չի դիմի։ Այս երեւույթը կարող է խոր, համակողմանի ու չափազանց հետաքրքիր ուսումնասիրության նյութ դառնալ։ Ի դեպ, շատ պարզ պատճառով են սրանց «թխսկան» անվանում։ Թուխս է նստում (համբերատար ու երկար նստում է կողքդ) ու ճտեր (տեղեկություններ) հանում։ Մի անգամ այս խցակցիս հետ վեճի բռնվեցի։ Խցային համակեցության պայմաններում վեճերն ու կռիվները սովորական երեւույթ են։ Դժվար է օրերով, շաբաթներով, ամիսներով նույն մարդու հետ գտնվել մեկ փոքրիկ խցում ու բախումներ չունենալ։ Անգամ շատ փորձառու կալանավորները չեն կարողանում խուսափել կամ դժվարությամբ են խուսափում խցային բախումներից։ Ցանկացած մանրուք կարող է վեճի կամ կռվի առիթ դառնալ։ Խցակցիդ շարժուձեւը, նրա խոսելու, ծամելու յուրահատկությունները, այս կամ այն սովորությունը, ձայնային առոգանությունը՝ ամեն ինչը կարող է կռվի առիթ դառնալ։ Չնչին առիթից ծագած մեր վեճը կռվի վերածվեց։ Նա ավելի քան վստահ էր իր ուժերին։ Ինձանից անհամեմատ բարձրահասակ էր ու թիկնեղ։ Մեկ-երկու հարվածից հետո արագ հասկանալով, որ սխալվել է, եւ իր առավելությունները թվացյալ են՝ վազեց դեպի դուռը, սկսեց բախել ու հսկիչին կանչել։ Երեկոյան 9-10-ի կողմերն էր։ Աղմուկի վրա վազքով մեր խցին մոտեցած հսկիչները բացեցին դուռը։ Ես հանգիստ նստած էի մահճակալիս, կապանցին այլայլված կանգնած էր դռան մոտ։ Նա հայտարարեց, որ նույն խցում չի կարող ինձ հետ մնալ եւ պահանջում է, որ իրեն անհապաղ տեղափոխեն։ Արագ վերցրեց իր թասը, սրբիչը, փաթաթեց տեղաշորը եւ հսկիչների ուղեկցությամբ դուրս եկավ խցից։ Նոր էի սկսում հասկանալ ու գնահատել մենության տեսքով ինձ բաժին հասած աներեւակայելի երջանկությունը, երբ խցիս դուռը բացվեց, եւ նույն տեղաշորը գրկած ներս մտավ ժպտերես խցակիցս։

-Վերջ, վերջ, հանգստացանք, կռիվը պրծավ, - ասաց հսկիչն ու դուռը փակեց։

Խցակիցս սկսեց արդարանալ։ Ասաց՝ տաքարյուն է, ու դրա պատճառով հաճախ է սխալներ անում, խոստացավ, որ էլ չի կրկնվի։ Իրականում այդ 30-40 րոպեի ընթացքում նրան բացատրել էին, որ Սեւանի գաղութից այդտեղ է բերվել ոչ թե ինձ հետ վիճելու ու կռվելու, այլ իմ մասին համապատասխան տեղեկություններ փոխանցելու համար, եւ նրա միակ տեղն իմ խուցն է, ու անկախ այն հանգամանքից, որ հենց ինքն էր հարվածներ ստացել, պահանջել էին ներողություն խնդրել ինձանից։ Ինչն էլ անում էր՝ ծամածռվելով։

Երբ մեր նախաքննությունն ավարտվելու վրա էր, եւ այս խցակիցս արդեն գիտեր, որ իրեն կրկին կալանավայր են տանելու, հսկիչից թուղթ ու գրիչ վերցրեց եւ խնդրեց, որ իր անունից գլխավոր դատախազին դիմում գրեմ։ Մտքերը գրավոր ու քիչ թե շատ գրագետ շարադրել ինքը չէր կարող։ Դիմումի մեջ պետք է գրեի, որ իր կատարած սպանությունը պատահականության հետեւանք է, որ քննիչն իր ուսերին հավելյալ մեղք է բարդել, իսկ

վերջում պետք է մոտավորապես այսպիսի միտք հավելեի. «Խնդրում եմ կրկին ուսումնասիրել իմ գործը, հաշվի առնել մատուցած ծառայություններս եւ այն փաստը, որ ուղղման ճանապարհին եմ կանգնել»: Տեքստը գրելիս ժպտում էի. «ծառայություններ» ասելով՝ անկասկած, առաջին հերթին նկատի ուներ իմ վերաբերյալ մատնությունները:

Առաջին օրերին, երբ այս խցակիցս նոր էր, էլ ավելի համոզվելու համար, որ թխսկան է, զրույցներից մեկի ժամանակ մի հորինված անուն տվեցի, հիմա արդեն չեմ հիշում՝ Էդմո՞նդ, թե՞ Էդվարդ: Ասացի, հանրապետությունում իբր հայտնի մարդ է՝ գիտնական, բայց ոչ ոք չգիտի, որ հարում է մեր կազմակերպությանը: Մտածցի՝ եթե ամեն ինչ ճիշտ աշխատի, ապա քննիչս մի օր կհարցնի այս հորինված մարդու մասին: Բայց որքան մեծ էր իմ՝ այս բնագավառում դեռեւս փորձ չունեցող 19-ամյա երիտասարդիս զարմանքը, երբ այդ հորինված մարդու մասին քննիչը հարցրեց ինձ իմ ու խցակցիս զրույցի հաջորդ իսկ օրը: Անգամ ես՝ անփորձս, նման պարզունակություն չէի սպասում: Խիստ հաղթական տոնով, իբր՝ չխոստովանել չես կարող այլեւս, մենք ամեն ինչ գիտենք, ասաց.

- Իսկ հիմա պատմիր Էդվարդի մասին, ե՞րբ ես ծանոթացել նրա հետ:

- Չկա նման մարդ: Խցակցիս լավ էլ շուտ-շուտ հանդիպում ես, - ծիծաղելով վրա բերեցի ես:

- Ձեռ ես առնում, հա՞, - մի տեսակ նեղացկոտ զայրացավ քննիչս:

Նա մահացել է 1990-ականների սկզբներին: 1988-ի ամռանը, իմ ազատ արձակվելուց հետո, արդեն չեմ հիշում, թե ում միջոցով, փոխանցել էր, թե կցանկանար տեսնել ինձ: Ես կոմպլեքսներ չունեմ: Նալբանդյան փողոցով անցնելիս մտա ՊԱԿ-ի ընդունարան ու զանգահարեցի.

- Բարի օր, Վարդանն է:

Սովետմիությունը դեռ կար, բայց բոլորովին այլ երկրում էինք ապրում: Ակնհայտ էր, որ մեծ փոփոխությունների շեմին ենք: Քննիչս էլ էր, անկասկած, հասկանում սա:

Զանգս ուրախացրեց նրան:

- Մեկ րոպեից ներքեւում եմ, սպասիր, - ասաց:

Մի 10-15 րոպե քայլեցինք Նալբանդյանով:

- Ո՞վ կմտածեր, թե ամեն ինչ այսպես կփոխվի, - մտահոգ տոնով ու մեղավոր ժպիտով ասաց նա, ու մենք բաժանվեցինք:

Ես չգիտեմ, ճի՞շտ են արդյոք ե՛ւ այն ժամանակ, ե՛ւ մինչ օրս տարածվող առասպելաբանություններն այն մասին, որ ՊԱԿ-ի մեկուսարանում մարդկանց վրա ինչ-որ բժշկական փորձեր են արել: Գուցեեւ ճիշտ են: Սովետները չէին կարող նման բաներ չանել: Եթե այդպես է, ապա ե՛ս էլ պետք է որ լաբորատորիայի ճագարի դերում եղած լինեմ: Դատելով այսօրվա հրապարակային որոշ դրսեւորումներից՝ խորհրդային տարիների նախկին քաղբանտարկյալներից ոմանց վրա այդ փորձերն անդառնալի ազդեցություն են գործել:

Մեկուսարանում, որպես կանոն, լռություն էր տիրում։ Չկային քրեական բանտերին բնորոշ աղմուկը, բռունցքով, ալյումինե կերակրամանով կամ թասով դռները բախելը եւ բանտերի յուրահատուկ հոտը։ Այնտեղ կատարվող յուրաքանչյուր քայլ նախապես հաշվարկված ու մշակված էր։

Առավոտյան եւ երեկոյան ուղեկցում էին զուգարան, որտեղ կարելի էր լվացվել եւ այլ կարիքներ հոգալ։ Բոլորը գիտեն, բացի, իհարկե, երիտասարդներից, որ խորհրդային տարիներին «զուգարանի թուղթ» հասկացություն չկար։ Այդ նպատակի համար օգտագործվում էին արդեն կարդացված կամ բոլորովին չկարդացվող, բայց պարտադիր բաժանորդագրման ենթակա խորհրդային թերթերը։ Զուգարան կոչվող խցի մուտքի դռանը կից պատին տուփ էր ամրացված, որի մեջ հսկիչները տեղադրում էին նախապես համապատասխան չափի կտրտած թղթերը։ Յուրաքանչյուր կալանավոր ներս մտնելուց առաջ այդ տուփից թղթեր էր վերցնում։ Մի օր, այս դեպքը տպավորվել է, ինձ ու խցակցիս հսկիչը լվացարան է ուղեկցում։ Տուփից թղթեր վերցնելիս նկատեցի, որ մի թուղթ ընկած է գետնին։ Ամեն ինչ իր տեղում պետք է լինի՝ մտերիմներիս մշտապես նյարդայնացնող իմ այս սովորության համաձայն թեքվեցի, որ հատակից վերցնեմ թղթի այդ կտորը։

-Դիր տեղը, թող մնա, ձեռք չտաս, - լսվեց մեզ ուղեկցող հսկիչի շուտասելուկը։

Փաստորեն, մեզանից առաջ լվացարան ուղեկցված մեկը, չի բացառվում, որ բոլորովին պատահաբար, գցել էր հատակին թղթի այդ կտորը։ Մեկուսարանի աշխատակիցները սա համարել էին հնարավոր պայմանական նշան ու սպասում էին, թե ինչպես կարձագանքի այդ «նշանին» նրա գործով անցնողը։

Նախաքննության ավարտական փուլում էինք։ Մարզպետ Հարությունյանի հետ ինչ-որ անկարեւոր հարցով ՊԱԿ-ի քննչական մարմինն առերես հարցաքննություն էր իրականացնում։ Այդ առերեսման ընթացքում քննիչներն ավելի շատ զբաղված էին Մարզպետին դիտողություններ անելով, քան՝ իբր իրենց հետաքրքրող դրվագի պարզաբանմամբ ու ճշգրտմամբ։ Դիտողությունների առիթն էլ ես էի. թե ինչու է ինձ նման անփորձ պատանուն նման վտանգավոր ու անհեռանկար գործի մեջ ներգրավելով բանտ հասցրել։

-Փաստորեն, խորտակել ես էս երիտասարդի կյանքը։ Խելոք տղա է, կսովորեր ու իր համար հանգիստ կապրեր։ Էս ի՞նչ արեցիր։

Մարզպետին պատասխանելու հնարավորություն չտալով՝ երիտասարդական իմ եռանդով ես հակադարձում էի չեկիստներին, ասելով, որ կյանքս բոլորովին էլ խորտակված չեմ համարում, եւ ինքս եմ ընտրել այս ճանապարհը։ Նրանց թիրախը Մարզպետն էր, եւ ինձ երկրորդ պլան մղած շարունակում էին.

-Մարզպետ, բա ամոթ չի՞, էս ոնց ես նրա խելքը կերել, որ ոչ մի կերպ չի ցանկանում հետ կանգնել։ Անիմաստ կդատապարտվի, ու մեղքը քոնն է լինելու։ Եթե էդ արածդ լավ բան լիներ, Աշոտն ու Ազատն էլ դրանով կզբաղվեին։ Ի՞նչ է, քեզանից պակա՞ս քաջություն ունեն։ Տես,

մենք նրանց վաղաժամ ազատ ենք արձակել, ու նրանք իրենց համար հանգիստ ապրում են։ Ոչ իրենք են մեզ խանգարում, ոչ էլ մենք ենք խանգարում նրանց։

Նախաքննությունն ավարտվել էր։ Թխսկան խցակիցս իրենց արդեն պետք չէր՝ տարել էին, ու ահագին ժամանակ մենակ էի խցում։ Արդեն լավ չեմ հիշում, թե ինչ զանցանքի համար տեղեկացրին ինձ, որ մենակ եմ մնալու որպես պատիժ։ Նրանք որպես պատիժ էին դիտարկում մենախուցը, իսկ ինձ համար դա երանության պես մի բան էր։ Կողքիս խցի դուռը չէր բացվում ու փակվում, ինչից կարելի էր ենթադրել, որ դատարկ է։ Մի օր էլ, փետրվարի վերջերն էր, լսեցի, թե ինչպես է հսկիչը փակում հարեւան խցի դուռը։ Պարզ էր՝ այնտեղ մարդ կա։ Առանց հաշվի առնելու, որ աղմուկն ու բարձր ձայնը խստիվ արգելվում են, ծեծեցի պատը, որ նրա ուշադրությունը լարեմ, ապա մոտենալով լուսամուտին՝ գոռացի. «Ո՞վ է»։ Մտքովս անցավ, որ ընկերներիցս մեկը կարող է լինել։ Բայց լսեցի ինձ զարմացնող պատասխանը՝ Աշոտն է Նավասարդյան։ Ե՛վ ուրախացա, ե՛ւ զարմացա։ Ավելի շատ երեւի ուրախացա։ Աշոտն ասաց, որ Ազատ Արշակյանն էլ է կալանավորված։ Չեկիստներն, ուրեմն, հերթական անգամ սխալվել են։ Մարզպետին ասում էին. «Ոչ նրանք են մեզ խանգարում, եւ ոչ էլ մենք ենք նրանց խանգարում»։ Պարզ է՝ Աշոտն ու Ազատը չեկիստների քթի տակ շարունակել են գործել։ Ուղղակի չեկիստներն են ապաշնորհ գտնվել ու նկատել չեն կարողացել։ 1978-ի վերջերին կամ 79-ին Մարզպետը խոստացել էր ծանոթացնել ինձ Աշոտի հետ, բայց այդպես էլ այն ժամանակ մեր հանդիպումը չկայացավ։ Իսկ հետագա հանգամանքներն այնպես դասավորվեցին, որ 1981-ին հայտնվեցինք Երեւանի ՊԱԿ-ի մեկուսարանի հարեւան երկտեղանի խցերում ու ծանոթացանք։

Մեր նախաքննությունն ութ ամիս տեւեց՝ 1980 թ. մայիսի վերջերից մինչեւ 1981-ի հունվարի վերջը։ 1981 թ. հունվարի 27-ին մեր մեղադրական եզրակացությունը ներկայացրին մեզ, ապա սկսվեց, այսպես կոչված, գործերին ծանոթանալու շրջանը, իսկ մարտի վերջին՝ երեւի մարտի 26-ին, սկսվեց մեր դատավարությունը։ Ապրիլի 9-ին կարդացին մեր դատավճիռները։

Նախաքննությունն իրականում ձանձրալի էր ու ՊԱԿ-ի կողմից ուռճացված։ Մոսկվայի մետրոյի պայթեցման գործից հետո հայ այլախոհների՝ հատկապես ԱՄԿ անդամների նկատմամբ, կար հատուկ թշնամական վերաբերմունք։ Նրանց անպատճառ հարկավոր էր դատել եւ հնարավորինս խիստ։ Ուռճացնելով մեր գործը՝ չեկիստները երկարատեւ պատժաչափերի համար համապատասխան հիմքեր էին նախապատրաստում։ Այն, ինչ վերագրվել է մեզ, եւ ինչի համար մենք 1981-ին մեծ պատժաչափերի ենք դատապարտվել 1960-ականների ընթացքում կամ 1970-ականներին, չեկիստները կբավարարվեին անհամեմատ փոքր պատժաչափերով։ Մետրոյի գործից հետո ոչ միայն նոր կալանավորվածներս էինք մեծ պատժաչափերով դատապարտվում, այլեւ կալանավայրերում գտնվող ու իրենց պատժաչափերն ավարտող հայ քաղկալանավորներին էին կրկին դատում։ Այսպես՝ կալանավայրից դուրս չեկավ ու կրկին դատապարտվեց Պարույր Հայրիկյանը, ապա՝ աքսորավայրում գտնվող Ռազմիկ Մարկոսյանը։ Դատապարտվեցին նաեւ ազատության մեջ գտնվող Հայկազ Խաչատրյանը եւ Շահեն Հարությունյանը։ Աներեւակայելի դաժան վարվեցին իրավապաշտպան Էդիկ Հարությունյանի հետ։ Առաջին պատժաչափի ավարտից

անմիջապես հետո, արդեն հիվանդ ու հյուծված, բայց անկոտրում Հարությունյանին կրկին դատապարտեցին, ինչն էլ արագացրեց նրա մահը։

Մեր գործին ընդգծված վտանգավորություն հաղորդելու նպատակով բոլոր վկաներին հարցաքննել էին զենք հայթայթելու փորձերի հետ կապված։ Իշխանից առգրավված խաղալիք ատրճանակի լուսանկարները զարդարում էին քրեական գործի էջերը։ Ցուցմունքներից մեկում իմ ասած (իրոք ասել էի) ու հարցաքննության արձանագրության մեջ տեղ գտած միտքը, որ մենք պատրաստ ենք զենքով նվաճել Հայաստանի անկախությունը, եթե դրա կարիքը լինի, ձեռքի տակ կազմակերպության ծրագիրը չունենալով՝ ներկայացրել էին որպես կազմակերպության ծրագրային դրույթ։ Մեղադրական եզրակացության մեջ ու դատավճռում ընդգծել էին, որ կազմակերպության ծրագիրը, ըստ Վարդան Հարությունյանի ցուցմունքների, նախատեսում է անկախության նվաճման երկու ճանապարհ՝ խաղաղ եւ զինված։ Մեր քրեական գործում ներառել էին նաեւ Մոսկվայի մետրոյի պայթած վագոնի լուսանկարները։

Մետրոյի պայթյունի գործով Ստեփան Զատիկյանի կալանավորումից հետո նրա պաշտպանությամբ հանդես էին գալիս հայտնի իրավապաշտպաններ։ Նրանք ոչ թե մերկապարանոց պաշտպանում էին Զատիկյանին, այլ փորձում էին հասկանալ, թե ինչ է կատարվում, նա առնչություն ունի՞ այդ պայթյունին, թե՝ ոչ, սա սադրանք է ուղղված ԽՍՀՄ-ում առկա ո՞ղջ այլախոհական շարժման դեմ, թե՞ միայն Զատիկյանին է վերաբերում։ Իրավապաշտպանները նաեւ սեփական հետաքննություն էին իրականացնում։ Նման ուսումնասիրություն կատարողներից մեկը մոսկովյան հայտնի այլախոհ, Մոսկվայի հելսինկյան խմբի անդամ Մալվա Լանդան էր։ Այս թեմայով նրա համապարփակ ուսումնասիրությունը հրապարակվեց 1979 թ. գարնանը։ Մեր գործով ընթացող նախաքննության շրջանում նա արդեն 1980 թ. մարտից դատապարտվել էր, բայց նրա նկատմամբ հետապնդումները չէին դադարում։ Մեզ նկատի ունենալով՝ չեկիստներն ասել էին նրան, որ Երեւանում կազմակերպություն է բացահայտվել, եւ դրա կալանավորված երիտասարդ անդամներն, իբր, իր դեմ ցուցմունքներ են տալիս։ Սրա մասին տեղեկացել եմ շատ ավելի ուշ՝ ազատ արձակվելուց հետո, երբ ակտիվորեն շփվում էի մոսկովյան այլախոհների հետ։ Այս հանգամանքը հաշվի առնելով՝ Մալվան ինձ կատակով գործակից էր անվանում։ Իսկական իրավապաշտպանի եւ իսկական քաղաքացու օրինակ հանդիսացող Մալվա Լանդան, որ ծնվել է 1918 թ. վախճանվեց, երբ 101 տարեկան էր՝ 2019-ին։

Տարբերություններ ու նմանություններ

Ի տարբերություն մեր անհետաքրքիր նախաքննության՝ մեր չափազանց հետաքրքիր դատավարությանն անցնելուց առաջ կուզենայի այսօրվա ընթերցողին համառոտ տեղեկացնել հայ այլախոհների ու այլախոհական շարժման եւ մյուս հանրապետություններում գործունեություն ծավալած այլախոհների ու այլախոհական շարժումների միջեւ եղած տարբերությունների մասին։

Իմ «Այլախոհությունը Խորհրդային Հայաստանում» գրքում, որ հրապարակվել է 2014-ին, իսկ ռուսերեն թարգմանությամբ 2019-ին, մանրամասն ներկայացված է, թե ի՞նչ է այլախոհությունը, ի՞նչ ընթացք ու զարգացում է ունեցել այն ԽՍՀՄ-ում։ Չկրկնվելու համար մեջբերեմ այդ գրքից. «ԽՍՀՄ-ում այլախոհության պատմությունն ընդունված է սկսել 1960-ականների սկզբներից։ Սա չի նշանակում, թե մինչ այդ խորհրդային երկրում այլախոհություն չի եղել։ Բռնատիրական ուղիով ընթացող ցանկացած երկրում այլախոհությունն ինքնաբերաբար ծնվում ու այդ բռնատիրության ողջ ընթացքում ուղեկցում է նրան։ Սա շատ բնական է։ Այլախոհությունը ծնվում է որպես բռնատիրության պատասխան, որպես դրա արդյունք, եւ քանի դեռ հասարակությունը չի ժողովրդավարացել, քանի դեռ իշխանական կարծիքին չհամապատասխանող կարծիք արտահայտելու համար չեն դադարել մարդուն հետապնդել, չնայած տարատեսակ, անգամ դաժանագույն հետապնդումներին՝ գոյություն է ունենալու։ Այսպես եղել է միշտ եւ ամենուր. խորհրդային երկիրը բացառություն լինել չէր կարող։ Ընդդիմադիր հայացքների տեր անհատներ եղել են այս երկրի պատմության ողջ 70 տարիների ընթացքում։ … 60-ականներին «դիսիդենտ» (այլախոհ) տերմինով սկսեցին կոչել բոլորին, ովքեր, հակադրվելով խորհրդային իրականությանը եւ կարգերին, ոչ միայն չէին դիմում բռնության, այլեւ բռնությունը՝ որպես պայքարի ձեւ ու միջոց, մերժում էին։ Մինչ այդ, հակախորհրդային եւ հակակոմունիստական ուժերը խորհրդային կարգերի դեմ իրենց պայքարում, ի թիվս պայքարի այլ միջոցների, չէին մերժում նաեւ բռնությունը, հաճախ՝ նաեւ զինված պայքար էին մղում։ Սա տեսանելի էր հատկապես ետպատերազմական շրջանի Մերձբալթիկայում, Ուկրաինայի արեւմուտքում։ Ահա այս կարգի ընդդիմադիրներից նոր ընդդիմադիրներին տարանջատելու համար՝ 60-ականներին շրջանառության մեջ է դրվում «այլախոհ» կամ «դիսիդենտ» բնորոշումը»։

Խորհրդային երկրում լուրջ այլախոհական շարժումներ եղել են Էստոնիայում, Լիտվայում, Լատվիայում, Ուկրաինայում, Ռուսաստանում, Վրաստանում ու Հայաստանում։ Առանձին այլախոհական միավորումներ էին կազմում հետապնդվող կրոնական համայնքները, Ղրիմի թաթարները, հրեական շարժման ներկայացուցիչները։ Քաղաքական կալանավայրերում հիմնականում թվարկածս հանրապետությունների եւ համայնքների ներկայացուցիչներ էին լինում։ Բացառությամբ Ղրիմի թաթարների, որոնց խորհրդային իշխանությունները նպատակադրված կերպով դատապարտում էին «սովետական պետական ու հասարակական կարգերն արատավորող ակնհայտ հերյուրանքներ տարածելը» հոդվածով կամ այլ մտացածին հոդվածներով եւ քրեական կալանավայրեր ուղարկում։

Ազգային հանրապետություններում այլախոհների ծրագրերի ու գործունեության առումով էական ու աչքի զարնող տարբերություններ չէին կարող լինել։ Բոլոր

հանրապետություններում էլ նույն խնդիրն էր լուծվում՝ անկախ հանրապետություն ունենալու անհրաժեշտությունը քարոզել, այդ նպատակով կազմակերպություններ ստեղծել, գրել այդ թեմայով հոդվածներ եւ գաղտնի տպագրված թռուցիկներ ու թերթեր տարածել։ Կազմակերպել ինքնահրատ տպագրություն, ինչպես նաեւ խորհրդային երկրի սահմաններից դուրս հրապարակված եւ Խորհրդային միությունում արգելված գրականություն հայթայթել ու տարածել։ Գրեթե չէին տարբերվում նաեւ ազգային հանրապետություններում գործող իրավապաշտպան այլախոհները զուտ ազգային խնդիրների լուծմամբ զբաղվող այլախոհներից։ Սրանց միջեւ հստակ գծված սահման չկար։ Այդ սահմանն ավելի քան հեղհեղուկ էր։ Շատ հաճախ նույն մարդը մեծ հաջողությամբ կարող էր ե՛ւ որպես իրավապաշտպան հանդես գալ, ե՛ւ որպես ազգային իրավունքի բնագավառի գործիչ։ Օրինակները շատ են։ Եվ մերձբալթյան հանրապետություններում, եւ Ուկրաինայում, եւ Հայաստանում այդպես է եղել։ Հայաստանի իրավապաշտպանական առաջին կազմակերպության՝ հելսինկյան խմբի ստեղծման գաղափարի հեղինակը եւ կազմակերպիչը ազգային գործիչ, ԱՄԿ հիմնադիրներից Շահեն Հարությունյանն էր, իսկ խմբի ղեկավար Էդիկ Հարությունյանը, իրավապաշտպանության հետ մեկտեղ, Ղարաբաղի խնդիրն էր բարձրացնում, նույնիսկ հելսինկյան խմբի կազմավորման մասին հնչած հայտարարության տեքստում տարածքային խնդիրների մասին խոսք կար։ Ուկրաինայի հելսինկյան խմբի անդամները միաժամանակ զբաղված էին Ուկրաինայի անկախության անհրաժեշտության քարոզով։ Լիտվացի այլախոհ եւ քաղբանտարկյալ Յադվիգա Բելյաուսկանեն 1983-ին դատապարտվել էր միաժամանակ ե՛ւ իրավապաշտպանական, ե՛ւ ազգային, ե՛ւ կրոնական գործունեության համար։

Այլ էին մոսկովյան այլախոհները։ Նրանք չունեին ազգային խնդիրներ եւ անկախության անհրաժեշտություն։ Փոխարենը, նրանցից շատերն՝ ի տարբերություն ազգային հանրապետություններում գործող այլախոհների, համեմատաբար բաց, շատ դեպքերում՝ հրապարակային գործունեություն էին ծավալում, որը ներառում էր իրավապաշտպանություն եւ լրատվության հրապարակում։ Հրապարակային էր նաեւ ազգային հանրապետություններում գործող հելսինկյան խմբերի ներկայացուցիչների գործունեությունը։ Նրանք ստորագրում էին իրենց հրապարակած փաստաթղթերի տակ։ Բայց ոչ բոլորը կարող էին հրապարակայնացնել իրենց գործունեությունը։ Լրատվություն հայթայթողները եւ դրանց տպագրումն ու հրապարակումն ապահովողները հարկադրված էին գործել գաղտնապահության կանոնները պահպանելով։ Հակառակ դեպքում չէին հաջողելու։

Ընդհանուր այլախոհական շարժման կարեւորագույն ու ինքնուրույն հատված էր հրեական շարժումը։ Նրանք պայքարում էին հանուն իրենց հայրենակիցների հայրենիք վերադառնալու իրավունքի։ Բնական է, որ նման խնդրի առկայությամբ՝ այս շարժումը պետք է տարբերվեր ԽՍՀՄ-ում գործող մյուս այլախոհական շարժումներից։ Սակայն, իրենց սեփական խնդրից զատ, հրեա այլախոհները սերտորեն կապված էին մյուս այլախոհների հետ ու յուրահատուկ որակ էին հաղորդում ընդհանուր այլախոհությանը։ Անձամբ իմ դեպքում հրեա այլախոհների դերը եւ աջակցությունը հսկայական է եղել։ Երբ կալանավայրում էի, ապա՝ աքսորավայրում, անընդհատ զգացել եմ նրանց աջակցությունը։ Ինձ նամակներ են գրել, օգնել են, որպեսզի իմ

գրվածքները հասցեատերերին հասնեն ու հրապարակվեն։ Համեմատության համար պետք է շեշտեմ, որ Հայաստանից, բացի իմ ընտանիքի անդամներից, որեւէ մեկը նամակ չի գրել ինձ։ Էլ չեմ խոսում ցուցաբերված աջակցության ու տարատեսակ օգնությունների մասին։ Վստահորեն կարող եմ պնդել, որ ես միակ այլազգին չեմ, որ տեսել ու ստացել է հրեա այլախոհների անշահախնդիր ու ջերմ բարեկամական աջակցությունը։

Իր էությամբ հրեական շարժմանը մոտ էր Ղրիմի թաթարների շարժումը։ Նրանց պայքարը նույնպես հայրենիք՝ Ղրիմի թերակղզի վերադառնալու իրավունքի նվաճումն էր։ Պայքար, որ սկսվեց Ստալինի մահից հետո ու, բախվելով խորհրդային իրականությանը, մինչեւ գորբաչովյան շրջանը ձգվեց։ Այս ողջ ընթացքում այս հալածված ժողովուրդը հանուն իր ազգային իրավունքի նվաճման հսկայական զոհողությունների դիմեց։ Ռուսական ագրեսիայի պատճառով այսօր էլ են նրանք հարկադրված հեռանում իրենց հայրենիքից։

Տարբեր հանրապետություններում գործող այլախոհների միջեւ, մոսկովյան այլախոհության ազգային տարրի բացակայությունը եւ հրեական ու թաթարական շարժումների յուրահատկությունները չհաշված, էական տարբերությունները շատ չէին։ Իսկ ահա հնարավորությունների առումով տարբերությունները հսկայական էին։

Առաջին հերթին պետք է շեշտել կապը դրսի աշխարհի հետ եւ ազատ աշխարհի աջակցությունը։ Խորհրդային խիստ փակ համակարգի պայմաններում, որը «երկաթյա վարագույր» անվանումն էր ստացել, այս հանգամանքը կենսական նշանակություն ուներ։ Մոսկվացիները մշտական կապի մեջ էին արտասահմանյան լրագրողների հետ։ Նրանց համար հեշտ էր. Մոսկվայում էին տեղակայված դեսպանատները եւ արտասահմանյան լրատվամիջոցների ներկայացուցչությունները։ Սա մոսկվացիներին իրենց նկատմամբ ընթացող հետապնդումների, հարուցված քրեական գործերի մասին բարձրաձայնելու, իրենց արածն ու չարածը լսելի դարձնելու հնարավորություն էր տալիս։ Այս ուղղակի ու անմիջական շփումից զուրկ էինք հայերս եւ մյուս հանրապետությունների ներկայացուցիչները։ Խորհրդային Հայաստանում գործող այլախոհի համար զարմանալի է, սակայն մոսկովյան այլախոհ Ալեքսանդր Պոդրաբինեկն, օրինակ, իր հուշերում պատմում է, թե ինչպես էր ինքը ՊԱԿ-ում Մոսկվայի հելսինկյան խմբի ղեկավար Յուրի Օրլովի գործով որպես վկա հարցաքննվելուց հետո շտապում գեներալ Գրիգորենկոյի տուն, որտեղ հավաքված արտասահմանյան լրագրողներին պետք է տեղեկացներ քննության ընթացքի մասին։ Գրավոր ու բանավոր նման շատ հիշողություններ ունեն մոսկովյան այլախոհները։ Նրանց գործերի հրապարակայնացումը, տարբեր ռադիոձայներով ու թերթերով նրանց մասին ընթացող աղմուկը լսելի էր դարձնում նրանց անունները, ոգեւորում ու ավելի պաշտպանված էր դարձնում նրանց։ Շատ դեպքերում ՊԱԿ-ն էլ էր սկսում զգուշանալ նրանցից, որովհետեւ հրապարակայնության ու բարձրացված աղմուկի պատճառով աշխարհը ճանաչում էր այդ մարդկանց, եւ խորհրդային իշխանությունները նրանց հետ կապված տարբեր ատյաններում ստիպված էին լինում զանազան տհաճ հարցերի պատասխանել։

Հրեական շարժումն ստանում էր Իսրայելի, նաեւ Ամերիկայի ու Եվրոպայի հրեական համայնքների հսկայական աջակցությունը։ Նույնպիսի աջակցություն էին ստանում նաեւ

մերձբալթյան հանրապետություններում գործող այլախոհներն ու ազգային գործիչները։ Նրանց թիկունքին իրենց սփյուռքների հզոր պաշտպանությունն էր։ Սփյուռքը զբաղված էր նրանց գործի եւ անունների հրապարակայնացմամբ ու միջազգային կառույցներում նրանց պաշտպանությամբ։ Նույնը կարելի է ասել նաեւ ուկրաինացիների դեպքում։

Այս առումով հայերս հպարտանալու շատ բան չունեինք։ Մոսկվայում հրատարակվող «Ընթացիկ իրադարձությունների խրոնիկան», տեղեկացված լինելու դեպքում, մշտապես անդրադարձել ու աջակցել է հայերիս, ինչի համար միայն շնորհակալ պետք է լինենք, իսկ հայկական սփյուռքի պարագայում միայն ամաչել կարելի է։ Մենք մեր նախաքննության, հատկապես դատավարությունների ընթացքում գովերգում էինք մեր սփյուռքը, դաշնակցության իրական բնույթից անտեղյակ՝ գովաբանում էինք դաշնակցությանը, հայտարարում էինք, որ միակ ազգային կուսակցությունն է, նրա հետ էինք մեր հույսերը կապում, իսկ նրանք Հայաստանում ընթացող դիմադրական շարժման պաշտպանությամբ զբաղվելու ոչ ցանկություն ունեին, ոչ էլ մտադրություն։ Ես, օրինակ, մեղադրվում էի նաեւ դաշնակցությանը գովերգող գրվածքներ պատրաստելու ու տարածելու համար։ Մարզպետ Հարությունյանը դատարանում հայտարարեց. «Դաշնակցությունը մի փայլող ադամանդ է, որի շողքը լուսավորում է Հայաստանը»։ Նրա այս ելույթից մի հատված հետագայում հրապարակվեց «Խրոնիկայում» եւ արտասահմանյան մամուլում։ Մեր դատավարության ընթացքի մասին Մոսկվա լուր փոխանցող Շահեն Հարությունյանը, բաց թողնելով դատավարության ժամանակ տեղի ունեցած շատ ավելի նշանակալի դրվագներ, դաշնակցության մասին մեր հայտարարություններին ավելի մեծ կարեւորություն տալով, մոլորություն, որի կրողը նաեւ նա էր, հիմնականում դրանք էր շեշտել։ Դատարանում դաշնակցությանը գովերգող հայտարարություններով հանդես եկանք նաեւ ես, Սամվելն ու Իշխանը։ Ոչ միայն մենք, հայ այլախոհները շատ ավելի ուշ հասկացան, որ իրենց պատկերացրած դաշնակցությունը եւ իրենց պատկերացրած սփյուռքն իրականում գոյություն չունեն։
Եթե հնարավոր էր լինում տարբեր զարտուղի ճանապարհներով Հայաստանում ընթացող հետապնդումների ու դատավարությունների մասին լուրեր հասցնել Մոսկվա, ապա մոսկովյան այլախոհների աջակցությամբ այդ լուրերը հնչեղություն էին ստանում ու դառնում միջազգային հանրության սեփականություն։ Նրանք են եղել մեր իրական աջակիցները։ Նրանք են հրապարակայնացրել Հայաստանում ընթացող զարգացումները, նրանց միջոցով են միջազգային հանրության սեփականություն դարձել հայաստանյան այլախոհների դատավարությունները, ապա՝ կալանավայրերում գտնվող հայ քաղբանտարկյալների մասին տեղեկությունները։ Սա էր պատճառը, որ Հայաստանի ՊԱԿ-ը 1976-77թթ. հայաստանյան զարգացումներում մոսկովյան այլախոհների դերը չեզոքացնելու, հայ այլախոհների ու նրանց միջեւ եղած կապը իսպառ բացառելու, հայկական այլախոհական շարժումը ԽՍՀՄ-ում ծավալված ընդհանուր այլախոհությունից մեկուսացնելու ու այդ ճանապարհով շարժումը ոչնչացնելու ծրագիր էր հղացել, որը պետք է ի կատար ածվեր հայկական այլախոհական շրջանակներում ներդրված գործակալների միջոցով։ Համաձայն այդ ծրագրի, մի շարք հայտնի հայ այլախոհների պետք էր այնպես մոլորեցնել, որ նրանք ստորագրեին երկու հայտարարության տակ։ Առաջինն ուղղված էր Անդրեյ Սախարովին, երկրորդը՝ «Ամերիկայի ձայն» ռադիոկայանին։ Սախարովին ուղղված տեքստը սա էր.

«Քաղաքացի Սախարովին

Հայտնում ենք Ձեզ, որ Հայաստանում ազգային հողի վրա դատապարտվածների առկայության փաստը քաղաքական զանազան նպատակներով օգտագործելը համարում ենք անհարկի եւ պահանջում ենք այսուհետ դադարեցնել վերոհիշյալը օգտագործելուց: Հայտարարությունը հաստատում ենք …»:

իսկ «Ամերիկայի ձայնի» տարբերակը սա էր.

««Ամերիկայի ձայն» ռադիոկայանին

Խնդրում ենք Ձեզ Ձեր ռադիոկայանով հաղորդել ի լուր շահագրգիռ շրջանների, որ մենք պահանջում ենք Հայաստանում ազգային հողի վրա դատապարտվածների առկայության փաստը չօգտագործվի զանազան քաղաքական նպատակներով: Այդ իրավունքը մենք վերապահում ենք միայն հայ ժողովրդին:

Հայտարարությունը հաստատում ենք …»:

Սակայն նրանց այս ծրագիրը տապալվեց: Ինչքան էլ որ ակտիվ էին նրանց գործակալները, ինչքան էլ որ խոր էին ներդրված, ոչինչ անել չկարողացան: Հայ քաղբանտարկյալներն ուղղակի հրաժարվեցին նման նամակների տակ ստորագրել, իսկ մի քանի մոլորվածներն էլ՝ ուշքի գալով, հրաժարվեցին իրենց ստորագրություններից:

Դատավարություն

Ի տարբերություն ձանձրալի ու արհեստականորեն ուռճացված նախաքննության՝ մեր դատավարությունն անչափ հետաքրքիր էր։ Մեկուսարանում արդեն 20 տարեկան էի դարձել ու այդ առիթով անչափ ուրախ էի։ Խցակիցս, որ ինձանից մի 10 տարով մեծ էր, ծիծաղում էր ուրախությանս վրա։

-Մի բան է, երբ տարիքդ հարցնողին թիվ ես ասում, որը մտնում է առաջին տասնյակի մեջ՝ 16, 17, 18 կամ նման մի բան՝ անչափահասի տպավորություն է ստեղծվում, բոլորովին այլ բան է, երբ երկրորդ տասնյակն ես հատում։ Քեզ արդեն որպես լուրջ ու հասուն մարդ են դիտարկում, - բացատրում էի նրան ուրախությանս պատճառը։

Մեզ դատարան բերեցին միասին։ Իրար տեսնելիս շատ էինք ուրախացել։ Կարծես գնում էինք ոչ թե մեր դատին, այլ հետաքրքիր զբոսանքի։ Մեզ պետք է դատեին Գերագույն դատարան կոչված կառույցում։ Մարզպետը մորուքով էր, ինչը նրան անչափ լուրջ տեսք էր հաղորդել։

Դահլիճը բավականին մեծ էր։ Նստարանները երկու շարք էին։ Առջեւի մի քանիսը բաժանված էին հետեւի նստարաններից։ Հետեւի նստարաններին պետք է նստեին դատարան եկած մարդիկ, այսպես կոչված՝ ժողովուրդը։ «Ժողովուրդ» ասվածը մեր ծնողներն էին։ Բաց հայտարարված դատական նիստին մուտքի իրավունք ունեին խիստ սահմանափակ թվով մարդիկ։ Առաջին շարքի առջեւի նստարաններն արդեն զբաղված էին։ Մեզ անծանոթ մարդիկ էին նստած։ Չեկիստներ էին ու իրենց այլ համակարգերի աշխատակիցներ։

Լուսամուտների տակ ձգվող շարքի երկրորդ նստարանին տեղավորեցին հինգիս՝ ինձ, Իշխան Մկրտչյանին, Սամվել Եղիազարյանին, Մարզպետ Հարությունյանին եւ Հովհաննես Աղաբաբյանին։ Մեր կողքը կանգնած էր զինվորների պահակախումբը, իսկ առջեւի նստարանին՝ իրենց հրամանատարի գլխավորությամբ, 3-4 միլիցիոներ էր նստած։ Մեր դիմացը՝ լուսամուտի տակ, նստած էր դատախազ Պապին Թոխյանը։

Դատական նիստն սկսվեց։ Ընկերներիս հարազատները դահլիճում էին։ Յուրաքանչյուր ընտանիքից երկու-երեք մարդ։ Ոչ ավելի։ Միայն իմ հարազատները չկային։ Ինչ-որ պատճառով նիստի օրվա մասին նրանց չէին տեղեկացրել։ Մարզպետն ընդհատեց դատավորին.

-Քանի դեռ դահլիճում չկան Վարդան Հարությունյանի հարազատները, մենք նիստին չենք մասնակցելու ու այս պահին դուրս ենք գալիս։

Ասաց ու առաջ շարժվեց։ Մենք էլ, Հովիկից բացի, ոտքի կանգնեցինք։ Միլիցիոներներն ու զինվորները խառնվեցին իրար։ Լուրջ միջադեպ էր հասունանալու։ Լարվածությունը հարթեց դատավորը։ Ասաց՝ կհանձնարարի, որ անմիջապես տեղեկացնեն հարազատներիս։ Մինչեւ այսօր էլ, այսքան ժամանակ անց, մտածում եմ՝ գուցե շատ ավելի լավ կլիներ, որ հարազատներս ներկա չլինեին։ Միայն տեղեկանային արդեն կայացած դատական նիստի ու իմ դատավճռի մասին եւ՝ վերջ։ Շատ ծանր էր ինձ համար նրանց ներկայությունը։ Չեկիստները նրանց խաբել էին, որ եթե դատարանում ներում խնդրեմ ու ասեմ, որ զղջում եմ,

ապա ինձ չեն դատելու։ Միամիտ ծնողներս հավատացել էին նրանց ու ողջ դատավարության ընթացքում, որ մի քանի օր տեւեց, ինձ վրա աներեւակայելի հոգեբանական ու բարոյական ճնշում էին գործադրում։ Մորս չդադարող լացն ու հորս աղաչանքներն ընդմիշտ դաջվել են հիշողությանս մեջ։

Մեզանից առաջ բազմաթիվ քաղաքական դատավարություններ էին ընթացել Հայաստանում։ Կոնկրետ այս դատավորը՝ Սուրեն Դանիելյանը, շատերին էր դատել։ Բոլոր դատավարությունների ժամանակ էլ հիշատակման արժանի միջադեպեր գրանցվել էին։ Պարույր Հայրիկյանը, օրինակ, պահանջել էր, որ նիստերի դահլիճից հանեն Լենինի մեծադիր նկարը՝ պնդելով, որ նա հանցագործ է։ Աշոտ Նավասարդյանը պահանջել էր, որ դահլիճից հեռացնեն իր հարազատ պապին, որն անընդհատ դիտողություններ էր արել Աշոտին։ Անահիտ Կարապետյանն անչափ համարձակ էր եղել ոչ միայն իր դատավարության ժամանակ, այլ նաեւ 1974 թ. ընթացքում կայացած մյուս դատավարությունների ընթացքում, որոնցում ինքը որպես վկա էր ներգրավված։ Բագրատ Շահվերդյանի դատավարության ժամանակ իրեն վիրավորելու փորձ անող դատախազին շատ ավելի խիստ վիրավորանքով էր հակադարձել, իսկ Պարույր Հայրիկյանի դատավարության ժամանակ հեգնել էր դատարանին՝ ասելով.

-Գոհ ու շնորհակալ եմ ձեզանից, որ ինձ՝ նման հայորդու հետ ծանոթանալու բախտին արժանացրիք։

Բայց, որպես կանոն, դատավարություններն ընթացել են հարթ։ Քաղբանտարկյալները փորձել են օգտագործել դատարանը որպես իրենց գաղափարների հնչեցման հարթակ։ Ակադեմիական վեճերի են բռնվել՝ փորձելով ապացուցել իրենց կատարած քայլերի արդարացիությունը։ Փորձել են իրենց գործողությունները տեղավորել ԽՍՀՄ գործող օրենքների ու սահմանադրության շրջանակներում։ Շատ են եղել դատապարտվողներ, որոնք հայտարարել են, որ իրենց գործողությունները խորհրդային կարգերի դեմ ու խորհրդային երկրի քայքայմանն ուղղված չեն եղել։ Այսպիսի դիրքորոշում են որդեգրել ոչ միայն 1960-ականներին, այլեւ 1970-ականներին եւ հետագայում դատապարտվածներից շատերը։ Անգամ Հայաստանի անկախությունը պահանջող գործիչներից ոմանք էին նման բան հայտարարում։ Մեր դեպքում հակառակն էր։ Մենք հայտարարեցինք, որ մենք հակասովետական ու հակակոմունիստական գործիչներ ենք, եւ մեր գործունեության նպատակը ԽՍՀՄ-ի քայքայումն ու տապալումն է, որի արդյունքում Հայաստանը պետք է անկախ հանրապետություն դառնա, որտեղ կոմունիստական կուսակցությունը կարգելվի, իսկ կոմունիստական գաղափարախոսությունն օրենքից դուրս կհայտարարվի։

Մեզ համար փաստաբաններ էին բերել։ Հիշում եմ, իմ փաստաբանը տարեց կին պետք է լիներ։ Բոլորս էլ հրաժարվեցինք փաստաբաններից, եւ նրանք, ինչպես սուսուփուս ներս էին մտել՝ սուսուփուս էլ դուրս եկան։ Դատավորը հերթով սկսեց հարցնել՝ այդյո՞ք մեզ մեղավոր ենք ճանաչում եւ զղջու՞մ ենք արդյոք։ Միայն Հովիկն ասաց, որ մեղավոր է ճանաչում իրեն եւ զղջում է։ Մենք պահպանում էինք ձեւական բոլոր կողմերը։ Չէինք բացառում, որ Հովիկը դատարանում, մեզ հանդիպելով, կարող է փոխվել ու այլ դիրքորոշում որդեգրել։ Չէինք բացառում, որ ուշքի կգար ու իր թույլ տված սխալներն ուղղելու փորձ կաներ, եւ ինչ եղել էր

նախաքննության ընթացքում, կդառնար անցյալ։ Նոր փուլ էր սկսվում, եւ Հովիկին նոր հնարավորություն էր տրվում։ Մենք, գոնե, պատրաստ էինք օգնել նրան, որ օգտվի այդ հնարավորությունից։ Բայց իր այս հայտարարությամբ Հովիկը վերջնականապես հասկացրեց, որ ամեն ինչ արդեն վճռել է եւ փակել հետդարձի բոլոր ճանապարհները։ Դրանից հետո մենք արդեն մեր վճիռը կայացնելու եւ հրապարակելու իրավունք ունեինք։ Հայտարարեցինք, որ ժամանակավորապես նիստին մասնակցել չենք կարող, որովհետեւ այդ պահին ընթանում է մեր կազմակերպության ժողովը, եւ սկսեցինք իրար հետ աշխույժ զրուցել։ Դատավորը պահանջում էր, որ վերջ տանք, նիստը չխանգարենք։

-Դուք եք մեզ խանգարում, մեզ համար սա ավելի կարեւոր է, քան ձեր դատը, -հակադարձեցինք։

Շվարած դատավորը չգիտեր ինչ անել։ Նա, իհարկե, դատավարության ընթացքի հետ կապված բոլոր համապատասխան ցուցումները նախապես ստացել էր չեկիստներից, բայց մեր այս ու սրան հաջորդած ինքնագործունեությունն անակնկալ էին նրա համար։

Քիչ անց հայտարարեցինք.

-Կազմակերպության ժողովը վճռեց հեռացնել Հովհաննես Աղաբաբյանին կազմակերպության շարքերից։ Քանի որ այս պահից նա արդեն Հայ երիտասարդների միության անդամ չէ, չպետք է մեզ հետ միասին գտնվի նույն շարքում։ Եթե ցանկանում եք, որ մենք լինենք դատարանի դահլիճում ու մասնակցենք դատական ընթացքին, ուրեմն նրան առանձնացրեք մեզանից։

Կրկին ոտքի կանգնեցինք։ Կրկին ոստիկանները եւ զինվորները խառնվեցին իրար։ Երեւի առջեւում նստած չեկիստները հասկացրել էին դատավորին, որ կարող է Հովիկին առանձնացնել։ Լռության հաստատումից հետո նա Հովիկին առաջարկեց դուրս գալ մեր շարքից եւ տեղավորվել մեր հետեւի նստարանին։ Սա դատավարության առաջին օրն էր։ Դատավորը, դատախազը եւ նիստը կազմակերպող չեկիստները երեւի արդեն հասկացել էին, որ դատավարությունը հարթ չի ընթանալու։ Մեր դատական նիստը սկսվել է մարտի 26-ին, ավարտվել՝ ապրիլի 9-ին։ Միջակայքում եղել են օրեր, որ նիստ չի կայացել։ Ես արդեն լավ չեմ հիշում, բայց, ընդհանուր առմամբ, մի քանի օր է տեւել։ Մի քանի օր տեւած մեր դատական նիստը մենք վերածեցինք շոուի եւ խաղի։ Խաղն էլ մենք էինք վարում։ Ամեն քայլափոխի մի անակնկալ կարող էր լինել։ Անձնական վիրավորանքներով համեմված վեճ դատախազի հետ, մեղադրանքը հաստատող վկաների նկատմամբ ճնշումներ, վիրավորական արտահայտություններ նրանց հասցեին, ծաղր։ Մեր կազմակերպության բացահայտված անդամները, որոնք որպես վկա էին ներգրավված, ցուցմունքներ տալուց կաշկանդված էին լինում։ Պարզ էր՝ մենք դատապարտվում ենք, իսկ նրանք ստիպված են ցուցմունքներ տալ։ Մենք խրախուսում էինք նրանց.

-Խնդիր չկա, հանգիստ պատմիր։

Ով էլ լիներ ցուցմունք տվողը, խնդիր չէր մեզ համար։ Մենք միայն զենքի ձեռքբերման փորձի մտացածին մեղադրանքից էինք հրաժարվում։

Երբ ցուցմունք տալու հերթը Սմբատին հասավ, մենք դեռ չէինք մտածել, թե ինչ ենք անելու։ Նախնական ծրագիր չունեինք։ Դրա մասին չէինք էլ զրուցել իրար հետ։ Սմբատը ներս մտավ ու մոտեցավ այն ամբիոնին, որտեղից պետք է ցուցմունքներ տար։ Այդ նույն ամբիոնից նաեւ մենք էինք ցուցմունք տալիս։ Սմբատը սկսեց պատմել։ Նոր բան չէր ասելու, պետք է պատմեր նույնը, ինչ՝ մյուս վկաները։ Բայց մենք այդ պահին արդեն նրան ոչ թե որպես գործով անցնող վկա էինք դիտարկում, այլ՝ որպես ՊԱԿ-ի գործակալ, որի մատնությամբ երկու կազմակերպություն էր բացահայտվել՝ մերը եւ մանկավարժականի ուսանողական խումբը։ Կարծես նախապես պայմանավորված՝ սկսեցինք աղմկել ու խանգարել նրան։ Անակնկալի եկած՝ նա շրջվեց դեպի մեզ։

-Հանգիստ, նրանց հետ գործ չունես, դու քո ցուցմունքները տուր, - խրախուսեց նրան դատավորը։

Սմբատը փորձեց շարունակել։

-Ուուուուու, - չորսս միասին ձայնակցում էինք նրան ու հռհռում։

Էլ չեմ խոսում ծաղրական ու վիրավորական արտահայտությունների ու տարատեսակ սպառնալիքների մասին։ Երեւի մենք ավելի քան դաժան էինք։ Սմբատը չդիմացավ։ Երկու ձեռքով ամուր կառչել էր ամբիոնին, որ ցած չընկնի։ Ինչ-որ պատճառով հետքայլ արեց ու ճոճվեց։ Առջեւի շարքում նստած չեկիստներից մեկն օգնեց, որ նա դահլիճից դուրս գա։ Միջանցքում սպասող մյուս վկաները, հավանաբար տեսնելով Սմբատի վիճակը, սարսափել էին։ Որովհետեւ նրանից հետո դահլիճ մտած Սուրիկ Հակոբյանը, որը Սմբատի ընկերն էր, կարծեմ նույնիսկ բարեկամը, միաժամանակ Սմբատի ստեղծած «Հայ ազգային միություն» կազմակերպության անդամ էր ու շփվել էր մեզ հետ, դահլիճ մտնելիս այլայլված էր։ Սարսափած ու աղաչանքով լի հայացքով մեզ էր նայում։

-Հանգիստ, Սուրիկ, մի վախեցիր, դու խնդիր չունես, կարող ես պատմել, - հանգստացրինք նրան։

Երբ եկավ Իշխանի ցուցմունք տալու պահը, մոտեցավ ամբիոնին։ Բոլորի, այդ թվում եւ մեզ համար անակնկալ՝ 180 աստիճանով շրջեց ամբիոնը ու մեջքով դեպի դատավորը կանգնելով հայտարարեց, որ միայն այդ դիրքով է ցուցմունք տալու։

-Դատարանին չեմ հարգում, իսկ դահլիճում իմ ընկերների ու իմ ծնողներն են, որոնց հարգում եմ։ Եթե ցանկանում եք ինձանից ցուցմունքներ լսել, ապա սա է իմ պայմանը։

Երկար քննարկումից հետո համաձայնեց, որ ցուցմունք կտա ուսերով դեպի դահլիճը եւ դատարանը կանգնած։

Նիստի օրերին դատարանի մոտ մարդկանց բազմություն էր հավաքվում։ Մեր հարազատներից բացի, նաեւ համակիրներ ու նախկին քաղբանտարկյալներ կային։ Այնտեղ էին լինում «Հանուն հայրենիքի» խմբի գործով 1969-ին դատապարտվածներ Շիրակ Գյունաշյանը (1982-ին կրկին դատապարտվեց), Սարգիս Թորոսյանը, Գեւորգ Հեքիմյանը։ Ամեն անգամ, երբ մեզ մեկուսարան տանելու նպատակով դատարանից դուրս էին բերում,

այնտեղ իրարանցում էր սկսվում։ Մենք ուրախ ողջունում էինք նրանց, իսկ կալանավորներ տեղափոխող ավտոմեքենա նստելուց հետո սկսում էինք որեւէ հայրենասիրական երգ երգել։ Մինչեւ մեքենայի շարժվելն աղմուկն անպակաս էր։

1981 թ. մարտի 30-ին՝ ԱՄՆ նորընտիր նախագահ Ռոնալդ Ռեյգանի նկատմանբ Վաշինգտոնի «Հիլթոն» հյուրանոցից դուրս գալու պահին մահափորձ իրականացվեց։ Իր նախընտրական արշավի ժամանակ նա հաճախ էր խոսում ԽՍՀՄ-ին դիմակայելու եւ ԽՍՀՄ-ի դեմ պայքարի անհրաժեշտության մասին։ Երկու տարի անց՝ 1983-ին նա ԽՍՀՄ-ն անվանեց «Չարի կայսրություն»։ Կարծում եմ, Ռեյգանը եղել է վերջին հարյուրամյակի ԱՄՆ ամենաարդյունավետ նախագահներից մեկը, որի մեծագույն ձեռքբերումները՝ բեռլինյան պատի եւ ԽՍՀՄ փլուզումը, Վարշավյան պայմանագրի ի չիք դարձնելը եւ վերջին հաշվով նոր աշխարհի ի հայտ գալը՝ նրան հաջորդող նախագահները մսխել են պատմական իրավիճակները ճիշտ չհասկանալու ու ճիշտ չգնահատելու պատճառով։ Դրա հետեւանքով այսօր ունենք ԽՍՀՄ դերին հավակնող ոչ պակաս վտանգավոր ու ոչ պակաս անկանխատեսելի Ռուսաստան։

Մահափորձի հաջորդ օրը մեր հերթական դատական նիստն էր։ Նիստը սկսելու պահից մենք կրկին զբաղված էինք։ Դատավորը մեզ կարգի հրավիրելու թույլ փորձեր էր անում։ Մարզպետի առաջարկով ես մեկուսարանի խցում Միացյալ Նահանգների ժողովրդին ուղղված ցավակցական հեռագրի կարճ տեքստ էի գրել, ու այժմ ընկերներս տեքստին էին ծանոթանում։ Դատավորի պահանջներին՝ չխանգարել դատը, ուշադրություն չէինք դարձնում։ Հաջող տեքստ էր ստացվել, որի վերջում մոտավորապես այսպիսի միտք էր. «Հայ երիտասարդների միությունը հույս է հայտնում, որ նախագահ Ռոնալդ Ռեյգանը շատ շուտ կապաքինվի, եւ մենք կշարունակենք իրար զուգահեռ պայքարել ԽՍՀՄ կոչվող չարիքի դեմ»։

Սամվել Եղիազարյանը ոտքի կանգնեց եւ ընդհատեց դատավորին.

-Մենք հայտարարություն ունենք, -ասաց նա ու սկսեց կարդալ գրածս տեքստը։

Երբ Սամվելն ավարտեց, ապշած դատավորը հարցրեց.

-Հիմա ես ի՞նչ պետք է անեմ։

Սամվելն էլ թե՝

-Ոչինչ, վերցրու ու կցիր գործին։

Ու դատավորին տվեց տեքստը։

Մեր դատավարությունից կարճ ժամանակ առաջ կալանավայրից ազատ էր արձակվել Մարզպետի եղբայրը՝ Հարությունյան Շահենը։ Բոլոր դատական նիստերին գալիս էր ու նստում վերջին շարքում։ Մեր դատավարության մասին նա էր տեղեկություններ փոխանցում Մոսկվայում հրատարակվող «Ընթացիկ իրադարձությունների խրոնիկային»։ Շահենը, երեւի, հետաքրքիր դրվագները չմոռանալու համար գրառումներ էր կատարել։ Սա լավ հիշում եմ, որովհետեւ հերթական նիստերից մեկը սկսելուց առաջ դատավորն ասաց.

-Նախորդ նիստում նկատեցի, որ մեկը վերջում նստած գրառումներ էր անում։ Զգուշացնում եմ, որ գրառումներ անելու համար դուրս կհրավիրեմ։

Իհարկե, շատ լավ էր, որ Շահենը ներկա էր եւ կարողանում էր տեղեկություններ հաղորդել, որոնք հրապարակվում էին ազատ աշխարհի լրատվամիջոցներում եւ, իհարկե, առաջին հերթին «Խրոնիկայում»։ Հետագայում՝ շատ ավելի ուշ, արդեն մեր օրերում, երբ մեր դատավարության մասին «Խրոնիկայում» եղած հրապարակումները կարդացի, ազնվորեն ասած, մի քիչ տխրեցի։ Շահենը շատ կամայական եւ աչառու մոտեցում էր ցուցաբերել։ Հիմնականում անտեսելով մյուսներիս, փոխանցել էր իր եղբոր՝ Մարզպետի ելույթներից հատվածներ, ապա՝ այն ամենը, ինչ ինքն էր կարեւոր համարել։ Մեր ընկերը յուրօրինակ գրաքննություն ու ընտրողականություն էր ցուցաբերել։ Փոխանցած լրատվության մեջ մեծ տեղ էր հատկացվել դատարանի դահլիճում Մարզպետի բարձրաձայնած դաշնակցության գովքին, որտեղ նա դաշնակցությանն ադամանդի հետ էր համեմատում, իսկ նման կարեւոր դրվագ, ինչպիսին Ամերիկայի ժողովրդին ուղղված մեր հեռագիրն էր՝ այնքան էլ չէր կարեւորվել լրատվական հոսքում։ «Խրոնիկայի» 1981 թ. հուլիսի 14-ի N62 թողարկման մեջ (մեր դատավարության ավարտից 4 ամիս անց) անդրադարձ կա մեր դատավարությանը, որտեղ շատ համառոտ հիշատակվում է նաեւ մեր հեռագիրը. «Դատավարության վերջին օրը մեղադրյալները պահանջեցին իրենց անունից հեռագիր ուղարկել ԱՄՆ նախագահ Ռ. Ռեյգանին՝ շուտափույթ ապաքինման ցանկություններով եւ հույսով, որ նա հավատարիմ կմնա իր խոստումներին»։ Մեր գեղեցիկ ձեւակերպված հեռագիրը շատ չորուցամաք էր դարձել։ Կարող էր սա էլ չլինել։ Դժգոհելով հանդերձ՝ Շահենից պետք է շնորհակալ լինել։

Իրար հետ պայմանավորվել էինք, որ վերջին խոսքով հանդես չենք գալու։ Ինքս նախապես մի քանի էջանոց վերջին խոսք էի գրել։ Բայց, քանի որ ընկերներով վճռել էինք հրաժարվել՝ պատռեցի։ Հաջորդ նիստին, երբ դատավորն ասաց, որ կարող ենք ասել մեր խոսքը, Մարզպետը հայտարարությամբ հանդես եկավ։ Առաջինը, որ մեզ համար չափազանց կարեւոր էր եւ պատմության համար պարտադիր պետք է արձանագրվեր՝ այն էր, որ Հայ երիտասարդների միությունն իրականում Ազգային միացյալ կուսակցության (ԱՄԿ) կառույց է։ Ողջ նախաքննության ընթացքում սրա մասին ոչ մի ցուցմունք չէր տրվել եւ ոչ մի խոսք չէր ասվել։ Սրա մասին պետք է հայտարարվեր հենց դատարանում եւ հայտարարվեց։ Նման հայտարարության չսպասող դատավորն անակնկալի եկավ ու մի բան ասելու համար հարցրեց.

- Իսկ ո՞վ է ձեր կուսակցության ղեկավարը, Նավասարդյան Աշո՞տը։

Արդեն ասել եմ՝ Աշոտ Նավասարդյանը եւ Ազատ Արշակյանը հերթական անգամ (Աշոտը՝ երրորդ, իսկ Ազատը՝ երկրորդ) կալանավորվել էին ու շուտով պետք է դատապարտվեին։

Մարզպետի հաջորդ հայտարարությունը մեզ սպասվելիք էտապին էր վերաբերում։

-Մենք տեղյակ ենք, որ պետական անվտանգության կոմիտեն տարատեսակ սադրանքներ է կազմակերպում քաղաքական բանտարկյալների նկատմամբ։ Այսօր այստեղ, ձեր այս դատարանում հայտարարում ենք՝ եթե մեզ հետ էտապում որեւէ բան պատահի, դրա պատասխանատվությունը ՊԱԿ-ի վրա է մնալու։

Այդ օրը մեզանից ոչ մեկը չգիտեր, թե մեզ ինչ է սպասվում էտապում…

Իսկ վերջին խոսքի առնչությամբ ավելացրեց.

-Սովետական արդարադատությանը կարող են հավատալ միայն կոմունիստները եւ հոգեկան հիվանդները, իսկ մենք ոչ կոմունիստ ենք եւ ոչ էլ հոգեկան հիվանդ։ Մենք ձեր դատարանին ասելիք չունենք։

Մեր պայմանավորվածությունն Իշխանը խախտեց եւ հայտարարեց որ խոսք ունի ասելու եւ կարճ՝ մեկ-մեկուկես էջանոց վերջին խոսքով հանդես եկավ։ Նրա խոսքը մեղադրանք էր ընդդեմ խորհրդային իշխանությունների եւ ավարտվում էր «եթե իմ լեզուն պետք է մեռնի վաղը, ես պատրաստ եմ այսօր մեռնել» բառերով։

Մեզ, նույնիսկ Հովիկին, բավականին մեծ պատժաչափերի դատապարտեցին։ Մարզպետը եւ Իշխանը ստացան հոդվածով նախատեսված առավելագույն պատժաչափերը՝ 7 տարի ազատազրկում եւ 5 տարի աքսոր։ Ես, որ, ինչպես ասացի արդեն, Հայաստանում չէի եղել եւ որեւէ գործի չէի մասնակցել, ստացա 5 տարի ազատազրկում եւ 3 տարի աքսոր, Սամվելը՝ 4, իսկ Հովիկը՝ 3 տարի ազատազրկում։ Մենք պատրաստ էինք ցանկացած պատժաչափի, ու նրանց հայտարարած տարիները մեզ վրա որեւէ ազդեցություն ունենալ չէին կարող։ Հովիկին էին շատ խաբել։ Երեւի նրան շատ ավելի թեթեւ պատիժ էին խոստացել։

Մայիսի սկզբներից արդեն կրկեսի հարեւանությամբ գտնվող Երեւանի բանտում էինք։ Չորսով էինք՝ ես, Սամվել Եղիազարյանը, Իշխան Մկրտչյանն ու Մարզպետ Հարությունյանը։ Հովիկը Ալեքսանդր Մանուչարյանի հետ մեկ այլ խցում էր։ Մեր ու Մանուչարյանի դատավարությունը զուգահեռ էր ընթանում՝ օրերի չնչին տարբերությամբ։ Ըստ չեկիստների մշակած ծրագրի, իբրեւ թե վրեժի դրսեորումներից խուսափելու համար, Հովիկը մեզ հետ այլեւս չպետք է հանդիպեր։ Նրան տանում էին դեպի Մորդովիա, իսկ մեզ՝ Պերմ։ Մեզ՝ Թբիլիսիով, Հովիկին՝ Բաքվով։ Բայց, ինչպես հաճախ էր պատահում, չեկիստների նախնական ծրագիրը խափանվեց։ Էտապի ժամանակ Ռոստովի բանտի նկուղային խցերից մեկում ես ու Սամվելը հանդիպեցինք Հովիկին։ Հովիկն անչափ լարված էր։ Մի 40-50 քրեականների մեջ մեզ հետ նման անակնկալ հանդիպումը չարագուշակ էր նրա համար։ Բայց մենք չէինք լինի մենք, եթե փորձեինք հաշիվներ պարզել նրա հետ։ Մեկ ամբողջ օր լարված սպասելուց հետո Հովիկը միայն հաջորդ օրը մոտեցավ մեզ։ Զրուցեցինք։ Զրույցը հիշում եմ բոլոր նրբություններով։ Նա ընկճված էր ու իրեն խաբված էր զգում։ Ժամանակ անց նրան տարան մեր խցից։

Երեւանի բանտի կեղտոտ եւ առանց ապակիների խուց մտանք հերթով։ Մեր ուսապարկերը վերցրին։ Մինչեւ էտապ գնալը դրանք պահվելու էին բանտի պահեստում։ Մեզ թույլատրում էին վերցնել ծխախոտ ու հիգիենայի պարագաներ։ Ստացվեց այնպես, որ առաջինը խուզարկեցին ինձ, եւ առաջինն էլ խուց մտա։ Չորս տեղանոց, երկհարկանի մահճակալներով խուց էր։ Երկրորդ հարկի մահճակալներից մեկից կախեցի սրբիչս, իսկ օճառը եւ ատամիս խոզանակը՝ պատյանի մեջ, դրեցի լվացարանի մոտ։ Եկան Սամվելն ու Մարզպետը, իսկ Իշխանը վերջինն էր։ Խուց մտնելուն պես, չգիտես ինչու, նա արագ մոտեցավ լվացարանին, վերցրեց ատամի խոզանակը եւ.

-Էս ո՞վ է թողել այստեղ,- ասաց, - ու առանց ապակի լուսամուտից դուրս նետեց։ Այնքան արագ կատարվեց ամեն ինչ ու այնքան դիպուկ նետեց, որ իրար ամրացված երկշերտ ճաղավանդակների ճաղերին չկպչելով՝ խոզանակը դուրս թռավ։

-Ի՞նչ արեցիր, Իշխան, իմն էր ու միակը, - հուսահատ ասացի ես։

Ավելի լուրջ վնաս հասցնել, քան բանտային պայմաններում հիգիենայի նման կարեւոր միջոցից ինձ զրկելն էր, պատկերացնել հնարավոր չէր։ Իշխանը թեւաթափ կանգնած էր։ Ասաց, որ բանտի պահեստում գտնվող իր ուսապարկում խոզանակ ունի եւ սկսեց ծեծել խցի դուռը։ Մոտեցած հսկիչին ասաց, որ մոռացել է իրերի միջից վերցնել խոզանակը։ Հաջորդ օրվա երեկոյան վերջապես Իշխանին ուղեկցեցին պահեստ։ Այնտեղից ինձ համար նոր խոզանակ բերեց՝ իր պատյանով։ Մինչեւ աքսոր դուրս գալս խոզանակի այդ պատյանն եմ օգտագործել։

Խուցը կեղտոտ էր եւ լցված տարատեսակ խավարասերներով ու ահավոր ցավոտ կծող փայտոջիլներով, բայց մեր օրն աներեւակայելի ուրախ էր անցնում։ Մենք միասին էինք, ու դա ոգեւորում էր մեզ։ Ես ու Սամվելը տարբեր թեմաներով բանաստեղծություններ էինք գրում, իսկ Մարզպետն ու Իշխանը գնահատում էին դրանք։ Հիշում եմ, մի անգամ ուշ երեկոյան զրույցի ընթացքում, մինչ մեր գրվածքների մասին նրանց գնահատականի հնչելը, քնով էի ընկել ու այնքան խոր, որ չէի արթնացել անգամ նրանց աղմուկից։ Լուսաբացին ծիծաղում էին։ Ասում էին՝ իբր քնեցի, որ չլսեմ Սամվելի գրած բանաստեղծության մասին հնչող դրվատանքի խոսքերը։ Երգում էինք։ Ես միշտ էլ երգեցողությունից հեռու եմ եղել։ Եթե աշխարհում մի տասը մարդ կա, որոնց մասին կարելի է ասել՝ բացարձակապես զուրկ են երաժշտական լսողությունից, ապա հաստատապես այդ 10-ի մեջ եմ։ Բայց ես էլ էի մասնակցում երգեցողությանը։ Մարզպետն ասում էր.

-Վարդանն ինչ էլ որ երգի՝ «Զարթնիր, լառ, մեռնիմ քըզի» է ստացվում։

Մայիս ամիսն անցկացրինք այդ բանտում։ Հայաստանի առաջին հանրապետության հռչակման օրը՝ մայիսի 28-ին որոշեցինք, որ օրը պետք է նշվի։ Ուշ երեկոյան մեր ալյումինե ծռմռված թասերի մեջ ջուր լցրինք, ու մեր ավագ ընկեր Մարզպետը բաժակաճառ ասաց։ Հիմա նրա խոսքն աղոտ եմ հիշում, բայց խոսեց անկախության անհրաժեշտության մասին, ասաց, որ ճիշտ ճանապարհ ենք ընտրել, եւ որ՝ սովետմիությունը քանդվելու է։

-Կտեսնեք, - ասաց, - մենք մեր պատժաչափերը մինչեւ վերջ չենք նստելու, որովհետեւ սովետներն այդքան երկար չեն ձգելու։

1981 թվականն էր, եւ աշխարհում շատ քիչ մարդ կհանդիպեր, որը նման վստահությամբ կկարողանար հայտարարել, թե Խորհրդային միության պես հզոր երկրին 10 տարուց էլ պակաս ժամանակ է մնացել։ Իրար զարկեցինք մեր պայմանական բաժակները եւ խմեցինք մեր պայմանական օղին։ Ու այդ պահին, մեր արարողությանը համահունչ, դրսից հրավառության համազարկեր հնչեցին։ Տեղյակներին հիշեցնեմ, իսկ խորհրդային ժամանակներից անտեղյակ երիտասարդներին տեղեկացնեմ, որ այդ տարիներին հրավառություններ լինում էին միմիայն սովետական հույժ կարեւոր տոներին, եւ ոչ ոք չէր

կարող իր ցանկությամբ, ինչպես համատարած կերպով արվում է հիմա՝ իր կամ իր զոքանչի ծննդյան օրվա առթիվ հրթիռակոծել միամիտ քնած բնակչությանը։ Մեզ մնում էր ողջ երեկո քննարկել, աղմկել ու ծիծաղել, թե ինչու էին սովետները որոշել Մարզպետի բաժակաճառին հրավառություն նվիրել։ Մեր աղմուկի վրա դռանը մոտեցած ու մեզանից լռություն պահանջող հսկիչը նույնպես չգիտեր հրավառության պատճառը։ Միայն առավոտյան կալանավայրի պատասխանատու սպաներից մեկը շինծու հպարտությամբ մեզ՝ գնդակահարության արժանի հակասովետական թափթփուկներիս, տեղեկացրեց, որ այդ օրը սովետական սահմանապահի օրն էր։

Հայրս

Երեւանի բանտում գտնվելուս օրերին հայրս կարողացել էր պայմանավորվել եւ տեսակցության գալ: Եկել էր քրոջս հետ, բայց վերջին պահին վճռել էին քրոջս ներս չթողնել: Կալանավորներին տեսակցություններ տրվում են օրենքով: Խիստ ռեժիմի կալանավայրի կալանավորը, իսկ մենք հենց այդ ռեժիմի դատապարտյալներ էինք, տարվա ընթացքում իրավունք ուներ երկարատեւ (3 օր) եւ վեց ամիսը մեկ տրվող կարճատեւ (1-3 ժամ) տեսակցությունների: Ես երբեք տեսակցություններ չեմ ունեցել: Կալանավայրում դրսեւորած վարքիս պատճառով միշտ զրկվել եմ տեսակցություններից, ու այդ տարիներին հարազատներիս չեմ տեսել: Դա իմ առաջին ու վերջին տեսակցությունն էր: Հսկիչը մոտեցավ մեր դռանը եւ ասաց, որ տեսակցության պատրաստվեմ: Չզարմացա: Գիտեի՝ քանի դեռ Հայաստանում եմ, հայրս ինձ հանդիպելու ճանապարհ կգտնի: Հասկանում էի, թե ինչ մեծ ցավ, ինչ վիշտ եմ պատճառել ծնողներիս, բայց ոչինչ անել չէի կարող: Ես ընտրել էի մի ճանապարհ, որի իմաստն ու էությունն այդ տարիներին շատ քչերը կարող էին ընկալել: Չէին ընկալում նաեւ ծնողներս: Նրանց համար աներեւակայելի ծանր էր իմ կալանավորումը, ապա՝ դատապարտումը: Հայրս հպարտ ու ազնիվ գյուղացի մարդ էր: Նա պատկերացնել անգամ չէր կարող, որ իր առաջնեկը, իր որդին նման փորձության կենթարկի իրեն: Չեկիստները համոզել էին նրան, որ իմ մի խոսքը, զղջման հայտարարությունը բավական է, որ ազատ արձակվեմ ու կրկին խորհրդային բանակ վերադառնամ: Համոզել էին հորս, որ ինձ ճնշել է պետք: Հայրս էլ, հավատալով նրանց, դատավարության ողջ ընթացքում մորս հետ միասին աներեւակայելի ճնշումներ էին բանեցնում ինձ վրա: Դատարանում, ընդմիջումներից մեկի ժամանակ, չեկիստներն անգամ ինձ մոտ բերեցին հորս: Հայրս շարունակում էր պնդել, որ հանդես գամ զղջման հայտարարությամբ ու ազատ արձակվեմ: Ես նրան բացատրում էի, որ ազատ արձակվելու խոստումը սուտ է, որ ինձ այստեղ են բերել դատելու համար ու դատելու են, հակառակ դեպքում Լատվիայից այստեղ չէին հասցնի, այնտեղ կհարցաքննեին ու՝ վերջ: Ասում էի, որ խաբում են իրեն, բայց հայրս ավելի շատ նրանց հավատալուն էր հակված, քան՝ ինձ: Ես, իհարկե, մեղքի զգացում ունեի: Այսօր էլ այդ զգացումը չի լքում ինձ: Բայց ոչինչ անել չէի կարող: 1986-ին՝ իմ ազատ արձակվելուց երկու տարի առաջ հայրս մահացավ: Նրա մահվան մասին տեղեկացել եմ երկու տարի անց միայն: Չգիտես ինչու, հարազատներս համարել են, որ ճիշտն ինձ չասելն է: Ազատազրկմանս ողջ ընթացքում անընդհատ մտածել եմ, որ մի օր հորս հետ զրուցելու ու նրան ամեն ինչ բացատրելու հնարավորություն եմ ունենալու: Բայց այդպես էլ նման հնարավորություն չունեցա:

Տեսակցությունն ընդհանուր էր: Սա նշանակում է, որ մեկ ընդհանուր սրահը ցանցով բաժանված է երկու մասի: Ցանցի մի կողմում կալանավորներն են, իսկ մյուս կողմում՝ հարազատները, որոնք զրուցում են իրար խանգարելով: Հինգ րոպե անց ներս մտավ հսկիչը եւ հայտարարեց, որ բացում է դռնակը, եւ կարող ենք մոտենալ մեր հարազատներին: Ուրախացել էի: Մոտեցա հորս, գրկախառնվեցինք: Անհամեմատ ավելի խաղաղ էր: Դատավարության շրջանի լարվածությունը չկար: Տեսակցության ողջ ընթացքում ձեռքերս իր ափերի մեջ պահեց: 30-40 րոպե անց հսկիչն իրարից բաժանվելու հրահանգ արձակեց:

-Հանգիստ գնա, Նարինեն (քույրս) սպասում է, ու մի մտածիր, - ասացի:

Հայրս թողեց ձեռքերիցս մեկը, ձեռքը տարավ գրպանը եւ գումար դրեց ափիս մեջ.

-Փող է, պետք կգա, պահիր։

Բարձրացրի շալվարիս փողքն ու գումարը դրեցի գուլպայիս մեջ։

Տեսակցությունից դուրս եկած բոլոր կալանավորներին, նրանց թվում՝ եւ ինձ, ուղեկցեցին առանձին միջանցք։ Ուղեկցող հսկիչը հրահանգեց.

-Կթվեք։

Ես բան չհասկացա։ Շուրջս էի նայում, որ հասկանամ, թե ով ինչ է անելու, ու ըստ այդմ էլ շարժվեմ։ Մեկն ասաց.

-Ոչինչ չունեմ։

Չարացած հսկիչը վրա բերեց.

-Խուզարկե՞մ հիմա։

Այս երկխոսությունից պարզ դարձավ, որ փող պետք է տամ։ Հայրս տվել էր երեք հատ 5 ռուբլիանոց եւ մեկ հատ 3 ռուբլիանոց։ 3 ռուբլիանոցն արագ մեկնեցի հսկիչին ու մտածում եմ՝ եթե դժգոհ լինի, ամբողջը կտանի։ Հսկիչները գիտեն, որքան գումար էլ ունենաս՝ վերջում իրենց մոտ է հայտնվելու։ Հանգիստ վերցրեց ու հրահանգեց դուրս գալ միջանցքից։ Այնտեղ արդեն ինձ էր սպասում մեր մասնաբաժնի հսկիչը։ Ողջ գումարն ընկերներով ծախսեցինք մինչեւ Թբիլիսի հասնելը։ Զինվորներից մեկը նույնիսկ գինի բերեց. այնքան վատն էր, որ զզվանքով էինք խմում։

Բանտից բանտ ճանապարհորդություն՝ էտապ

Հունիսի առաջին օրերն էին։ Եկավ էտապով դեպի կալանավայր տեղափոխվելու պահը։ Էտապը կալանավորական կյանքի մի առանձին դրվագ է, որը կարող է ուղեկցվել տարատեսակ դժվարություններով ու բարդություններով։ Այստեղ նկարագրված են միայն իմ էտապը եւ միայն ինձ հետ կատարված դեպքերը։ Այլոց հետ լիովին այլ եւ ավելի ծանր բաներ կարող է պատահած լինեն։ Գրականության մեջ եւ բանավոր պատմություններում հանդիպել եմ շատ ավելի դաժան նկարագրությունների։ «Հայաստանի վերամիավորման շարժում» կազմակերպության գործով 1971-ին դատապարտված քաղբանտարկյալ Յուրիկ Բուդաղյանը Մորդովիայից դեպի Պերմի կալանավայր իր էտապն այսպես է նկարագրում. «Ամենածանր հիշողությունը մնացել է էտապից։ Դաժան բան էր։ Քրեականներ, հակահիգիենիկ պայմաններ, միջատներ։ Կալանավայրում արդեն հեշտ էր։ Հիմնականում քաղբանտարկյալներ էին։ Մորդովիայում էինք։ Այնտեղ՝ քաղաքական կալանավայրերում արդեն բանտարկյալ ու ադմինիստրացիա փոխհարաբերությունները տասնամյակների ընթացքում հստակեցվել էին։ Որոշ ժամանակ անց մեզ Մորդովիայից որոշեցին Պերմ տեղափոխել։ Այդ էտապը վայրենություն էր հիշեցնում։ Ուղեկցվում էր աներեւակայելի վայրագությամբ։ Ամառ էր, ջուրը քիչ էր, սնունդ բացարձակապես չկար։ Բանտարկյալների համար նախատեսված վագոնի յուրաքանչյուր չորս տեղանոց կուպեում յոթ-ութ մարդ էր գտնվում, իսկ վագոնը կցում էին գնացքին միայն գիշերը։ Ողջ ցերեկը վագոնը կանգնում էր կիզիչ արեւի տակ։ Գիշերն էին միայն կցում շարժվող գնացքին։ Սովետներն այս եղանակով երեւի ցանկանում էին մարդկանցից գաղտնի պահել կալանավորների տեղափոխումը։ Երբ տեղ հասանք, եւ մեզ իջեցրին վագոնից, մենք ուղղակի թափվեցինք ճամփեզրին։ Իրար վրա թափված մարդիկ շարժվել չէին կարողանում։ Մեկն անգամ մահացավ։ Մի քանի ժամ մեզ թողեցին այդպես ճամփեզրին ընկած։ Կամաց-կամաց ուշքի եկանք, եւ նոր միայն տեղափոխեցին գաղութ»։

Մոսկովյան այլախոհ Ալեքսանդր Պոդրաբինեկն իր «Այլախոհները» գրքում նույնպես անդրադառնում է էտապին. «Էտապը բանտային կյանքի առանձին ու ինքնուրույն դրվագ է։ Այստեղ հատվում են ճանապարհները, եւ խառնվում են ռեժիմները։ Այստեղ կիսվում են տպավորություններով ու նորություններ են իմանում։ Այստեղ հաշիվներ են ներկայացնում ու հաշիվներ մաքրում։

Էտապով անցնել սարսափում են նրանք, ովքեր կալանավորական համայնքի նկատմամբ մեղքեր ունեն՝ մատնիչները, ճամբարային ծախվածները, ներքին ռեժիմի սեկցիաների ակտիվիստները, քարտախաղով պարտք մնացածները, դատապարտված մենթերը եւ կոմունիստները, անչափահաս պղծողները։ Ընդհանրապես, բանտային կարգն այնպիսին է, որ բոլոր կալանավորները հավասար են իրար նկատմամբ, անկախ իրենց գործած հանցանքներից։ Բայց այս կարգից կան բացառություններ՝ բռնաբարողները եւ անչափահաս պղծողները։ Սրանց փչացնում են դաժանաբար եւ առանց որեւէ քննարկման։ Շատ հաճախ՝ հենց առաքաբանտերում»։

Համեմատության համար կարելի է նաեւ կարդալ այսօրվա բանտային կյանքի մասին գրառումներ կատարած ժամանակակից հեղինակների, որոնց ներկայացրած պատմություններում էտապը՝ այսօրվա էտապը, նույնպես նկարագրված է։ Ուսումնասիրողը

կտեսնի, որ այս տարիների ընթացքում, եթե նույնիսկ փոփոխություններ կան, ապա այնքան չնչին են, որ ուրախանալու տեղիք չեն տալիս։

Էտապը կալանավորներին կալանավայրից կալանավայր կամ քննչական մեկուսարանից կալանավայր տեղափոխելն է։ Բառը ռուսաց լեզու է փոխանցվել ֆրանսերենից, իսկ ռուսերենից արդեն անցել է մեզ եւ թարգմանաբար նշանակում է՝ քայլ, փուլ, վայր։ Էտապ երեւույթն այնքան էլ ընկալելի չէ փոքր երկրի բնակչի համար, որովհետեւ փոքր երկրում կալանավորի կալանավայրից կալանավայր տեղափոխվելը երկար ճանապարհ ու ժամանակ չի պահանջում։ Հայաստանում կալանավայրից կալանավայր մարդ տեղափոխելու համար ամենաերկար ճանապարհը կարող է տեւել տասը-տասներկու ժամ, ծայրահեղ դեպքում՝ մեկ կամ երկարատեւ կանգառների դեպքում՝ մի քանի օր։ Իսկ, ասենք, Ռուսաստանում կալանավայրերի միջեւ եղած հեռավորությունները կարող են հասնել հազարավոր կիլոմետրերի, եւ էտապը կարող է ձգվել ու ձգվել։

Մեծ երկրներում ու կայսրություններում էտապ միշտ էլ եղել է։ Անգլիացիներն իրենց կալանավորներին նավերով էին տեղափոխում Ավստրալիա կամ այլ գաղութներ։ Նույնկերպ կալանավորներին իրենց անդրծովյան գաղութներ էին տեղափոխում ֆրանսիացիները, իսպանացիները եւ այլք։ Ռուսները, մինչեւ երկաթգծի ի հայտ գալը, կալանավորներին դեպի արեւելք էին տեղափոխում ոտքով։ Էտապները (իջեւանատեղիները) կազմակերպվում էին կալանավորների տեղափոխման ճանապարհների վրա։ Դրանց միջեւ եղած տարածությունները հասնում էին մինչեւ 15-20 կիլոմետրի։ Յուրաքանչյուր էտապում վարձվում էին առանձին շինություններ, իսկ եթե շինություններ չկային, ապա կազմակերպվում էին ժամանակավոր հարմարություններ, որտեղ իրարից անջատ տեղավորվում էին կալանավոր կանայք, պահակախումբը եւ տղամարդ կալանավորները։ Փաստորեն, էտապ է կոչվել դեպի կալանավայր շարժվող դատապարտյալների բազմության հանգստի համար կանգառի վայրը։ Երկաթգծի կյանք մտնելուց հետո ոտքով տեղաշարժը վերացավ։ Կալանավորներին արդեն տանում էին գնացքով, իսկ իջեւանատեղիները փոխարինվում էին ճանապարհների հանգույցներում գտնվող քաղաքների բանտերով, որոնք էլ ստացել են առաքաբանտեր անվանումը։ Հարկավոր է ուշադրություն դարձնել ոչ միայն հսկայական հեռավորություններին՝ ճամփորդությունը կարող էր ամիսներ տեւել, այլեւ այն հանգամանքին, թե ու՛մ են տեղափոխում։ Իսկ տեղափոխում են հանցագործների։ Դժվար չէ պատկերացնել, թե ինչեր կարող են տեղի ունենալ փակ տարածքում, մի քանի ամիս տեւող մի քանի հարյուր հանցագործների համակեցության պայմաններում։

Շատերն են իրենց գրվածքներում անդրադարձել էտապին, նկարագրել դրա բնույթը, ուղեկցող դժվարությունները, դաժանություններն ու բռնությունները։ Մեզ ավելի ծանոթ են ռուսներինը։ Հնարավոր չէ կալանավոր լինել Ռուսաստանում, ինչ ժամանակներում էլ որ ապրած լինի, որի վրա էտապը ծանրագույն տպավորություն թողած չլինի։ Հետաքրքիր է նկարագրել 20-րդ դարի սկզբի ֆրանսիական էտապը Հենրի Չարյերը իր «Թիթեռնիկը» վեպում։ Կարելի է ուսումնասիրել, թե ժամանակի ընթացքում ի՛նչ է փոխվել Ֆրանսիայում կամ Անգլիայում, բայց Ռուսաստանում եւ մեզ մոտ՝ Հայաստանում, հաստատապես ոչինչ չի փոխվել։

Հիմնականում առաքաբանտերում են (վերջին շրջանում նաեւ քննչական մեկուսարանների մասին է խոսվում) խցերը գերծանրաբեռնված լինում, եւ մեկ մահճակալ է հասնում մեկից ավելի կալանավորի։ Սովորական բանտերում, որտեղ մարդիկ կրում են իրենց հասանելիք պատիժը, խցերում կալանավորների միջեւ տեղերը հավասարաչափ են բաշխվում, եւ քիչ հավանական է, որ կալանավորը քնելու տեղ չունենա։ Որպես կանոն առաքաբանտերը աչքի էին ընկնում իրենց չափազանց անմաքուր ու հակասանիտարական վիճակով։ Դրանք նաեւ, շատ հաճախ, աչքի էին ընկնում կարգուկանոնի մասնակի կամ իսպառ բացակայությամբ, ինչը հանցագործ աշխարհի ներկայացուցիչներին հաշիվներ մաքրելու լայն հնարավորություն էր ընձեռում։

Ինչքան երկար է տեւում էտապը, այնքան ավելի շատ է հյուծում կալանավորին։ Էտապ նշանակում է հիգիենայի ու սանիտարական նորմերի նվազագույն պայմանների բացակայություն, մաշկային ու տարատեսակ այլ հիվանդությունների ձեռքբերում, միջատների, կրծողների ու ոջիլների մշտական ներկայություն, օրենքի ու կարգուկանոնի բացակայություն։ Առաքաբանտերի խցերը լինում են տարբեր չափերի՝ մեկ տեղանոցից, մի քանի տեղանոցից մինչեւ մի քանի տասնյակ տեղանոց։

Կալանավորին գնացքով (հնարավոր է նաեւ այլ տրանսպորտային միջոցով) հասցնում են մինչեւ երկաթգծերի ու այլ ճանապարհների հանգույցներում գտնվող քաղաքների առաքաբանտ, որտեղ նա կարող է մնալ մի քանի օր, մի քանի շաբաթ կամ ամիս, մինչեւ համընթաց ուղղությամբ նոր էտապի՝ կալանավորների խմբաքանակի կազմավորումը։ Ե՞րբ նրան դուրս կբերեն բանտից, ե՞րբ կտեղափոխեն այլ բանտ կամ կհասցնեն այն կալանավայրը, որը մի քանի տարի դառնալու է նրա մշտական հասցեն՝ կալանավորը չգիտի։ Չգիտի նաեւ, թե ուր է գնում։ Ինչքա՞ն կմնա ճանապարհին, նույնպես չգիտի։ Ողջ այս ընթացքում նրա մասին ոչինչ չգիտեն նաեւ նրա հարազատները։

Դեպի Թբիլիսի

Մեզ հետ զուգահեռ դատապարտված Ալեքսանդր Մանուչարյանին միացրին մեզ եւ Երեւանի բանտից տարան Սասունցի Դավիթ կայարան ու գնացքով՝ Թբիլիսիի առաքաբանտ, որտեղ մնացինք ոչ շատ երկար։ Որեւէ լուրջ ու հիշարժան դեպք տեղի չունեցավ։ Թբիլիսիի բանտում քրեականների հետ մեկ մեծ խցում էինք գտնվում, որտեղ նստելու, պառկելու կամ այլ հանգստանալու հարմարություններ չկային։ Մարդիկ նստում էին պատերի երկայնքով ձգվող քարե, թե բետոնե՝ հիմա արդեն չեմ հիշում, բարձրությունների վրա կամ ուղղակի հատակին։ Այդ խուցը ժամանակավոր պահման վայր էր։ Մոտեցավ Թբիլիսիի բանտը լքելու պահը։ Մեզ խցից դուրս բերեցին ու տեղավորեցին կալանավորներ տեղափոխող ավտոմեքենայի մեջ, որը ռուսները черный воронок (սեւ ագռավ) են անվանում։

Ավտոմեքենայի այս անվանման պատմությունը հնուց՝ ստալինյան բռնությունների շրջանից է գալիս։ 1938 թվականից ի վեր՝ չեկիստները տեղաշարժվում էին այսօր արդեն ֆիլմերից մեզ

հայտնի ГАЗ-11-73 մակնիշի սեւ գույնի ավտոմեքենաներով: Այս մեքենաներից շատ չի թողարկվել, եղածն էլ եղել է սեւ գույնի, ու ծառայողական նպատակներով տրամադրվել է չեկիստներին: Սրանցով էին չեկիստները գնում իրենց զոհերի հետեւից: Չեկիստական այցերը հաճախ տեղի էին ունենում գիշերային ժամերին: Այդ տարիներին քաղաքների փողոցներում ավտոմեքենաները սակավաթիվ էին, եւ այս սեւ ավտոմեքենայի տեղաշարժը, այն էլ գիշերային ժամերին, մարդկանց սարսափի էր մատնում: Ագռավն էլ իր հերթին՝ առասպելներում, հեքիաթներում ու զրույցներում ասոցացվել ու ասոցացվում է մթության, խավարի ու չար ուժերի հետ: Այսպես, կալանավորներ տեղափոխող ավտոմեքենան սկսել է կոչվել «սեւ ագռավ»:



«Սեւ ագռավ»

Հետագայում կալանավորներ տեղափոխող ավտոմեքենան փոխեց է՛ւ իր մակնիշն ու գույնը, է՛ւ ձեւը, բայց անվանումը՝ «սեւ ագռավ», մնաց ու շարունակում է այսպես կոչվել: Տարբեր մակնիշների «սեւ ագռավները» տարբեր բաժանումներ են ունենում: «Սեւ ագռավի» վերածված բեռնատար ավտոմեքենայի բեռնախցիկը երկաթյա դռներով ու ճաղավանդակներով բաժանված է չորս անհավասար մասերի՝ փոքրիկ միջանցք, որտեղ նստում են ուղեկցող զինվորները, մեծ ընդհանուր խուց, որտեղ կարող են տեղավորվել 10-15 եւ ավելի կալանավորներ եւ երկու իրար հավասար ու չափազանց նեղ մենախցիկներ:

Մեքենան չէր շարժվում: Նոր կալանավորների էին սպասում: Քիչ անց երեք հոգու բերեցին: Հատուկ վտանգավոր ռեցիդիվիստներ էին: Հատուկ վտանգավոր ռեցիդիվիստներն, ի տարբերություն մնացած բոլոր կալանավորների, զոլավոր հագուստ են կրում եւ պահվում են

հատուկ ռեժիմի կալանավայրում։ Հիմնականում կրկնահանցագործներին է դատարանը ռեցիդիվիստ ճանաչում։ Բայց մարդը կարող է նաեւ կրկնահանցագործ լինել ու ռեցիդիվիստ չճանաչվել։ Միջնադարյան Եվրոպայում զոլավոր հագուստի նկատմամբ հատուկ բացասական վերաբերմունք կար, համարվում էր սատանայական։ Նույնիսկ հայտնի է, որ ֆրանսիական Ռուան քաղաքում 1310 թ. մի կոշկակարի մահվան են դատապարտել զոլավոր հագուստ կրելու համար։ Զոլավոր կտորից հագուստ էին կրում իզգոյները՝ հասարակությունից մերժվածները։ Թերեւս, միջնադարյան այս սնահավատությունն է եղել պատճառը, որ 19-րդ դարում ԱՄՆ-ում կալանավորներին սկսեցին զոլավոր հագուստ հագցնել։ Ամերիկյան այս նորամուծությունը շատ արագ լայնորեն տարածվեց եվրոպական այլ երկրներում ու Ռուսաստանում։

Կարգն էր այդպես. քաղաքական կալանավորներին կամ պետք է պահել առանձին, կամ էտապի ժամանակ, եթե առանձին պահել հնարավոր չէ, մեկտեղում էին ռեցիդիվիստների հետ։ Երեքից մեկը հայ էր, իսկ երկուսը՝ վրացի։ Վրացիներից մեկը՝ Յաշան, խոսում էր հավլաբարյան հայերեն, ռուսերեն ու ադրբեջաներեն։ Նրա ասելով՝ այդ բոլոր լեզուները սովորել է փոքրուց՝ բակում տարբեր ազգության երեխաների հետ շփվելով։ Նա լուրջ հեղինակություն էր։ Մեքենա նստելուց անմիջապես հետո երկրորդ վրացին գրպանից մի տուփ հանեց, պարունակությունը երեք հավասար մասերի բաժանեց ու մեկնեց իր ուղեկիցներին։ Սրանք արագ իրենց բաժին կտորները բերանները դրեցին ու մեծ ուշադրությամբ սկսեցին ծամել։ Դա մամլիչով մամլված, մոտ 3 սմ հաստությամբ թեյի սալիկ էր։ Խորհրդային տարիներին նման թեյ կար վաճառքում։ Ճիշտ է, տարածված չէր, բայց՝ կար։ Ցածրորակ թեյի մնացորդներն ու փոշին խոնավացնում էին, ապա՝ մամլում ու չորացնում եւ ստացված սալիկները վաճառում։ Վրացիների հարազատները հասել էին ավտոմեքենայի մոտ ու ձայնում էին սրանց, բայց սրանք՝ տարված թեյը ծամելու չափազանց լուրջ գործով, չէին էլ պատասխանում՝ բերանները լիքն էր։ Թեյ ծամելու պրոցեսի յուրահատկությունն այն է, որ թուքը չպետք է կուլ տաս։ Պետք է մնա բերանում ու երկար ժամանակ շաղախվի թեյի հետ։ Ի վերջո ձեռք է բերում եփված թունդ թեյի հատկություն եւ ծամողին առույգություն է հաղորդում։ Սրանից օգտվում են, երբ չիֆիր (գերթունդ թեյ) եփելու հնարավորություն չի լինում։ Մեքենան շարժվեց, ու այդպես էլ սրանք չպատասխանեցին իրենց կանչող հարազատներին։

Կալանավորներ տեղափոխող ավտոմեքենայի ընդհանուր բեռնախուցը

Մեզ հասցրին կայարան եւ տեղավորեցին վագոնի նույն կուպեում: Քիչ անց մեզ մոտ բերեցին մեկ այլ՝ 30-35 տարեկան կալանավորի, որին բոլորը՝ նաեւ Յաշան ու իր ընկերները, չափազանց հարգալից էին վերաբերվում: Սա է՛լ ավելի լուրջ հեղինակություն էր: Կիսով չափ վրացի, կիսով չափ ռուս էր: Ի տարբերություն դաջվածքներով պատված մյուս կալանավորների, նա ուներ միայն մեկ ոչ մեծ դաջվածք: Թիկունքին դաջված էր շղթաներով ժայռին գամված Պրոմեթեւսը, իսկ տակը գրված էր՝ «Раб КПСС»: Երիտասարդներին պարզաբանեմ, որ КПСС նշանակում է Коммунистическая партия советсого союза - խորհրդային միության կոմունիստական կուսակցություն (ԽՄԿԿ):

Կալանավորներ տեղափոխող գնացքի վագոն արտաքինից սովորական վագոններից չի տարբերվում: Այդ վագոնը կցում են համընթաց շարժվող գնացքին, եւ կողքից դիտողը դժվարությամբ կկարողանա տարբերել մնացածներից: Ներսում, իհարկե, լուրջ փոփոխություններ են արվել: Դռների փոխարեն ճաղավանդակներ են, նստատեղերը մետաղյա կամ փայտյա են ու եռահարկ:

Երկրորդ հարկի նստատեղերն իրար են միանում ու դառնում մեկ ընդհանուր տախտակամած, որի վրա 3-4 մարդ է տեղավորվում: Առանձին տեղ է ծառայում նաեւ սովորական վագոնի մեջ եղած բեռնախցիկը: Այսպիսով, կուպեն ազատ կարող է տեղավորել 7-8 մարդ, բայց, հարկ եղած դեպքում, խցկում են այնքան, որքան հնարավոր էր խցկել:

Մեր կուպեում ութ հոգով էինք՝ ես, Սամվել Եղիազարյանը, Իշխան Մկրտչյանը, Ալեքսանդր Մանուչարյանը, Մարզպետ Հարությունյանը եւ չորս ռեցիդիվիստները։ Ի տարբերություն մեզ՝ ռեցիդիվիստներն առանց իրերի էին։ Գնացքը շարժվելուց անմիջապես հետո հայ ռեցիդիվիստը Մանուչարյանից մեկ տուփ ծխախոտ խնդրեց։ Մանուչարյանը, բնական է, տվեց։ Քիչ անց եւս մեկ տուփ խնդրեց։ Այս ամենն անում էր ցածրաձայն՝ այնպես, որ մյուսները չնկատեն։ Երբ երրորդ, թե չորրորդ անգամ Մանուչարյանից ծխախոտ ուզեց, փոքրամարմին Մանուչարյանը զայրացած վերցրեց ոտքերի տակ դրված իր ուսապարկը եւ ամբողջ ուժով նետեց այդ աներեսի դեմքին՝ ռուսերեն բղավելով.

-Վերցրու, կեր ամբողջն ու հանգստացիր։

Բոլորը շրջվեցին դեպի Մանուչարյանը։ Կիսավրացի հեղինակությունը հարցրեց՝ ի՞նչ է պատահել, եւ Մանուչարյանը պատմեց։ Զայրացած գողը կրկնահանցագործ հայից պահանջեց, որ Մանուչարյանին վերադարձնի վերցրած բոլոր ծխախոտները։ Քաղաքականները քրեական աշխարհում հարգված են, եւ նրանց նկատմամբ ոչ ոք ոտնձգություններ անելու իրավունք չունի։ Բայց լինում են նաեւ բացառություններ։ Այս օրենքը գործում է այնքան ժամանակ, քանի դեռ կալանավայրի ղեկավարությունը կամ էտապի ժամանակ ուղեկցող վաշտի հրամանատարությունը ինչ-ինչ պատճառներով չի որոշում կամ նախապես ստացած հանձնարարություն չի ունենում քրեականների ձեռքով հաշվեհարդար տեսնել այս կամ այն քաղաքական կալանավորի հետ։ Այս դեպքում արդեն քրեական աշխարհում ընդունված կանոնները կարող են եւ մոռացության մատնվել։ Այս օրենքը կարող է չգործել նաեւ հենց իր՝ քաղաքական կալանավորի մեղքով, եթե իրեն ճիշտ չդրսեւորի եւ իր կարգավիճակին համապատասխան բարձրության վրա չգտնվի։

Էտապը հաշիվներ մաքրելու ամենահարմար տեղն ու ժամանակն է։ Նախաքննության ընթացքում կամ կալանավայրերում ծագած խնդիրները եւ լարված փոխհարաբերություններն այստեղ կարող են իրենց արյունալի հանգուցալուծումն ստանալ եւ մնալ աննկատ ու անպատասխան։ Իշխանությունների համար էլ է հեշտ՝ դիակը առաջիկա կայարանում դուրս է բերվում, իսկ աննկատ մնացած մարդասպանը մյուսների հետ շարունակում է իր ճանապարհն ու անհետանում անծայրածիր Ռուսաստանով մեկ սփռված հազարավոր կալանավայրերից մեկում։ Ոչ ոք հետաքննելու ու հանցագործությունը բացահայտելու ոչ ժամանակ, ոչ ցանկություն եւ ոչ էլ տրամադրություն ունի։

Կարճ ժամանակ անց վագոնում գտնվող մյուս կուպեների կալանավորները դեպի հատուկ ռեժիմի կալանավայր գնացող մեր կուպեի հարգվածների համար հավաքեցին անհրաժեշտ ամեն ինչ եւ փոխանցեցին նրանց։ Բոլորը գիտեն այս կարգը։ Սա արվում է կամավոր ու սիրով։ Կալանավորները պարտավոր են հատուկ ռեժիմի կալանավայր գնացող ռեցիդիվիստների կենցաղային կարիքները հոգալ։ Հագուստից սկսած մինչեւ ուտելիք ու ծխախոտ՝ ամեն ինչ հավաքվում է։ Դատարկաձեռն գնացք մտած ռեցիդիվիստը որոշ ժամանակ անց այնքան ուտելիք ու ծխախոտ կարող է ունենալ, որ հարկ եղած դեպքում արդեն ինքը կարող է սրան-նրան լավություն անել։ Խոսքը հարգանք վայելող ռեցիդիվիստների մասին է, որովհետեւ հազարավոր ռեցիդիվիստներ կան, որոնք գուցեեւ կրկնահանցագործ են, բայց իրենց ապրած կյանքով այդ միջավայրում հարգանք չեն վաստակել։ Այս կարգի ռեցիդիվիստների շարքին կարելի էր դասել մեր կուպեի հային։

Խորհրդային տարիներին էտապով անցած բոլորն էլ կփաստեն, որ կալանավորներին տրվող սնունդը մի կտոր հաց էր եւ աղի ձուկ։ Թե ինչու էին աղի ձուկ տալիս, երեւի ոչ ոք ասել չի կարող, բայց տասնամյակներ շարունակ խորհրդային երկրում այդպես է եղել։ Դրանից հետո, բնականաբար, ջրի կարիք է զգացվում։ Խնդիրն այն է, որ կալանավորներին ջուր պետք է բերեն ուղեկցող վաշտի զինվորները, որոնք ամենեւին տրամադրված չեն այդ գործն անելուն, եւ ջրի պահանջը լսելիս, որպես կանոն, հայհոյանքներով համեմված մեկ նախադասություն են կրկնում.

-Բերաններդ փակեք (հայհոյանք), տեղ կհասնենք (հայհոյանք)՝ կխմեք որքան կկամենաք (հայհոյանք)։

Երբ արդեն կասկած չկար, որ կալանավորների հորդորներն ու խնդրանքներն անիմաստ են, եւ զինվորները վերջնականապես վճռել են ջուր չտալ, ու նրանց համոզելու այլ միջոց չի մնացել, ոտքի ելավ մեր կուպեում գտնվող ամենահարգված հեղինակությունը՝ կիսավրացին, որի մեջքին Պրոմեթեւսն էր դաջված, եւ լռություն պահանջեց, ինչն ակնթարթորեն ի կատար ածվեց, ապա՝ գոռաց.

-Տղեք, ճոճում ենք վագոնը։



Կալանավորներ տեղափոխող վագոնը ներսից

Մեզանից, նկատի ունեմ ինձ ու ընկերներիս, ոչ մեկը չէր էլ կարող հասկանալ կամ պատկերացնել, թե ինչ է նշանակում դա։ Պարզ է, որ նախկինում նման բան չէինք կարող տեսած լինել։ Չէինք էլ լսել։ Գնացքն ընթանում էր մոտ 50-60 կմ/ժ արագությամբ։ Ահա այս արագությամբ ընթացող գնացքին կցված կալանավորներ տեղափոխող վագոնի բոլոր կալանավորները, մեր կուպեում եղածներիցս բացի, մեեեեկ-երկու, մեեեեկ-երկու գոռալով ու իրար գրկած կամ իրար հենված, գնացքի ճոճքին համընթաց մեծ ուժով խփվում են աջ, ապա ձախ պատին, ու վագոնն սկսում է ճոճվել։ Սկզբում այդ ճոճքը փոքր է ու չարագուշակ չէ, բայց մի ինչ-որ պահից ճոճքը մեծանում է, սպասվող վտանգը դառնում է իրական՝ վագոնը կարող է շրջվել՝ իր հետ տանելով բոլորին՝ կալանավորներին, ուղեկցող զինվորներին ու ողջ գնացքը։ Սկզբում վտանգը չընկալող զինվորները հայհոյում ու կարգ ու կանոնը պահպանել են պահանջում, բայց տեսնելով, որ կալանավորներն անդրդվելի են, սկսում են անհանգստանալ, քիչ անց վախի նշաններ են ցուցաբերում, ապա՝ վագոնի ճոճքի մեծանալուն զուգահեռ՝ 18-20 տարեկան զինվորները սարսափած վազում են վագոնով մեկ եւ խնդրում, որ դադարեցնեն։ Ուղեկցող վաշտի հրամանատարը, խոստանում է, որ ամեն ինչ լավ է լինելու, որ ջուր կտան, եւ միայն այդ ժամանակ է, որ կիսավրացի հեղինակությունը, որի անունը, ցավոք, մոռացել եմ, ձայնում է.

-Վերջ, հանգստանում ենք։

Զինվորներն սկսում են ջուր բերել։

Երեկոյան կողմ արդեն Ռոստովի բանտում էինք։ Ինձ, Սամվել Եղիազարյանին եւ Յաշային անջատեցին մեր խմբից եւ տեղավորեցին մի մեծ խցում, իսկ Մարզպետ Հարությունյանին, Իշխան Մկրտչյանին, Ալեքսանդր Մանուչարյանին եւ մնացած երեք ռեցիդիվիստներին տարան այլ խուց։

Դոնի Ռոստովի բանտ

- Այստեղ Հարությունյան կա՞։ Հարությունյան, դուրս արի, իրերով։ Արա՛գ, արա՛գ, արա՛գ։

Ուսապարկս գրկած արագ դուրս եմ գալիս խցից։

Արագությունը չափազանց կարեւոր է։ Դանդաղելու դեպքում ստանալու ես մահակի ուժգին հարված։ Մահակներով զինված հսկիչների հայացքներում, չգիտես ինչու, միայն չարություն է նկատվում։ Լսվում են Ռոստովի բանտի նկուղային հարկի երկար միջանցքի այս ու այն հատվածից աղմուկով բացվող ու փակվող երկաթյա դռների ու կողպեքների արձագանքող շրխկոցները, բայց ինձ ուղեկցող հսկիչներից բացի՝ այլ մարդ չեմ տեսնում միջանցքում։ Հարկավոր է ճարպիկ լինել։ Հարկավոր է արագ շարժվել։ Դանդաղես՝ յուրաքանչյուր հսկիչ հարկ կհամարի մահակի հարված հասցնել մարմնիդ ցանկացած մասի։ Ով ինչպես ու ինչ ուժով ցանկանա։ Այս դասը սերտել եմ արագ ու հենց Ռոստովի բանտում։ Սերտել եմ այլոց գլխին եկածը տեսնելով։

10-15 օր է, ինչ ընկերներիս հետ այստեղ եմ, Եկատերինա 2-րդի օրոք՝ 1768 թ. կառուցված այս բանտում: Մի քանի անգամ ինձ ու խցակիցներիս տարբեր առիթներով խցից դուրս են բերել, եւ ես հասցրել եմ նկատել, որ հարվածները հիմնականում իջնում են ուշացողների ու դանդաղաշարժների մեջքին: Այստեղ մեկ անգամ մեզ նույնիսկ լողանալու տարան: Եթե, իհարկե, այդ միջոցառումը կարելի էր լողանալ համարել: Էլի այդպես՝ մահակների հարվածների սպառնալիքի տակ, հայհոյանքներով ու աղմուկ-աղաղակով: Մտանք լոգարան կոչվող մի մեծ ու փնթի սրահ: Պատերի երկայնքով ցնցուղներ են: Լողացող մի 30-40 մերկ մարդ գոռում է.

-Հե՛յ, պետ, ջուրը սառն է, մի քիչ տաք տուր:

Ջրի ջերմաստիճանը կարող են կարգավորել միայն լոգարանին կից սենյակում գտնվող հսկիչները: Մի քանի վայրկյանից ցնցուղների տակից սարսափահար փախչող մարդիկ գոռում են.

-Եռման է, եռման է, էս ի՞նչ ես անում, պետ:

Ու այսպես մի 20 րոպե շարունակ: Մեկ՝ լրիվ սառը, մեկ՝ եռացող: Ապա հնչում է հագնվելու հրահանգը: Ոչ ոք էլ լողանալ չկարողացավ: Այս «խաղը» հսկիչների սիրելի զվարճանքներից էր եւ տարածված էր խորհրդային առաքաբանտերում:

Մի բան հաստատ է՝ ես «հարմարեցված եմ» բանտային կյանքին, ես բանտում արագ եմ կողմնորոշվում, ես ինձ չեմ կորցնում: Չգիտեմ որտեղից, բայց գիտեմ, թե ինչ եւ ինչպես է հարկավոր անել: Գոհ եմ ինձանից:

Շատ ավելի ուշ, երբ հիացած ուսումնասիրում էի 19-րդ դարավերջի եւ 20-րդ դարասկզբի ռուսական պոեզիան, ինչին սիրահարված եմ մնալու մեկընդմիշտ, Օսիպ Մանդելշտամի կենսագրությանը ծանոթանալիս տեղեկացա, որ նրան 1920-ին Ղրիմում վրանգելականները բանտարկել են որպես բոլշեւիկյան գործակալ: Տեղյակները պատմում են, որ նա անընդհատ հսկիչներից պահանջել է ազատ արձակել իրեն՝ ասելով.

- Մի՞թե չեք տեսնում, որ ես հարմարեցված չեմ բանտային պայմաններին:

Ազատ է արձակվել Մաքսիմիլիան Վոլոշինի եւ այդ օրերին Ղրիմում գտնվող սրտացավ այլ բարեկամների միջնորդություններից հետո: Որոշում է Յալթայից հեռանալ Բաթումիով, որտեղ նրան արդեն վրացական իշխանություններն են ձերբակալում: Այստեղ էլ պատահաբար այդ օրերին Բաթումիում գտնվող Տիցիան Տաբիձեի միջնորդության շնորհիվ է ազատ արձակվում: Կյանքը ցույց տվեց, որ այս մեծագույն պոետն, իրոք, կալանավայրին հարմարեցված չէր: 1938-ի մարտին հակախորհրդային գործունեության մեղադրանքով կալանավորվելուց հետո ընդամենը 9 ամիս է կարողանում բանտային պայմաններին դիմանալ: Մահանում է էտապում, Վլադիվոստոկի առաքաբանտում, այդպես էլ չհասնելով այն կալանավայր, որտեղ պետք է կրեր հինգ տարվա ազատազրկումը:

Իսկ ես հարմարեցված եմ բանտային պայմաններին: Ինչպե՞ս, որտեղի՞ց ինձ այդ հատկությունը՝ չգիտեմ, բայց շատ շուտ կարողանում եմ ե՛ւ կողմնորոշվել, ե՛ւ մարդկանց

հետ լեզու գտնել: Քրեական աշխարհում այս վերջին ունակությունը չափազանց կարեւոր է: Ընդամենը քսան տարեկան եմ, Հայկական սովետական սոցիալիստական հանրապետության գերագույն դատարանի կողմից հատուկ վտանգավոր պետական հանցագործ եմ որակված ու խցում թեյ եմ խմում քրեական աշխարհում մեծ հեղինակություն վայելող Ռոստովի Սեռի մականվամբ օրենքով գողի հետ: Նա ունի ընդամենը մեկ դաջվածք՝ գեղեցիկ վարդ կրծքավանդակի ձախ կողմում: Ինքն է ինձ հրավիրել թեյ խմելու: Բայց մինչ այդ ես վեճի եմ բռնվում խցում եղած մի երկու աքլորացած քրեականի հետ: Նրանցից մեկը ոգեւորված պատմում է զրուցակցին, թե ինչպես է շուկայում գրպանահատությամբ զբաղվել, իսկ զրուցակիցն էլ հիացած լսում է նրան: Ականջի ծայրով լսում եմ նաեւ ես: Ու երբ սա ափսոսանքով ասում է, որ բռնվել է մի կնոջ պայուսակից դրամապանակը հանելիս՝ միջամտում եմ, թե ինչպես չի ամաչում ու հպարտանալով էլ պատմում է դրամապանակը գողանալու մասին: Սրանք զարմացած ինձ են նայում: Ապա՝ միտքս հասկանալով, սկսում են հոխորտալ: Իրենց աշխարհում իմ այս դիտողությունը ե՛ւ ընկալելի չէ, ե՛ւ տեղին չէ: Ես չեմ նահանջում: Լարված իրավիճակ է: Սեռին միջամտում է մեր վեճին ու հարցնում.

-Որ տապալեք խորհրդային կարգերը, ի՞նչ եք անելու մեզ հետ:

Ես վեճից տաքացած ու երիտասարդական անմիջականությամբ պատասխանում եմ.

-Դուք ասում եք, որ բանտը ձեր տունն է, ուրեմն ձեզ կպահենք հենց ձեր տանը՝ բանտում:

Սեռին բարձրաձայն ծիծաղում ու ինձ թեյի հրավիրում: Նրա հետ թեյ է խմում շրջանաձեւ նստած հարգվածների մի փոքր խումբ: Ու՝ ես: Առաջին անգամ չիֆիր եմ փորձում: Այլումինե թասը ձեռքից ձեռք է անցնում: Յուրաքանչյուրը մի կում անելուց հետո փոխանցում է հաջորդին: Չիֆիրից հետո, երբ քիչ առաջ հետս վեճի բռնված քրեականների նախանձոտ հայացքների ուղեկցությամբ մոտենում եմ Սամվելին, նա ծիծաղում է եւ ասում, որ ինձ քրեական աշխարհի անդամ դառնալու լուրջ վտանգ է սպառնում: Այսօր էլ Սամվելն այս դրվագը հիշելիս ասում է, որ պահվածքս շատ վտանգավոր էր եւ կարող էր շատ տխուր ավարտ ունենալ: Ըստ գործող կարգերի՝ հատուկ վտանգավոր պետական հանցագործներիս քրեականների հետ չպետք է պահեին, բայց, չգիտես ինչու, Ռոստովի բանտում այդ սխալը թույլ տվեցին: Խուց մտնելիս Յաշային շատ լավ դիմավորեցին: Նա Սեռիի հետ գրկախառնվեց, ապա տեղեկացրեց նրան մեր մասին: Ասաց, որ քաղաքականներ ենք, եւ մեզ հետ ակադեմիկոս կա: Մանուչարյանին նկատի ուներ: Նրա համար բոլոր գիտնականներն ակադեմիկոս էին:

Երկու զուգահեռ պատերի երկայնքով ձգվում էին իրար կպած մետաղյա երկհարկանի մահճակալները: Մահճակալի վրա կարելի էր բարձրանալ միայն դիմացից, քանի որ դրանք իրենց կողային մասերով ամուր կպած էին իրար ու ձգվում էին պատից պատ ու մեկ ընդհանուր երկհարկանի տախտակամած էին հիշեցնում:

Դրանց քանակով դատելով՝ խուցը պետք է առնվազն 40 տեղանոց լիներ, բայց լցված էր 50-ից ավելի բանտարկյալներով: Դռանը հանդիպակած պատի տակ մետաղյա փոքրիկ սեղան էր, բայց դրանից օգտվող չկար: Բոլորն էլ ուտում էին մահճակալին նստած: Մահճակալների վրայի ծածկոցները՝ բանտի շեմը հատելու օրվանից, իսկ դա երեւի տարիներ առաջ էր եղել,

լվացքատան երես չէին տեսել։ Ոջիլները եւ տարատեսակ այլ միջատներ վխտում էին ե՛ւ այդ ծածկոցների մեջ, ե՛ւ կալանավորների վրա։ Իմ կյանքում առաջին անգամ ոջիլ տեսա այդ բանտում։ Դրանք այնքան շատ էին, որ զրուցակիցները զրույցի ընթացքում միմյանց վրայից կարող էին ոջիլ վերցնել ու երկու բթամատների եղունգների միջեւ սեղմելով սպանել։ Ինձ համոզում էի, որ ինձ վրա ոջիլ լինել չի կարող։ Բայց մի երկու օրից, երբ երկար ժամանակ չլվացված մարմինս սկսեց սովորականից ավելի ուժեղ քոր զգալ, հասկացա, որ բանը բանից անցել է։ Այս ամենը տեղի էր ունենում հունիսի երկրորդ կեսին, իսկ մենք վերջին անգամ լողանալու հնարավորություն էինք ունեցել մայիսին՝ Երեւանի բանտում։

Մեր այդ մեծ ու մարդկանցով գերհագեցած խուցն ուներ ընդամենը մեկ չափազանց փոքրիկ լուսամուտ։ Այդ լուսամուտից ոչ արեւի լույս էր ընկնում եւ ոչ էլ, ինչպես բանտի վերին հարկերի խցերի մեծ պատուհաններից, երկնքի փոքրիկ կտոր էր երեւում։ Բանտախցերի լուսամուտների վանդակաճաղերի վրա 45 աստիճան թեքությամբ մետաղյա շերտավարագույրներ են տեղադրված լինում, դրանք թույլ չեն տալիս հորիզոնական ուղղությամբ դուրսը տեսնել, փոխարենը երեւում է միայն երկնքի մի փոքրիկ կտոր։ Ահա այս խցից են դուրս բերել ինձ, եւ չգիտեմ, թե ուր են տանում։

…. Ուսապարկս գրկած արագ շարժվում եմ երկար միջանցքով, որի աջ ու ձախ կողմերում իրար հաջորդող խցերի սեւ դռներն են։ Բանտի յուրահատուկ հոտին վաղուց եմ վարժվել ու չեմ զգում։

- Կանգ առ, կանգ առ, - հրահանգում է հետեւիցս եկող հսկիչներից մեկը։ Կանգ եմ առնում վանդակաճաղերով փակված աստիճանների մոտ ու հասկանում, որ հիմա ինձ աստիճաններով վերեւ են տանելու։ Լուսամուտից երկնքի կտոր եմ տեսնելու, անցնում է մտքովս։ Ինձ հանձնում են աստիճաններով ներքեւ իջնող երկու հսկիչների։ Այստեղից արդեն սրանք պետք է ուղեկցեն ինձ։ Բարձրանում ենք վերին հարկ։ Բացվում է խցերից մեկի դուռը։ Ներս եմ մտնում նախորդ կիսախավար խցիս համեմատ չափազանց լուսավոր ու ոչ մեծ մի խուց, որտեղ առանց ներքնակների, երկհարկանի երեք դատարկ երկաթյա մահճակալներ են՝ մեկը լուսամուտի, իսկ երկուսը՝ երկու զուգահեռ պատերի տակ։ Վեց տեղանոց խուց է։ Առաջին հերթին հայացքս ուղղում եմ լուսամուտի կողմը՝ երկնքի կտորը երեւում է, լավ է, իսկ լուսամուտի տակ գտնվող երկհարկանի մահճակալի առաջին հարկում տեսնում եմ պառկած Մարզպետին ու ուրախության ճիչ եմ արձակում։

Միշտ եմ ցանկացել գրել Մարզպետի մասին. այն ժամանակ, երբ դեռ ողջ էր ու ապրում էր ԱՄՆ-ում, ցանկացել եմ գրել նրա մահից (2000 թ.) հետո, ցանկանում եմ գրել հիմա, բայց այդպես էլ ոչինչ չի ստացվել։ Մարզպետն իմ կյանքում որոշիչ դեր է խաղացել։ Ինձանից մեծ էր քսան տարով եւ իմ ճանաչած առաջին իսկական հակասովետական մարդն էր։ Նա ամեն ինչ պայմանավորում էր քաղաքականությամբ։ Ասում էր՝ սկզբում պետք է ոչնչացնել խորհրդային կարգերն ու խորհրդային երկիրը, որ հետո հնարավոր լինի լուծել հայ ժողովրդին հուզող կարեւորագույն խնդիրները։ Ես ոգեւորված էի։ Մեր բարեկամությունն սկսվեց միանգամից ու այդպես էլ չընդհատվեց։ Քանի տարի է արդեն Մարզպետը վախճանվել է, բայց միշտ ջերմությամբ եմ հիշում նրան։ Նա իմ առաջ նոր ու լիովին անհայտ աշխարհ բացեց։ Եթե մինչ այդ թռուցիկներ տարածելու մասին խոսելը, գաղտնի հանդիպումները, պայմանական նշաններ մտածելն ինձ՝ պատանուս ավելի շուտ խաղ էին

հիշեցնում, ապա Մարզպետի հետ ծանոթանալուց հետո խաղն ավարտվեց: Նա ինձ պատմում էր ԱՄԿ եւ ոչ ԱՄԿ անդամների ձերբակալություններից, դատավարություններից, նրանց գաղութային ու բանտային կյանքից: Պատմում էր բանտերում ու մեկուսարաններում զոհված գործիչներից, բանտերում ու մեկուսարաններում գտնվող դեռ չզոհվածներից: Պատմում էր, թե ինչպես են ՊԱԿ-ականները ձերբակալում, ինչպես են հարցաքննում, ինչ է իրենից ներկայացնում ՊԱԿ-ի մեկուսարանը, որտեղ ինքն արդեն եղել էր, ինչ ասել է՝ հոգեբուժարան, որտեղ նույնպես եղել էր: Պատմում էր, թե ինչպես են հետեւում, ինչպես կարելի է խուսափել հետապնդումից: Պատմում էր կալանավայրերից ու կալանավայրային կյանքից: Անհանգստանում էր՝ դժվար չի՞ լինի ինձ համար:

Մեր ծանոթությունից երկու տարի անց, արդեն էտապի ժամանակ, Թբիլիսիի բանտում տեսնելով, թե ինչ ազատ ու անկաշկանդ եմ զգում ինձ, Մարզպետը ժպտում է.

-Լավ է, թեթեւ ես տանում:

Ահա այս թեթեւությամբ էլ հասել եմ Ռոստովի բանտ ու կանգնել բանտի երկրորդ հարկի այս լուսավոր խցում, որի լուսամուտից երկնքի կտոր է երեւում, իսկ լուսամուտի տակ գտնվող երկաթյա մահճակալին պառկած է Մարզպետը: Քառասնամյա ընկերս ծերացել է, ձեռքերը դողում են, դեմքը մի տեսակ ձգվել է: Արագ մոտենում եմ.

-Ես մեռնում եմ, - հազիվ արտաբերում է նա:

Նրա կցկտուր պատմությունից հասկանում եմ, որ մեր ընկեր Իշխան Մկրտչյանը կարողացել է երկու քրեականի հետ փախուստի դիմել: Զարմանալի է, որ փախուստը հաջողվել էր: Հետագայում պատմում էին, որ այդ բանտից առաջին նման հանդուգն փախուստն էր դա: Իշխանի փախուստի պատճառով նրա խցում գտնվող Ալեքսանդր Մանուչարյանին ու Մարզպետին դաժանորեն ծեծել էին: Մանուչարյանի բախտը բերել էր՝ մի քանի հարվածից հետո գիտակցությունը կորցրել էր, իսկ Մարզպետը ջախջախվել էր բառիս ամենաուղղակի իմաստով: Կրծքավանդակի վնասվածքի պատճառով շնչել չէր կարողանում: Խոր շնչելը, հազալը, մարմնի դիրքը փոխելը, ինքնուրույն նստելն ու պառկելը նրան մահացու ցավ էին պատճառում:

Պարզ է, ինձ այստեղ են բերել, որ խնամեմ նրան: Ջուր եմ տալիս, օգնում եմ, որ հարմար պառկի, ծխախոտ եմ վառում իմ ու նրա համար:

-Քանի օր է մենակ այստեղ ընկած եմ, ամենաշատը ծխել էի ցանկանում, լավ է, որ քեզ բերեցին, - թույլ ժպտում է ընկերս:

Այսօր չեմ էլ հիշում, թե ինչքան մնացինք այդ խցում, բայց մի 10-15 օրից ոչ պակաս: Այդ ողջ ընթացքում ոչ մի բժիշկ մեզ չմոտեցավ, ոչ ոք, անգամ որեւէ հսկիչ չհետաքրքրվեց նրա վիճակով: Միայն գարշահոտ արձակող նախաճաշ, ճաշ ու ընթրիք էին բերում, ուրիշ ոչինչ: Երկու անգամ մեր խուց բերեցին երկու կալանավորի: Մեկը մնաց մեկ օր, երեկոյան տարան, իսկ մյուսը մնաց մեկ գիշեր, հաջորդ օրվա կեսօրին տարան: Ծեծված, բայց սուր միտքը չկորցրած Մարզպետն ասում էր.

-Սրանց միջոցով ուզում են իմանալ՝ մեռնո՞ւմ եմ, թե՞ ոչ:

Բայց այս երկուսի ներկայությունը մի քիչ թեթեւացրեց իմ վիճակը: Նրանք մի քանի ժամ Մարզպետի մոտ մնացին, եւ ինձ հաջողվեց մի քիչ հանգստանալ: Մարզպետին հատկապես տանջում էին փայտոջիլները: Դրանք սարսափելի են անգամ առողջ մարդու համար, իսկ մահճակալին գամված մարդուն կարող են խելագարության հասցնել: Կծում են ցավոտ եւ հարձակվում խմբերով: Գիշերներն զբաղված էի այդ անիծվածներից Մարզպետին պաշտպանելով: Կամ ձեռքով սեղմում էի նրա կրծքավանդակը, որ կարողանար հազալ, կամ օգնում էի դիրքը փոխել:

Մի օր էլ բացվեց մեր խցի դուռը, եւ պահանջեցին, որ դուրս գանք: Մեծահոգաբար թույլ տվեցին, որ Մարզպետը հենվի ինձ: Բանտից դուրս գալուց հանդիպեցինք Սամվելին ու Մանուչարյանին: Մի քանի քրեականների հետ մեզ տարան կայարան, տեղավորեցին վագոնում, ու շարժվեցինք դեպի Ուրալ: Կուպեում օտար մարդ չկար, մենք էինք՝ ես, Սամվելը, Մանուչարյանը, Մարզպետը:

Մեր կենսագրության մեջ դաժան հետք թողած Ռոստովի բանտն արդեն հետեւում էր, առջեւում Վոլգոգրադի բանտն էր եւ մի աներեւակայելի երկար ճանապարհ:

Վոլգոգրադի բանտ

Ռոստովից դեպի Վոլգոգրադ ճանապարհը երկար չտեւեց, բայց անչափ դժվար էր մեզ համար: Ռոստով-Վոլգոգրադ ճանապարհը՝ ամենադանդաղ ընթացքի դեպքում, գնացքը հաղթահարում է մի 15 ժամում, իսկ մենք ճանապարհին երեւի երկու-երեք օր ենք եղել: Իբր Մարզպետի վիճակը քիչ էր, Սամվելի մոտ սկսվեցին ստամոքսային ահավոր ցավեր: Մշտական սրտախառնուքի պատճառով ոչինչ ուտել չէր կարողանում: Որոշեցինք, որ միակ ելքն ընդհանրապես չուտելն է: Ողջ ճանապարհին՝ մինչեւ Վոլգոգրադ, նա սոված մնաց:

Մարզպետի ծանր վիճակն էլ ավելի ծանրացավ մրսածության պատճառով: Հաճելի ու տաք ամառվա այդ օրերին նա հաջողեց մրսել, հազն էլ վերադիր: Ողջ ճանապարհին՝ գիշեր, թե ցերեկ, նստած էի կուպեի առաջին հարկի նստատեղին: Մարզպետը ցանկացած պահի կարող էր ինչ-որ բանի կարիք ունենալ: Ձեռքով նշան էր անում, ու ես հասկանում էի, որ ուզում է հազալ եւ ձեռքիս ափով սեղմում էի նրա կրծքավանդակը: Միայն այդ վիճակում էր կարողանում հազալ կամ խորը շունչ քաշել:

-Վարդան, դու հասկանու՞մ ես, որ ծանր հիվանդ ես պահում, - հերթական հազից հետո թույլ ժպտալով հարցրեց Մարզպետը:

-Այ ցավդ տանեմ, դու ի՞նչ հիվանդ, - կատակեցի, - հիվանդները կողքի կուպեում գտնվողներն են, որ յոթ տեղի վրա մի 10-15 հոգու խցկել են ու շնչելու օդ չունեն, իսկ դու առոք-փառոք պառկած փռշտում ես։

Միշտ կենսախինդ Մարզպետի ժպիտը մի տեսակ չէր ստացվում։

-Ախ, Իշխան, Իշխան, էս ի՞նչ արեցիր, -մի տեսակ նեղսրտած արտաբերեց Մարզպետը։

Դեռ Ռոստովի բանտի երկրորդ հարկի լուսավոր խցում էր Մարզպետն ինձ պատմել, թե ինչքան են ինքն ու Մանուչարյան Սանդրոն (Ալեքսանդր Մանուչարյանին նաեւ Սանդրո էին կոչում) համոզել Իշխանին՝ չփախչել, հետ կանգնել այդ անիմաստ ու աննպատակ մտքից, բայց Իշխանը անդրդվելի էր մնացել։

Տարիներ շարունակ ես մտածել եմ, թե ինչու՞ Իշխանը դիմեց նման քայլի, բայց բացատրությունը չեմ գտել։ Եթե ծրագիր լիներ, լիներ նպատակ, կարելի էր հասկանալ։ Բայց՝ ուղղակի, հենց այնպես… Ոչ միայն անհասկանալի, այլեւ անիմաստ քայլ էր։ Փախուստից որոշ ժամանակ անց նա կրկին կալանավորվեց։ Այլ կերպ չէր էլ կարող լինել։ Հետագայում, արդեն համադրելով կցկտուր ստացված տեղեկությունները, հասկանալի դարձավ, որ մեզ պահել են Ռոստովի բանտում այնքան ժամանակ՝ մինչեւ կգտնեն Իշխանին ու նաեւ՝ մինչեւ կպարզեն ու 100 տոկոսով կհամոզվեն, որ Մարզպետն ու Սանդրոն փախուստի հետ կապ չունեն։

…Նախաքննության ողջ ընթացքում մենք՝ ես, Իշխանն ու Մարզպետը, որտեղ հնարավոր էր՝ մեզ հանդիպած բոլոր պատերին, բոլոր անկյուններում, բաղնիքում, լվացարանում, զբոսարանում գրում էինք ՄԻՎ։ Մեր անվան սկզբնատառերն էին։ Այս գրությամբ մենք իրար եւ ողջունում էինք եւ տեղեկացնում, որ իրար հետ ենք ու պինդ ենք։ Հսկիչները մեր հետեւից դրանք ջնջում էին, բայց մենք վառած լուցկու հատիկով, գաղտնի պահած մատիտով (ունենալ չէր կարելի), հայթայթած ինչ-որ սուր գործիքով, ինչը նույնպես արգելված էր, աներեւակայելի ջանասիրությամբ գրում էինք մեր ՄԻՎ-ը։ Երեւանի ՊԱԿ-ի մեկուսարանում գտնվելու ընթացքում, 1980-ի մայիսից մինչեւ 1981-ի մայիսը՝ ուղիղ մեկ տարի, այնտեղ շինարարություն էր ընթանում, եւ մեկուսարանի զբոսարանները չէին գործում։ Փոխարենը շիֆերից երկու իրար կպած ժամանակավոր ու փոքր զբոսարաններ էին սարքել ՊԱԿ-ի շենքի հետնամասում՝ մեկուսարանին կից։ Տղաներից մեկը՝ Մարզպետը կամ Իշխանը, ինչ-որ սուր բանով կարողացել էր մեր ՄԻՎ-ը փորագրել շիֆերի մեջ այնպես, որ հսկիչները ջնջել չէին կարող, ու այդպես էլ մնացել էր։

Օգոստոսի վերջերին կամ սեպտեմբերին արդեն Պերմի մարզի Չուսովոյի շրջանի Պոլովինկա ավանում գտնվող N 37 քաղաքական կալանավայրում էի։ Կալանավայր մտնելուց որոշ ժամանակ անց, երեւի սեպտեմբերի վերջերին, առաջին անգամ ինձ պատժիչ մեկուսարան տարան։ Պատժիչ մեկուսարանում պահում էին առավելագույնը 15 օր, բայց քանի որ ես նոր էի եւ առաջին անգամ էին պատժում՝ բավարարվեցին 7 օրով։ Ամառն ավարտվել էր, բայց դրսում դեռ տաք էր, իսկ պատժիչ մեկուսարանի փոքրիկ՝ 1,5 մետր լայնությամբ եւ մոտ 3 մետր երկարությամբ մենախցում ցրտից դողում ես։ Իմ ազատազրկման հետագա 5 տարիների ընթացքում հասցրեցի լինել Պերմի մարզում գտնվող բոլոր երեք քաղաքական

գաղութներում եւ, բնականաբար, այդ գաղութների պատժիչ մեկուսարաններում. ամենացուրտ ու ամենաանմարդկային պատժիչ մեկուսարանը 37-րդ գաղութինն էր։ Այստեղ շատ ցուրտ էր, չկար ոչ զուգարան եւ ոչ էլ լվացարան։ Լվացվելու համար խուց-լվացարան էին տանում, իսկ արտաքնոցը պատժիչ մեկուսարանի բակում գտնվող փայտաշեն կառույցն էր, ուր տանում էին օրական մեկ անգամ։ Խիստ անհրաժեշտության դեպքում հատուկ տարա էին տալիս, որը մի 40-50 սմ բարձրությամբ մետաղյա ժանգոտած տակառ էր երկու բռնակով ու կափարիչով։ Աշնան սկզբից մինչեւ գարնան վերջը ցրտի պատճառով այստեղ նստելն էլ ավելի անտանելի էր դառնում։ Տարվա ցուրտ եղանակին պատժիչ մեկուսարանը ջեռուցվում էր։ Ըստ օրենքով սահմանված համապատասխան պահանջների, խցում ջերմաստիճանը չպետք է 18 աստիճանից ցածր լիներ, բայց իրականում 15-16-ը չէր գերազանցում։ Անգամ, եթե հրաշքով պահանջվող 18 աստիճանն էլ ապահովվեր, միեւնույն է, սոված ու հյուծված լինելու պատճառով մարդիկ մրսելու էին։ 37-ի պատժիչ մեկուսարանի անմարդկային պայմաններին ժամանակին իր 52-րդ թողարկման մեջ անդրադարձել է «Խրոնիկան»։



Պատժիչ մեկուսարանի երկտեղանոց խուց

Պատժիչ մեկուսարանում նաեւ գիրքն էր արգելված։ Մի շրջան սկսեցին թույլատրել, բայց հետո կրկին արգելեցին։ Ողջ օրը ոչ մի զբաղմունք չունես։ Մնում է միայն քայլել խցի երեք մետր երկայնքով, մտքում ֆանտաստիկ ծրագրեր կազմել, երազել ու ցրտից ցատկոտել։ Մյուս երկու՝ 35-րդ եւ 36-րդ կալանավայրերի պատժիչ մեկուսարանները համեմատաբար տաք էին, կրկնում եմ՝ համեմատաբար, եւ ունեին հիգիենիկ անհրաժեշտ հարմարությունները՝ զուգարան եւ ջուր։ Պատժիչ մեկուսարանում պառկելու հնարավորություն չկա (քնելու համար նախատեսված փայտյա տախտակամածը ցերեկը ծալվում եւ ամրացվում է պատին),

կերակրում են օրումեջ՝ մեկ օր երեքանգամյա սնունդ, եթե դա կարելի է սնունդ անվանել, իսկ մյուս օրը միայն ջուր եւ 450 գրամ հաց։ Բայց ամենադաժանը ոչ թե սովն է, այլ՝ ցուրտը։ Քայլում ես, ցատկոտում ես, մարմնամարզություն ես անում, որ տաքանաս։ Ահա այս վիճակում, երեկոյան կողմ, երբ արեւը որոշակի անկյան տակ ընկել էր լուսամուտի ապակուն, հանկարծ նկատեցի, որ ապակու փոշու վրա մատով գրված է ՄԻՎ։ Աչքերիս չհավատացի։ Անհնարին բան էր։ Սկզբում մտածեցի, թե ինձ թվում է։ ՄԻՎ գրողներից մեկը Մարզպետն էր, որ գտնվում էր նույն Պոլովինկա ավանի նույն 37 համարի տակ գտնվող, բայց առանձին ու ավելի փոքր կալանավայրում եւ այդ ընթացքում պատժիչ մեկուսարանում չէր եղել։ Լինելու դեպքում էլ անիմաստ կլիներ, որ նա նման բան գրեր։ Մնում էր Իշխանը։ Հասկացա, որ Իշխանին բռնել են, եւ նա այս կողմերում է։ Իմ յոթօրյա պատժի ավարտից հետո մոտեցա պատժիչ մեկուսարան ուտելիք տանող ազգությամբ բելոռուս պատերազմի հանցագործ ծերուկ Բաբուշկինին ու խնդրեցի ասել, թե ով է եղել մեկուսարանի այդ խցում։ Նա իրավունք չուներ որեւէ մեկի իր տեսածը, լսածը եւ իմացածն ասելու, բայց մինչեւ իմ պատժիչ մեկուսարան ընկնելը՝ մի առիթով օգնել էի նրան, ու ծերուկը երեւի թե պարտավորված էր զգում։ Ասաց, որ մի նիհար ու հյուծված հայ էր, որին ուղեկցորդները սխալմամբ 36 համարի կալանավայր տանելու փոխարեն բերել էին 37 (այս երկու կալանավայրերն իրարից հեռու են 50-60 կմ), այդ խցում նա մնացել էր կարճ ժամանակ, ապա տեղափոխել էին 36։ Սա Իշխանի փախուստից հետո նրանից ստացած առաջին լուրն էր։ Անկասկած՝ ես ժամանակագրությունը խառնում եմ։ Փորձեցի վերականգնել Իշխանի մասին «Խրոնիկայում» եղած հրապարակումների օգնությամբ ու պարզեցի, որ այնտեղ ամեն ինչ շատ ավելի խառն է։ Ժամանակագրական թյուրիմացություններն աչք են ծակում։ Սա բացատրելի է։ Աներեւակայելի դժվարություններով ու ուշացումներով էին լուրերը կալանավայրերից «Խրոնիկա» հասնում, իսկ գաղտնիության պայմաններում դրանք համակարգողն ու վերծանողը կարող էր եւ ժամանակագրական սխալներ թույլ տալ։ Վճռեցի դեպքերը շարադրելիս հիմնվել սեփական հիշողությանս վրա։

Իշխանին փախուստից հետո ձերբակալել ու հետ էին բերել Ռոստովի բանտ։ Այնտեղ նրան ու իր հետ փախած երկու քրեականներին օրերով խոշտանգել էին։ Հետագայում՝ արդեն քաղաքական կալանավայրում իր հետ նստած ընկերներին Իշխանը պատմել էր, որ քրեականներից մեկն ամենօրյա խոշտանգումներին չդիմանալով հոգեկան հիվանդ է դարձել։ Ինքը՝ 23-ամյա առողջ երիտասարդ Իշխանը, կարճ ժամանակում հիվանդ ու հյուծված հաշմանդամի էր վերածվել։ Նրա ականջներից ժամանակ առ ժամանակ արնախառն թարախ էր հոսում, նորմալ շնչել չէր կարողանում, ոսկորներն ու հոդերը ցավում էին։ Բայց այս ամենը չէր խանգարում, որ նա կալանավայրի ամենաակտիվ կալանավորներից մեկը լինի։

Մարզպետի վիճակն ավելի ու ավելի էր ծանրանում։ Նա ոչինչ չէր ուտում եւ չէր խմում։ Վոլգոգրադի բանտ հասանք ցերեկով։ Մեզ տեղավորեցին բավականին մաքուր ու լուսավոր մի խցում։ Խցում կար ջուր, նաեւ՝ զուգարան, փոքրիկ տաշտակ ու օճառ։ Ինձ համար օճառի գոյությունը հրաշքի հավասար բան էր։ Այդ օրերին դրանից ավելի մեծ երջանկություն պատկերացնել չէի կարող։ Մարզպետին հարմար պառկեցնելուց հետո անմիջապես անցա իմ լվացքին։ Լավ օճառաջուր սարքեցի ու այնտեղ ընկղմեցի շալվարս ու վերնաշապիկս, մի լավ տրորեցի, ապա ինքս սկսեցի լվացվել։ Ավարտելուց հետո նստեցի ու սկսեցի զրուցել ընկերներիս հետ։ Մանուչարյանը հարցրեց, թե տաշտից ինչու չեմ հանում հագուստս։

-Թող երկար մնա օճառաջրի մեջ, որ ոջիլները դուրս գան, -լուրջ-լուրջ պատասխանեցի ես։

Ընկերներս սկսեցին ծիծաղել։ Նույնիսկ Մարզպետը, որ խոր շնչել չէր կարող՝ ծիծաղում էր միամտությանս վրա։

-Ուշադիր նայեք, տղեք, - ասում էր կատակասեր Մանուչարյանը, - հիմա Վարդանի ոջիլները շարքով դուրս են գալու տաշտից, - ու երեքով քրքջում էին։

Ինձ մնում էր միայն միանալ նրանց ծիծաղին, ապա ողողեցի հագուստս ու կախեցի մահճակալներից, որ չորանան։

Իսկ բանտի միջանցքների լաբիրինթոսից՝ այնտեղ մեր գտնվելու ողջ ընթացքում, կանանց բարձր ձայներ էին լսվում։ Ովքե՞ր էին, չիմացանք։ Երեւի մեր խուցը կանանց հարկաբաժնի մոտ էր։

Վոլգոգրադի բանտի այդ խցում մենք մի քիչ շունչ քաշեցինք ու հանգստացանք։

Մի քանի օրից մեզ այնտեղից դուրս բերեցին, նորից գնացք նստեցրին, ու կրկին բոլորս միասին մեկ առանձին կուպեում էինք։ Իշխանի փախուստի հետեւանքով ուղեկցողներին արդեն խստորեն հանձնարարված էր, որ մեզ տեղից տեղ տեղափոխեն կամ բանտերի խցերում տեղավորեն մեր կարգավիճակին համապատասխան՝ քրեականներից առանձին։ Սա ոչ թե բանավոր հանձնարարվում է, այլ գրվում է էտապում գտնվող կալանավորի գործի թղթապանակի վրա։ Այդ գործը կալանավորին ուղեկցում է իր ողջ կալանքի ընթացքում։ Ամենայն հավանականությամբ նաեւ Իշխանի փախուստն էր պատճառը, որ իմ գործը ձեռք բերեց «կարմիր գիծ», ինչը նշանակում է՝ վտանգավոր է եւ հակված է փախուստի։ Այդ կարմիր գիծը գծվում է կալանավորին ուղեկցող անձնական գործի ծրարի անկյունագծով, որը սոսնձվում ու կնքվում է։ Ծրարը չպետք է վնասված լինի։ Վնասված լինելու դեպքում ուղեկցող վաշտի հրամանատարի եւ ընդունող կալանավայրի ղեկավարության ստորագրությամբ կազմվում է համապատասխան արձանագրություն։ Բացի անձնական գործից, յուրաքանչյուր կալանավորի համար՝ արդեն կալանավայրում պատրաստվում է նաեւ թղթախաղի քարտ հիշեցնող, բայց դրանից մի քիչ մեծ ու հաստ քարտ, որի վրա գրվում են կալանավորի տվյալները, եւ եթե նրա գործի վրա կարմիր գիծ կա, ապա քարտի անկյունագծով գծվում է նույն այդ կարմիր գիծը։ Այս քարտերով են հսկիչներն իրականացնում կալանավորների առավոտյան ու երեկոյան պարտադիր հաշվառումները եւ աշխատանքային գոտի բաց թողնելն ու այնտեղից հետ՝ բնակելի գոտի անցնելը։ Այս գիծը կալանավորման ողջ ընթացքում ե՛ւ խանգարել, ե՛ւ օգնել է ինձ։ Կարգը պահանջում էր, որ կարմիր գիծ ունեցողները երեկոյան ամենաուշը ժամը 22:00-ից լինեն կալանավայրի բնակելի հատվածում, այսինքն՝ բոլորը մնում էին աշխատավայրում, իսկ ես ժամը 21-ից արդեն դուրս էի գալիս այնտեղից, հսկիչն ինձ ուղեկցում էր կալանավայրի բնակելի հատված, որտեղ կարող էի հանգստանալ եւ իմ գործերով զբաղվել ավելի շատ, քան մյուսները։ Այս ընթացքում ընկերներս 2-3 ժամ դեռ աշխատում էին։ Մեր կալանավայրերում կարմիր գիծ ունեցողների թիվը չափազանց քիչ էր։ Օրինակ, 37-րդ կալանավայրում նման գիծ ունեինք միայն ես ու խարկովցի հոգեբույժ Անատոլի Կորյագինը։ Իսկ այդ գիծը խանգարում էր այն առումով, որ անընդհատ գտնվում ես լրացուցիչ ուշադրության կենտրոնում եւ մյուսների համեմատ՝ այդ

անազատ պայմաններում ավելի անազատ ես։ Կալանավորի լավ պահվածքի համար այդ գիծը, ժամանակի ընթացքում, կարող է հանվել։ Ինձ վրա այդ գիծը մնաց մինչեւ իմ վերջնական ազատ արձակումը։ Բայց թե ինչու՞ մերոնցից միայն իմ գործն ստացավ բավականին պատվաբեր այդ կարմիր գիծը՝ ասել չեմ կարող։ Անհասկանալի է։ Առավել եւս, որ Իշխանի փախուստի ժամանակ ես նրա մոտ չեմ եղել։ Չի բացառվում, որ այդ նվերն ինձ, ինչ-ինչ պատճառներով, տրված լիներ դեռ Երեւանում, Հայաստանի պետանվտանգության կոմիտեի կողմից։

Որպես կանոն, էտապի ժամանակ կալանավորները ճանապարհին՝ քիչ, իսկ առաքաբանտերում երկար են մնում։ Մեր դեպքը հակառակն էր։ Պատճառը կրկին Մարզպետն էր, ավելի ճիշտ՝ նրա վիճակը։ Ոչ մի կալանավայր չէր ցանկանում, որ իր տարածքում հատուկ վտանգավոր պետական հանցագործ մահանա, եւ որքան հնարավոր է շուտ՝ մեզ դուրս էին անում։ Հետագայում, երբ Մարզպետի վիճակն ավելի վատացավ, ընդհանրապես հրաժարվում էին մեզ ընդունել։ Սրա մասին՝ առջեւում։

Ճանապարհ դեպի Պերմի բանտ

Վոլգոգրադի բանտից շների ու ավտոմատավոր զինվորների ուղեկցությամբ դուրս բերեցին գիշերով։ Տարիների հեռավորությունը ոչ ամսաթիվ եւ ոչ էլ այլ նրբություններ հիշել թույլ չի տալիս ինձ։ Տպավորվել են գերմանական օվչարկաների սպիտակ ատամները։ Նպատակս ժամանակագրությունը չէ։ Ավելի շատ ցանկանում եմ նկարագրել խորհրդային շրջանում կալանավորների դատապարտվելուց հետո կալանավայր տեղափոխվելու պրոցեսը՝ էտապը, որը կալանավորների կյանքի ամենադաժան դրվագներից մեկն է միշտ համարվել։ Այսօրվա ընթերցողը մեկ բան պետք է հիշի. ինչ էլ լինի, ինչ կարգի կալանավայրեր էլ լինեն այսօր, ինչ վերաբերմունք էլ լինի, միեւնույն է, այսօրվա վիճակը խորհրդային շրջանի վիճակի հետ համեմատել հնարավոր չէ։ Այսօրվա կալանավորն ունի այնպիսի հնարավորություններ, որպիսիք խորհրդային շրջանում երազել անգամ հնարավոր չէր։ Այսօրվա ամենակարեւոր ձեռքբերումը դրսի աշխարհի հետ կապն է։ Կալանավորը կարող է զանգահարել եւ հարազատներին տեղեկացնել իր վիճակի մասին։ Փաստաբաններ կան, որոնք իրավունք ունեն եւ կարողանում են հետաքրքրվել իրենց պաշտպանյալների ճակատագրով։ Տեսակցությունների բազմաթիվ հնարավորություններ կան։ Հարազատին սնունդ փոխանցելու եւ, զարմանալի է, բողոքելու, բողոքը բարձրաձայնելու ու հանրության սեփականություն դարձնելու իրավունք ու հնարավորություն կան։ Ամենակարեւորը զոռալու, աղաղակելու, սեփական ձայնը լսելի դարձնելու հնարավորությունն է, մի բան, որ խորհրդային շրջանում ԻՍՊԱՌ բացառվում էր։ Միայն քաղաքական կալանավորների դեպքում էր, որ արեւմտյան ռադիոձայները մի կարճ ժամանակ աղաղակում էին, եթե, իհարկե, տեղեկատվությունը հնարավոր էր լինում տեղ հասցնել, իսկ մնացած բոլոր դեպքերում կալանավորը մեն-մենակ էր ջարդող, ոչնչացնող ու ռեպրեսիվ այդ հզորագույն համակարգի դեմ։ Չկային իրավապաշտպաններ, չկային միջազգային կառույցներ, չկային հումանիտար ոլորտում պետական պարտավորություններ։ Օրերով, շաբաթներով, ամիսներով կալանավորի հարազատները նրանից կարող էին որեւէ տեղեկություն չստանալ։ Կալանավորն ամիսներով կարող էր մնալ մենախցում, եւ ոչ ոք չէր իմանա, թե ինչ է կատարվում նրա հետ։ Կապի բացակայությունը հյուծում ու շատ հաճախ կամազրկում էր կալանավորին, ծայրահեղ ու չարդարացված քայլերի էր դրդում։ Մարդիկ երակ էին կտրում,

հացադուլ էին հայտարարում, ինքնավնասումներ էին անում, միայն թե հարազատներից լուր ստանան կամ կարողանան լուր փոխանցել։

Մեզ դեպի գնացք տարան, երբ մյուս կալանավորներին արդեն տեղավորել էին վագոնում։ Մոտեցանք գնացքին, օգնեցինք, որ բարձրանա Մարզպետը ու, ինչպես նախորդ անգամ, տեղավորվեցինք առանձին կուպեում։

Էտապում գտնվող կալանավորները չգիտեն, թե ուր են տանում իրենց։ Նրանց ոչ ոք չի տեղեկացնում դրա մասին։ Այդպես եղել է միշտ։ Մեր դեպքն այլ էր, մենք գիտեինք, որ Պերմի մարզում են գտնվում քաղաքական կալանավայրերը, իսկ թե մեզանից ով որ կալանավայրում կլինի՝ էական չէր մեզ համար։ Տրամաբանությունը եւ աշխարհագրությունը հուշում էին, որ շուտով, մի քանի օրից արդեն տեղ ենք հասնելու։

Գնացքը շարժվեց դեպի Պերմ։ Մեր հաջորդ կանգառը Կիզել քաղաքի բանտն էր։ Գնացքի կայանման վայրից մինչեւ Կիզելի բանտ այնքան էլ հեռու չէր, որովհետեւ մեզ բանտ տարան ոտքով։ Մեր այս «անցումը» շատ է տպավորվել եւ ոչ մի կերպ հիշողությունիցս չի ջնջվում։ Այդ տարածաշրջանի բնակիչներին կալանավորների ներկայությամբ չես զարմացնի։ Յուրաքանչյուր շրջանին ու քաղաքին կից մի քանի կալանավայր կա, յուրաքանչյուրը տեղավորում է մի քանի հազար կալանավոր։ Բնակիչների մի մասը մշտական կալանավորներ են, մի մասը՝ կալանավայրերի աշխատակիցներ, մի մասն էլ՝ հսկա գործարանների աշխատակիցներ։

Մեզ տարան քրեականների հետ միասին, ու մեր երթն այնքան տարօրինակ տեսք ուներ, որ այդ քաղաքի՝ կալանավորների մշտական ներկայությանն ընտելացած քաղաքացիները կանգնում ու ապշած հայացքով մեզ էին հետեւում։ Ահագին՝ մոտ 80-100 քրեական կալանավորներ էին։

Ամառ էր, ու նրանց հիմնական մասը, եթե ոչ բոլորը, արձակած վերնաշապիկներով էին։ Քայլում էին ազատ՝ ի ցույց դնելով դաջվածքներով պատված իրենց մարմինները։ Նրանց շարժուձեւը, հայացքներն անգամ վկայում էին իրենց անուղղելի հանցագործ լինելու մասին։ Քրեականների երկար ձգված այս շարասյանն ուղեկցում էին ավտոմատներով զինված չորս զինվորներ՝ երկուսը շարքի առջեւից, իսկ երկուսը՝ շարքի վերջում։ Քրեականների շարասյան առջեւից, մի քանի քայլով նրանցից առանձնացված, տանում էին մեզ՝ չորս փոքրամարմին քաղաքական կալանավորներիս, ձեռնաշղթաներով ու լրացուցիչ՝ եւս երկու ավտոմատավոր զինվորներով։ Պատկերն այսպիսին էր. մեր առջեւից քայլում էին երկու ավտոմատավորներ, ապա ես ու Մարզպետը, մեր հետեւից Ալեքսանդր Մանուչարյանն ու Սամվել Եղիազարյանն էին։ Մեր շղթան փակում էին քրեականների շարասյան առջեւի ավտոմատավորները։ Չորսս գտնվում էինք չորս զինված զինվորների միջեւ։ Մեր շղթայված ձեռքերում մեր ուսապարկերն էին։ Կողքից աներեւակայելի հետաքրքիր ու տարօրինակ պետք է թվար, թե ինչու են այս չորս փոքրամարմիններն այսպես առանձնացված, ձեռնաշղթաներով ու հատուկ հսկողության տակ, իսկ հաղթանդամ քրեականների ողջ բազմությունն առանց շղթաների էր ու առանց հատուկ հսկողության։ Չորսիցս միայն Սամվելն էր համեմատաբար բարձրահասակ։ Նրա հասակը գերազանցում է 1,70-ը, իսկ մենք երեքով 1,60-ի սահմաններում ենք։ Ինչեւէ… Հասանք բանտ, եւ քրեականների հետ միասին մեզ տեղավորեցին մի մեծ, երեւի 20-30

տեղանոց խցում։ Քաղաքի փողոցներով նման շուքով մեր անցումն իր ազդեցությունը գործել էր։ Քրեականները մեզ հատուկ հարգանքով էին վերաբերվում եւ ամեն կերպ փորձում էին աջակցել ու օգնել։

Երբ մեզ ուտելիք բերեցին, Մանուչարյանը սարսափով պարզեց, որ գնացքի վագոնում է թողել իր ատամնապրոթեզը։ Իհարկե, նա ատամնաշար ուներ բերանում, բայց մյուսը պահեստային էր։ Յուրաքանչյուր պրոթեզ ունեցող կալանավոր գիտի, որ իր հետ պետք է ունենա պահեստային պրոթեզ, հակառակ դեպքում, եթե մեկը վնասվի, ապա մինչեւ պատժաչափի ավարտը մնալու է առանց ատամների՝ բոլոր տխուր հետեւանքներով հանդերձ։ Մեզ փոխանցվեց Մանուչարյանի վիշտը, որն այդ պահին իր ծանրությամբ չէր զիջում Մարզպետի վիճակին։

Գիշերը Կիզելի բանտում կարողացանք հանգիստ քնել, իսկ առավոտյան նախաճաշ կոչվող կերակուրն ուտելուց հետո մեզ կրկին հանեցին բանտից ու կալանավորներ տեղափոխող ավտոմեքենայով դեպի գնացք տարան։ Այստեղ տեղի ունեցավ այն հրաշքներից մեկը, որոնք մեր ճանապարհին անընդհատ ուղեկցել են մեզ։ Մեզ, ինչպես կարգն է, տեղավորեցին քրեականներից առանձին։ Մանուչարյանն, ըստ իր սովորության՝ նա մշտապես նույն կերպ էր վարվում, անմիջապես բարձրացավ կուպեի երկրոդ հարկի տախտակամած ու պառկեց։ Ողջ ճանապարհն այդ հարկում անցկացրեց։ Բարձրանում էր վերեւ, որ ոչ ինքը մեզ խանգարի, եւ ոչ էլ մենք՝ իրեն, ու վերեւից զրուցում էր մեզ հետ։ Պատմում էր իր մասնագիտություններից, որոնք շատ էր սիրում։ Իսկ նրա մասնագիտություններն էին վիմագրությունը, նկարչությունը, արվեստը։ Այս առարկաներն էլ դասավանդել էր։ Իր հակախորհրդային բնութագրված ստեղծագործությունները, որոնց պատճառով դատապարտվեց, ստորագրել էր Վինար կեղծանվամբ։ Չեկիստները ողջ նախաքննության ընթացքում փորձել էին վերծանել, թե ինչ է նշանակում Վինար, բայց չէին կարողացել։ Միայն քրեական գործի ավարտին ինքը՝ Մանուչարյանն էր համաձայնել բացատրել, թե ինչ է նշանակում։ Վինարը կազմված էր վիմագրություն, նկարչություն, արվեստ բառերի սկզբնատառերից։ Մեզանից ամենավատը Մանուչարյանի վիճակն էր։ Կինը հոգեկան խնդիրների պատճառով գտնվում էր հոգեբուժարանում, իսկ երկու անչափահաս տղաները՝ տանը։ Ինչպե՞ս են, ի՞նչ են անում, ունե՞ն խնամող՝ նա չգիտեր։ Այս թեմայով շատ ծավալվել չէր սիրում, բայց մտահոգ հայացքում ամեն ինչ կար։ Ու հանկարծ Մանուչարյանը ճչաց.

- Այ քեզ հրաշք, ատամներս…

Ու մեզ ցույց տվեց թղթի մեջ փաթաթած իր պրոթեզը։ Փաստորեն, այն վագոնը, որը մեզ Կիզել էր բերել, ողջ գիշեր կանգնած է մնացել կիսակայարանում, իսկ առավոտյան մենք հայտնվել էինք ոչ միայն նույն վագոնում, այլեւ նույն կուպեում, որտեղ առոք-փառոք մեզ էր սպասում Մանուչարյանի պրոթեզը։ Բոլորս էլ աներեւակայելի ուրախ էինք։ Սրտանց ուրախ լինելու համար շատ բան պետք էլ չէ։

Կրկին ճանապարհ դեպի Պերմի բանտ

Մեր գնացքը նորից ուղղվեց դեպի Պերմի բանտ: Դատելով ամեն ինչից, գնացքում անցկացրած օրերի ընթացքում մենք մի քանի անգամ մոտեցել ու հեռացել էինք Պերմից: Կիզելը գտնվում է Պերմից 250 կմ հեռավորության վրա եւ մի 5-6 ժամվա ճանապարհ է: Ահա այդ ճանապարհը մենք անցել ենք աներեւակայելի երկար ժամանակաընթացքում: Երեւանից դուրս ենք եկել հունիսի սկզբներին, մի քանի օրից եղել ենք Ռոստովի բանտում, իսկ Ռոստովից Պերմի մարզում գտնվող կալանավայրեր հասել ենք օգոստոսի վերջերին: Այդ ողջ ընթացքն անցել է գնացքների մեջ, որոնք մեզ պտտել են Պերմի մարզի կայարաններով, կիսակայարաններով եւ փոքր ու մեծ բանտերով: Տարբեր կուպեների կալանավորների հանում ու տեղը նորերի էին բերում, իսկ մեր ընթացքը վերջ չուներ: Տեղացի կալանավորներին հարցնում էինք՝ հեռու՞ է Պերմը: Պատասխանում էին, որ հեռու չէ, բայց մեր ճանապարհը չէր ավարտվում: Մեզ կայարանից կայարան էին պտտում՝ սպասելով Մարզպետի վիճակի փոփոխությանը: Բայց նաեւ որեւէ մեկը չէր մոտենում մեզ ու չէր հարցնում, թե ինչպես ենք կամ ինչպես է զգում Մարզպետը: Մեր եւ ուղեկցողների միջեւ զրույցներ տեղի չէին ունենում:

Հերթական անգամ դեպի Պերմ ընթանալու ժամանակ մեր կուպե բերեցին մի լատիշի, որը նույնպես քաղաքական բանտարկյալ էր: Արդեն դատապարտվել էր եւ էտապով տանում էին կալանավայր: Լատվիայում շատ հայտնի Յուրիս Բումեյստերն էր: Հետագայում՝ 36-րդ գաղութում եղած շրջանում, չնայած մեր տարիքի տարբերությանը, մտերմացա նրա հետ: Յուրիսի հայրը եղել էր 20-րդ դարի սկզբի սոցիալիստական շարժումների ակտիվ մասնակից եւ Լատվիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցության հիմնադիրներից մեկը: Աշխատել էր Լենինի հետ: Հոր հետքերով գնացած որդին ընդհատակում գործող սոցիալ-դեմոկրատական կուսակցության ղեկավարներից մեկն էր: Յուրիս Բումեյստերը ծնվել էր 1918-ին: Երբ հանդիպեցինք, արդեն 63 տարեկան էր: Մասնագիտությամբ ինժեներ էր, գիտությունների թեկնածու, խորացել էր ձկնորսության մեջ էլեկտրոնիկայի ներդրման բնագավառում: Քանի որ նրա գիտական աշխատանքը պաշտոնապես գաղտնի էր համարվել, ընդհատակյա գործունեության բացահայտումից հետո նրան դատել էին ոչ թե հակախորհրդային գործունեության, այլ՝ հայրենիքի դավաճանության հոդվածով եւ դատապարտել 15 տարվա ազատազրկման: Մեր ճանապարհին հանդիպած առաջին քաղբանտարկյալն էր: Մի քանի ժամ անց, երբ մոտեցանք Պերմ քաղաքին, նրան տարան, իսկ մենք՝ հերթական պտույտին պատրաստ, մնացինք գնացքում:

Մի քանի օրից, որերորդ անգամ դեպի Պերմ ընթանալիս, հանդիպեցինք հաջորդ քաղբանտարկյալին: Այս անգամ մեր ուղեկիցը խարկովցի իրավապաշտպան, մասնագիտությամբ հոգեբույժ Անատոլի Կորյագինն էր: Կորյագինի հետ եղել եմ իմ առաջին՝ 37 համարի գաղութում: Ես միշտ խուսափել եմ կալանավայրային կոլխոզներից՝ ընդհանուր տնտեսությունից, բայց 37-րդ կալանավայր մտնելուց հետո Կորյագինի հետ ունեցել ենք ընդհանուր տնտեսություն: Սրա իմաստն այն է, որ դու եւ ընկերդ կամ մի քանի ընկերներ միացնում եք ձեր ուտելիքը, որն ընդհանուր է դառնում ձեզ համար, եւ սնվում եք միասին: Եթե չեմ սխալվում՝ հայաստանյան կալանավայրերում այդ կոլխոզը կոչվել է «հացընկերություն»: Կորյագինը զննեց Մարզպետին, շոշափեց կրծքավանդակը եւ կողոսկրերը, ուռած ուսն ու հաստատեց մեր կասկածը, որ մեզ կալանավայր չեն տանի՝

մինչեւ Մարզպետը չսկսի կազդուրվել։ Հետագա բժշկական զննությամբ, որ Մարզպետն անցել էր արդեն 7-8 տարի անց՝ 1987-ի վերջին Միացյալ Նահանգներում, պարզվել էր, որ կոտրված են եղել նրա կողոսկրերը, որոնցից մեկը մխրճվել էր թոքի մեջ ու վնասել այն։ Երբ հասանք Պերմ, Անատոլի Կորյագինին տարան, իսկ մենք շարունակեցինք մեր ճանապարհն ու եւս մեկ անգամ գիշերեցինք Կիզելի բանտում։ Մի օր էլ, արդեն որերորդ անգամ Պերմ ուղեւորվելու ճանապարհին Մարզպետը քնեց ու երկար քնեց։ Նման բան ողջ ընթացքում չէր եղել։ Մի քանի ժամ խոր քնելուց հետո արթնացավ ու հայտարարեց.

- Ամեն ինչ լավ է լինելու։ Ես կապրեմ։

Նրա խոսքի մեջ վստահություն կար։ Եւ իրոք, կամաց-կամաց սկսեց շարժվել, առանց օգնության ոտքի կանգնել ու ինքնուրույն քայլելու փորձեր անել։ Հաջորդ անգամ Պերմ հասնելուն պես մեզ դուրս բերեցին վագոնից եւ տեղափոխեցին Պերմի բանտ։ Բանտ մտնելիս մի քանի հսկիչների հետ միասին մեզ դիմավորեց տարօրինակորեն բարեհամբույր մի սպա։ Մեր գործերն արդեն նրա ձեռքին էին։ Պերմի բանտում քաղբանտարկյալների ներկայությունը զարմանք չի հարուցում եւ լրացուցիչ հարց ու պատասխանի տեղիք չի տալիս։ Այստեղ հաճախ են քաղբանտարկյալներ լինում։

- Թող հայր եւ որդի նույն խցում լինեն, - իմ ու Մարզպետի ազգանվան նույնությունը, Մարզպետի ծերացած տեսքի եւ ինձ հենված լինելու հանգամանքները հաշվի առնելով՝ ասաց սպան։ Մեզ անջատեցին Սանդրոյից ու Սամվելից։ Հաջորդ անգամ նրանց հանդիպեցի1988-ին Երեւանում, իմ ազատ արձակվելուց հետո։

Խցում Մարզպետն արդեն օր օրի ավելի լավ էր զգում։ Այդ բանտում երկար մնացինք. այնքան՝ մինչեւ որ Մարզպետն սկսեց ազատ տեղաշարժվել։

Երկարատեւ ճանապարհորդությունից հետո մեզ մեկ անգամ բաղնիք տարան։ Բաղնիքն, իհարկե, կեղտոտ էր, բայց յուրաքանչյուրիս տնտեսական օճառի մեկական փոքրիկ կտոր տվեցին, եւ մենք ուրախությամբ մտանք այդ լոգարան կոչված տարածքը։ Այնտեղից հիշողությանս մեջ մնացել են բորբոսնած պատերը, բազմաթիվ ժանգոտած խողովակները, որոնց բոլոր միացման հանգույցներից ջուր էր ցայտում եւ չափազանց տաք, համարյա եռացող ջուրը։ Ջրի տակ մտնելուց անմիջապես հետո դուրս թռա ու սկսեցի ծեծել լոգարանի երկաթյա դուռը, որ հսկիչին տեղեկացնեմ ջրի չափազանց տաք լինելու մասին, բայց արձագանք չկար։ Հսկիչը, ամենայն հավանականությամբ, մեզ այնտեղ փակելուց հետո հեռացել էր եւ վերադառնալու էր միայն մեզ այնտեղից տանելու նպատակով։ Այլ ելք չկար։ Այդքան ժամանակ անց լողանալը պարտադիր էր։ Արդեն օգոստոս ամիսն էր ավարտվում, իսկ մենք՝ չհաշված Ռոստովի բանտի լողանալու փորձը, որը ոչ մի կերպ լողանալ համարել հնարավոր չէր, վերջին անգամ լողացել էինք մայիսին՝ Երեւանում։

Լողանալիս ուշադիր հետեւում էի Մարզպետին։ Նրա ուսի ուռուցքն արդեն չկար։ Բավականին ազատ կարողանում էր շարժել ձեռքերը, անհանգստություն էր պատճառում միայն խոր շնչելիս առաջացող ցավը, բայց դրա վրա արդեն ուշադրություն չէինք դարձնում։

Մի քանի օրից մեզ տարան Չուսովոյ քաղաք։ Հենց Չուսովոյի շրջանում են գտնվում քաղաքական կալանավայրերը։ Այնտեղից կալանավորներ տեղափոխող ավտոմեքենայով հասցրեցին Պոլովինկա ավանում գտնվող 37-րդ կալանավայր եւ կարանտինի շրջան անցնելու համար տեղավորեցին կալանավայրի պատժիչ մեկուսարանի տարբեր խցերում։ Առաջին անգամ որպես մահճակալ ծառայող փայտյա տախտակամածի վրա փռելու նպատակով մեզ մաքուր անկողին տվեցին։ Եկավ կալանավայրի բժշկուհին, որին անմիջապես տեղեկացրի, որ պատված ենք ոջիլներով։ Ինձ վրա մեր այս էտապը ծանր նստեց։ Ես ձեռք էի բերել սնկային հիվանդություն, որի բուժումը մի քանի տարի տեւեց, մաշկային այլ խնդիրներ էլ կային, որոնք համեմատաբար հեշտ վերացան, բայց ոջիլն ինձ համար հոգեբանական այն սահմանն էր, որը հաղթահարել չէի կարողանում։ Մեր հագուստը մեզանից վերցրին, մեզ մշակեցին ինչ-որ դեղերով, արդյունքում ոջիլներն արագ վերացան, ապա մեզ բաղնիք տարան։ Սա արդեն երջանկություն էր։ Մեզ բաղնիք տարան առանձին-առանձին, որովհետեւ կարանտինի շրջան մտնելու պահից ես ու Մարզպետն արդեն տարբեր կալանավայրերի կալանավորներ էինք համարվում։ Ճիշտ է, գտնվում էինք նույն հասցեի տակ, բայց իրար տեսնել կամ հանդիպել չէինք կարող։ 37-րդ կալանավայրը բաժանված էր երկու մասի՝ փոքր եւ մեծ գաղութ։ Փոքրում Մարզպետն էր, մեծում՝ ես։ 1981-ի սեպտեմբերից Մարզպետին տեսնել չեմ կարողացել, բայց մինչեւ 1982-ի վերջը մենք հանդիպել ենք պատժիչ մեկուսարանում, երբ եւ նրան, եւ ինձ պատժելու նպատակով մեկուսարան են տեղափոխել։ Այնտեղ մենք մեկուսարանի տարբեր խցերում ենք եղել, բայց իրար հետ խոսելու հնարավորություն ունեցել ենք։ Վերջին անգամ Մարզպետին տեսել եմ 1994-ին, երբ Հայաստան էր եկել։ 2000-ին 60 տարեկանում վախճանվեց քաղցկեղից։

Կարանտինում իմ դիմացի խցում Յուրի Բուտչենկոն էր՝ քաղաքական կալանավայրերում հայտնի կալանավոր։ Նա 35-րդ կալանավայրից էր, արդեն պետք է ազատ արձակվեր։ Ոչ թե որպես պատիժ, այլ ազատվելուց առաջ մեկուսացնելու նպատակով տեղափոխել էին 37-ի պատժիչ մեկուսարանի այդ խուցը։ Նստած էր եղել Պարույրի հետ։ Տեղեկանալով, որ Հայաստանից ենք՝ մեզ ասաց, որ Պարույրի վրա նոր քրեական գործ է հարուցվել, ու պատմեց այդ գործի որոշ նրբություններ։

Մինչեւ 1985 թվականն ինձ անընդհատ կալանավայրից կալանավայր են տեղափոխել, բայց սրանք արդեն էտապ անվանել բառի իսկական իմաստով՝ չեմ կարող, որովհետեւ այս կալանավայրերը գտնվում էին Պերմի մարզի նույն շրջանում եւ իրարից ամենաշատը 50-60 կմ հեռավորության վրա։ Այս էտապները տեւել են մի քանի ժամ։

Հաջորդ լուրջ էտապն իմ կյանքում եղել է 1985-ին, երբ արդեն ավարտել էի հինգ տարվա ազատազրկման ժամկետս եւ պետք է եռամյա աքսորս կրեի, որն սկսվել է 1985-ի ապրիլին եւ ավարտվել նույն թվականի հուլիսին։ Ճիշտ է, այս էտապը չի եղել նույնքան դաժան, որքան նկարագրածս է, բայց նաեւ զուրկ չի եղել իր հմայքից։ Դրա մասին իր ժամանակին կպատմեմ։

37-րդ կալանավայր

Մեր ձգձգվող էտապի ընթացքում կալանավայրը լուսավոր երազանք էր դարձել։ Ճանապարհին հանդիպած քրեականների հետ ունեցած բազմաթիվ զրույցներից արդեն որոշակի պատկերացում ունեի կալանավայրի մասին։ Վերջինս պատկերանում էր գորշ ու անհյուրընկալ, բայց միաժամանակ վայր, որտեղ վերջապես կարելի է դադար առնել, նամակներ գրել հարազատներին, որոնք, անկասկած, այս ողջ ընթացքում աներեւակայելի անհանգիստ են, շփվել նոր ու հետաքրքիր մարդկանց հետ ու ապրել քիչ թե շատ համակարգված կյանքով։

Բայց որքան մեծ էր զարմանքս, երբ ուղեկցող հսկիչն ինձ կարանտին կոչված խցից հանելով՝ կալանավայրի տարածքով ուղեկցեց դեպի կացարան։ Նախ՝ տպավորիչ էր կալանավայրի տարածքը։ Շատ մեծ չէր, բայց զբոսնելու համար լիուլի բավարար էր ու կոկիկ։ Կացարանն ինձ էլ ավելի զարմացրեց։ Շատ մաքուր, մեծ ու լայն լուսամուտներից թափանցած արեւի լույսով ողողված մեծ սրահում եռաշար մոտ 30 մետաղյա մահճակալներ էին շարված։ Ոչ այնպիսիք, որպիսիք եղել էին հանդիպածս բանտերում։ Այլ՝ փափուկ ու զսպանակավոր։

Մեկն այդ մահճակալներից

Յուրաքանչյուր մահճակալին կից կար մեկ ոչ մեծ պահարան եւ առանց հենակի աթոռակ։ Մահճակալները ծածկված էին մաքուր ծածկոցներով։ Ամենայն հավանականությամբ, պետք է որ սպիտակեղենն էլ մաքուր լիներ։ Այդպես էլ կար։ Հետո պարզվեց՝ ամեն շաբաթ սպիտակեղենը հավաքում ու լվանում էին։ Կացարանն ուներ փայտյա հատակ։ Տպավորված էի տեսածիցս։ Հսկիչը ցույց տվեց մահճակալս, որի վրա փակցրեց իմ ազգանվամբ պիտակն ու հեռացավ (յուրաքանչյուր կալանավորի մահճակալին կախվում էր նրա ազգանվամբ պիտակ)։ Կալանավայրի տարածքով անցնելիս հատուկենտ մարդ էի նկատել, իսկ կացարանում ընդամենը երկու տարեցներ էին։ Կալանավայրը դատարկ էր, որովհետեւ բնակիչները գտնվում էին աշխատանքային գոտում։ Անմիջապես դռան կողքի մահճակալի մոտ մեկը նստած՝ ցածրիկ պահարանին դրված գիրքն էր կարդում։ Նա, թվում էր, ոչ միայն ինձ, այլեւ շրջապատում կատարվող ոչինչ չէր նկատում։ Իսկ մյուս տարեցը՝ պարանով ծոծրակին կապած ջրասույզի ակնոց հիշեցնող, ապակիների փոխարեն երկու փոքրիկ՝ մոտ 6-7 մմ-անոց ու տարօրինակ անցքերով ակնոցով քայլում էր սրահի երկայնքով ու քայլքին համաչափ թափահարում ձեռքի պլաստմասե ամանը։ Զարմանալի տեսարան էր։ Հսկիչի հեռանալուց հետո երկրորդ տարեցը, ամանը թափահարելով, անշտապ մոտեցավ ինձ ու հարցրեց.

-Грузин?

Ասացի՝ հայ եմ։

-Կարագ եմ սարքում, կուզե՞ս, - ձեռքի ամանը ցույց տալով ասաց նա։

Տարեց ու հիվանդ մարդկանց մի կես լիտր կաթ էին տալիս։ Ծերուկն էլ որոշել էր այդ կաթից կարագ ստանալ։

Սկսեց հարցուփորձ անել։ Վրացի էր։ Նրա ռուսերենը վարժ էր ու զուրկ վրացական առոգանությունից։ Զրուցակիցս քաղաքական կալանավայրերի հնաբնակ բատոնո Վասոն էր՝ Վասո Ելիզբարաշվիլին։

Բատոնո Վասո

Այսպես էինք դիմում նրան։ Ծնվել էր 1890-ականներին։ 20-րդ դարի ամենամեծ իրադարձությունների ականատեսն էր եղել։ Արդեն հասուն տարիքում տեսել էր առաջին համաշխարհային պատերազմը, բոլշեւիկյան հեղափոխությունը, կարմիր տեռորը, ստալինյան շրջանի բռնությունները, որոնք շրջանցել էին նրան, ապա, որպես քիմիկոս, երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ զորակոչվել էր ծառայելու քիմիական զորքերում ու շատերի նման գերի էր ընկել։ Ընդունել էր գերմանացիների համագործակցության առաջարկը։ Ծառայել էր Գերմանիայում, Իտալիայում ու Ֆրանսիայում։ Պատերազմի ավարտից հետո հաստատվել էր Ֆրանսիայում։ Ֆրանսերենին տիրապետում էր վարժ։ Իր ասելով՝ խոսում էր նաեւ ոչ այնքան բավարար իտալերեն։ 1960-ական թվականների վերջին ծանոթ ֆրանսաբնակ մի վրացի տեղեկացնում է Վասոյին, որ

Խորհրդային Վրաստանում բնակվող նրա հարազատները փնտրում են իրեն, ու ցույց է տալիս թերթում տպագրված հայտարարությունը: Բատոնո Վասոն միամիտ չէր, գիտեր, որ խորհրդային երկրում իրեն դատ ու պատժաչափ է սպասվում: Կապվում է հարազատների հետ, հայտնում է իր մտահոգությունը: Հարազատներն էլ ժամանակ անց տեղեկացնում են, որ ճշտել են բոլոր կառույցներում, դրանց թվում՝ եւ ՊԱԿ-ում, վտանգ բացարձակապես չկա: Եւ, ինչպես ինքը՝ բատոնո Վասոն էր ասում, որոշում է գալ ու հայրենիքում մեռնել: Այդ շրջանում նա արդեն հատել էր 75-ի շեմը: ազատազրկման:

-Վճռել էի 75-ն անց հայրենիքում մեռնել, - ասում էր արդեն 90-ի շեմը հատող կենսուրախ ծերունին, - բայց խորհրդային իշխանություններն իրենց վճռով պարտավորեցրին ինձ՝ եւս 15 տարի ապրել: Իսկ ո՞վ եմ ես, որ չենթարկվեմ: Պարտավոր եմ ու պետք է ապրեմ:

Նրա ազատ արձակվելուն մի քանի տարի էր մնում: Դեռ Մորդովիայում եղած ժամանակ նրա տեսողությունը սկսել էր վատանալ: Յուրօրինակ ու ինքնաշեն ակնոցի նեղ անցքերի միջով դժվարությամբ էր տեսնել կարողանում: Ուներ կյանքի հսկայական փորձ ու խորաթափանցություն: Ի տարբերություն պատերազմի շատ հանցագործների, որոնք համագործակցում էին կալանավայրի ադմինիստրացիայի հետ, նա կասկածից դուրս էր: Գրեթե կույր լինելով հանդերձ՝ շատ բան էր նկատում:

Մի անգամ քայլում ու զրուցում էի ոչ այնքան լավ համբավ ունեցող մեկի հետ: Զրույցի ավարտից հետո, երբ մոտեցա կացարանի մուտքի դռանը կանգնած բատոնո Վասոյին՝ բռնեց ձեռքս.

-Ինչու՞ էիր քայլում նրա հետ:

-Բատոնո Վասո, բա ասում ես՝ կույր ես ու երկու մետրից այն կողմ ոչինչ չես տեսնում:

-Այո, կույր եմ, բայց կարեւոր բաները տեսնում եմ: Քո կարգի մարդը նրա հետ չպետք է առնչվի: Էլ չքայլես նրա հետ :

Երբ արդեն մի քիչ հարմարվել էի կալանավայրին, նրան ասացի, որ ցանկանում եմ կատարելագործել ռուսերենս ու խնդրեցի խորհուրդ տա, թե ում դիմեմ, որ ինձ համար լավ ուսուցիչ լինի:

-Ոչ մեկին: Սկսիր Տոլստոյ կարդալ: Ավելի լավ ուսուցիչ չես գտնի: Անհասկանալի բաները հարցրու առաջին պատահածին:

Այդպես էլ արեցի:

Բատոնո Վասոն կատարեց իր խոստումը: Նստեց իր 15 տարին, ապա իրեն դիմավորելու եկած 60-65-ամյա որդու ուղեկցությամբ Վրաստան գնաց, ապրեց եւս մի քանի տարի ու թաղվեց, ինչպես եւ որոշել էր, իր հայրենիքում: Նրա ազատ արձակվելու ժամանակ ես արդեն այդ կալանավայրում չէի: Վասո Ելիզբարաշվիլու պատմության հաղթական վերջաբանին տեղեկացել եմ շատ ավելի ուշ՝ իմ ազատ արձակվելուց հետո:

Հավատացյալ Գաջիեւը

Մյուս տարեցը Գաջիեւն էր։ Ինքն էլ էր պատերազմի հանցագործ։ Գերի էր ընկել ու համագործակցել ֆաշիստների հետ։ Հավատացյալ մուսուլման էր, Հյուսիսային Կովկասից։ Ապրում էր կալանավայրի կյանքից կտրված՝ ինքն իր հետ։ Օրերով կամ շաբաթներով որեւէ մեկի հետ կարող էր խոսք անգամ չփոխանակել։ Նրա մասնակցությամբ ամենաերկար խոսակցությունը կես րոպեից ավելի տեւել չէր կարող։ Օրը հինգ անգամ, ինչպես պահանջում են մուսուլմանական կանոնները, կացարանի երկրորդ հարկ տանող աստիճանների տակ, որպեսզի ոչ իրեն խանգարեն, եւ ոչ էլ ինքը որեւէ մեկի խանգարի, դեմքը դեպի Մեքքա ուղղած, որտեղ սրբազան Կաբան է, կատարում էր իր նամազը։ Ողջ օրվա ընթացքում մահճակալի մոտ նստած Ղուրան էր կարդում։ Եթե ինչ-որ պատճառով դուրս էր գալիս կացարանից, Ղուրանը բացված վիճակում թողնում էր պահարանին։ Ղուրանն անչափ հետաքրքրում էր ինձ։ Մոտենում ու նայում էի։ Օտար ու անհասկանալի տառերը ձգում էին ինձ։ Մեկ անգամ նույնիսկ, երբ կացարանում մենակ էի, ու ոչ ոք չէր կարող նկատել, շոշափեցի էջը։ Այնպիսի տպավորություն էր, թե էջը խորդուբորդություններ պետք է ունենա, եւ ես մատներիս ծայրով կզգամ դա, բայց սովորական էջ էր։ Շատ ավելի ուշ, ազատ արձակվելուց հետո, գնել եմ Ղուրանի տարբեր հրատարակություններ, դրանք հիմա էլ շարված են իմ պահարանում, կարդացել ու համեմատել եմ իրար հետ, բայց միստիկական այն զգացումը, որ կար կալանավայրում, ու թվում էր, թե պետք է ունենամ՝ չի եղել։ Զարմանալի է, քրիստոնեական հավատի ներկայացուցիչներից Աստվածաշունչը, հղում անելով 1929 թ. ինչ-որ կարգի վրա, առգրավում էին։ Թույլ չէին տալիս ունենալ։ Ուղղափառ եկեղեցու սպասավոր, մոսկովյան հայտնի այլախոհ Գլեբ Յակունինը Աստվածաշունչը հետ ստանալու համար անգամ երկարատեւ հացադուլ հայտարարեց, բայց նույնիսկ այդ հացադուլի շրջանում Ղուրանը Գաջիեւից վերցնելու փորձ չարվեց։ Այդ ընթացքում Աստվածաշունչ կար նաեւ հիսունական հայտնի գործիչ Նիկոլայ Գորետոյի մոտ։ Սա խոսում է այն մասին, որ կալանավայրը սպասարկող չեկիստների, կալանավայրի ղեկավարության, ընդհանրապես սովետների համար կարեւոր էր ոչ թե սկզբունքը, այլ ընտրողական մոտեցումը։ Նրանք խնդիր ունեին պատժելու այլախոհ ու կալանավայրում իր եւ այլոց իրավունքների համար պայքարող Գլեբ Յակունինին ու պատժում էին՝ առանց ամաչելու անգամ, որ հղում են անում 1929 թ. ինչ-որ մոռացված ու վաղուց արդեն չգործող կարգի վրա։ Երբ վերեւներից հանձնարարվեց Աստվածաշունչը վերադարձնել Գլեբին, նրանք արագ մոռացան 1929-ի կարգը։

Դուրս եկա կալանավայրի տարածք։ Վերջին 15 ամիսներն՝ սկսած հաուպտվախտից, անցել էին նեղ ու փնթի խցերում, եւ կալանավայրի տարածքն ինձ չափազանց մեծ էր թվում։ Փոքրիկ պտույտ արեցի։ Հանդիպեցի այլ տարեցների, որոնք հիվանդության ու տարիքի պատճառով աշխատանքային գոտում չեն լինում ու ողջ օրը բնակելի տարածքում են։ Բոլորի պատժաչափերն էլ 15 տարի է կամ այդ սահմաններում։ Ոմանք պատերազմի հանցագործներ են՝ գերի են ընկել ու համագործակցել ֆաշիստների հետ, ոմանք էլ անտառային եղբայրներ են։ Եթե պատերազմի հանցագործ կոչվածների մեծամասնության մասին դրական խոսք ասելը դժվար է՝ ծառայել էին կոմունիստներին, ապա՝ ֆաշիստներին ու նույն եռանդով էլ ծառայում էին կալանավայրի ղեկավարությանը, իրար հերթ չտալով շտապում էին իրենց տեսածն ու լսածը տեղ հասցնել, ապա անտառային եղբայրների մասին միայն դրվատանքի խոսք պետք է ասվի։ Սրանք մարդիկ էին՝ հիմնականում մերձբալթյան հանրապետություններից, որոնք զենքը ձեռքներին կռվել էին նահանջող գերմանական զորքերից հետո իրենց հայրենիքը օկուպացրած խորհրդային զորքերի դեմ։ Անտառային եղբայրներ էին կոչվում, քանի որ նրանց պարտիզանական ջոկատներն անտառներում էին կենտրոնացված։ Անտառային եղբայրների ցանկում առանձին պետք է ընդգծվեն ուկրաինացիները։ Նրանք կռվել էին իրենց հայրենիքն օկուպացրած ֆաշիստների, ապա՝ նրանց տեղը զբաղեցրած խորհրդային զորքերի դեմ եւ հպարտորեն էլ շարունակում էին կրել իրենց ազատազրկումը։ Սրանց ե՛ւ ֆաշիստներն էին հալածել, գնդակահարել ու դատապարտել, ե՛ւ կոմունիստներն էին շարունակում հալածել, գնդակահարել ու դատապարտել։ Ընդ որում՝ նույն մեղադրանքով։ Նրանց մեջ կային 25 տարվա ազատազրկման դատապարտվածներ։ Զարմանալի կարող է թվալ, քանի որ այդ շրջանում առավելագույն պատժաչափը 15 տարին էր, բայց ուկրաինացիների չգնդակահարված հատվածին ժամանակին՝ 1950-ականներին եւ 1960-ականների առաջին տարիներին դատապարտել էին 25 տարվա ազատազրկման, այնուհետեւ՝ օրենսգրքի փոփոխությունից հետո, ի տարբերություն 25 տարի դատապարտված հազարավոր կալանավորների, սրանցից ոմանց պատժաչափերը չէին վերանայել եւ առավելագույնը 15 տարի պատժաչափ նախատեսող օրենսդրության պարագայում այս մարդիկ շարունակում էին 25 տարի նստել։

Երեկոյան կողմ աշխատանքային գոտուց եկան մյուս կալանավորները։ Իմ մասին արդեն գիտեին։ Նախ՝ այստեղ գտնվող Անատոլի Կորյագինն էր պատմել, որի հետ հանդիպել էինք էտապում, ապա՝ պատժիչ մեկուսարանի տարածքում մեր մեկ շաբաթ տեւող կարանտինում լինելուց էին տեղյակ ու սպասում էին։ Թեյ պատրաստեցին, ու ոչ մեծ խմբով իրար գլխի հավաքվեցինք։ Ես պատմեցի իմ մասին, իմ քրեական գործից, իմ ընկերներից, մեր արկածներով լեցուն էտապից ու ծանոթացա նրանց հետ։

Քաղաքական կալանավայրում մարդիկ նստած էին լինում տարաբնույթ հոդվածներով, բայց այդ բոլոր հոդվածներն էլ Խորհրդային միության քրեական օրենսգրքի «պետական հանցագործություններ» բաժնից էին։ Մեծամասնությունը «հայրենիքի դավաճանություն» կամ «լրտեսություն» հոդվածներով դատապարտվածներ էին, ապա՝ ինչպես ես, հակասովետական ագիտացիայի ու պրոպագանդայի համար դատապարտվածներ։ Խորհրդային Ռուսաստանի քրեական օրենսգրքով դա 70-րդ հոդվածն էր, որը համապատասխանում էր խորհրդային Հայաստանի 65-րդ հոդվածին։ Այս հոդվածով դատապարտվածները մաքուր քաղաքական բանտարկյալներն են, ու նրանք են կալանավայրում համապատասխան եղանակ ստեղծում։

Բայց պարտադիր պետք է շեշտել, որ «հայրենիքի դավաճանություն» կամ «լրտեսություն» հոդվածներով դատապարտվածներից ոմանք այնպիսի կեցվածք էին դրսեւորում կալանավայրում, որ 70 հոդվածով դատապարտված շատերից ավելի ակտիվ, ավելի ամուր ու ավելի «այլախոհ» էին: Այդպիսին էր, օրինակ, 37-րդ կալանավայրում Նիկոլայ Իվլյուշկինը: Հետագայում, իր ակտիվության ու անզիջում կեցվածքի պատճառով, նրան Չիստոպոլի բանտ տարան: Այդպիսին էր Նորիկ Գրիգորյանը: Օրինակները քիչ չեն: Էլ չասեմ, որ շատ մաքուր այլախոհների «հակախորհրդային ագիտացիա ու պրոպագանդա» հոդվածով դատապարտելու փոխարեն սովետները հայրենիքի դավաճանության (ՌՍՖՍՀ քր. օր. 64) հոդվածով էին դատապարտում: Հայրենիքի դավաճանության հոդվածով դատապարտված Լատվիայի սոցիալ-դեմոկրատական կուսակցության ղեկավար Յորիս Բումեյստերի մասին արդեն գրել եմ: Իսկ հայտնի խորհրդային այլախոհ Նաթան Շարանսկին դատապարտվել էր միաժամանակ ե՛ւ 64 (դավաճանություն) եւ 65 (լրտեսություն) հոդվածներով: Նաեւ «հայրենիքի դավաճանություն» հոդվածով էին դատապարտվում ուկրաինացի եւ մերձբալթյան անտառային եղբայրները՝ այն դեպքում, երբ Խորհրդային միությունը նրանց հայրենիքը չէր եղել:

Քաղբանտարկյալների համար նախատեսված կալանավայրերում միայն պատահաբար կարող էին քրեական հանցագործներ հայտնվել, կամ էլ՝ նրանց կանխամտածված պետք է բերեին այնտեղ: Նրանց այստեղ էին բերում կալանավայրի անդորրը խախտելու ու որպես անթաքույց ու բացահայտ սադրիչ օգտագործելու նպատակով: Սրանք, որպես կանոն, քրեական աշխարհում ընդունված կանոնները խախտելու համար յուրայինների կողմից ծանրագույն պատժի դատապարտված մարդիկ էին, որոնց, վերահաս պատժից փախցնելով քաղաքական կալանավայր, չեկիստները փրկում էին: Փրկության դիմաց սրանք պատրաստ էին կատարել ցանկացած հանձնարարություն: Կարող էին հանձնարարությամբ դանակահարել մարդուն, կարող էին նախահարձակ լինել, կռիվ սարքել, որի հետեւանքով, պարզ է՝ պատժիչ մեկուսարան էր գնալու նա, ում վրա սա հարձակվել էր, կարող էին շաբաթներով կամ անգամ ամիսներով ողջ կալանավայրը լարվածության մեջ պահել: Սրանք սովորական գործակալներից ու սադրիչներից տարբերվում էին իրենց անթաքույցությամբ: Ամեն ինչ պատրաստ էին անել բացահայտ ու ցուցադրաբար: 37-րդ կալանավայրում նման դերակատարում էր տրվել Մոնղոլ մականունով մեկին: Նրան կարելի էր ամեն ինչ: Մոնղոլն ազատ էր իր գործողություններում: Չեկիստները կամ կալանավայրի ղեկավարությունը մատնացույց էին անում թիրախը, եւ սա գործի էր անցնում: Հիմնականում մտավորականներից ու քրեական պատկերացումներից հեռու գտնվող մարդկանց միջավայրում իրեն զգում էր ինչպես ձուկը ջրում: Նա հաճույքով էր անում իր գործը: Բայց սրա խոփն էլ քարին առավ, երբ 37-ի փոքր կալանավայր, որտեղ Մոնղոլն էր, բերեցին Մարզպետին: Առաջին իսկ ընդհարման ժամանակ Երեւանի Բութանիա թաղամասում մեծացած Մարզպետը, չնայած իր վիճակին, ոչ միայն ինչպես հարկն է դիմադրել էր, այլ նաեւ մետաղյա ձող էր վերցրել՝ հասկացնելով, որ Մոնղոլի կյանքն էլ կարող է վտանգվել: Մոնղոլի համար սա առաջին դեպքն էր ու անակնկալ էր: Ի՞նչ իմանա, թե ինչ կարող է անել Մարզպետը, երբ ինքը, ասենք, քնած լինի: Լուրջ վախեցել էր: 37-ի մեծ կալանավայրում գտնվողներս արդեն տեղյակ էինք Մոնղոլի ու Մարզպետի ընդհարումից: Մոնղոլը ժամանակ առ ժամանակ մեր կալանավայր էլ էր գալիս: Նրա տարաբնույթ պարտականություններից մեկն էլ արտաքնոցում քլոր լցնելն էր: Մարզպետի հետ ընդհարումից կարճ ժամանակ անց, երբ մեր կալանավայր եկավ ու քլոր շաղ տալու նպատակով արտաքնոց մտավ, ես ասացի

Իվան Իզվեկովին, որ Մարզպետի արածը պետք է բազմապատկել՝ Մոնղոլին սարսափի մատնելու համար։ Բահը ձեռքիս, որով այդ պահին աշխատում էի՝ ինչ-որ նպատակով մեզ հանձնարարել էին փոս փորել, նրա հետեւից աննկատ արտաքնոց մտա ու դուռը ծածկեցի.

-Մարզպետի հետ խնդիրներ ունե՞ս, Մոնղոլ, - ձայնիս վրա շուռ եկավ ու, բահը տեսնելով, կարկամեց։ Սկսեց արդարանալ ու բացատրել, որ Մարզպետի հետ երբեւէ խնդիրներ չի ունենալու, ապա սարսափած դուրս թռավ զուգարանից ու արագ հեռացավ։ Իզվեկովը ծիծաղում էր.

-Ну, армяне, вы даете!

Մենք սպասում էինք, որ այդ արարքիս համար ինձ պատժիչ մեկուսարան են տանելու։ Բայց Մոնղոլն այնքան էր վախեցել, որ որոշել էր դրա մասին հսկիչներին չասել։ Իսկ Մարզպետի հետ Մոնղոլը մեկ անգամ էլ միջադեպ ունեցավ։ Հայտնի չէր՝ կալանավայրի ադմինիստրացիայի ցուցումո՞վ, թե այլ հանգամանքների բերումով։ Բայց այդ միջադեպի համար ե՛ւ Մարզպետին, ե՛ւ Մոնղոլին պատժիչ մեկուսարան էին բերել, որտեղ ինչ-որ պատճառով գտնվում էի նաեւ ես։ Երեքս էլ տարբեր խցերում էինք։ Իմ ու Մարզպետի խցերը միջանցքի ձախ կողմում էին, իսկ Մոնղոլինը՝ աջ։ Զայրացած Մարզպետն իր խցի դռան մոտ կանգնած հայհոյում էր Մոնղոլին, իսկ Մոնղոլն ինձ էր դիմում, որ Մարզպետին զսպեմ։ Ծիծաղելի իրավիճակ էր։ Դերերը լրիվ փոխվել էին։ Լրտեսության համար դատապարտված Ալեքսանդր Նիլովը, որ ականատես էր եղել նրանց այս ընդհարմանը, դեպքից շատ ավելի ուշ՝ 35-րդ կալանավայրում ինձ պատմում էր, թե ինչպես էր հյուծված ու փոքրամարմին Մարզպետը ոչ միայն կարողացել կասեցնել Մոնղոլի հարձակումը, այլեւ փայտից ինչ-որ մահակով, թե ջարդած աթոռի ոտքով փախուստի էր մատնել նրան։

Յուրաքանչյուր քաղաքական կալանավայր ուներ իր մեկ կամ երկու գիժն ու բացահայտ սադրիչը, որոնք դեպքից դեպք, համապատասխան ցուցում ստանալուց հետո, գործի էին անցնում։ Գիժ կոչվածները կարող էին նաեւ առանց ցուցումի՝ սեփական նախաձեռնությամբ, լարվածություն առաջացնել կալանավայրի կյանքի մեջ։ Բայց այս կարգի միջադեպերը կալանավայրի բնական ընթացքի վրա բեկումնային ազդեցություն չէին ունենում։ Ինչ-որ ժամանակահատված տեւող լարվածությանը հաջորդում էր բնականոն ընթացքը։ Այնտեղ, որպես կանոն, կայացած, սեփական համոզմունքների տեր, կիրթ ու գրագետ մարդիկ էին լինում։ Այսպիսի միջավայրում կարելի էր միայն սովորել ու սովորել։ Այնտեղ գաղափարների կամ աշխարհընկալման տարբերությունների բախման փողոցային դրսեւորումները սակավաթիվ էին։ Ի սկզբանե ընդունվում էր, որ յուրաքանչյուրն իրավունք ունի ունենալու իր համոզմունքները, եւ դրանց պետք է հարգանքով վերաբերվել։ Ասվածից չպետք է բխի, թե խնդիրներ չէին ծագում։ Լինում էին օրեր տեւող քննարկումներ ու սուր վեճեր։ Տարիների պարտադրված համակեցությունը դեպքից դեպք կարող էր հանգեցնել նաեւ անցանկալի դրսեւորումների։ Բայց, որպես կանոն, առանց ավելորդ բարդությունների կարողանում էին կողք-կողքի ապրել, անգամ ընկերություն անել հիսունականն ու ուղղափառ եկեղեցու հետեւորդը, կաթոլիկն ու բողոքականը, ազգայնականն ու կոսմոպոլիտը, դեմոկրատն ու մոնարխիստը։ Սա վառ ապացույցն է այն բանի, որ ինչքան բարձր է մարդկանց կրթական ցենզը, ինչքան լայն է մարդկանց մտահորիզոնը, եւ ինչքան կայացած են մարդիկ, այնքան հանդուրժող է նման մարդկանցից բաղկացած հասարակությունը։

Տեսեք, թե ինչքան բարդ է այսօր մեր կյանքը։ Արդեն 25 տարուց ավելի է հայտարարել ենք, որ ժողովրդավարական հասարակարգ ենք ստեղծում, իսկ հասարակական փոխհարաբերություններում, մարդ-պետություն, մարդ-հասարակություն փոխհարաբերություններում մնացել ենք նույն խորհրդային մակարդակի վրա։ Առանձին դեպքերում անգամ հետընթաց ունենք։ Հասարակական համակեցության մոդել մշակելիս, առաջին հերթին, շեշտը պետք է դրվի մարդու կրթական ցենզի ու մտահորիզոնի ընդլայնման վրա։ Մարդը պետք է խորապես ընկալի իր իրավունքները եւ հավատա, որ ինքն անձամբ լրջագույն արժեք է, ապա պետք է իմանա, որ դիմացինը նույնպես օժտված է այդ իրավունքներով, եւ որ իր իրավունքները սահմանափակվում են այնտեղ, որտեղից սկսվում են դիմացինի իրավունքները։ Սա չպետք է լինի պարզ իմացություն, պետք է համոզմունք լինի, դառնա աշխարհընկալում։ Պետք է ուսուցանվի մանկապարտեզից ու դպրոցից սկսած։ Իսկ մեր դպրոցներում գուցե շատ բան կա, բայց չկա քաղաքացի կերտելու ավանդույթ։

37-րդ մեծ կալանավայրը, որը գտնվում էր Պերմի մարզի Չուսովոյի շրջանի Պոլովինկա ավանում, մարդաշատ չէր։ 20-30 կալանավորներ էին։ Սրանից պակաս կալանավորներ կային նույն 37-ի փոքր կալանավայրում։ Երկու կալանավայրերում եղած կալանավորների թիվը 50-ի սահմանին չէր հասնում։ 35 եւ 36-րդ կալանավայրերը շատ ավելի մեծ էին ու ավելի մարդաշատ։ Բայց ինչ էլ լինի, քաղաքական կալանավայրերը քրեականներից անհամեմատ սակավամարդ էին։ Քրեական կալանավայրերում 2-3 հազար կամ ավելի կալանավորներ էին լինում։ Քաղաքական կալանավայրերի սակավամարդությունը նպաստում էր, որ կալանավայրը լինի կոկիկ ու մաքուր։ Քիչ թվով մարդկանց պարագայում շատ ավելի հեշտ է հետեւել հիգիենայի պահանջներին։ 37-ի մեծ կալանավայրը, փաստորեն, իմ առաջին կալանավայրն էր եւ հաջորդներից շատ ավելի հստակ է տպավորվել հիշողությանս մեջ։ Ի սկզբանե այս կալանավայրը քաղաքական կալանավայրերից ամենապասիվն է եղել։ Ակտիվ կալանավորներ չի ունեցել։ Բողոքի ակցիաներ չեն եղել։ Եթե 35 կամ 36-րդ կալանավայրում որեւէ ակտիվ կալանավորի մեկուսացնելու խնդիր է ծագել, բայց բանտ տանելը դեռ վաղ են համարել, ապա նրան 37-րդ են տեղափոխել, որտեղ նա՝ պասիվ կալանավորներով շրջապատված, ուղղակի ձանձրացել է։ Բայց 1980 թ. սկսած՝ կամաց-կամաց այս կալանավայր են սկսում բերել մարդկանց, որոնք, իրար գլխի հավաքվելով, սկսում են փոխել կալանավայրի կյանքը։ 1981-ից այնտեղ արդեն մեկ տասնյակից ավելի ակտիվ կալանավորներ էին հավաքվել։ Եթե հաշվի առնենք, որ կալանավայրում մի 20-25 մարդ էր, որոնց նշանակալի մասը ծերունիներ էին, պարզ է դառնում, որ կալանավայրը որակական լուրջ փոփոխության էր ենթարկվել։ Իսկ ակտիվ կալանավոր նշանակում էր մարդ, որը, սպասվող պատիժներից ու հետապնդումներից անկախ, պատրաստ էր պաշտպանել իր եւ մյուսների իրավունքները ու չէր կարող գլուխը կախ, լռությամբ անցնել կամայականությունների ու անարդարությունների կողքով։

37 համարի տակ գտնվող մեծ եւ փոքր կալանավայրերն ունեին ընդհանուր պատժիչ մեկուսարան եւ ընդհանուր աշխատանքային գոտի, որտեղ այս երկու կալանավայրերի կալանավորներն աշխատում էին հերթափոխով։ Ըստ էության, ժամանակին սա եղել է մեկ ընդհանուր կալանավայր, բայց քաղաքական կալանավորներին իրարից էլ ավելի մեկուսացած պահելու, ինչ-ինչ օպերատիվ խնդիրներ լուծելու եւ մարդկանց կյանքն առավել բարդացնելու նպատակով 1978-ին կալանավայրը բաժանել էին երկու ոչ հավասար մասերի։ Աշխատանքային գոտու միջոցով երկու կալանավայրերն իրար հետ գաղտնի կապ էին

պահպանում։ Ես ու մոսկովյան հայտնի այլախոհ, Մոսկվայի հելսինկյան խմբի ղեկավար, ֆիզիկոս, Հայաստանի ակադեմիայի թղթակից անդամ՝ 37-րդ փոքր գաղութում գտնվող Յուրի Օրլովը խառատ էինք եւ հերթափոխով աշխատում էինք նույն հաստոցի վրա։ Օրլովը եւ Մարզպետը շատ էին մտերմացել։ Նրանց մտերմությունը շարունակվեց նաեւ ազատ արձակվելուց հետո՝ ԱՄՆ-ում։ Մեր հաստոցի վրա թաքստոց էինք սարքել, ու այդ կապով երկու գաղութների միջեւ ակտիվ նամակագրություն էր ընթանում։

Քաղաքական կալանավայրերի պատմության մեջ ահագին շատ են հիշարժան դեմքերն ու դրվագները։ Դրվագներ ու պատմություններ, որ նորեկներին պատմում են հնաբնակները, պատմություններ, որ հիշվում են ու հետագայում դառնում հուշագրությունների նյութ։ Այս կարգի պատմությունների շարքին կարելի է դասել Նորիկ Գրիգորյանի պատմությունը։ Սա երեւի առաջին հետաքրքիր պատմությունն էր, որ պատմեցին ինձ։ Նորիկը լրտեսության համար էր դատապարտվել։

Նորիկ Գրիգորյան

Նորիկի հայրը եղել էր Խորհրդային Հայաստանի գյուղատնտեսության նախարարության բարձրաստիճան պաշտոնյա եւ ուղղափառ կոմունիստ։ Նախարարությունում, ինչպես որ մշտապես է լինում, հսկայական յուրացումներ են բացահայտվում, ու այդ ամենը ջարդում են յուրացումների հետ կապ չունեցած Նորիկի հոր վրա։ Նորիկն այդ շրջանում աշխատում է Պետական անվտանգության կոմիտեում։ Իր հնարավորություններով ու կապերով պարզում է, որ հայրն, իրոք, մեղավոր չէ, այնուհետեւ սկսում է զբաղվել անմեղ հոր գործի վերանայմամբ։ Արագ հասկանում է, որ Հայաստանում արդարության չի հասնի, որ բոլորն էլ գիտեն՝ իր հայրը մեղավոր չէ, բայց մեկը պետք է դատվի, որ գործը փակեն, ու այդ մեկը Նորիկի հայրն է։ Գնում է Մոսկվա։ Հանդիպում է տարբեր բարձրաստիճան պաշտոնյաների ու ՊԱԿ-ի գեներալների հետ, պատմում է հոր պատմությունը եւ հասկանում, որ այստեղ էլ գործի վերաբացմամբ շահագրգռված չեն։ Բախվելով խորհրդային իրականությանն ու հուսահատվելով՝ որոշում է վրեժխնդիր լինել։ Աշխատանքի բերումով նա պետք է հետեւեր ամերիկյան մի հետախույզի, որն աշխատում էր ԽՍՀՄ-ում եւ այդ շրջանում այցելել էր Երեւան։ Հենց այդ հետախույզի հետ էլ կապվում է ու սկսում աշխատել ԱՄՆ Կենտրոնական հետախուզական վարչության (ԿՀՎ) համար։ Պետք է վրեժ լուծել Խորհրդային միությունից։ Սա էր նրա նշանաբանը նաեւ կալանավայրում։ 1975 թ. Նորիկը կալանավորվում ու դատապարտվում է 12 տարվա ազատազրկման, որի առաջին 3 տարիները պետք է գտնվեր բանտային ռեժիմում՝ Վլադիմիրի բանտում։

Հետաքրքիր է, բայց Նորիկի կալանավորումից հետո խորհրդային համապատասխան կառույցները սկսում են ուսումնասիրել Նորիկի հոր գործը եւ պարզում են, որ նա իրոք անմեղ է ու ազատ են արձակում։ Փաստորեն Նորիկը հասնում է հոր գործի վերանայմանը, բայց չափազանց թանկ գնով։ Իր կալանավորման ու դատապարտման եւ հոր գործի մասին մի երկու տարի առաջ նա հուշագրություն է գրել ու հրապարակել։ Ցանկացողները կարող են գտնել ու կարդալ։ Վստահեցնում եմ, որ շատ հետաքրքիր ընթերցանություն է լինելու։

1978 թ.բանտային ռեժիմի ավարտից հետո նրան բերում են 37-րդ կալանավայր: Դեռ Վլադիմիրի բանտում ՊԱԿ-ի աշխատակիցներն անընդհատ փորձում են Նորիկին համոզել, որ համաձայնի՝ որպես նախկին կոլեգա, կալանավայրում շարունակել իրենց համար աշխատել, ինչից Նորիկը կտրականապես հրաժարվում է: 37-ում այս փորձերը շարունակվում են: Չեկիստի հետ ունեցած հերթական զրույցից վերադառնալիս Նորիկը նկատում է, որ դեպի կալանավայրի անցումային կետ են ուղեկցում Սլավիկ Կուզնեցովին: Որոշ ժամանակ այնտեղ մնալուց հետո Սլավիկը վերադառնում է կալանավայր, մոտենում է Նորիկին ու սկսում զրուցել նրա հետ՝ տալով այնպիսի հարցեր, որոնք Նորիկին կասկածելի են թվում: Նորիկը մի կողմ է տանում Սլավիկին, հանում է նրա վրայից բուշլատը, խուզարկում է ու հայտնաբերում հաղորդիչով միկրոֆոն: Սլավիկը, բնականաբար, փաստի առաջ է կանգնում: Ստիպված պատմում է Նորիկին, որ աշխատում է չեկիստների համար: Նորիկն էլ իր հերթին հասկանում է, որ եկել է պահը, որը ճիշտ օգտագործելով մեկընդմիշտ վերջ կտա իրեն հավաքագրելու չեկիստների փորձերին եւ առաջարկում է Սլավիկին՝ պատմել իր պատմությունը հավաքված կալանավորների ներկայությամբ: Ստանալով ընկճված Սլավիկի համաձայնությունը՝ Նորիկը հավաքում է քիչ թե շատ ակտիվ կալանավորներին, ու Սլավիկը բոլորի ներկայությամբ պատմում է, թե ինչպես են իրեն հավաքագրել, թե ինչպես է մատնությամբ զբաղվել, ասում է, որ զղջում է ու էլ երբեք նման բան չի անի:

Ամենայն հավանականությամբ մթնոլորտը տրամադրող է եղել: Սլավիկի պատմությունը լսելուց հետո ոտքի է կանգնել մի պետերբուրգցի եւ հայտարարել, որ ինքը նույնպես հավաքագրված է եղել, եւ իրեն միշտ էլ ցավ է պատճառել այդ հանգամանքը, բայց հետ կանգնելու հնարավորություն չի տեսել, իսկ հիմա, Սլավիկի պատմությունը լսելուց հետո, հասկանում է, որ նման հնարավորություն կա: Զարմանալի կարող է թվալ, բայց ոտքի է կանգնում երրորդը ու մոտավորապես նույն միտքն է շարադրում: Կալանավայրը սպասարկող ՊԱԿ-ի աշխատակցի համար սրանից ավելի մեծ տապալում պատկերացնել հնարավոր չէ: Նորիկի ձեռքում է գտնվում գաղտնալսող սարքը, հետն էլ՝ երեք գործակալներ միաժամանակ հրապարակավ հայտարարում են, որ գործակալ են եղել ու այլեւս չեն լինելու: Չեկիստը նախ խնդրում է Նորիկին, որ սարքն անվնաս վերադարձնի: Նորիկը, բնականաբար, տալիս է: Որպես պատիժ Նորիկին պատժախուց են տանում, ապա տեղափոխում են 36-րդ կալանավայր: Ինքնախոստովանությամբ հանդես եկածները պահեցին իրենց խոսքը եւ լավ կալանավորներ դարձան, իսկ Սլավիկին ավելի ուշ Մորդովիա տեղափոխեցին:

Նորիկն ավարտեց իր 12 տարին որպես մաքուր ու չափազանց ակտիվ կալանավոր: Ամեն տարի իր կալանավորման օրը նա ԽՍՀՄ գերագույն խորհրդի նախագահություն խորհրդային քաղաքացիությունից հրաժարվելու դիմում էր գրում: Սա իր մտածած բողոքի ձեւերից մեկն էր: Մասնակցում էր կազմակերպված բոլոր ակցիաներին: Մոտ երկու տարի անց ես Նորիկի հետ հանդիպեցի 35-րդ կալանավայրում, որտեղ շատ լավ բարեկամներ դարձանք, ապա՝ միասին ենք եղել 36-րդում: 1990-ական թվականներին նա հաջողեցրեց երեք տարի էլ ամերիկյան բանտում նստել: Այսօր նա ապրում է Երեւանում: Նորիկ Գրիգորյանի կյանքն անչափ հետաքրքիր պատմություն է եւ մարտաֆիլմի լավ սցենար կարող էր լինել:

Վիտալի Շեւչենկո

Պան Վիտալի, այսպես էինք դիմում նրան։ Ծնվել է 1934-ին։ Լրագրող էր, 1956-ին ավարտել է Կիեւի համալսարանի լրագրության ֆակուլտետը։ 1974-ին, երբ հերթական անգամ կալանավորվում է «Ուկրաինական նորություններ» (Український вісник) հանդեսի խմբագիր Վյաչեսլավ Չերնովոլը, հանդեսի պատրաստման ու հրապարակման աշխատանքները վերսկսում է Ստեփան Խմարան։ Ավելի ուշ Խմարային են միանում ազգանվանակիցներ Օլես եւ Վիտալի Շեւչենկոները։ Պան Վիտալին իր խառնվածքով պայքարող չէր, նա մտածող էր, ազատ մտածող։ Նրա էությանը հարազատ չէր կալանավայրի բողոքի ակցիաներին մասնակցելը, ադմինիստրացիայի հետ կռիվ տալը, պատժիչ մեկուսարան գնալը, բայց ազնվագույն մարդ լինելով՝ վայելում էր բոլորիս սերն ու հարգանքը։ Օգնում էր պատժիչ մեկուսարան ընկածներին, իր ուտելիքից անպայման բաժին էր հանում, որ մեկուսարանից վերադարձածները շուտ կազդուրվեն։ Գաղտնապահ էր ու վստահելի։ Աներեւակայելիորեն «հարմարեցված» չէր կյանքի մատուցած դժվարություններին։ Նրա իսկական տեղը խմբագրության իր սենյակն էր, բայց ոչ երբեք՝ կալանավայրը։

-Պան Վիտալի, եթե ձեզ մի ամբողջ պարկ պահածոներով ու պահածոյի բացիչով թողնեն անմարդաբնակ կղզում, դուք սովից կմահանաք, որովհետեւ տուփերը բացել չեք կարողանալու, - կատակում էինք մենք։

-Դե, ի՞նչ արած, - մեղավոր ժպտում էր ու շփում ափերը, - ես էլ այսպիսին եմ։

Օրվա բոլոր ազատ ժամերին, եթե տաք էր՝ դրսում, եթե ցուրտ էր՝ ներսում նստած կարդում էր։

-Պան Վիտալի, տարին քանի՞ անգամ կարող եք Իվան Ֆրանկո կարդալ։

-Ամիսը մեկ, սիրելի Վարդան, ամիսը մեկ, ուրիշ ի՞նչ կարելի է անել այստեղ։

1992 կամ 93 թվականն էր։ Ինչ-որ գործով Կիեւում էի։ Մեր վերջին հանդիպումից 10 տարի էր անցել։ Զանգահարեցի.

-Պան Վիտալի, բարի օր, ինչպե՞ս եք։

Անմիջապես.

-Վարդան, թանկագինս, որտե՞ղ ես։

-Պան Վիտալի, Կիեւում եմ, «Ուկրաինա» հյուրանոցում, քաղաքը լավ չգիտեմ, հանդիպելու համար դուք պետք է գաք։

-Չէ, չէ, դու ես գալու, եւ՝ իմ տուն։ Դու այսօր իմ հյուրն ես։

-Պան Վիտալի, հյուրանոցում բոլոր պայմանները կան, չէի ցանկանա…

-Ոչ մի խոսք, սպասում եմ։

Ու բացատրեց, թե ինչպես եւ որտեղ ենք հանդիպելու։ Ամբողջ օրն իր բնակարանում զրուցեցինք։ Շատ ուշ էր արդեն, երեւի լուսադեմին պառկեցինք քնելու։ Առավոտյան դուրս եկանք։ Ես՝ հյուրանոց, իսկ նա՝ աշխատանքի։ «Մեր հավատը» ուղղափառ հանդեսի պատասխանատու քարտուղարն էր։ Մետրո մտնելուն պես պայուսակից մի գիրք հանեց։

-Պան Վիտալի, էլի՞։

Մեղավոր ժպտաց.

-Չէ, դու դուրս կգաս, նոր կսկսեմ կարդալ։ Բա ի՞նչ անեմ, ճանապարհս երկար է։

Մահացավ Պան Վիտալին 2012-ին։

Երբ գրում եմ «դատապարտվել է լրտեսության համար», ընթերցողները կինոներից ու համապատասխան գրականությունից տպավորված՝ իրենց երեւակայած լրտեսին են երեւի պատկերացնում։ Կային, իհարկե, լուրջ լրտեսներ։ Մարդիկ, որ աշխատել էին խորհրդային հետախուզական կառույցներում, ապա՝ տարբեր պատճառներով սկսել էին համագործակցել ԱՄՆ կամ որեւէ այլ երկրի հետախուզության հետ։ Ոմանք, ինչպես Նորիկը, կալանավորվել էին, իսկ ոմանք էլ, ովքեր հասցրել էին փախչել ու այլ երկրներում հայտնվել, որպես կանոն, խաբելով, տարատեսակ խոստումներով ու հետախուզություններում ընդունված այլ հնարքներով, եթե սովետները կարողանում էին վերադարձնել, ապա վերադարձնում ու դատապարտում էին։ Շատ հաճախ լրտեսները հայրենիքի դավաճանության մեղադրանքով գնդակահարվում էին, իսկ նրանք, ովքեր լուրջ ու արժեքավոր տեղեկությունների կրող էին՝ կարողանում էին այդ տեղեկությունների դիմաց փրկել իրենց կյանքը։ Ոմանք համաձայնում էին որոշ ժամանակ երկակի խաղ խաղալ ու ապատեղեկատվություն փոխանցելով խաճել ու մոլորեցնել հակառակորդին։ Սա նույնպես կարող էր կյանքը փրկելու բավարար պայման լինել։ Օրինակ, Նորիկ Գրիգորյանն այսկերպ էր խուսափել գնդակահարությունից։ Այս կամ նման կերպ էին խուսափել նաեւ մյուս հետախույզները։

Նման լուրջ դեպքերը շատ չէին։ Շատ ավելի հաճախ հանդիպող դեպքեր էին, երբ որեւէ լուրջ բան չարած երիտասարդները սարքված գործերի հետեւանքով էին լրտեսության մեղադրանքով հայտնվում կալանավայրում։ Ասենք, երիտասարդն աշխատում է որեւէ փակ կամ գաղտնիություն պարունակող գործարանում եւ մտմտում է իր իմացած տեղեկությունները վաճառել որեւէ հետախուզության։ Որպես կանոն, գաղտնի տեղեկություններ հավաքելու ամենասկզբնական փուլում հատուկ ծառայությունները երիտասարդին վերցնում են իրենց հսկողության տակ։ Դա հեշտ է արվում։ Նախ՝ շուրջբոլորը մատնիչներ են, ապա՝ անմիջապես նկատվում է, որ այսինչը կամ այնինչը հետաքրքրվում կամ ուսումնասիրում է մի բան, ինչը չի մտնում իր աշխատանքային պարտականությունների մեջ։ Եւ արտասահմանյան հետախույզ փնտրող երիտասարդի հանդիպումն են կազմակերպում ֆրանսերեն կամ անգլերեն խոսող խորհրդային հակահետախույզի հետ։ Այնուհետեւ կալանավորում են միամիտին ու տալիս, որպես կանոն, 12 տարի։ Չգիտեմ, թե ինչու, բայց այս գործերով ամենատարածված պատժաչափը 10-12 տարին էր։ Ճիշտ այսպես էր կալանավորվել Յուրա Սուգուչովը։ Նա հանդիպել էր ֆրանսերեն խոսող «մսյո Ժակի» հետ, եւ այդ հանդիպումը 12 տարի էր արժեցել։ Իհարկե, խորհրդային ծառայությունները կարող էին կանխել այս «հանցագործությունները»։ Կարող էին Յուրային կամ Յուրայի պես նման ծրագրեր մտմտացող բազմաթիվ Յուրաների զրույցի հրավիրել, բացատրել, որ այդպես չի կարելի, հարկ եղած դեպքում մի քանի տարի կարող էին պահել նրան իրենց հսկողության տակ ու սահմանափակվել այսքանով։ Արդյունքում այդքան շատ երիտասարդներ այդչափ երկար ժամանակով կալանավայրերում չէին հայտնվի։ Բայց այս դեպքում սովետը սովետ չէր լինի։ Ողջ նպատակը մարդկանց դատելը եւ պատժելն էր։ Իսկ այս չկայացած լրտեսներին բացահայտած ու կալանավորած աշխատակիցները, բնականաբար, կոչումներ ու պարգեւներ էին ստանում եւ իրենց հանճարեղ հակահետախույզներ էին երեւակայում։

Նիկոլայ Իվլյուշկին

Լրտեսության համար էր դատապարտվել նաեւ Նիկոլայ Իվլյուշկինը՝ իմ ընկեր Կոլյան։ Բանակում ծառայող երիտասարդին մեղադրել էին, ինչպես գրված էր դատավճռում՝ արտասահմանյան հետախուզություններից մեկին փոխանցելու մտադրությամբ տեղեկություններ հավաքելու համար։ Մեղադրանքի համար որպես հիմք էին հանդիսացել տեխնիկայի նկատմամբ նրա ունեցած հետաքրքրությունը, տնից ուղարկած արտասահմանյան սիգարետները, հնդկական թեյը եւ Անգլիայի կոմունիստական կուսակցության «Morning Star» պաշտոնաթերթը, որը ժամանակ առ ժամանակ ծնողները ուղարկել են նրան, որպեսզի բանակում ծառայելու ընթացքում անգլերենը չմոռանա։ 1976-1978 թթ. խորհրդային բանակում Կոլյայից ավելի կասկածելի երիտասարդ քիչ կգտնվեր։ Լրտեսի իսկական թեկնածու։ Անգլերեն է սովորում, ծխում է «Մալբորո», հետաքրքրվում է, թե ինչպես է աշխատում տեխնիկան, որին երկու տարի պետք է առնչվի, սուրճ ու հնդկական թեյ է խմում։ Ծառայակիցներն անընդհատ մատնագրեր են գրել նրա վրա, դրանք ի հայտ են եկել նախաքննության ընթացքում եւ դրվել են մեղադրանքի հիմքում, իսկ նա նույն այդ ծառայակիցներին մշտապես հյուրասիրել է տնից ստացած ծխախոտով, սուրճով ու հնդկական թեյով։ Թեյը խմել են, զրուցել, կատակել ու ծիծաղել են, ապա՝ իրարից առանձին նստել ու Կոլյայի վրա գրել են իրենց մատնագրերը։ Այդպես էլ քննությունը չի կարողացել պարզել, թե Կոլյան ում էր փոխանցելու հավաքած տեղեկությունները։ Երեւի իրենք էլ են հասկանում, որ գործը լուրջ չէ, ու Կոլյային 12-ի փոխարեն 6 տարի են տալիս, որից երկուսը պետք է կրեր բանտային ռեժիմում։ Կոլյայի հետ միասին դատել էին նաեւ նրա երկու ընկերներին՝ Անդրեյ Բոգինին, որը 37-ի փոքր կալանավայրում էր, եւ 35-ում գտնվող Վոլոդյա Բոգաչովին։ Իր երկու տարին բանտում կրելուց հետո՝ 1981-ի հունվարին Կոլյային 37-րդ կալանավայր էին բերել։ Առաջ անցնելով ասեմ, որ դեռ սովետների օրոք՝ 1989-90-ին այս քրեական գործը համարվել է հանցակազմ չպարունակող, եւ Նիկոլայ Իվլյուշկինն ու գործով անցնող Բոգինն ու Բոգաչովն արդարացվել են։ Բայց մինչեւ այս արդարացումը Կոլյան կալանավայրի ամենաակտիվ դատապարտյալներից էր։ Մասնակցում էր բողոքի բոլոր ակցիաներին։ Չէր վախենում ոչ պատժիչ մեկուսարանից եւ ոչ էլ գաղութային բանտից, որ խցային տիպի կացարան է կոչվում՝ ПКТ (Помещение камерного типа), որտեղ կալանավայրի ղեկավարության որոշմամբ մինչեւ 6 ամիս ժամկետով կարող էին մարդուն փակել։ 1982-ի դեկտեմբերին նրա ռեժիմը կրկին խստացրեցին ու Չիստոպոլի բանտ տեղափոխեցին։ 1984-ի դեկտեմբերին նա պետք է ազատ արձակվեր, բայց ազատ արձակվելուց 4 ամիս առաջ՝ օգոստոսին, նրան կրկին դատապարտում են, այս անգամ արդեն 3 տարի ժամանակով 188-3 հոդվածով՝ ուղղիչ-աշխատանքային հիմնարկության ղեկավարության պահանջները չարամտորեն չկատարելու համար։ Քրեական օրենսգրքում այս հոդվածը ներառվել էր 1983-ին, երբ խորհրդային երկրի ղեկավարն Անդրոպովն էր։ Կալանավայրի ղեկավարության պահանջները չկատարելը, կալանավայրում խախտումներ թույլ տալը 1983-ից սկսեցին դիտարկել որպես քրեական հանցագործություն, եւ չնայած այն հանգամանքին, որ նույն գործողությունների համար մարդուն արդեն պատժիչ մեկուսարան էին նստեցրել, զրկել էին տեսակցություններից ու տվել հնարավոր բոլոր պատիժները՝ պատժաչափի ավարտից հետո նրան կարող էին կալանավայրի ադմինիստրացիայի տված տեղեկանքի հիման վրա եւս երեք տարով ազատազրկել։ Այս հոդվածն ուժի մեջ մտնելու պահից սկսեց քաղբանտարկյալների նկատմամբ կիրառվել։ Սա, անկասկած, հենց քաղբանտարկյալների համար էլ նախատեսվել էր։ Սովետները երեւի մտածել են, որ նման հոդվածի պարագայում մեծ աղմուկի առիթ

հանդիսացող շինծու գործեր սարքելու կարիք արդեն շատ չի լինի։ Մինչեւ 1986-ի փետրվարը Կոլյան մնում է Արխանգելսկի մարզի կալանավայրում։ Գորբաչովյան պերեստրոյկայի շրջանում նրա այս դատավճիռը վերացվում է։ 1976 թվականին երկու տարով բանակային ծառայության մեկնած Կոլյան 10 տարի անց տուն է վերադառնում։

37-րդում ակտիվ էր նաեւ 1958-ին ծնված Իվան Իզվեկովը։ Ծննդյան օրվա կապակցությամբ ԽՍՀՄ պաշտպանության նախարար Ուստինովին Խորհրդային միության հերոսի հերթական կոչումն էին տվել։ Իր հայրենի քաղաք Կույբիշեւում տեղադրված նրա կիսանդրու պատվանդանին ծաղիկներ են։ Իսկ լուսադեմին քաղաքն արթնանում է հզոր պայթյունի ձայնից։ Պայթեցրել են Ուստինովի կիսանդրին։ Պայթյունի ալիքը սխալ էր հաշվարկվել, եւ վայր ընկնելու փոխարեն՝ կիսանդրին 45 աստիճանով պտտվել էր իր առանցքի շուրջը։ Դժվար չէ պատկերացնել, թե ինչ կարգի սրամտությունների ու զվարճանքի առիթ կարող էր դառնալ այս հանգամանքը։ Երբ քաղաքի բնակիչները պառկում են քնելու, կիսանդրին դեպի արեւելք էր նայում, արթնացան՝ արդեն հայացքը դեպի հարավ էր ուղղել։ Այդպես էլ գրել էին Վանյայի մեղադրականում. «Պայթյունի հետեւանքով Խորհրդային միության քաղբյուրոյի անդամներից մեկի կիսանդրին պտտվել էր իր առանցքի շուրջը 45 աստիճանով»։ Իվանը պատկանում էր այն մարդկանց թվին, որոնք առանց աջակցության՝ մենակ մնալով, շատ արագ գլուխները կորցնում են։ Շատ կան նման մարդիկ։ Երբ դեպքերն այնպես զարգացան կալանավայրում, որ մեզ սկսեցին ցրել տարբեր տեղեր, Վանյային տարան 37-ից։ Մի կարճ ժամանակ նա մենակ մնաց։ Թե ինչ էր կատարվել նրա հետ այդ ընթացքում, հայտնի չէ։ Երբ ինձ տեղափոխեցին 35-րդ կալանավայր՝ առաջին ուրախությունս այն էր, որ այնտեղ է Վանյան։ Բայց շատ շուտ պարզվեց, որ նա այլեւս իմ իմացած Իվանը չէ։ Ջարդված ու հուսահատ սովորական կալանավոր էր, եւ ես հարաբերություններս խզեցի նրա հետ։ Ազատ արձակվելուց հետո նա վերադարձել էր իր հայրենի քաղաք Սամարա, որտեղ էլ, ցավոք, վախճանվել է։

Անատոլի Կորյագին

Արդեն գրել եմ՝ էտապի ժամանակ հանդիպեցինք Անատոլի Կորյագինին։ Նա առաջին բժիշկն էր, որ հետազոտեց Մարզպետին։ Կորյագինը հոգեբույժ էր։ Խորհրդային տարիներին հատուկ ծառայությունները հաճախ էին այլախոհներին հոգեբուժարան տեղափոխում։ Խորհրդային երկրում համոզմունք կար, որ հոգեպես առողջ մարդը չի կարող դեմ լինել խորհրդային կարգերին։ Հոգեբուժարաններում էին գտնվում հազարավոր հայտնի եւ անհայտ գործիչներ։ Հայաստանում երկու անգամ հոգեբուժարանում փակել են հայտնի այլախոհ ու լեզվաբան Էդմոնդ Ավետյանին։ Մարզպետ Հարությունյանն է 1969-ին հոգեբուժարան տեղափոխվել։ Հոգեբուժարանում էր եղել հետագայում Հայաստանի հելսինկյան խմբի անդամ Սիրվարդ Ավագյանը։ Ողջ խորհրդային երկրում էր կիրառվում այս մեթոդը։ Հոգեբուժարաններում մեկուսացված այլախոհներին ենթարկում էին հարկադիր բուժման՝ ներարկելով նրանց այնպիսի դեղամիջոցներ, որոնց հետեւանքով լիովին առողջ մարդը լուրջ հիվանդի էր վերածվում։ Հոգեբույժները հլու-հնազանդ տալիս էին բժշկական այն եզրակացությունները, որպիսիք նրանցից պահանջում էր պետանվտանգության կոմիտեն։ Բայց պատահում էին նաեւ ազնիվ բժիշկներ, որոնք, վտանգելով իրենց կարիերան, անգամ՝ ազատությունը,

հրաժարվում էին առողջ մարդու պարագայում տալ պահանջվող կեղծ եզրակացությունը։ Այս կարգի բժիշկների թվին էր պատկանում Անատոլի Կորյագինը։ Նա ծնվել էր 1938-ին եւ աշխատում էր Խարկովում։ Չեկիստները նրանից պահանջում են, որպեսզի այլախոհ Ալեքսեյ Նիկիտինի վերաբերյալ տա այնպիսի եզրակացություն, որը հիմք կդառնա երկար ժամանակով հոգեբուժարանում նրան մեկուսացնելու համար։ Հետազոտելով Նիկիտինին՝ Կորյագինը պարզում է, որ նա առողջ է, եւ հրաժարվում է կեղծ եզրակացություն տալուց։ Ավելին, հրապարակում է իր եզրակացությունը՝ մարդն առողջ է։ Այս փաստը հրապարակում են արտասահմանյան լրատվամիջոցները։ Կորյագինը գրում ու հրապարակման նպատակով արեւմուտք է ուղարկում «Հարկադրված հիվանդներ» վերնագրով հոդվածը։

1981 թ. փետրվարին, «հակախորհրդային ագիտացիա եւ պրոպագանդա» մեղադրանքով նա կալանավորվում է ու դատապարտվում հոդվածով նախատեսված առավելագույն պատժաչափի՝ 7 տարի ազատազրկման եւ 5 տարի աքսորի։

Կալանավայրում եղած շրջանում Հոգեբույժների համաշխարհային ասոցիացիան Կորյագինին պատվավոր անդամ ընտրեց։ Նրա պաշտպանությամբ, ի թիվս միջազգային իրավապաշտպանական կառույցների, զբաղվում էին նաեւ ամերիկյան, նորվեգական, շվեդական, ֆրանսիական հոգեբույժների ասոցիացիաները։ 1982 թ. ամռանը կալանավայրում ծավալված բողոքի ակցիաների ամենաեռուն շրջանում նրա ռեժիմը խստացվեց, եւ Չիստոպոլի բանտ տեղափոխեցին։ 1987-ին ազատ արձակվեց եւ տեղափոխվեց Շվեյցարիա։ 1995-ին Ռուսաստան է տեղափոխվել, որտեղ էլ ապրում է այսօր։

Գլեբ Յակունին

Գլեբ Պավլովիչ Յակունինը ծնվել էր 1934 թվականին։ Նա ուղղափառ եկեղեցու սպասավոր էր եւ մեր կալանավայրի ամենահայտնի քաղբանտարկյալը։ Եկեղեցական էր դարձել ուղղափառ հոգեւորական, աստվածաբան ու քարոզիչ Ալեքսանդր Մենի (1935-1990) ազդեցության տակ։ Իր այլախոհական գործունեությունը սկսել էր 1960-ականներից։ Զբաղվել է հավատացյալների իրավունքների պաշտպանությամբ։ Բողոքել է եկեղեցու նկատմամբ պետության ոտնձգությունների դեմ։ 1979-ին կալանավորվում ու հակախորհրդայի ագիտացիայի ու պրոպագանդայի համար դատապարտվում է 5 տարի ազատազրկման ու 5 տարի աքսորի։ Նրա աքսորը Յակուտիայում էր, իսկ իմը՝ Մագադանում։ Հեռավոր Արեւելյան տարածությունները՝ այնտեղ 1000 կիլոմետրը թիվ չէ, մեզ իրար հարեւան համարելու իրավունք էին տալիս։ Մի օր նամակ ստացա Յակուտիայի Ինիկչան տարօրինակ անվամբ ավանից։ Նամակը Գլեբ Պավլովիչից էր։ Մոսկվայի իր կապերով պարզել էր, թե որտեղ եմ գտնվում, ու նամակ էր գրել։ Պատասխանեցի ու խնդրեցի, որ ինձ Ավետարան ուղարկի։ Իր հանձնարարությամբ Մոսկվայից ինձ ուղարկեցին իմ առաջին Աստվածաշունչը։ 1986 թվականն էր։ Մեր ավանի կոմունիստական կուսակցության քարտուղարը (երեւի փոստի աշխատակիցներից էր իմացել), երեկոյան ուշ եկավ ինձ մոտ եւ խնդրեց, որ կարճ ժամանակով Աստվածաշունչը տամ իրեն՝ կարդալու։ Կոմունիստների հավատացյալ դառնալու գործընթացն էր սկսվում։ Տվեցի։

Գլեբ Պավլովիչն աներեւակայելի անմիջական, զգացմունքային ու ինչ-որ չափով միամիտ մարդ էր։ Ինձ համար հանգիստ քայլում եմ։ Ու հանկարծ ինձ ընդառաջ է վազում նա ու գրկում է.

-Վարդան, Վարդան, շնորհավորում եմ, շուտով ազատ ենք արձակվելու։

Զարմացած եմ։ Պարզվում է՝ մահացել է Բրեժնեւը, եւ մեր սիրելի Գլեբ Պավլովիչը որոշել է՝ վերջ, սրանով սովետներն ավարտվեցին։ Չնայած՝ ինչ-որ իմաստով նա ճիշտ դուրս եկավ։ Բրեժնեւի մահը սկիզբ դրեց առաջին քարտուղարների իրար հաջորդող մահերին, Գորբաչովի գալուն ու սովետի մայրամուտին։

1987 թ. նա ազատ արձակվեց։ Իմ պատժաչափն ավարտվում էր 1988-ին, ու հենց 88-ին էլ ազատվեցի։ Մոսկվայում էի։ Հանդիպում էի ընկերներիս։ Պարույրը կրկին կալանավորված էր ու փորձում էի նրա պաշտպանության միջազգային կոմիտե ստեղծել։ Մի երկու օրվա ընթացքում կոմիտեն ստեղծվեց ու հայտարարություն տարածեց։ Մոսկվայում ԱՄՆ-ի դեսպանատունը հրավեր էր կազմակերպել։ 3-4 նախկին քաղբանտարկյալների թվում նաեւ ինձ էին հրավիրել։ Հենց հատեցի դեսպանատան մուտքը, մեկն ինձ գրկեց։ Գլեբ Յակունինն էր։

-Կեցցեք դուք՝ հայերդ, վստահ էի, որ վաղաժամ ազատ արձակվելու համար դիմում չես գրի։

Միամիտ Գլեբը չգիտեր, որ ինձանից բացի՝ կալանավայրում եղած մյուս հայերը խորհրդային իշխանություններին ուղղված դիմում-խնդրագրեր վաղուց գրել ու ազատ են արձակվել։

Ավելի ուշ նա Ռուսաստանի պետական դումայի պատգամավոր էր։

1991-ին, թե 92-ին Մոսկվայում էի։ Զանգահարեցի։

-Տեղդ ասա, մեքենայով եմ, գալիս եմ քո հետեւից։ Մեր տուն ենք գնալու։

Նստեցինք, գինի խմեցինք, զրուցեցինք ու բաժանվեցինք։ 1990-ականների առաջին տարիներին ղարաբաղյան հակամարտության հետեւանքով գերության մեջ գտնվող մարդկանց փոխանակման ու հումանիտար այլ խնդիրների հետ կապված՝ ադրբեջանցի հասարակական գործիչներին հանդիպելու նպատակով հաճախ էի լինում Մոսկվայում ու Գլեբ Պավլովիչին նույնպես տեսնում էի։

1993-ին կամ 94-ին Թբիլիսիում կոնֆերանս էր։ Հայաստանից այնտեղ էինք մեկնել ես ու Ազատ Արշակյանը։ Ռուսաստանից եկել էին Գլեբ Յակունինը եւ հայտնի իրավապաշտպան Վալերի Բորշչովը։ Կոնֆերանսից հետո միասին Երեւան եկանք։ Ձմեռ էր։ Դիլիջանով անցնելիս հիացած նայում ու կրկնում էր.

-Աստված իմ, Յակուտիան, իմ Յակուտիան, ի՜նչ նման է Յակուտիային։

«Ով լսել է Արեւելքի կանչը՝ չի մոռանա այն երբեք». իր սիրած Արեւելքի մասին գրում է Քիփլինգն իր բանաստեղծություններից մեկում։ Հեռավոր Արեւելքի մասին նույնը կարելի է

ասել։ Ով տեսել է աշխարհի այդ հատվածի յուրահատուկ գեղեցկությունը՝ չսիրահարվել ու չկարոտել չի կարող։

2014 թ. դեկտեմբերին 80-ամյա Գլեբ Պավլովիչը վախճանվեց։

Մարկ Մորոզով

Մարկ Արոնի Մորոզովը հրեա մաթեմատիկոս էր, գիտությունների թեկնածու։ Այս մարդուն մեծ փորձություն էր բաժին հասել, եւ նա այդ բեռը չէր կարողանում տանել։ Ինքն էր երեւի, իր ուժերը հաշվի չառնելով, նման ծանրություն առել ուսերին։ Փոքրամարմին, հիվանդ ու աներեւակայելի հյուծված այս մարդը ծնվել էր 1931-ին։ Եղել էր խոստումնալից գիտնական, բայց ինչ-որ պահից՝ դժգոհելով երկրում առկա իրավիճակից, սկսել էր ինքնահրատ մամուլ հայթայթել, կարդալ ու տարածել։ 1975-76 թթ. Մարկ Մորոզովը Մոսկվայում ակտիվ գործունեություն է ծավալում։ Բնական է, որ հայտնվում է ՊԱԿ-ի ուշադրության կենտրոնում։ ՊԱԿ-ն էլ 5-րդ վարչության իր աշխատակից Վիկտոր Օրեխովին հանձնարարում է վարել Մորոզովի գործը եւ փորձել հավաքագրել նրան։ Օրեխովն աշխատանքի բերումով այլախոհների հետ շատ էր առնչվում, ու նրան հետաքրքրում էր, թե հանուն ինչի՞ են այսքան հաջողակ մարդիկ հրաժարվում կարիերայից, հանգիստ կյանքից, անգամ՝ ազատությունից։ Աշխատանքի բերումով կարող էր նաեւ ինքնահրատ մամուլ կարդալ։ Շատ բան գիտեր ու տեղյակ էր ՊԱԿ-ի կազմակերպած սադրանքներից։ Մի խոսքով, չեկիստի մեջ սկսում է հասունանալ ՄԱՐԴԸ։ Այլախոհական շրջանակներից միակ մարդը, որին կարող էր հանդիպել Օրեխովը՝ առանց ղեկավարությանը որեւէ բացատրություն տալու, Մորոզովն էր։ Ղեկավարությունն ինքն էր հանձնարարել Մորոզովի հետ մշտական կապ պահպանել։ Ու Մորոզովի միջոցով էլ նա սկսում է սպասվող խուզարկությունների ու ձերբակալությունների մասին տեղեկություններ փոխանցել այլախոհներին։ ՊԱԿ-ը, իհարկե, ինչ-որ պահից սկսում է կռահել, որ արտահոսք կա, բայց աղբյուրը բացահայտել չեն կարողանում։ 1978-ի նոյեմբերին կալանավորվում է Մարկ Մորոզովը։ Բոլորը չեն, որ պատրաստ են կալանավորման։ Ոչ բոլորն են իրենց կալանավորումը որպես իրենց գործունեության բնական շարունակություն ու հետեւանք դիտարկում։ Լինում են մարդիկ, որոնց համար կալանավորումը, ինչքան էլ որ հավանական համարվի, ամեն ինչի ավարտ ու ամեն ինչի վերջ է թվում։ Այս կարգի մարդիկ անմիջապես կոտրվում են։ Նրանք կորցնում են զգաստ դատելու եւ իրենց ու դիմացինի վարքը ճիշտ գնահատելու կարողությունը։ Մոլորվում ու կամազրկվում են։ Ահա այսպես էր իր առաջին կալանավորումն ընկալել Մորոզովը։ Նա իսպառ կորցրել էր պաշտպանվելու ու դիմադրելու ունակությունը ու տվել պահանջվող ցանկացած ցուցմունք եւ՝ բոլորի մասին։ Այդ թվում, բնականաբար՝ նաեւ Օրեխովի։ Զինվորական տրիբունալն Օրեխովին դատապարտում է 9 տարի ազատազրկման։ Ողջ պատժաչափը կրելուց հետո նա ազատ է արձակվում 1987-ին, իսկ 1990-ականներին մեկնում է ԱՄՆ՝ մշտական բնակության։ Մորոզովը դատապարտվում է 5 տարվա աքսորի։ Աքսորավայրը Վորկուտան էր։ Աքսորավայրում նա սթափվում է եւ սկսում գնահատել իր վարքագիծը։ Սարսափում է իր արածից, հայտարարում է, որ զղջում է նախաքննության ու դատավարության ընթացքում ցուցաբերած թուլակամության համար ու

կրկին սկսում է ինքնահրատ մամուլ տարածել։ 1980-ին կալանավորվում, իսկ 1981-ին դատապարտվում է նույն 70-րդ հոդվածի արդեն 2-րդ մասով՝ 8 տարի ազատազրկում եւ 5 տարի աքսոր։

Կալանավայրում, իհարկե, գիտեինք նրա պատմությունը։ Այս հանգամանքը Մորոզովի հետ շփումներում իր զսպող դերը խաղում էր, բայց աշխատում էինք դաժան չլինել ու ավելորդ հարցեր չտալ։ Մարդը, վերջին հաշվով, ինքն էր իր արարքի գնահատականը տվել ու, որ ամենակարեւորն է՝ հիվանդ վիճակով հսկայական պատժաչափ էր շալակել։ Նա ամեն կերպ փորձում ու ցանկանում էր ընդգրկվել կալանավայրում գործող դիմադրության, կալանավայր-ադմինիստրացիա հակամարտության մեջ, գնում էր հարաբերությունների սրման ու բարդություններ էր ունենում։ Ժամանակ անց նրան տեղափոխեցին։

Երբ արդեն 35-րդ կալանավայրում էի, կրկին հանդիպեցի նրան։ Մորոզովի վարքագծում շատ բան, ըստ էության, չէր փոխվել։ Նույն լարված հարաբերություններն էին ադմինիստրացիայի հետ։ Նույն ոչ շատ բարեկամական, բայց նաեւ ոչ թշնամական փոխհարաբերություններն էին կարգին դատապարտյալների հետ։ Ի տարբերություն 37-րդ կալանավայրի՝ այստեղ ադմինիստրացիայի հալածանքն անթաքույց էր նրա նկատմամբ։ Հիվանդություններն էլ ավելի էին հյուծել նրան, իսկ ճնշումները մեղմանալու միտում չէին ցուցաբերում։ Հաճախ առանց որեւէ լուրջ պատճառի պատժիչ մեկուսարան էին տանում։ Իրենց գործակալների միջոցով փորձում էին նրա՝ առանց դրա էլ դառը կյանքն էլ ավելի դառնացնել։ Հուսահատությունից հաճախ էր հացադուլի դիմում։ Մեր հորդորները՝ խնայել իրեն եւ ոչ այնքան կարեւոր պատճառներով հակամարտության չդիմել, հացադուլ չանել, նա ընդունում էր, բայց այդ խորհրդին հետեւել չէր կարողանում։ Խառնվածքը թույլ չէր տալիս։ Ուկրաինացի հայտնի այլախոհ Ստեփան Խմարան մասնագիտությամբ ստոմատոլոգ էր։ Ես ու Ստեփանը քայլում ենք։ Մեզ է մոտենում Մորոզովը.

-Ստեփան, ատամս ցավում է, կնայե՞ս։

Ստեփանն արեւի լույսի օգնությամբ նայում է ու հուսահատ ասում.

-Մարկ Արոնովիչ, քո բերանում ընդամենը 5-6 ատամ է մնացել, բոլորն էլ՝ հեռացման ենթակա։ Այստեղ նայելու բան չկա։

Մարոզովը գլխիկոր կանգնած է։

-Մարկ Արոնովիչ, բա ինչպե՞ս ես ուտել կարողանում։

-Է, Վարդան, ես նմա՞ն եմ մարդու, որն ուտում է։

Մի անգամ ինչ-որ պատճառով կրկին ընդհարվեց ադմինիստրացիայի հետ։ Անասելի վրդովված էր։ Իսկ նրանք կանխամտածված դիտողություններով ու կոպիտ արտահայտություններով սադրում ու էլ ավելի էին գրգռում նրան։ Զայրացած ու հունից վերջնականապես դուրս եկած Մորոզովն ինչ-որ սուր բանով կտրեց երակը։ Նրա ու հսկիչների վեճի ժամանակ արդեն մոտեցել էի ու երակը կտրելու պահը տեսա։ Արագ մոտենալ ու կանխել չհաջողվեց։ Նրան հունից հանած հսկիչները լուռ հեռացան։ Վստահ էի՝

բժշկի հետեւից։ Փորձում էի փաթաթել ձեռքը, բայց թույլ չէր տալիս։ Գիտեի՝ դեպքը մահացու լինել չի կարող, բայց պետք էր դադարեցնել արյունահոսությունը, իսկ Մորոզովը թույլ չէր տալիս։ Նրա դիմադրությունը կարող էր միայն արյունահոսության ավելացման պատճառ դառնալ, եւ ես որոշեցի կապելու փորձերից հրաժարվել։ Իմ հաշվարկով՝ արյունը շուտով պետք է մակարդվեր, բայց շարունակում էր դանդաղ հոսել ու չէր մակարդվում, իսկ բժիշկը չկար։ Մեկը վազեց հսկիչների ու բժշկի հետեւից, ապա վերադարձավ ու ասաց, որ կալանավայրի անցակետի մոտ կանգնած զրուցում, ծիծաղում ու բժշկին են սպասում, հենց տեղ հասնի՝ կգան։ Մորոզովն արդեն թուլանում էր։ Գլուխը կախվեց կրծքին, եւ նա դանդաղ թեքվեց դեպի բարձը։ Վերջապես եկավ բժիշկ կոչվածը, եւ Մորոզովին դրեցին պատգարակի վրա։ Չգիտեմ, թե ինչ էր զգում Մորոզովն այդ պահին, բայց աչքերը բացելով ու տեսնելով, որ իր կողքով քայլում եմ, թույլ շշնջաց.

-Վարդան, ես հեռանում եմ։

Նա, իհարկե՝ չհեռացավ։ Ապաքինվեց, ու ամեն ինչ շարունակվեց այնպես, ինչպես որ էր։ Աներեւակայելի դաժան էին խորհրդային չեկիստները։ Չգիտեմ, նրանց այսօրվա իրավահաջորդներն ինչպիսին են, բայց սրանց դաժանությունը շատ հաճախ ոչ մի բացատրություն չուներ։ Ինքնանպատակ դաժանություն էր։ Վրեժից դրդված՝ վճռել էին դանդաղ՝ տարիներ շարունակ տանջել Մորոզովին՝ մինչեւ մեռնի։ Դա անում էին բացահայտ, եւ որեւէ մեկը դրա դեմն առնել չէր կարող։ Մորոզովի կյանքը մի աներեւակայելի մղձավանջ էր, բայց նա չէր խոսում իր անձնական խնդիրներից ու չէր բողոքում իր ծանր կյանքից։ Երեւի ոչ ոք չի կարող ասել, թե ինչ ապրումներ ուներ նա։

Հաճախ էի փորձում զրուցել նրա հետ։ Վստահ էի՝ չպետք է մենակ զգա իրեն։ Մանկան պես ուրախանում էր, երբ ասում էի.

-Քայլենք, Մարկ Արոնովիչ, բան ունեմ ասելու։

Ավելի ուշ խստացրին նրա ռեժիմը, եւ այդ հիվանդ ու հյուծված մարդուն, որն առանց ձեռնափայտի քայլել չէր կարողանում, տառապում էր ողնաշարի ցավերից, մարդուն, որն ուտել անգամ չէր կարող, տեղափոխեցին Չիստոպոլի բանտ, որտեղ էլ 1986-ի օգոստոսին վախճանվեց։

Թող ոչ ոք դատավոր չերեւակայի իրեն։ Ո՞վ կարող է համադրել նրա սխալը եւ այդ սխալի հետեւանքով նրա կրած տառապանքը։ Եւ համադրելի՞ են արդյոք։ Եթե յուրաքանչյուրը պետք է վճարի իր սխալի համար, ապա Մարկ Արոնի Մորոզովն ավելի քան վճարել է։ Թող հանգստանա նրան հոգին, ինչպես որ 1986-ի օգոստոսին հանգստացավ նրա հիվանդություններով ու ցավերով լեցուն մարմինը։

Արկադի Ցուրկով

Արկադի Ցուրկովը՝ մեր Արկաշան, Լենինգրադից էր։ Մարքսիստ էր։ Ավելի ճիշտ, մարքսիստ էր մինչեւ կալանավորվելը։ Եղել էր մարքսիստական խմբակի անդամ։ Երբ 2007-ին հանդիպեցի նրան Երուսաղեմում, արդեն կիպայով հավատացյալ հրեա էր ու մաթեմատիկա էր դասավանդում Իսրայելի համալսարաններից մեկում։ Արկադին ծնվել էր 1958-ին։ 1978-ին կալանավորվել, ապա դատապարտվել էր հակախորհրդային ագիտացիայի եւ պրոպագանդայի համար՝ 5 տարի ազատազրկում եւ 2 տարի աքսոր։ Քաղաքական կալանավայրերում կային մարքսիստներ, կոմունիստներ եւ ձախ շարժումների այլ ներկայացուցիչներ։ Սրանք մարդիկ էին, որ հավատում էին կոմունիստական գաղափարախոսությանը եւ համարում էին, որ խորհրդային իշխանությունները դավաճանել են իրական մարքսիզմին ու լենինիզմին եւ գնում են բոլորովին այլ ուղղությամբ։ Ընդհանրապես Խորհրդային միությունում շատ կային մառիստական, տրոցկիստական ու նման այլ գաղափարներով տարվածներ։ Կազմակերպում էին ընդհատակյա կազմակերպություններ, տարածում թռուցիկներ ու այլ կարգի գրականություն։ Սրանց նկատմամբ՝ չնայած այն հանգամանքին, որ գաղափարական հակառակորդներ չէին, խորհրդային իշխանությունները պակաս դաժան չէին վարվում։ 36-րդ կալանավայրում էր գտնվում սամարացի խառատ, 1943-ին ծնված Գրիգորի Իսաեւը։ Հավատավոր մարքսիստ էր, խոսում էր պրոլետարիատի դիկտատուրայից, ոչ սովետական, այլ իսկական կոմունիստական կուսակցությունից ու նման այլ բաներից։ 1976-ին Կույբիշեւում (այսօր՝ Սամարա) Գրիշան իր ընկերոջ ու գաղափարական առաջնորդի՝ Ալեքսեյ Ռազլացկու հետ հիմնել էր «Պրոլետարիատի դիկտատուրա» անվամբ կազմակերպություն։ Ռազլացկին գրել էր ծրագրային հոդվածներ, իսկ Գրիշան ու կազմակերպության այլ անդամներ դրանք տարածել էին գործարաններում։ Անգամ գործադուլներ էին կարողացել կազմակերպել։ 1980-ին ՊԱԿ-ը բացահայտել էր այս ընդհատակյա կազմակերպությունը։ Կազմակերպության ղեկավարներ Գրիգորի Իսաեւը եւ Ալեքսեյ Ռազլացկին 1981-ին կալանավորվել ու դատապարտվել էին։ Իսաեւը ստացել էր 6 տարի ազատազրկում եւ 5 տարի աքսոր, իսկ Ռազլացկին 7 տարի ազատազրկում եւ 5 տարի աքսոր։ Գրիշայի հետ մտերմացել էինք ու հաճախ էինք զրուցում։ Նա այսօր էլ ապրում է Սամարայում, իր հայացքները չի փոխել ու իմ ֆեյսբուքյան ընկերների ցանկում է։ Անգամ նրա ֆեյսբուքյան լուսանկարն է պրոլետարական։ Քանի որ խառատ էր, կատակով նրան Բեբել էի անվանում։ Սոցիալ-դեմոկրատական շարժման ամենանշանավոր կերպարներից Ավգուստ Բեբելը նույնպես խառատ էր։

Ի տարբերություն Գրիշա Իսաեւի, Արկադի Ցուրկովի համար իր ձախական գաղափարները դոգմատիկ չէին։ Նա երիտասարդ էր եւ դեմ չէր նոր մտքերի ու գաղափարների ազդեցության տակ վերանայել կոմունիզմի մասին իր պատկերացումները։

Երկար, շատ երկար մտածեցի, թե ինչպես նկարագրեմ աներեւակայելի հաստ ոսպնյակներով ակնոցով ու միեւնույն է՝ վատ տեսնող, երկու մետրի հասնող հասակով, դանդաղաշարժ ու թափթփված Արկադիին, որ ընթերցողը լավ պատկերացնի։ Ինձ օգնության հասավ Նաթան Շարանսկին։ Նրանից ավելի լավ Արկադիին չես նկարագրի. «Արկաշան ծանրաշարժ տղա էր, վատ էր տեսնում, թե ուր է գնում, ինչի վրա է ոտքը դնում։ Խցում ամեն ինչ՝ եւ սեղանը, եւ նստատեղերը, եւ նառերը պինդ ամրացված են հատակին, եւ դրանք չես շարժի, բայց եթե տեղաշարժվողը Ցուրկովն էր, ամեն ինչ դղրդում էր, ցնցվում էր, ինչ-որ բան ընկնում ու

ջարդվում էր։ Նման պահերին ես գլխապատառ նետվում էի նառի վրա՝ միայն թե ոտնատակ չտա։ Թեեւ դա ինձ նույնիսկ դուր էր գալիս։ Հաճելի էր մտածելը, որ ես ամենաանճարակ արարածը չեմ էս կյանքում, ինչպես մտերիմներս են մշտապես պնդել»։

Այսպիսին էր Արկադին կալանավայրում։ Բայց մի բան է այսպիսին լինել գաղութում, որտեղ տարածություն կա, եւ բոլորովին այլ բան է, երբ նույնպիսին ես խցում։ Խցում ամեն ինչ անչափ լարված է։ Խիստ սահմանափակ տարածքում պարտադրված համակեցության պայմաններում լարվածությունն անխուսափելի է։ Եւ միայն երազել կարելի է, որ խցակիցդ այնքան լայնախոհ ու հանդուրժող լինի, որ կարողանա հասկանալ ու համբերությամբ տանել այն ամենը, ինչ դու հրամցնում ես նրան։

Փոստարկղը, որտեղ մեր նամակներն էինք գցում բաց վիճակում, որովհետեւ գրաքննիչը դրանք պետք է ստուգեր եւ որեւէ կասկածելի բան չնկատելուց հետո ուղարկեր մեր հարազատներին, բնակելի գոտու երկրորդ հարկում էր։ Արկադին հարազատներին գրած նամակը ձեռքին բարձրանում է վերեւ՝ փոստարկղ գցելու համար, բայց նամակը ճեղքով չի անցնում։ Վատ տեսնող Արկաշան սկսում է ուսումնասիրել, թե այդ ի՞նչ է, որ խանգարում է։ Ճեղքից դուրս ցցված սպիտակ թուղթ է նկատում։ Քաշում է ու՝ ա՛յ քեզ հրաշք, A4 ֆորմատի ծրար է դուրս գալիս։ Նման բան կալանավայրում ոչ մի դեպքում լինել չէր կարող։ Նման չափի ծրար ու նման չափի թուղթ կալանավայրում չի եղել ու չէր էլ կարող լինել։ Ծրարի վրա մեծ տառերով գրված է՝ КГБ։ 1982 թ. գարնան վերջն էր կամ ամռան սկիզբը։ Արկադին թաքուն տեղ է գտնում ու բացում ծրարը։ Ծրարի մեջ «Литературная газета»-ի խմբագրությանը հասցեագրված նամակ է։ Երիտասարդներն, իհարկե, չգիտեն, բայց խորհրդային կյանքին քիչ թե շատ տեղյակ մարդիկ կհիշեն, որ այլախոհների դեմ բոլոր կոլեկտիվ դատապարտումները, որպես կանոն, տպագրվում էին «Литературная газета»-ում։ Այստեղ էին տպագրվում Սախարովին դատապարտող կոլեկտիվ նամակները, որոնց տակ ստորագրում էին խորհրդային մտավորականները, այստեղ էին տպագրվում արեւմտյան կամ ամերիկյան իմպերիալիզմը դատապարտող հայտարարությունները, որոնց տակ կրկին նույն մտավորականներն էին ստորագրում։ Մտավորական կոչված այս մարդկանց ցուցակը մշտապես հայտնվում էր այդ դատապարտումների տակ։ Այդ ցուցակում ընդգրկված էին լինում Խորհրդային միության տարբեր հանրապետություններից ակադեմիկոսներ, գրող-բանաստեղծներ ու հայտնի այլ դեմքեր։ Հայաստանից, բնականաբար, նույնպես կային։ Հիմա չհիշենք նրանց ու չանդրադառնանք։ Խորհրդային բոլոր թերթերն ու հանդեսներն էլ ագիտացիոն խնդիր էին լուծում, իսկ «Литературная газета»-ն առաջնագծում էր։ Ահա այս թերթի խմբագրություն պետք է հասներ այդ նամակը։ Նամակը ստորագրել էր Ռոբերտ Մակդեեւը։ Ռոբերտը 1976-ին սահմանապահ զորքերում ծառայելու ժամանակ կարողացել էր անցնել սովետա-թուրքական սահմանը։ Հայտարարել էր, որ փախել է ԽՍՀՄ-ից, վերադառնալ չի ցանկանում եւ ամերիկյան համապատասխան ծառայությունների հետ հանդիպում էր խնդրել։ Հանդիպել էին նրան ամերիկացիները։ Օգնել ու աջակցել էին։ Մինչեւ փաստաթղթերի վերջնական ձեւակերպումը, ինչը, բնականաբար, ժամանակ է պահանջում, նրան տեղավորել էին Հռոմի հյուրանոցներից մեկում։ Իսկ այս Ռոբերտ կոչվածը որոշ ժամանակ անց կապվել էր խորհրդային դեսպանատան հետ։ Սկզբում երեւի հենց այնպես՝ հետաքրքրությունից դրդված։ Բայց դեսպանատան աշխատակիցները կարողացել էին նրա հետ շփման մեջ մտնել ու համոզել, որ տուն վերադառնա։ Բնականաբար՝ խոստանալով, որ իր արարքի համար որեւէ պատիժ չի սպասվում։ Ամերիկացիները զգուշացրել էին

Ռոբերտին, բացատրել, որ բանտ է ընկնելու։ Նույնիսկ ասել էին, թե մոտավորապես քանի տարի է ստանալու, բայց նա ավելի շատ հակված էր եղել հավատալ ԽՍՀՄ դեսպանին։ Դեսպանն անգամ խոստացել էր, որ անձամբ է Ռոբերտին Մոսկվա ուղեկցելու ու հանձնելու ծնողներին։ Հռոմ-Մոսկվա չվերթն ավարտվել է 10 տարի ազատազրկմամբ։ Ինքնաթիռից դուրս գալու պահին էլ կալանավորվել էր։ Մագդեեւը չարացած էր, բայց ոչ թե իր, այլ աշխարհի վրա։ Իսկ նմաններին եւ հավաքագրելն է հեշտ, եւ կառավարելը։ Նա ամեն ինչի պատրաստ էր, միայն թե շուտ ազատ արձակվեր։

Այդ շրջանում, ինչքան էլ որ խստացնում էին ստուգումները եւ խուզարկությունները, ինչքան էլ ակտիվ կալանավորներին զրկում էին տեսակցություններից, 37-րդ կալանավայրից տեղեկություններ էին դուրս գալիս եւ հայտնվում «Խրոնիկայի» էջերում ու արեւմտյան մամուլում։ Տեղեկությունները վերաբերում էին կալանավայրի կյանքին, այնտեղ նստած դատապարտյալների ճակատագրերին ու տիրող անմարդկային պայմաններին։ Սա կատաղեցնում էր չեկիստներին։ Յուրաքանչյուր դուրս գնացած տեղեկություն ծանր էր նստում նրանց վրա։ Պատկերացնել միայն կարելի է, թե Մոսկվայից ինչ կարգի դիտողություններ էին ստանում։ Բայց այս հրապարակումների դեմը վերջնականապես առնել ՊԱԿ-ը չէր կարողանում։ Գրիգորյան Նորիկի դեպքից հետո, երբ Սլավիկի բուշլատի միջից հայտնաբերել էր լսող սարքը, 37-ը սպասարկող ՊԱԿ-ի ներկայացուցչին փոխել էին։ 1980-81-ին արդեն Բուրիլով ազգանունով մեկն էր։ Եւ ահա, ի պատասխան արեւմտյան մամուլում հայտնված հրապարակումների, Մոսկվայից տեղի ՊԱԿ-ին հանձնարարական է իջնում՝ կազմակերպել հրապարակում, որի տակ կստորագրի այս պահին կալանավայրում գտնվող որեւէ կալանավոր եւ ամենասեւ գույներով կներկայացնի արեւմտյան լրատվամիջոցների եւ միջազգային իրավապաշտպան կառույցների պաշտպանած այլախոհներին։ Տալիս են, երեւի, ապագա հոդվածի բովանդակությունը, եւ Բուրիլովը Մագդեեւին առաջարկում է իր ձեռագրով գրել ու ստորագրել հոդվածի տակ։ Հոդվածում անուն առ անուն ներկայացված էին կալանավայրում գտնվող ակտիվ կալանավորները։ Առօրյա զրույցները եւ վեճերը ներկայացված էին որպես թշնամություն, որոշ մարդիկ ներկայացված էին որպես ճղճիմ ու բանսարկու սրիկաներ։ Նպատակն ակնհայտ էր. ցույց տալ արեւմուտքին, թե ինչ անարժան մարդկանց են պաշտպանում։ Իսկ սրա դիմաց՝ պարզ է, Մակդեեւին պետք է վաղաժամ ազատություն խոստացած լինեին։

Նամակի գոյության մասին գիտեին խիստ սահմանափակ թվով մարդիկ։ Ես, Նիկոլայ Իվլյուշկինը, Անատոլի Կորյագինը, Գլեբ Յակունինը, Վանյա Իզվեկովը եւ, բնականաբար, ինքը՝ Արկաշա Յուրկովը։ Առաջիկա մեկ-երկու օրվա ընթացքում տեսակցություն կար, եւ մենք վճռեցինք, որ մեր տեղեկությունը շատ ավելի շուտ պետք է դուրս գնա ու հրապարակվի, քան կպարզվի Ռոբերտի նամակի մեր ձեռքում հայտնվելու փաստը։ Նույն օրվա ուշ գիշերը՝ ծխարանում, երբ բոլորը քնած էին, Վանյա Իզվեկովը Յուրկովի ու Իվլյուշկինի հետ միասին պատճենեցին այդ նամակը։ Որպեսզի նրանք չբռնվեն, տարբեր տեղերում դիրքավորվել էինք մենք։ Անատոլի Կորյագինը բնակելի սեկցիայի (ննջարանի) եւ ծխարանի միջեւ գտնվող միջանցքում էր, Գլեբ Յակունինը բնակելի սեկցիայում էր, եթե որեւէ մեկն արթնանար՝ պետք է նշան աներ Կորյագինին, իսկ ես դրսում էի։ Հսկիչները գիշերվա ընթացքում մի քանի անգամ պարտավոր էին գալ ու ստուգել քնած կալանավորներին։ Նրանց հայտնվելու դեպքում պետք է տեղեկացնեի Կորյագինին։ Այս դեպքում բոլորն արագ կհասնեին իրենց մահճակալներին ու քնած կձեւանային։

Արտագրելուց հետո մենք նամակը կրկին տեղավորեցինք Մագդեեւի ծրարի մեջ ու գցեցինք փոստարկղը։ Դուրս գնաց մեր կողմից արտագրված Մագդեեւի նամակը, որպեսզի պարզ լիներ, որ խոսքը հենց այս նամակին է վերաբերվում, մեր տեսակետն այդ նամակի մասին, նաեւ, իհարկե, այլ տեղեկություններ։ Պարզ էր, որ մեր տեղեկատվության հրապարակումից հետո ՊԱԿ-ն այլեւս չէր կարող Մագդեեւի նամակն օգտագործել։ Մեր ծրագիրն աշխատեց։ Տեղեկատվությունը բարեհաջող տեղ հասավ։ Հենց իմացանք դրա մասին, իսկ իմանալը բոլորովին դժվար չէր՝ տեսակցության եկած մարդը տեղ հասնելուց եւ տեղեկատվությունը համապատասխան մարդկանց փոխանցելուց հետո հեռագիր է ուղարկում կալանավայրում գտնվող իր հարազատին, որ բարեհաջող տեղ է հասել, իսկ տեքստում՝ մեկ պայմանական բառ։ Եթե կա այդ բառը, նշանակում է՝ ամեն ինչ ավելի քան լավ է։ Այդ ընթացքում, եթե հաշվի առնենք այն ժամանակվա փոստային հնարավորությունները, Մագդեեւի նամակը դժվար թե Մոսկվա հասած լիներ։

Ծրագրի հաջող ավարտի լուրն ավետող հեռագիրն ստանալուց հետո հավաքեցինք կալանավորներին։ Նստած էին բոլորը՝ եւ ծերունիները, եւ երիտասարդները, եւ ինքը՝ Մակդեեւը։ Ոչ ոք չգիտեր, թե ինչու ենք հրավիրել իրենց։ Կոլյա Իվլյուշկինն ասաց, որ հետաքրքիր նամակ է հայտնվել մեր ձեռքում ու հիմա պետք է հրապարակվի։ Կոլյան սկսեց կարդալ։ Քար լռություն էր տիրում։ Մակդեեւը շշված էր։

-Որտեղի՞ց ձեզ այդ նամակը, - դողացող ձայնով հարցրեց նա։

Յուրա Սուրգուչովը տեղից վեր կացավ, մոտեցավ Մագդեեւին ու ապտակեց։ Հայտարարեցինք, որ այս պահից Մակդեեւը բոյկոտի է ենթարկվում։ Սա ամենամեծ պատիժն էր, որ կարող էր լինել քաղաքական կալանավայրում։ Սա նշանակում է, որ նրա հետ ոչ ոք չի խոսելու, նրա հետ ոչ ոք նույն սեղանի մոտ չի նստելու ու նրան որեւէ կերպ չի առնչվելու։

Չեկիստական այս ծրագրի տապալման մեղքն, իհարկե, ՊԱԿ աշխատակից Բուրիլովինն էր։ Ինքը պետք է գար կալանավայր ու վերցներ Ռոբերտից այդ նամակը, բայց ինչ-որ պատճառով չէր կարողացել գալ ու Ռոբերտին հանձնարարել էր ծրարն ուղարկել փոստով, ինչն էլ տապալման պատճառ դարձավ։

Ինչ-ինչ ճանապարհներով ՊԱԿ-ը հետագայում կարողացավ հաշվարկել ու տեղեկանալ, թե ինչպես է նամակը մեզ մոտ հայտնվել, եւ ով՝ ինչ դերակատարում է ունեցել։ Հետեւանքը եղավ այն, որ նույն տարվա ընթացքում, բայց տարբեր ամիսների՝ Չիստոպոլի բանտ տարան Արկադի Յուրկովին, Անատոլի Կորյագինին, Նիկոլայ Իվլյուշկինին։ Իսկ չեկիստ Բուրիլովին տեղափոխեցին այլ աշխատանքի։ Նրան փոխարինելու եկավ Գադեեւ ազգանունով մեկ այլ չեկիստ։

Բոյկոտը լուրջ պատիժ է։ Քչերը կարող են երկար ժամանակ նման ճնշման դիմանալ։ Եւ Ռոբերտ Մակդեեւին այդ պատժից փրկելու համար ժամանակ անց Մորդովիա տեղափոխեցին։ Նախկինում բոլոր քաղաքական կալանավայրերը հենց Մորդովիայում էին։ 1970-ականների առաջին տարիներից սկսեցին այդ կալանավայրերը Պերմի մարզի Չուսովոյի շրջան տեղափոխել։ Տեղափոխելուց հետո Մորդովիայում, այնուամենայնիվ, մնաց երկու քաղաքական կալանավայր, մեկը՝ կանանց, մեկը՝ տղամարդկանց։ Ահա այս կալանավայրում

էլ Ռոբերտ Մակդեեւն ավարտեց 10 տարվա իր պատժաչափը։ Չեկիստները շարունակեցին օգտագործել նրան, բայց երկրի սահմանն անցնելը եւ նամակի տապալումը չներեցին։ Նա իր պատիժը մինչեւ վերջ կրեց։

Վլադիմիր Սվերդլով

Ռոբերտ Մակդեեւին չհաշված, այնքան դրական կերպարներ ներկայացրի, որ մարդիկ կսկսեն մտածել, թե խորհրդային տարիների քաղաքական կալանավայրերում միայն դրական մարդիկ են եղել։ Ճիշտն ասած, այս վերջին միտքը մոտ է ճշմարտությանը՝ դրական կերպարները շատ էին, ու տարիների հեռվից հիմնականում նրանք են երեւում։ Ի տարբերություն դրականների, որ տպավորվել ու հիշվում են, բացասականներին հիշելու համար հատուկ ճիգ գործադրելու կարիք է զգացվում։ Կային, իհարկե, բացասական կերպարներ ու շատ էին։ Նրանք բացահայտ ու թաքուն մատնիչներն ու տարատեսակ սադրիչներն էին։ Սրանք էլ էին տարբեր լինում՝ պատահում էին կոպիտ խաղացողներ եւ «նուրբ» ու խորը թաքնվածներ։ Սրանք, մինչեւ իրենց բացահայտվելը, կարող էին եւ վաստակել ակտիվ կալանավորների վստահությունը, իրենք կարող էին ակտիվ լինել, մասնակցել տարատեսակ ակցիաների կազմակերպմանը, կռիվ տալ ադմինիստրացիայի հետ, բայց միաժամանակ լինել ներդրված գործակալ ու սադրիչ։ Ահա այսպիսին էր Վոլոդյա Սվերդլովը։

Արդեն ասել եմ, երբ մեզ՝ ինձ ու Մարզպետին բերեցին 37-րդ կալանավայր եւ որպես կարանտին տեղավորեցին կալանավայրի պատժիչ մեկուսարանի խցերում, այդտեղ էր գտնվում 35-րդ կալանավայրից Յուրա Բուտչենկոն, որն արդեն պետք է ազատ արձակվեր։ Նա մեզ ասաց առաջին կարեւոր լուրը՝ Պարույր Հայրիկյանը կրկին կալանավորվել է եւ գտնվում է Պերմի բանտում։ Իմ հարցին, թե ի՞նչ մեղադրանքով, կարճ պատասխանեց.

-Սադրանքի զոհ է։

Երբ նոր էի կալանավայր մտել, եւ աշխատանքային գոտուց արդեն եկել էին մյուս կալանավորները, ինձ առաջին դիմավորողներից մեկը եւ ամենաակտիվը Վլադիմիր Սվերդլովն էր։ Անընդհատ խոսում ու կատակում էր։ Այնպիսի տպավորություն էր, որ թեյի սեղանի մոտ նստած այդ նեղ շրջանակում նա ընդունված է ու վստահություն է վայելում։ Հենց այդտեղ էլ տեղեկացա, որ Սվերդլովը Պարույրի հետ նույն գործով է անցնում։ Իսկ Պարույրին մեղադրում էին ՌՍՖՍՀ քր. օր. 174 հոդվածի 2-րդ մասով (կաշառք տալը)։ Ըստ քրեական գործի նյութերի, Սվերդլովը կարողացել էր կապ հաստատել կալանավայրի աշխատակցի հետ ու նրա միջոցով ծանրոցներ ստանալ։ Ծանրոցներից երկուսը Պարույրինն էին եղել, եւ դրանք Պարույրին փոխանցելու համար, իբր, կալանավայրի այդ աշխատակցին հագուստ են նվիրել, ինչն, իբր, հենց այդ նպատակի համար դրված է եղել ծանրոցի մեջ։ Սա էլ հենց համարվել է կաշառք։

Հաջորդ օրը Սվերդլովը մոտեցավ ինձ ու սկսեց մանրամասնություններ պատմել Պարույրի գործով ընթացող նախաքննությունից։ Նա մտերիմ էր բոլոր ակտիվ կալանավորների հետ։

Շարունակ ինչ-որ ծրագրեր էր մտմտում, ինչ-որ հարցեր քննարկում ու սրա-նրա ականջին ինչ-որ բան շշնջում։ Ինձ համար նրա ակտիվությունը մի տեսակ վանող էր։ Նրան նոր էին 35-րդ կալանավայրից 37 տեղափոխել։

Իսկ 35-րդ կալանավայրում էր հայտնվել 1978-ին։ 30-ն անց նիհար ու բարձրահասակ Վոլոդյան կալանավայր մտնելուց անմիջապես հետո փորձում է մտերմանալ ակտիվ կալանավորների հետ։ Ինքն իր մասին պատմել էր, որ աշխատել է Աստրախանի պետանվտանգության կոմիտեում եւ դատապարտվել է Եգիպտոսի հատուկ ծառայություններին գաղտնի տեղեկություններ փոխանցելու փորձի համար։ Կալանավայրում զարմացել էին, որովհետեւ նման դեպքում 10-12 տարուց պակաս չեն տալիս, իսկ Սվերդլովի պատժաչափը 6 տարի էր։ Այս հանգամանքն էլ նա բացատրել էր խորհրդային իշխանության շրջանակներում ունեցած իր հզոր կապերով։ Առաջարկել էր հենց կալանավայրում ընդհատակյա կազմակերպություն ստեղծել եւ դրսի հետ կապն ակտիվացնել։ Ամեն կերպ փորձել էր տեղեկանալ, թե ինչ ճանապարհով են տեղեկությունները կալանավայրից դուրս գալիս։ Վստահություն ձեռք բերելու նպատակով՝ 1972 թվականից կալանավայրում գտնվող եւ 7 տարի ազատազրկման ու 3 տարի աքսորի դատապարտված Զինովի Անտոնյուկին մի օր պատմում է ինքնախոստովանական իր պատմությունը, որը ճշմարտության ու հորինվածքի խառնուրդ էր։ Համաձայն այդ պատմության՝ բանակում նրան հոմոսեքսուալիստ են դարձրել, ապա՝ հավաքագրել որպես ՊԱԿ գործակալ։ Պատմել է, որ չեկիստներն իրեն որպես հոմոսեքսուալիստ օգտագործել են իրենց օպերատիվ խնդիրները լուծելու համար՝ առաջարկելով ժամանակ անցկացնել սրա կամ նրա հետ։ Ապա ավարտել է ՊԱԿ ակադեմիան ու անցել աշխատանքի։ Ասել է, որ այդ պահին շարունակում է նրանց գործակալը լինել, բայց արդեն որոշել է բոլոր կապերը խզել նրանց հետ։ Ավելին՝ վճռել է վրեժ լուծել պետանվտանգության կոմիտեից ու, եթե իրեն վստահեն, ապա ինքը կարող է դուրս փոխանցելու համար չափազանց լուրջ տեղեկություններ տրամադրել։ Ասել է, որ ինքը՝ որպես ՊԱԿ աշխատառաճին տեղյակ ու փորձառու չեկիստ, կալանավայրում անչափ օգտակար կարող է լինել։ Անտոնյուկը չի հավատացել նրան ու իր կասկածների մասին տեղեկացրել է մյուսներին։ Սվերդլովի կասկածելի լինելու հանգամանքին ժամանակին 52-րդ թողարկման մեջ անդրադարձել է «Խրոնիկան»։ Իսկ Սվերդլովը շարունակել է «բարձրակարգ չեկիստի» իր ծառայություններն այլոց առաջարկել։

1979, թե՞ 1980 թվականին Սվերդլովը տեղեկացնում է Պարույրին, որ կարողացել է պայմանավորվել կալանավայրի մետաղամշակման ցեխի վարպետի հետ, որն ազատ վարձու աշխատող է, եւ վերջինս համաձայնել է իր համար սննդամթերքով ծանրոցներ բերել կալանավայր։ Մի խոսքով, հենց այս ծանրոցներն էլ դառնում են Պարույրի հաջորդ դատապարտման պատճառ։ Նախաքննության ժամանակ հենց Սվերդլովն էր ցուցմունքներ տվել, որ ծանրոցների մեջ կալանավայրի աշխատակցի համար վարձավճար հանդիսացող ապրանքներ կային, ինչն էլ որպես կաշառք էր դիտարկվել։

Ժամանակ անց 37-րդ կալանավայրում հայտնի դարձավ, որ Սվերդլովը Պարույրի գործով մեղադրանքը հաստատող ցուցմունքներ է տվել, ու բոլորն էլ սկսեցին երես թեքել նրանից։ Բայց մինչ այդ նա հասցրել էր մի շարք բանսարկություններ կազմակերպել, որոնց հիմնական

նպատակը բամբասանքներով ու հորինվածքներով ակտիվ կալանավորներին իրար դեմ լարելն էր։

Զարմանալի է, որ Պարույրը փորձառու կալանավոր լինելով հանդերձ, վստահել էր Սվերդլովին։ Անկախ այս գործից՝ Պարույրին, անկասկած, դատապարտելու էին։ Եթե ոչ կալանավայրում, ապա աքսորի դուրս գալուց հետո։ Պարույրի ազատ արձակումը նրանք թույլ տալ չէին կարող։ Այդ շրջանում պատժաչափերն ավարտող շատ քաղբանտարկյալների վրա էին գործեր սարքում, Պարույրը բացառություն լինել չէր կարող։ Մի շինծու գործ հաստատ կհորինեին։ Բայց այս դեպքում, գործին Պարույրի մասնակցությունը հաշվի առնելով, այնպես ստացվեց, որ գործն այնքան էլ շինծու չեղավ։

Կալանավայրում մարդիկ կային, որոնք անգամ կարծում էին, թե Սվերդլովը ոչ թե սովորական մատնիչ ու սովորական կալանավոր է, այլ պետանվտանգության կոմիտեի հաստիքային աշխատակից է։ Դժվար է, իհարկե, նման բան պատկերացնելը։ Ինքս դա ուղղակի բացառում եմ։ Բայց խորհրդային շրջանից մեկ-մեկ այնպիսի անհավանական դրվագներ են բացահայտվում, որ կամքիցդ անկախ աներեւակայելի բաներն ես սկսում հնարավոր համարել։

Պավլո Ստրոցեն

Դատապարտվելուց հետո մարդիկ շատ հաճախ փոխում են իրենց վերաբերմունքն աշխարհի նկատմամբ։ Խոսքը մեկ-երկու տարվա դատապարտմանը չի վերաբերում։ Չնայած՝ այս դեպքում էլ են մարդիկ փոխվում։ Եթե մարդն ազատազրկվում է մի քանի տարով՝ 3, 5, 8, 10 կամ շատ ավելի տարիներով, պարզ է, որ նրա աշխարհընկալման մեջ փոփոխություններ են գրանցվելու։ Ոմանք սկսում են չարանալ ու կոշտանալ։ Չարացածները սկսում են շուրջբոլորը թշնամիներ ու գործակալներ տեսնել, դադարում են մարդկանց վստահել, քիչ է պատահում, որ անշահախնդիր ընկերություն անեն։ Սա չի նշանակում, թե վատ մարդ են դառնում։ Պարզապես նրանց հետ շփվելն է դժվար ու բարդ դառնում։ Նրանց չարացածությունն ավելի շատ ու առաջին հերթին հենց իրենց կյանքն է թունավորում։ Ամենաչնչին պատճառներով նրանք մշտական հակամարտության մեջ են գտնվում ոչ միայն ադմինիստրացիայի, այլեւ շրջապատի ու միջավայրի մարդկանց հետ։ Նման մարդու հետ նույն խցում հայտնվելը մեծ փորձություն է։

Չչարացողներ էլ են լինում։ Շարունակում են ապրել իրենց կյանքը, բայց արդեն նոր իրականությունում, որը կալանավայր է կոչվում։ Ահա այսպիսի չչարացածներից մեկը Պավլոն էր՝ Պավլո Ստրոցենը։

Պավլոն 25 տարվա պատժաչափ ուներ։ Ուկրաինական ապստամբ բանակի՝ УПА (*Українська повстанська армія*)-ի զինվոր էր եղել։ Հայտնի է, որ УПА-ն կռվել էր ֆաշիստների դեմ, իսկ ֆաշիստական զորքերի նահանջից եւ խորհրդային զորքերի արեւմտյան Ուկրաինա մտնելուց հետո՝ ընդհուպ մինչեւ 1950-ականների ավարտը, զինված դիմադրություն է ցույց տվել խորհրդային զորքերին։ Պավլոն, չնայած այն հանգամանքին, որ ողջ պատերազմի

ընթացքում անտառներում է եղել՝ 1950-ականների երկրորդ կեսին հասցրել էր ամուսնանալ։ Այս շրջանում խորհրդային զորքերին դիմադրություն ցույց տվողների թիվը, ի տարբերություն 1940-ականների եւ 50-ականների սկզբների, արդեն բավականին սահմանափակ էր։ Մի օր էլ նա տեղեկանում է, որ կինը ծննդաբերել է։ Խորհրդային տեղական իշխանությունները հասկանում են՝ ինչ էլ լինի, երբ էլ լինի՝ Պավլոն դուրս է գալու անտառից, որ նորածին որդուն տեսնի։ Նրանք դարանակալում են Պավլոյի կնոջ տան մոտակայքում ու չեն սխալվում։ Մի գիշեր Պավլոն տուն է գալիս։ Հասցնում է տուն մտնել ու մեկ եւ վերջին անգամ գրկել նորածին որդուն։ Նրան ձերբակալում ու 25 տարվա ազատազրկման են դատապարտում։

Պավլոյին՝ այդ ազնիվ ու բարի մարդուն 37-րդ կալանավայր բերեցին 36-ից։ Նրա ազատ արձակվելուն շատ քիչ ժամանակ էր մնացել։ 25 տարիները բացարձակապես չէին չարացրել նրան։ Ընդհակառակը։ Ամեն կերպ փորձում էր կարիքավորին աջակից ու օգնական լինել։ Մեզ՝ որ ակտիվ էինք ու հաճախ էինք հայտնվում պատժիչ մեկուսարանում, ուղղակի սիրում էր։ Երբ զրկված էի լինում գնումներ կատարելու իրավունքից, իր ծխախոտից մի մեծ բաժին ինձ էր տալիս։ Ինքը հիմնականում մախորկա էր փաթաթում։

-Մինչեւ ամսվա վերջ եթե չհերիքի՝ էլի կտամ։

-Պավլո, տղաներն էլ են ինձ սիգարետ տալու, սա շատ է։

-Ոչինչ, պահիր, երբ չեմ ունենա՝ քեզանից կուզեմ։

Ե՛ւ նրա շարժուձեւից, ե՛ւ խոսքից, ե՛ւ տեսքից բարություն ու կամեցողություն էր հորդում։ 36-ում պատմում էին, որ առաջին անգամ երբ հեռուստացույց են բերել, իսկ դա 1980-ի կողմերն էր, մինչ այդ կալանավայրերում հեռուստացույց չէր կարելի, Պավլոն անընդհատ շուրջբոլորն է պտտվել ու զարմացել այդ հրաշք արկղով։ Իրոք որ՝ արկղ։ Բոլոր կալանավայրերում էլ հեռուստացույցների համար դռնակով արկղեր էին սարքել ու հեռուստացույցը դրել արկղի մեջ։ Դուռը կողպում էին եւ միայն որոշակի ժամերի եւ որոշ հաղորդումների դեպքում էին բացում։

Նամակ չէր ստանում տնից։

-25 տարի է անցել, ո՞վ պետք է գրի ինձ, - տխուր ժպտալով ասում էր նա։

Նա, երեւի, բացարձակապես միայնակ էր զգում իրեն։ Շատ բան եմ այսօր մոռացել, բայց, որքան հիշում եմ՝ Պավլոն չգիտեր, թե ուր է գնալու, ում է տեսնելու, եւ սպասող ունի՞ արդյոք։

Մի օր էլ, երբ նրա ազատ արձակվելուն շատ քիչ ժամանակ էր մնացել, Պավլոյին տարան կալանավայրի անցումային կետ։ Վատ կանխազգացմամբ դրսում կանգնած սպասում էի։ Որոշ ժամանակ անց տեսնեմ՝ գալիս է Պավլոն։ Ընդառաջ գնացի։ Նման Պավլո ես չէի տեսել։ Շողում էր։ Պարզվում է՝ այնտեղ ասել են նրան, թե իր արդեն 25 տարեկան դարձած որդին, որը վարորդ է աշխատում՝ հոր ազատ արձակվելու օրը չի մոռացել եւ այնպես է դասավորել, որ այդ օրը գործուղման լինի Պերմում ու հորն իր բեռնատարով անձամբ տուն տանի։ Ես

Պավլոյի ազատ արձակումը չտեսա։ Չեմ հիշում, թե ինչու։ Երեւի պատժիչ մեկուսարանում եմ եղել։

1980-81 թթ. 37-րդ մեծ կալանավայրն արդեն 1980-ից առաջ եղած պասիվ կալանավայրը չէր։ Ավելի քան ակտիվ էր։ Հիշատակածս դատապարտյալներից բացի, այնտեղ էին «հակախորհրդային ագիտացիա ու պրոպագանդա» հոդվածով դատապարտված այնպիսի ազնիվ ու ակտիվ դատապարտյալներ, ինչպիսիք էին էստոնացի Տիթ Մադիսոնը, վրացի Վախթանգ Չիթավան՝ ազնվազույն կերպար։ Այնտեղ էր լատիշ Մորիս Լուկյանովիչը։ Ավելի ուշ՝ Մադիսոնին տեղափոխելուց հետո, այնտեղ բերեցին էստոնացի Հեկի Ահոնենին, որի հետ, ճիշտ է, քիչ ենք եղել միասին, բայց շատ արագ լավ բարեկամներ դարձանք։ Իսկ 37-րդ փոքր կալանավայրում էին Մարզպետ Հարությունյանը, Յուրի Օրլովը, ապա այնտեղ բերեցին լենինգրադցի Վյաչեսլավ Դոլինինին, իսկ շատ ավելի ուշ՝ ուկրաինացի Օլես Շեւչենկոյին եւ վրացի Տարիել Գվինեիշվիլուն։

Հետաքրքիր ու հիշատակման արժանի կերպարները շատ են։ Այնտեղ գտնվողներից յուրաքանչյուրի կյանքը լեցուն էր տարօրինակություններով, սովորական կյանքում չհանդիպող կամ շատ քիչ հանդիպող չափազանց հետաքրքիր դրվագներով։

Դեպի Թուրքիա Սիմֆերոպոլից թռչող ինքնաթիռ փախցրած բժշկական ինստիտուտի ուսանող Վիտալի Պոզդեեւին սովետները կարողացել էին ետ բերել ու դատել։ Նրա զավթած ինքնաթիռը բարեհաջող վայրեջք էր կատարել Թուրքիայում, եւ արդեն ամերիկացիների մոտ էր, երբ խորհրդային իշխանությունների ներկայացուցիչներն ամերիկացիներին խնդրել էին Վիտալիին փոխանցել ձայնագրիչ՝ իր ձայնապնակով։ Իսկ ձայնապնակում ձայնագրված էին եղել Վիտալիի մոր հեկեկանքը եւ հոր աղաչանքները։ Նրանք լացում ու աղաչում են, որ իրենց սիրելի զավակը՝ Վիտալին, վերադառնա, որին, ինչպես խոստացել են իշխանությունները, որեւէ խիստ պատիժ չի սպառնում։ Սիմվոլիկ պատիժ է լինելու, ապա՝ մեծահոգաբար ներելու են, ու նա շարունակելու է իր ուսումը։

Վիտալին պատմում էր, որ ինքն ամեն անգամ անջատում էր ձայնագրիչն՝ այլեւս չմիացնելու վճռականությամբ, բայց մոր լացը եւ հոր ձայնը ձգում էին, եւ նա կրկին ու կրկին միացնում էր։ Վերջին հաշվով, եթե խիստ չեն դատելու ու ներելու են, ապա կարելի է ծնողներին այդքան մեծ վիշտ չպատճառել ու վերադառնալ, մտածում է Վիտալին ու ասում ամերիկացիներին, որ իրեն հանձնեն։ Հետեւանքը հսկայական պատժաչափն էր։ Նա այս կալանավայր էր տեղափոխվել Մորդովիայից։ Նրա ծնողները՝ որդուն ավելի մոտ գտնվելու նպատակով վաճառեցին Սիմֆերոպոլի իրենց սեփական տունը եւ Ուրալ տեղափոխվեցին։ Ահա՛ այսպիսի ճակատագիր։ Վիտալին ակտիվ կալանավոր չէր, աշխատում էր բուժկետում, բայց ամեն կերպ գաղտնի, իհարկե, օգնում ու աջակցում էր մեզ։

Պատմում էր, որ մի երեկո Մորդովիայի իրենց կալանավայրի ծխարանում նստած զրուցել ու հիշել են արդեն ազատ արձակված իրենց ընկերներին։ Հիշել են Պարույրին, պատմել նրա արկածներից։

-Իսկ հաջորդ օրը, - ծիծաղելով ասում էր Վիտալին, - տեսնենք՝ բերում են Պարույրին։

Վիտալիի պատմությանը նման է 35-րդ կալանավայրում նստած Միշա Դյուկրեւի պատմությունը։ 27-30 տարեկան ռոստովցի Միշան նույնպես զինվորական ծառայության ժամանակ անօրինական հատել էր սովետա-թուրքական սահմանը։ Ճիշտ Վիտալիի ու Ռոբերտ Մակդեեւի պես՝ աջակցության խնդրանքով դիմել էր ամերիկացիներին։ Ի տարբերություն նրանց՝ համբերատար սպասել էր իր փաստաթղթերի ձեւակերպմանը եւ ԱՄՆ էր տեղափոխվել։ Բնակվել ու աշխատել էր այնտեղ։ Չէր ամուսնացել, ընտանիք չէր կազմել, որեւէ լուրջ հետաքրքրություն չէր ունեցել։ Մի 5-6 կամ ավելի տարիներ ԱՄՆ-ում բնակվելուց հետո խելքը գլխին անգլերեն անգամ չգիտեր։ Մի օր ձանձրույթից ու խմած զանգահարել էր ԽՍՀՄ դեսպանատուն։ Ինչպես ինքն էր ասում՝ ռուսերեն խոսելու համար։ Դեսպանատանն արագ կռահել էին, որ հարաբերություններ է պետք հաստատել։ Համբերատար զրուցել էին, առաջարկել էին էլի զանգահարել, իսկ ընթացքում իրենց հնարավորություններով ճշտել էին, թե ով է զանգահարողը։ Ժամանակ անց հանդիպել ու բարեկամացել էին։ Ասել էին, որ ցանկության դեպքում կարող է եւ տուն վերադառնալ։ Դյուկրեւի անհանգստությանն ի պատասխան, որ կարող է դատվել՝ ծիծաղել էին.

-Ի՞նչ ես արել, որ դատվես։ Երիտասարդական հիմարություն եւ ուրիշ ոչինչ, այն էլ՝ այսքան տարի անց։ Ոչ մի պատիժ էլ չի լինելու, որպես դեսպան քեզ անձամբ եմ խոստանում։

Եւ Միշան վճռել էր վերադառնալ։ Մոսկվայի օդանավակայանում վայրէջք կատարած ինքնաթիռի շարժասանդուքից իջնելիս էլ հագցրել էին ձեռնակապը։

Դատապարտվել էր 10, թե 12 տարվա ազատազրկման, հիմա արդեն լավ չեմ հիշում։ Սարսափելի ծանր էր տանում կալանավորումը։ Չէր դիմանում։ Հաճախ էր ներման խնդրագրեր գրում։ Խնդրագրերին ի պատասխան ստացած մերժումներից հետո սարսափելի ընկճվում էր։ Մի քանի օր ոչ ոքի հետ չէր խոսում։ Հետո հանդիպում էր կալանավայրն սպասարկող չեկիստին, որից երեւի մոտավորապես այսպիսի խոսք էր լսում.

-Եթե քեզ լավ պահես եւ անես այն, ինչ քեզանից պահանջվում է, հաջորդ խնդրագիրը կարող է եւ դրական լուծում ստանալ։

Ինքն, իհարկե, մեզ բաց տեքստով այս ամենը չէր պատմում, բայց կցկտուր խոսակցություններից կարելի էր եւ կռահել։

Հերթական՝ աստված գիտի, թե որերորդ մերժումն ստանալուց հետո խեղճ Միշային գտան մետաղամշակման արհեստանոցի մի մութ անկյունում կախված։

Կալանավայրը ղեկավարում է կալանավայրի պետն իր երեք տեղակալներով՝ օպերատիվ գծով տեղակալ, ռեժիմի գծով տեղակալ եւ քաղաքական գծով տեղակալ։ Հսկիչները պրապորշչիկներ էին, իսկ հսկիչների վերակարգը, որ փոխվում էր 12 ժամը մեկ, ղեկավարում էր գաղութի պետի հերթապահ օգնականը, ռուսերեն՝ ДПНК

(дежурный помощник начальника колонии): ДПНК-ն սպա է լինում: Կալանավայրի ադմինիստրացիայի մեջ կային այնպիսիք, որոնք մարդկանց պատժելուց կամ հալածելուց հաճույք էին ստանում: Այս առումով հատկապես աչքի էր ընկնում պետի ռեժիմի գծով տեղակալ մայոր Մելկոմուկովը: Քաղգծով կամ օպերգծով տեղակալներն էլ պակաս չէին, բայց Մելկոմուկովը յուրահատուկ էր: Պետի քաղգծով տեղակալին այս կալանավայր էին բերել քրեական կալանավայրից: Քրեական կալանավայրերից քաղաքական տեղափոխվելը նրանց համար մեծ պատիվ ու մեծ հաջողություն էր համարվում: Սրան (մայոր էր, ազգանունը մոռացել եմ) մեզ մոտ բերել էին որպես տուժածի: Քրեական կալանավայրում պետի տեղակալ էր աշխատել: Պետն ու իր տեղակալներն իրենց դաժանություններով մարդկանց այնքան էին լարել իրենց դեմ, որ այս կալանավայրի կալանավորներն ապստամբել էին: Բանակցությունների եկած պետին իր տեղակալների հետ միասին բռնել ու խոհանոց էին տարել, որտեղ եռացող ջրով հսկա կաթսաներն են: Սրա աչքի առաջ իր կոլեգաներին գցել էին եռացող կաթսաների մեջ, իսկ այս հերոսին, որ երեւի համեմատաբար քիչ էր մարդկանց նեղացրած եղել, գցել էին սառը ջրի մեջ: Սա, իհարկե, չէր պատկերացրել, որ ջուրը սառն է լինելու ու այնտեղից կենդանի է դուրս գալու: Իր հետ կատարվածից ու իր տեսածից սարսափահար՝ սկսել էր կակազել: Մեծ դժվարությամբ էր քաղաքական գծով այս տեղակալը խոսում: Թե ինչպես պետք է մարդկանց մարքսիզմ-լենինիզմ բացատրեր՝ հայտնի չէ: Որպես տառապանքի փոխհատուցում կամ ինչ-որ կապերի ու ծանոթությունների շնորհիվ քաղաքական կալանավայր էին տեղափոխել: Այստեղ կարելի էր լինել դաժան ու անմարդկային, բայց դրան ի պատասխան՝ հաստատ եռացող ջրի մեջ չեն գցի քեզ:

Մելկոմուկովը մի սովորական կամակոր սադիստ էր՝ հպարտ, որ նման պաշտոնի է հասել եւ վստահ, որ իր կամակորությունների, ցուցաբերած սադիզմի ու գործող օրենքի նորմերը խախտելու համար ոչ միայն դիտողության չի արժանանա, դեռ մի բան էլ՝ կխրախուսվի: Առանց որեւէ հիմնավոր պատճառի կարող էր մարդկանց զրկել գնումներ կատարելու իրավունքից: Յուրաքանչյուր կալանավոր իրավունք ուներ ամիսը մինչեւ 5 ռուբլու սահմաններում գնումներ կատարել: Դա բավականացնում էր մի 15-20 տուփ առանց ֆիլտր՝ «Պրիմա» ծխախոտ, մի բանկա ջեմ ու էլի մանր-մունր մի քանի բան գնելու համար: Եւ ահա, առանց որեւէ պատճառի կարող էիր դրանից զրկվել: Կամ կարող էիր կրկին առանց լուրջ պատճառի պատժիչ մեկուսարանում հայտնվել: Մի օր ճաշի ժամին Մելկոմուկովը ճաշարանում էր: Ճաշին տալիս էին առաջին՝ որեւէ ջրիկ ճաշ, ապա երկրորդ՝ որեւէ փլավ կամ կարտոֆիլի պյուրե: Փլավներից բոլորն էլ ուտելու էին, բայց ես կորեկի փլավ ուտել չէի կարողանում ոչ մի կերպ: Դրա համն ինձ համար անտանելի էր: Այն օրերին, երբ այդ փլավն էին տալիս, գերադասում էի կիսաքաղց մնալ, բայց դա չուտել: Սա գիտեին բոլորը, նաեւ՝ հսկիչները: Եւ ահա, երբ դուրս էի գալիս ճաշարանից, Մելկոմուկովը ձայնեց.

-Հարությունյան, խախտում ենք, հա՞:

-Ի՞նչ խախտում, պետ, - վստահ, որ մի բան արդեն հորինել է, հարցրի ես:

-Փլավը չկերաք:

-Արդեն կուշտ եմ ու փլավի կարիքը չունեմ:

-Դա արդեն ռեժիմի խախտում է: Այս ժամին, ըստ օրվա ռեժիմի, դուք պարտավոր եք ճաշել, իսկ ճաշը բաղկացած է նաեւ փլավից: Պարտավոր եք ուտել:

Պահանջեց, որ հետ գնամ ու ուտեմ, ինչն, իհարկե, չարեցի: Ցանկացած դեպքում նրա պահանջով ետ չէի գնալու, իսկ փլավի համար՝ առավել եւս: Եւ այս պատրվակով ինձ պատժիչ մեկուսարան ուղարկեց: Այսպիսի աներեւակայելի հիմար դեպքերը եւ անհամաչափ պատիժներն առօրյա էին դարձել եւ անպատասխան մնալ չէին կարող:

Լարվածությունն օրեցօր մեծանում էր: Մենք անընդհատ դիմում-բողոքներ էինք գրում, որոնք արդյունք չէին տալիս: Աշնանն անցանք ավելի լուրջ քայլերի՝ գործադուլ հայտարարեցինք: Պահանջը հստակ էր՝ հեռացնել Մելկոմուկովին: Սկսեցին բոլորիս պատժել: Դրան պատրաստ էինք: Մինչեւ մեր ակցիայի սկսելն արդեն գիտեինք, թե ի՛նչ է սպասվում մեզ: Էական էր, որ մեր գործադուլին միացել էին նաեւ այնպիսի կալանավորներ, որոնք ակտիվ կալանավորի համբավ չունեին: Մելկոմուկովը նաեւ նրանց էր խանգարում: Պատժիչ մեկուսարանը լիքն էր, եւ բոլորին միաժամանակ պատժել չէին կարողանում: Մինչ ոմանք պատժիչ մեկուսարանում էին, մյուսները կալանավայրում հանգստանում էին: Ոչ աշխատանք եւ ոչ էլ որեւէ հոգս: Սա նրանց հունից հանում էր: Յուրօրինակ հերթափոխ էր գոյացել: Մենք է՛լ, կալանավայրի ադմինիստրացիան էլ գիտեինք արդեն, թե ով է դուրս գալու մեկուսարանից, եւ ով է փոխարինելու նրան: Անգամ գիտեինք, որ նոր խախտման համար մեկուսարանում օրեր չեն ավելացնելու, որովհետեւ հաջորդին է պետք մեկուսարան տանել: Այդ շրջանում նոր էին սկսել պատժիչ մեկուսարաններում գրականություն թույլատրել: Ճիշտ է՝ ցուրտ ու սոված, բայց կարդալու հնարավորություն կար, նաեւ՝ շատ էինք, ու օրերն ուրախ ու հետաքրքիր էին անցնում: Որոշ ժամանակ անց կրկին վճռեցին արգելել գրականությունը պատժիչ մեկուսարանում:

Այդ օրերին մի հետաքրքիր դեպք էլ կատարվեց: Մեզ մոտ էր լենինգրադցի այլախոհ Գերման Օբուխովը: Նա ծնվել էր 1949-ին ու 70-րդ (հակախորհրդային ագիտացիա եւ պրոպագանդա) հոդվածով էր դատապարտվել: Այս հոդվածով դատապարտվածը, մտնելով կալանավայր, հատուկ դրական վերաբերմունքի է արժանանում: Սա մաքուր քաղաքական հոդված էր, այս հոդվածով դատապարտվածները, քիչ բացառություններով, կալանավայրում ակտիվ են լինում: Սրանց մուտքը նշանակում է ակտիվ կալանավորի ու եւս մեկ յուրայինի ավելացում: Բայց Գերմանը հենց առաջին օրերից հասկացնել տվեց, որ չի ցանկանում համալրել պայքարողների շարքերը:

-Ես ձեր թայը չեմ, -մոտավորապես սա էր նրա ասածը:

Նրան անմիջապես լավ աշխատանքի տեղավորեցին: Էլեկտրիկ էր, ուներ իր առանձին սենյակը: Աշխատանքային պարտականություններ չուներ մյուսների պես: Մնացածներս հիմնականում խառատ էինք: Մի քանի անգամ այդ սենյակ եմ գնացել նրա հետ զրուցելու ու նրան հասկանալու համար: Ընկերներս ասում էին՝ իմաստ չունի, բայց ես փորձում էի:

Երբ գործադուլի պատրաստություններն արդեն տեսել էինք, եւ պայմանավորվածությունների գաղտնի շրջանն անցել էր, ու հաջորդ օրը պետք է հայտարարվեր դրա մասին, կրկին մոտեցա Գերմանին եւ առաջարկեցի միանալ մեր գործադուլին: Ամոթ կլիներ, եթե մեր

գործադուլի շրջանում շարունակեր աշխատանքի գնալ։ Բայց նա մերժեց։ Եւ հանկարծ՝ մի գեղեցիկ օր, մեր պատժախցում գտնվելու ժամանակ, բացվում է դուռը եւ մեր խուց են բերում Գերմանին։ Նա զարմացած ու զայրացած է, իսկ մենք ծիծաղում ենք։

-Գերման, ի՞նչ կա, ինչի՞ համար։

Շատ ավելի ուշ, արդեն մեր օրերում, զանգահարում է ինձ Գերմանը.

-Ողջույն, հիշու՞մ ես կարցերը, ուր միասին էինք։

-Իհարկե, հիշում եմ։ Շատ բան եմ հիշում, ավելի շատ բաներ մոռացել եմ, բայց հիշեցնելու դեպքում սկսում եմ հիշել։

-Որ գամ Երեւան, - հարցնում է Գերմանը, - կընդունե՞ս։

-Ի՞նչ հարց է, իհարկե, կընդունեմ։

Գալիս է։ Մի քանի օր իմ հյուրն է։ Զրուցում ենք։ Անցյալը չեմ հիշեցնում։ Ինքը՝ Գերմանն է անդրադառնում։

-Եթե ակտիվ լինեի, ոչ մի կերպ չէի կարող գրառումներս դուրս տանել։

Ի՞նչ գրառումներ էին, եւ վերջին հաշվով՝ կարողացե՞լ էր դրանք դուրս տանել, ես չգիտեմ։ Ասենք, դա կարեւոր էլ չէ։ Կարեւորն այն է, որ Գերմանն այդպիսին է մնացել իմ հիշողություններում։ Այսօր նա ակտիվ ելույթներ է ունենում ի պաշտպանություն Ուկրաինայի, դատապարտում է ռուսական ագրեսիան։ Կիեւում է բնակվում։ Ունենք նամակագրական կապ, Ժամանակ առ ժամանակ հանդիպում ենք։

Ադմինիստրացիան փակուղային վիճակում էր ու չգիտեր իր անելիքը։ Մի պահից սկսեցին մեզ զրույցի հրավիրել։ Մելկոմուկովից բացի, բոլորն էլ հերթով գալիս էին, իսկ մենք անդրդվելի էինք՝ տեղափոխեք Մելկոմուկովին, եւ մենք կդադարեցնենք գործադուլը։ Հերթով կանչում էին ու համոզում։ ՊԱԿ-ը երեւի ադմինիստրացիայի վրա նույնպես զայրացած էր։ Ամենայն հավանականությամբ ասում էին՝ ձեր աշխատանքի արդյունքն է, դուք էլ հարթեք։

Հիմա չեմ հիշում, թե ինչքան տեւեց մեր գործադուլը, բայց արդյունք տվեց։ Մելկոմուկովը չկար։ Մի տեսակ աննկատ անհետացավ։ Մեզ, իհարկե, չասացին, թե կատարում են մեր պահանջը, բայց Մելկոմուկովը կալանավայրում էլ չերեւաց։ Սա ամենեւին չէր նշանակում, թե ամեն ինչ հարթվել էր, եւ այլ խնդիրներ չէին ծագում։ Մելկոմուկովն իր հետ տարավ միայն իր բաժին խնդիրները։ Մեր հաջողությունից ադմինիստրացիան էլ ավելի էր զայրացել։ Մի քանի ամիս անց տեղի ունեցավ այն, ինչի մասին արդեն պատմել եմ. մեր Արկադի Ցուրկովը պատահաբար ձեռ գցեց «Литературная газета»-ին ուղղված Ռոբերտ Մակդեեւի նամակը, որը կարողացանք լավ ու ճիշտ օգտագործել։ Արդյունքում ՊԱԿ աշխատակից Բուրիլովը զրկվեց իր աշխատանքից, եւ նրան փոխարինելու եկավ մեկ այլ չեկիստ՝ Գադեեւը։ Սադրանքները եւ ճնշումները նոր թափ առան։ Բնական էր, ոչ մի կերպ նամակի պատմությունը մոռանալ կամ ներել չէին կարող։ 1982-ի գարնան վերջին կամ ամռան սկզբին դատարանով փոխեցին

Արկադիի ռեժիմը եւ նրան Չիստոպոլի բանտ տարան։ Մենք մեկ փոքր տուփ կարմիր խավիար ունեինք։ Չեմ էլ հիշում, թե ով էր ստացել տնից ուղարկված ծանրոցով, որը յուրաքանչյուր կալանավորի պատժի կեսը կրելուց հետո, տարին մեկ անգամ մինչեւ 5 կգ քաշով թույլատրվում էր։ Պահել էինք հատուկ դեպքի համար։ Հայտնի էլ չէր, թե որ դեպքն էր լինելու հատուկ եւ երբ էր գալու, բայց պահել էինք։ Ահա, այդքան ժամանակ պահած այդ խավիարը դրեցինք Արկադիի իրերի մեջ։ Ավելի հատուկ դեպք պատկերացնել հնարավոր էլ չէր։ Ամռանը նույն պատմությունը կրկնվեց Անատոլի Կորյագինի հետ։ Նրան նույնպես Չիստոպոլի բանտ տարան։ Լարվածությունն աստիճանաբար ավելի ու ավելի էր սաստկանում։ Հորինված կամ չնչին պատճառներով մարդկանց զրկում էին տեսակցություններից, գնումներ կատարելու կամ ծանրոց ստանալու իրավունքից, պատժախուց էին տանում։ Իմ ողջ կալանավորական կյանքի ընթացքում ես տեսակցություն չեմ ունեցել։ Մշտապես զրկված եմ եղել։ Այս գարնան ու ամռան ընթացքում պատժախցում փակվելը մեզ համար առօրյա ու սովորական բան էր դարձել։ Աշնան կողմերն, առանց լուրջ պատճառի, 6 ամսով ՊԿՏ տեղափոխեցին Գլեբ Յակունինին եւ փոքր կալանավայրում գտնվող Յուրի Օրլովին։ Պարզ էր արդեն՝ որոշել են ոմանց փակել ՊԿՏ-ում, ոմանց՝ Չիստոպոլ տանել, իսկ մնացածներին պահել գաղութում եւ մշտական ճնշումների ենթարկել։ Սա էր «Литературная газета»-ի տապալված նամակի նրանց պատասխանը։

Մտածում էինք, որ բողոքի նոր ու շատ ավելի լուրջ ակցիա է պետք սկսել։ Մեր նպատակն արդեն որեւէ իրականանալի խնդիր առաջ քաշելը չէր։ Սրան կամ նրան տեղափոխելը կամ աշխատանքից հանելը չէր։ Երեւի նոյեմբերի երկրորդ կեսի կողմերն էր՝ փոքր եւ մեծ կալանավայրերում գտնվողներով եկանք համաձայնության, որ պետք է քաղաքական կալանավորի ստատուսի պահանջով հանդես գանք։ Թե ինչ է գործադուլը, գիտեն բոլորը, իսկ «քաղաքական կալանավորի ստատուս» տերմինը, երեւի, պետք է բացատրվի։

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը բացառում է քաղաքական նկատառումներով մարդկանց հետապնդումը։ 1948 թ. ՄԱԿ-ում այս փաստաթղթի ընդունումը՝ փաստաթուղթն ստորագրած երկրների տարածքում քաղբանտարկյալների գոյությունը եւ քաղաքական հետապնդումները դարձրեց անթույլատրելի։ Մինչ այդ բազմաթիվ երկրների օրենսդրությունը թույլ էր տալիս քաղաքական նկատառումներով հետապնդումներ։ Տարբեր երկրների կալանավայրերում, ի թիվս քրեական կալանավորների, կային նաեւ քաղաքական կոչվող կալանավորներ։ Ցարական Ռուսաստանում քաղաքական բանտարկյալները պաշտոնապես առանձին կարգավիճակ են ունեցել, իսկ 1904-ին արդարադատության նախարարը հաստատել էր «Քաղաքացիական ենթակայության բանտերում քաղաքական բանտարկյալների պահման կարգը»։ Այլ երկրներ նույնպես ճանաչում էին իրենց կալանավայրերում առկա քաղբանտարկյալներին։ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի ընդունումից հետո քաղաքական ամենադաժան հետապնդումներ իրականացնող երկրներն անգամ հայտարարում են, թե իրենց մոտ քաղբանտարկյալներ չկան։ Սկսած ամենադիկտատորական երկրներից՝ վերջացրած քիչ թե շատ ազատներով։ Այսպես ավելի հեշտ է փակել քաղբանտարկյալների առկայության վերաբերյալ խոսակցությունը։ Այսպես էին վարվում ԽՍՀՄ-ում, այսպես են վարվում այսօր բազմաթիվ երկրներում, եւ այսպես էլ ոչ ազատ երկրները շարունակելու են վարվել։ Նրանք հրապարակավ ընդունում են Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը եւ դրանից բխած միջազգային պարտավորությունները, բայց նաեւ շարունակում են իրենց

երկրներում քաղաքական հետապնդումներ իրականացնել՝ չմոռանալով հայտարարել, որ իրենց մոտ եղած բոլոր կալանավորներն էլ քրեական են։

Մինչեւ 1976 թ.Բրիտանիայում՝ Հյուսիսային Իռլանդիայում առկա հակամարտության հետեւանքով կալանավայրերում հայտնված կալանավորներին տրվում էր Special Category Status։ Սա հատուկ կարգավիճակ էր, որից որոշակի իրավունքներ էին բխում։ Բայց 1976-ին Բրիտանական իշխանությունը վերացրեց այդ կարգավիճակը։ 1981 թ. մարտին կալանավայրում գտնվող Իռլանդիայի հանրապետական բանակի անդամները քաղաքական բանտարկյալի կարգավիճակի պահանջով հացադուլ սկսեցին։ Նրանք 5 պահանջ էին ներկայացրել.

1. բանտային արտահագուստ չկրելու իրավունք

2. բանտային աշխատանք չկատարելու իրավունք

3. այլ կալանավորների հետ ազատ կապի իրավունք

4. յուրաքանչյուր շաբաթը մեկ այցելության, մեկ ծանրոցի եւ մեկ նամակի իրավունք

5. ներում ստանալու իրավունք

Բրիտանական իշխանությունները զիջումներ չարեցին։ Զիջման պատրաստ չէին նաեւ բանտարկյալները։ Ժամանակին սա հսկայական աղմուկի պատճառ հանդիսացավ։ Ողջ աշխարհն էր ուշադրությամբ հետեւում, թե ինչ է լինելու։ Հետեւանքը 10 հացադուլավորների մահն էր։ Այս ամենի մասին 2008 թ. «Սովը» վերնագրով բրիտանա-իռլանդական համատեղ ֆիլմ է նկարահանվել։

Քաղաքական բանտարկյալի ստատուս պահանջելը եւ դրանից բխած գործողություններ սկսելն առավելագույնն է, որ կարող են անել քաղբանտարկյալները։ Ես եւ Տիթ Մադիսոնը առաջինը պետք է դրա մասին հայտարարեինք։ Իսկ մի քանի օրից մեզ պետք է միանային մյուսները։ Հիմա արդեն չեմ հիշում, թե ինչ պատճառով էինք այսպես վճռել։ Եկավ պայմանավորված օրը։ Առավոտյան կալանավորների հաշվառման սովորական արարողությունն էր։ Հրապարակում շարվում են կալանավորները, իսկ ДПНК-ն հսկիչներից մեկի ուղեկցությամբ հերթով կարդում է կալանավորների անուն-ազգանունները։ Այս արարողությունը յուրաքանչյուր առավոտ ու երեկո տեղի էր ունենում բոլոր կալանավայրերում։ Ռուսերենով ազգանունս Ա տառով է սկսում՝ Арутюнян, ու, բնականաբար, առաջիններից մեկը պետք է ընթերցվի։ Երբ ДПНК-ն կարդաց իմ ազգանունը, ես դուրս եկա շարքից ու, պոկելով իմ ազգանվամբ կրծքապիտակը, նետեցի նրա ուղղությամբ՝ ասելով.

-Այստեղ նման կալանավոր չկա։

Ու առանց ДПНК-ի կանչերին արձագանքելու՝ գնացի դեպի բնակելի գոտի։ Ինձանից հետո նույն կերպ վարվեց Տիթը։

Կալանավորները հագնում են հատուկ մուգ գույնի արտահագուստ, որի վրա՝ կրծքին կալանավորի ազգանվամբ հատուկ պիտակ է կարվում։ Այդ պիտակը կարվում է և՛ ձմեռային, և՛ ամառային հագուստին։

Կալանավորի հագուստ

Պոկել այդ պիտակը, նշանակում է չլինել այնպիսի կալանավոր, որպիսին երկրում առկա մնացած բոլոր կալանավորներն են։ Մեր հայտարարած քաղբանտարկյալի ստատուսի պահանջն առաջին հերթին նախատեսում էր.

ա) չենթարկվել կալանավայրի կանոններին

բ) չկրել բանտային արտահագուստ

գ) չանել բանտային աշխատանք

Կրծքին կարված պիտակը պոկելը նշանակում էր երկրորդ կետի՝ «չկրել բանտային արտահագուստի» ի կատար ածում։ Առաջին կետն էլ նշանակում էր՝ անել ինչ ցանկանում ես, չենթարկվել նրանց պահանջներին, ապա՝ հրաժարվել աշխատանքի դուրս գալուց։ Ես ու Տիթը բնակելի սեկցիայում ցուցադրաբար պառկել էինք մեր անկողիններին, ինչը ներքին կանոնակարգով արգելվում է, երբ մեր հետեւից եկան հսկիչները։ 20 րոպե անց արդեն պատժիչ մեկուսարանում էինք։ Մեզ տեղավորեցին տարբեր խցերում։ Լավ հիշում եմ, որ Տիթը բարձրաձայն էստոնական մարտական քայլերգ էր երգում։ Սկսվեց մի աներեւակայելի դժվար, բայց նաեւ հետաքրքիր ժամանակահատված։ Մինչ կլրանար մեր 15 օրը, հերթով սկսեցին ակցիային միանալ մյուսները։ Գեղեցիկ էր մտածված. ոչ թե բոլորը միասին են սկսում, այլ երկուսը սկսում են, իսկ մյուսները հերթով միանում են։ Ադմինիստրացիան չգիտի՝ լինելու՞ է ակցիային հաջորդ միացող, թե՝ ոչ։

Մտադիր չեմ երկար պատմել մեր ստատուսի պատմությունը։ Այս անգամ մենք այնքան շատ չէինք, որքան գործադուլի ժամանակ։ Ոմանց Չիստոպոլի բանտ էին տարել, ոմանց՝ այլ կալանավայր։ 36-րդ կալանավայր տարան Տիթ Մադիսոնին։ 10-15 օրվա պատժի լրանալուց հետո մեկ-երկու օրով կալանավայր էինք դուրս գալիս ու կրկին պատժիչ մեկուսարան վերադառնում։ Կարճ ժամանակից տեղափոխեցին նաեւ Իզվեկովին։ Այս անգամ պատժիչ մեկուսարանում ազատ տեղերը բավականացնում էին, եւ մենք այնտեղից արդեն դուրս չէինք գալիս։ Չնայած վատառողջությանը, մեր ակցիային նաեւ Մարզպետն էր միացել, եւ պատժիչ մեկուսարանում մենք կրկին հանդիպեցինք։ Նրա վիճակն այնքան վատացավ, որ նրան հիվանդանոց տեղափոխեցին։ Դեկտեմբերին Չիստոպոլի բանտ տարան Նիկոլայ Իվլյուշկինին։ Երեւի ճիշտ պահն է ասելու համար, որ 37-րդ կալանավայրի իմ այս պատմության նրբություններն այսօր հենց նրա օգնությամբ եմ վերականգնել։ Միայնակ այսքան բան հաստատ չէի հիշի։ Հատկապես ժամանակագրությունը վերականգնել չէի կարող։ Կոլյայի օգնությամբ ահագին բան հնարավոր եղավ վերհիշել։ Կոլյային տանելուց հետո պատժիչ մեկուսարանում մնացի մենակ։ Գլեբ Յակունինը եւ Յուրի Օրլովը ՊԿՏ-ում էին, իսկ ես՝ պատժիչում։ Յուրաքանչյուր 10-15 օրս ավարտվելուց հետո նոր պատժաչափ էին տալիս։ Պահանջը մեկն էր՝ կարել կրծքապիտակը եւ դուրս գալ կալանավայր։ Ես հրաժարվում էի։ Միայն մեկ խնդիր ունեի՝ որքան հնարավոր է շատ խախտումներ անել եւ Չիստոպոլի բանտ գնալն արագացնել։ Ինձ համար բանտ գնալն արդեն փրկության պես մի բան էր։ Սկզբում հսկիչներն իմ բոլոր խախտումներն արձանագրում էին, բայց մի պահից դադարեցրին։ Պարզ էր՝ ցուցում կա։ Եթե շարունակեին արձանագրել ցուցադրաբար ու կանխամտածված արված խախտումներս, ապա վերջիվերջո ստիպված պետք է լինեին դրանց հետեւանքով անել իրենց ձեւական դատը եւ ինձ Չիստոպոլ տանել։ Բայց ամեն ինչից

երեւում էր, որ ինձ Չիստոպոլ տանել չեն ցանկանում: Չի բացառվում՝ այն պատճառով, որ այնտեղ էին գտնվում Աշոտ Նավասարդյանը եւ Ազատ Արշակյանը: Աշխատում էին, որ հայերս իրար չհանդիպենք ու իրար հետ չլինենք: Անցել էր նոր տարին: Հունվարն էր ավարտվում, իսկ ես դեռ պատժախցում էի: Երկար ժամանակ էր թուլություն էի զգում, բայց որեւէ կերպ ցույց տալ չէի ցանկանում: Գլեբ Յակունինն էր ինձանով շատ մտահոգված: Հունվարի վերջին հսկիչները բացեցին խցիս դուռը եւ ասացին, որ դուրս գամ: Մաքուր օդից ուժեղ գլխապտույտ զգացի, հենվեցի մեկուսարանի դռանը: Հսկիչներից մեկը հարցրեց.

-Կգնա՞ս, թե օգնենք:

-Կգնամ, պետ, կգնամ, հանգիստ:

Ու իմ ոտքով հասա մեր բնակելի սեկցիային: Ինձ տեղավորեցին կալանավայրի բուժկետում: Մեկ-երկու օրից արդեն լավ կազդուրվել էի, բայց կրծքապիտակը կարելուց շարունակում էի հրաժարվել: Անընդհատ համոզում էին կարել, իսկ ես կտրականապես հրաժարվում էի: Այս կալանավայրում ոչ մի դեպքում չէի կարելու, սա հաստատ էր: Անգամ բժշկուհիներին էին հանձնարարել գալ ու ինձ հետ բարեկամաբար զրուցել ու համոզել:

Ես ծնվել եմ 1960-ի դեկտեմբերի 15-ին, բայց իմ փաստաթղթերում ծննդյան օր է նշված 1961-ի փետրվարի 3-ը: Չեկիստները, բնական է, տեղյակ էին իմ ոչ իրական փաստաթղթային ծննդյան օրից: Եւ ահա փետրվարի 3-ին գալիս է չեկիստ Գադեեւը ու սրտառուչ զրույց է վարում ինձ հետ: Իրոք՝ խիստ բարեկամական: Չի պահանջում, որ կարեմ կրծքապիտակը, չի սպառնում, որ կրկին պատժախուց են տանելու ինձ: Հարցնում է Հայաստանից, ինչ-որ անկապ բաներից է խոսում, վերջում էլ մեկ տուփ թեյ է դնում մահճակալիս կողքի պահարանին.

-Սա ձեզ, այսօր ձեր ծննդյան օրն է, շնորհավորում եմ:

Ես զարմացած եմ: Չեկիստի հեռանալուց հետո վերցնում եմ տուփը եւ դուրս գալիս միջանցք: Ծխարանում ահագին կալանավորներ կան: Տալիս եմ թեյը եւ ասում, որ չեկիստն է բերել, ու այսօր իմ ծննդյան օրն է: Տղաներից մեկը թեյ է եփում, խմում ենք ու շնորհավորում իմ ծնունդը: Թեյախմության ավարտից երկու ժամ էլ չէր անցել, ինձ հանձնարարվեց հավաքել իրերս: Առաջին միտքը Չիստոպոլի բանտն էր: Մտածում էի, ինձ հիմա կտանեն իրենց գրասենյակ, կանեն իրենց ձեւական դատը եւ՝ վերջ: Սա նաեւ ինձ համար էր լուծում: Բայց ինձ 35-րդ կալանավայր տեղափոխեցին:

37-րդ կալանավայրում ծավալված դեպքերից այսքան տարի անց՝ այս թեմայով մեր հիշողություն-զրույցից հետո ինձ ուղղված նամակում ահա թե ինչ է գրում ընկերս՝ Նիկոլայ Իվլյուշկինը: Կարծում եմ, ճիշտ է նրա գնահատականը. «Գիտե՞ս, պատճառներից մեկը, որ մեզ ցրեցին տարբեր բանտ-գաղութներով՝ այն էր, որ տեսնում էին՝ մեր ընկերությունը ՎԱԽ չուներ: Այնքան համախմբված էինք եւ այնպես էինք աջակցում իրար, որ չցրելու պարագայում մեզ միայն սպանելն էր մնում… Քիչ է նման բան պատահում: Նրանք վերջնականապես հասկացել էին, որ որեւէ մեկիս հետ առանձին պայմանավորվել չեն կարող: Այնպես էինք իրար կապված եւ այնպես էինք հավատում ու վստահում իրար (տարբեր

կալանավորական գործ-հակասություններից անկախ), որ դավաճանությունը մահ էր նշանակում…»։

35-րդ կալանավայր

Ինչքան էլ որ կալանավայրերն իրարից մեկուսացված են, տեղեկությունները բավականին արագ տեղ էին հասնում: 35-ում արդեն գիտեին իմ, մեր ստատուսի եւ իմ կարցերային ռդիսկանի մասին: Հիվանդության սրացման պատճառով Մարզպետին պատժիչ մեկուսարանից դեռ դեկտեմբերին հիվանդանոց էին տարել, իսկ հիվանդանոցը կից էր 35-ին: Նա էր պատմել իր հետ նույն սենյակում գտնվող 35-ից մի հիվանդ կալանավորի: Սա էլ իր հերթին կալանավայրում էր պատմել: Այստեղ էր Վանյա Իզվեկովը՝ մեր ընկերը, որը մեզ հետ պատժիչ մեկուսարանում էր: Շատ շուտ պարզվեց, որ Իվան Իզվեկովն այլեւս նախկինը չէ: Թե ինչ էր պատահել, ինչ զրույցներ էին վարել նրա հետ, ինչ համաձայնության էր եկել՝ չցանկացա նույնիսկ տեղեկանալ: Սկսեցի քիչ շփվել նրա հետ: Մնացել էր միայն դեպքից դեպք «բարեւ, ո՞նց ես»-ը, որն էլ ժամանակ անց դադարեցրի:

35-րդ կալանավայրը բոլորովին նման չէր 37-ին: Նախ՝ մեծ էր ու գեղեցիկ: Եթե, իհարկե, կարելի է «գեղեցիկ» բառն այս դեպքում օգտագործել: Անտառի մի հատվածը ցանկապատերով ու փշալարերով առանձնացրել ու կալանավայր էին սարքել: Կալանավայրի ներսի մի հատվածում ծառեր էին պահպանվել, տարածքն էլ կանաչ էր: Ճիշտ է, այդ ծառերն էլ իրենց հերթին էին փշալարերով առանձնացրել, այնպես՝ որ մենք դրանց տակ չնստենք ու դրանց տակով չքայլենք, բայց ծառերի գոյությունն ինքնին հաճելի էր: 37-ը նույնպես անտառի մեջ էր, բայց ժամանակին ինչ-որ հանքի տարածք էր եղել, կալանավայրի կողքը դեռ պահպանվել էր հանք իջնելու աշտարակն՝ իր ճախարակներով հանդերձ, իսկ կալանավայրի տարածքում նոր տնկած ու դեռ կարճլիկ եղեւնիները չհաշված, կար մեկ ոչ մեծ կեչի: 35-ում ամենահաճելին տարածքի մեծությունն էր: Կալանավորներն էլ էին շատ: Մոտավորապես 60-70 մարդ կլիներ: Այստեղ կալանավորները տեղավորվում էին բնակելի հատվածի տարբեր սեկցիաներում:

Մեր էտապից անմիջապես հետո այս կալանավայրում էին Եղիազարյան Սամվելը եւ Ալեքսանդր Մանուչարյանը: Ինձ այստեղ բերելու պատճառով երկուսին էլ հենց նույն օրը տեղափոխեցին 37-րդ կալանավայր: Հսկիչը ցույց տվեց մահճակալը, որի վրա պետք է քնեի: Ծանոթացա իմ սեկցիայում ապրող կալանավորների հետ: Երեկո էր արդեն, բոլորը՝ հատկապես տարեցները, մի տեսակ հետաքրքրությամբ էին նայում ինձ: Առավոտյան արթնանալուց ու լվացվելուց հետո, երբ մահճակալիս մոտեցա, կրկին ինձ ուղղված հայացքներ նկատեցի: Մեր սեկցիա մտավ Ալեքսանդր Նիլովը, որն ինձ գիտեր դեռ 37-ից: Նա 37-ի փոքրից էր: Հարցրեց.

-Ինչպե՞ս քնեցիր, վատ երազներ չե՞ս տեսել:

Փայլուն քնել էի ու վատ երազներ տեսնելու տրամադրություն չունեի:

-Գիտես, քո մահճակալին քնողը, որ տարեց մարդ էր, քո գալուց կարճ ժամանակ առաջ մահացավ: Կարծիք կա, որ նոր մահացածի մահճակալին քնելը վտանգավոր է, վախճանվածը գալու է ու սարսափեցնելու է անկոչ հյուրին, պահանջելու է հեռանալ:

Նոր հասկացա հետաքրքրասեր հայացքների իմաստն ու կատակի տվեցի.

-Չէ, այս գիշեր մահացածը չի եկել, երբ գա՝ նրա հետ մահճակալի հարցով լեզու կգտնեմ։

Պատերազմի ծերունի հանցագործներից եւ մերձբալթյան անտառային եղբայրներից բացի, մեր սեկցիայում էին հակախորհրդային ագիտացիայի եւ պրոպագանդայի համար դատապարտված վրացի Զուրաբ Գոգիան եւ հրեա Լյովա Շեֆերը։ Սեկցիաներում մարդկանց տեղաբաշխում էին ըստ աշխատանքի բնույթի։ Ձեռնոցներ կարողները մի սեկցիայում էին, խառատները եւ ընդհանրապես մետաղամշակմամբ զբաղվողները՝ մեկ այլ, հնոցապանները եւ այլ կարգի արհեստանոցների աշխատողները՝ այլ ու այսպես շարունակ։ Ժամանակ անց ինձ հանձնարարվեց աշխատել հնոցում, եւ տեղափոխվեցի հնոցապանների սեկցիա։ Բայց այդ աշխատանքս կարճ տեւեց։ Ինչ-որ թյուրիմացություն էր տեղի ունեցել։ Իմ գործի վրայի կարմիր գծի առկայությունը (հիշեցնեմ՝ դա նշանակում էր վտանգավոր է եւ հակված է փախուստի) թույլ չէր տալիս, որ գիշերային հերթափոխում աշխատեմ։ Հնոցից ինձ տեղափոխեցին հյուսնի արհեստանոց։ Այս սեկցիայում նույնպես պատերազմի համար դատապարտվածները մեծամասնություն էին, իսկ «հակախորհրդային ագիտացիա ու պրոպագանդա» հոդվածով, որքան այսօր հիշում եմ, միայն ես ու Անատոլի Մարչենկոն էինք։

Զուրաբ Գոգիա

Զուրաբի իսկական անունը Սուլիկո էր, բայց ինքն այդ անունը չէր սիրում։ Բոլորը նրան որպես Զուրաբ գիտեին՝ ե՛ւ Վրաստանում, ե՛ւ այստեղ՝ կալանավայրում։ Իր երկու ընկերների՝ Վախթանգ Ճիտավայի եւ Վաժա Ժղենտիի հետ միասին կազմակերպություն էին ստեղծել, ու Վրաստանի անկախության պահանջով թռուցիկներ էին տարածել։ Զուրաբը մասնագիտությամբ լրագրող էր, ծնվել էր 1946-ին։ Վախթանգը բանասեր էր, ծնվել էր 1939-ին, իսկ Վաժան 1938-ին ծնված մաթեմատիկոս էր։ Հետաքրքիրն այն էր, որ երեքն էլ՝ մինչեւ 1980-ի ապրիլին իրենց կալանավորումը, եղել էին կոմունիստական կուսակցության անդամներ։ Զուրաբը ստացել էր 5 տարի ազատազրկում, Վախթանգը՝ 5 տարի ազատազրկում եւ 2 տարի աքսոր, իսկ Վաժան՝ 6 տարի ազատազրկում եւ 3 տարի աքսոր։ Երեքն էլ արժանապատիվ մարդիկ էին։ Վախթանգը, որ 37-րդ կալանավայրում էր գտնվում, առանձնանում էր իր լրջությամբ, արդարամտությամբ ու խիզախությամբ։

Զուրաբն աներեւակայելի կենսախինդ անձնավորություն էր՝ սրամիտ ու կատակասեր։ Նրա սրամտությունները տպավորվել ու մնացել են ոչ միայն իմ, այլ նրան ճանաչողներից շատերի հիշողություններում։ Նա հավատացած էր՝ հայերի մոտ ամեն ինչ թարս է։ Անգամ թարս են խաչակնքում։ Ամենայն լրջությամբ բոլորին ասում էր.

-Դուք չեք պատկերացնի, ողջ Խորհրդային միությունում միայն Հայաստանում գործարան կա, որտեղ ձախ պարուրակով բոլտ ու գայկա են արտադրում։

Մարդկանց անընդհատ՝ տարբեր ու ամենաչնչին պատճառներով պատժիչ մեկուսարան են տանում։ Իրենց այդ գործն էլ ավելի հեշտացնելու համար ադմինիստրացիան սկսեց

պահանջել, որ ծխենք միայն համապատասխան վայրերում, ու մի քանի տեղ ցուցանակ փակցրին. «Ծխել միայն այստեղ»։ Դե, բնական է, ծխում ես՝ որտեղ որ պատահի։ Աչալուրջ հսկիչները նկատում՝ զեկուցագիր են գրում, ու պատժիչ մեկուսարանի 10-15 օրն ապահովված է։ Ակտիվ կալանավորներից շատերին են այս եղանակով պատժել, իսկ Զուրաբը հանգիստ ծխում էր։ Շատ ավելի ուշ պարզվեց, որ Զուրաբը պատրաստել էր ճիշտ նույնպիսի վահանակ, որի վրա գրված է. «Ծխել միայն այստեղ», ու որտեղ որոշում էր ծխել՝ այնտեղ կախում էր։ Տեսնելով ցուցանակը՝ հսկիչներն անցնում-գնում էին։ Հիմա արդեն չեմ հիշում, թե ինչպես բացահայտվեց նրա այս խորամանկությունը, եւ Զուրաբին պատժիչ մեկուսարան տարան։

Ինձ, Ստեփան Խմարային ու Զուրաբ Գոգիային հանձնարարել են խոր առու փորել։ Նախորդ օրերին արդեն ուրիշները փորել էին առուն, մենք պետք է շարունակենք։ Յուրաքանչյուր օր 3 հոգու ընտրում են այդ գործի համար։ Հսկիչը քայլերով չափել է, թե ինչքան աշխատանք պետք է անենք օրվա ընթացքում եւ առվի երկայնքով շարված սյուներից մեկի վրա բահով նշան է արել.

-Ահա, մինչեւ այս սյունը կփորեք, - հանձնարարել ու գնացել է։

Գարնանային արեւը հաճելի տաքացնում է, աշխատելու ոչ մի ցանկություն չկա։ Ես ու Ստեփանը քննարկում ենք, թե ինչպես կարելի է կրճատել աշխատանքի ծավալը։ Զուրաբը վերցնում է բահը, մոտակա սյուներից մեկի վրա ճիշտ նույնպիսի նշան է անում, ինչպես որ արել էր հսկիչը, իսկ հսկիչի արած նշանին ցեխ է քսում։ Օրվա ընթացքում ցեխը չորանում է, ու սյունը դառնում է ճիշտ նույնպիսին՝ ցեխոտ ու ճաքճքած, ինչպես մյուս սյուներն են, եւ միայն մի սյան վրա է երեւում բահով արված նշանը։ Երեկոյան կողմ հսկիչը զարմացած է՝ աշխատանքը շատ առաջ չի գնացել, բայց հասել է այն նշանին, որն արել էր ինքը։

Զուրաբն ինչ-որ հանդեսում կարդացել է, թե իբր շատ հարուստ մի անգլիացի գիտնական երկար տարիներ աշխատել է հին աշխարհի ինչ-որ սեպագիր արձանագրություն վերծանելու վրա, բայց չի կարողացել։ Գերլարված վիճակում եւ հուսահատ, որ չի կարողանում, իբր գրություն է թողել այն մասին, որ իր ողջ հարստությունը կտակում է նրան, ով կկարողանա վերծանել այս արձանագրությունը։ Հանդեսում նաեւ արձանագրության լուսանկարն է։ Զուրաբն օրերով զբաղված է դրա վերծանմամբ։

-Զուրաբ, - ասում եմ, - դատարկ գործով ես զբաղված, քեզ ոչ ոք գումար չի տալու, ու ողջ այդ պատմությունը հեքիաթ է։

-Աշխարհում քեզ նման անհավատները շատ են։ Գնա, մի խանգարիր։ Երբ այդ գումարը կստանամ, քեզ մի կոպեկ անգամ չեմ տա։

Հսկիչները նկատում են, որ Զուրաբն օրերով ինչ-որ գրառումներ է անում։ Հերթական խուզարկության ժամանակ, որ նրանք անում էին հնարավոր բոլոր առիթներով կամ անառիթ, տանում են Զուրաբի գրառումները եւ, որ ավելի կարեւոր է, հանդեսից պոկված էջը, որտեղ տպագրված է արձանագրության լուսանկարը։ Զուրաբը վրդովված է.

-Պետ, վերադարձրու հանդեսի էջը։ Այնտեղ սեպագիր արձանագրություն է, այլ բան չկա։

Իսկ հսկիչը՝ ազգությամբ թուրքմեն Ալիկ Աթաեւը, որ ռուսերեն աներեւակայելի վատ է խոսում, պատասխանում է.

-Ոչինչ, կստուգենք, կվերծանենք, եթե դրա մեջ հակասովետական ոչինչ չլինի՝ կվերադարձնենք։

Յուրաքանչյուր կալանավոր օրական ստանում է մոտ մեկ թեյի գդալ շաքարավազ։ Իմ շաքարավազը ես չեմ օգտագործում ու հավաքում եմ։ Մի բավականին մեծ, փակվող կափարիչով ման ունեմ, որն ինձ դեռ 37-րդ կալանավայրում Անատոլի Կորյագինն էր նվիրել կնոջ հետ տեսակցությունից վերադառնալուց հետո։ Սա երեւի նրա առաջին ու վերջին տեսակցությունն էր։ Նվիրեց մեկ փայտե գդալ եւ այդ ամանը։ Ահա այդ ամանի մեջ ես մշտապես բերնեբերան շաքարավազ եմ ունենում։ Հաճախ եմ լինում պատժիչ մեկուսարաններում ու հաճախ եմ զրկվում գնումներ կատարելու իրավունքից։ Ինձ այլք են ծխախոտ ու սնունդ տալիս։ Որոշել էի, որ շաքարավազն էլ իմ օգնությունն է լինելու այլոց։ Երբ որեւէ մեկի պետք էր լինում, ես ուրախությամբ նրանց համար շաքարավազ էի լցնում։ Նորիկ Գրիգորյանն իր գրքում հիշում է. «Վարդան Հարությունյանը հաջողացրեց պատժիչ մեկուսարան փոխանցել մի ամբողջ տուփ շաքարավազ։ Պարզվում է, իր բաժին շաքարը նա չէր ուտում՝ հավաքում էր։ Այն ինձ շատ օգնեց»։

Ինձ է մոտենում Զուրաբը։

-Վարդան, ինչքա՞ն շաքարավազ ունես։

Գիտի՝ ունեմ այնքան, որքան պետք է։ Իսկ նա ամբողջն է պահանջում։

-Հասկանու՞մ ես, գինի եմ սարքելու։ Հետո կխմենք։

Գարուն է։ Ինչպես կալանավայրը շրջապատող ողջ անտառը, այնպես էլ կալանավայրը ծաղիկներով է ծածկված։ Զուրաբը հավաքել է քաղցր նեկտար պարունակող խատուտիկների մի մեծ խուրձ։ Պատրաստվում է դրանք լցնել եռացրած ջրով լի ամանի մեջ, ապա ավելացնել իմ հավաքած ողջ շաքարավազը եւ դնել մի թաքուն ու տաք տեղ։

-Մի 10-15 օրից գինի ենք խմելու, - ոգեւորված ասում է նա։

Ամանը բոլորից գաղտնի տեղավորել է ձեղնահարկում։ Այնտեղ երբեք մարդ չի մտնում։ Արեւի ջերմությունից տաքացած տանիքը ձեղնահարկին հսկայական ջերմություն է հաղորդել։ Գինի հաստա՛տ խմելու ենք։

Ու հանկարծ, շատ անսպասելի, երկու էստոնացու՝ անտառային եղբայրներից մեկին ու մեկ երիտասարդի հանձնարարում են ձեղնահարկում շինարարական աշխատանքներ կատարել։ Էստոնացիները, անկասկած, վստահելի են, նրանց կարելի է ասել։ Զուրաբը տեղեկացնում է նրանց, որ ձեղնահարկում մեր ապագա գինին է թաքցրած, ու երիտասարդ էստոնացուն հանձնարարում է ուշադիր լինել, ու երբ նկատի, որ գինին արդեն եռում է, տեղեկացնի իրեն։

Մի երեկո բակում երեկոյան ստուգումից առաջ հավաքվել են կալանավորները։ Այնտեղ են նաեւ Զուրաբը եւ մի հսկիչ։ ДПНК-ին են սպասում։ Դռնից անակնկալ դուրս է գալիս էստոնացին ու առանց շուրջը նայելու իր էստոնական առոգանությամբ կանչում է.

-Զուրաբ, գինիդ եռում է։

Զուրաբին պատժախուց տարան։ Գինին էլ, երեւի, իրենք խմեցին։ Մենք ոչ ամանը տեսանք, ոչ էլ գինին։ Շաքարավազն էր ափսոս։

Ավելի ուշ Զուրաբին 36-րդ կալանավայր տեղափոխեցին, որտեղ նաեւ ես էի։ Մեր բարեկամությունը շարունակվեց։ Իսկ ազատ արձակվելուց հետո նրան հանդիպեցի Վրաստանում, Ռուսթավիի իր բնակարանում։ Երբ տեղեկացավ, որ Թբիլիսիում եմ, անչափ ոգեւորվել էր ու իր տուն տարավ ինձ։ Եկավ նաեւ Վաժան, ու երեքով մի ամբողջ գիշեր զրուցեցինք ու վերհիշեցինք։ Վախթանգը չկար։ Այդ շրջանում Գամսախուրդիան զրկվել էր իշխանությունից ու իր զինակիցների հետ սարերն էր քաշվել։ Վախթանգը նրանց մեջ էր։ Երկար Ժամանակ նա թաքնված մնաց եւ միայն 1990-ականների վերջերին վերադարձավ։ Նա արդեն վախճանվել է։ Իսկ Զուրաբը 90-ականներին մահացավ ավտովթարից։ Երեք ընկերներից ողջ է միայն Վաժա Ժղենտին։

Ստեփան Խմարա

Ստեփանն իմ ճանաչած ամենաամուր ու կոմպրոմիսի չգնացող մարդկանցից մեկն էր։ Այսօր էլ նույնն է մնացել։ Կալանավայրում սկսված մեր բարեկամությունը շարունակվում է։ Առիթի դեպքում, երբ լինում եմ Կիեւում, մենք հանդիպում ենք։ 1990-ից հետո մի քանի անգամ նա ընտրվեց Ուկրաինայի խորհրդարանի պատգամավոր։ 2006 թվականից Ուկրաինայի հերոս է։ Այս ամենաբարձր կոչմանն են արժանացել ուկրաինացի մի քանի քաղբանտարկյալներ՝ բանաստեղծ եւ 36-րդ հատուկ ռեժիմի (զոլավոր) կալանավայրում մահացած Վասիլ Ստուսը, ավտովթարի զոհ դարձած հայտնի այլախոհ Վյաչեսլավ Չերնովոլը, 30 տարուց ավելի ազատազրկման վայրերում անցկացրած Յուրի Շուխեւիչը, ընդհանուր հաշվարկով 26 տարի ազատազրկված Լեւկո Լուկյանենկոն։

Ստեփանը ծնվել է 1937-ին, մասնագիտությամբ ստոմատոլոգ էր։ 1960-ական թվականներից զբաղվել է ինքնահրատ գրականության տարածմամբ։ 1972-ին, Վյաչեսլավ Չերնովոլի կալանավորումից հետո, նախաձեռնում է Չերնովոլի հիմնադրած «Ուկրաինական նորություններ» (Український вісник) հանդեսի հրապարակման գործը։ Նրան են միանում ազգանվանակիցներ՝ լրագրող Օլես Շեւչենկոն եւ Վիտալի Շեւչենկոն։ 1974-ին նրանք ոչ միայն հրապարակում են հանդեսը, այլեւ հրապարակած հանդեսի ֆոտոժապավենը կարողանում են արեւմուտք փոխանցել, որը հրապարակվում է ուկրաիներեն, ապա նաեւ անգլերեն եւ անմիջապես դառնում 1970-ականների առաջին կեսին Խորհրդային միությունում ընթացող բռնությունների ուսումնասիրման կարեւոր աղբյուրներից մեկը։

Նրանք հասցնում են նաեւ հանդեսի հաջորդ համարների հրապարակման համար բավականաչափ նյութ կուտակել։ 1975 թ. պետանվտանգության կոմիտեն փորձում է կալանավորել Ստեփանին, բայց որեւէ կերպ մեղադրանքը հաստատող ցուցմունքներ հայթայթել չի կարողանում։ Միայն 1980-ին է ՊԱԿ-ը հաստատուն տեղեկություններ ստանում այն մասին, որ «Ուկրաինական նորությունների» թողարկումները պատրաստել է Ստեփան Խմարան՝ Օլես եւ Վիտալի Շեւչենկոների հետ, եւ կալանավորում է նրանց։ Ստեփանի պատժաչափը խիստ ուկրաինական էր՝ հոդվածով նախատեսված առավելագույնը՝ 7 տարի ազատազրկում եւ 5 տարի աքսոր։

Այս առումով ուկրաինացիները տարբերվում էին մյուսներից։ Հայերիս պատժաչափերն էլ էին մեծ լինում։ Հատկապես 1978-ից՝ Մոսկվայի մետրոյի պայթյունից հետո։ Բայց, միեւնույն է, ուկրաինացիներն այս հարցում մրցակից չունեին։ Նրանց պատժաչափերը շատ քիչ դեպքերում էր, որ հոդվածով նախատեսված առավելագույնը չէր լինում։

Ուկրաինացիները կալանավայրերում շատ էին ու ակտիվ։ Չնչին դեպքեր էին լինում, որ ուկրաինական ազգային շարժման ներկայացուցիչները հայտնվեին կալանավայրերում եւ ակտիվ կալանավորի համարում չունենային։ Հատուկ վտանգավոր ռեցիդիվիստների ճամբարում, որտեղ գտնվում էին երկու եւ ավելի անգամ քաղաքական հոդվածով դատապարտված քաղբանտարկյալները, ուկրաինացիները մեծամասնություն էին կազմում։ Հայերից այնտեղ միայն երկուսն են եղել՝ Աշոտ Նավասարդյանը եւ Ազատ Արշակյանը։ Ուկրաինացիները շատ էին նաեւ Մորդովիայում գտնվող կին քաղբանտարկյալների գաղութում։

Նրանք պարտադիր գալիս էին մեծ պատժաչափերով ու դրսում սկսած իրենց պայքարը կալանավայրում շարունակելու հաստատակամությամբ։ Ուկրաինական ահա այս փայլուն սկզբունքների կրողներից էր նաեւ Ստեփանը։

35-րդ կալանավայրում մենք շատ արագ մտերմացանք։ Ժամանակ անց՝ շատ կարճ ժամանակով, ինձ տեղափոխեցին 37-ի փոքր, ապա՝ 36-րդ կալանավայր, որտեղ 35-ից արդեն տեղափոխել էին Ստեփանին, ու մենք կրկին միասին էինք։

Անատոլի Մարչենկո

Անատոլի Մարչենկոյի մասին գիտեի մինչեւ նրա հետ ծանոթանալը։ Գիտեինք, որ հերթական անգամ դատապարտվելուց հետո, 1981-ի դեկտեմբերին նրան 35-րդ կալանավայր են բերել։ 35-ում եղած ողջ ընթացքում ես ամենաշատը մտերիմ եմ եղել Ստեփան Խմարայի եւ Տոլիկ Մարչենկոյի հետ։ Երեքս էլ չէինք սիրում ու ընդունում կալանավայրային կոլեկտիվ տնտեսությունները։ Մեր էությամբ մենատնտեսներ էինք, բայց թեյ խմում էինք միասին։ Գարնանը եւ ամռանը նաեւ տարբեր խոտեր հավաքելով աղցան էինք պատրաստում ու

միասին ուտում։ Որեւէ կերպ պետք էր լրացնել վիտամինի պակասությունը։ Ստեփանը անչափ համով աղցան էր պատրաստում։

37-րդ կալանավայրից սկսած՝ իմ յուրաքանչյուր ազատ րոպեն տրամադրել եմ կարդալուն։ Ինձ համար ծրագիր էի մշակել ու ժամկետներ դրել։ Համաձայն այդ ծրագրի՝ կոնկրետ ժամկետում պետք է հասցնեի ավարտել այսինչ գործը կամ այս բնագավառին վերաբերող գրականությունը եւ անցնել հաջորդին։ Առաջին շրջանում հիմնականում կարդում էի ռուս դասականներին։ Կամաց-կամաց շրջանակը մեծանում էր։ Մի պահից որոշեցի՝ քանի որ պայքարում եմ կոմունիստների դեմ, ուրեմն պետք է իմանամ նրանց գաղափարախոսությունը։ Ու այլ գործերի զուգահեռ, սկսեցի կարդալ սոցիալ-դեմոկրատական շարժման դասականներին։ Ապա մի ծանր գործ ձեռնարկեցի՝ կարդալ Լենինի բոլոր հատորները։ Գիտեի, որ հետաքրքիր են 45-րդ հատորից հետո եղած նրա գործերը, բայց որոշել էի հերթով կարդալ բոլոր 55 հատորները ու սկսեցի առաջին հատորից։ 35-րդ կալանավայր տեղափոխվելիս ահագին առաջ էի գնացել։ Բոլոր ազատ ժամերին մի փոքրիկ աթոռակի վրա նստած ու մահճակալս սեղան դարձրած՝ Լենին էի կարդում։ Շտապում էի։ Պետք էր ավարտել այդ ծանր գործը։ Առջեւում դեռ Մարքս ու Էնգելս կային։ Բայց, փառք աստծո, գործը դրան չհասավ։ Մարքսից ու Էնգելսից կարդացի միայն առավել հետաքրքիր գործերը՝ բաց թողնելով հրապարակված հսկայական ծավալի մի 80 կամ ավելի տոկոսը։ Երբ սեկցիա էր մտնում Տոլիկն ու տեսնում ինձ Լենինի գրքի առջեւ նստած, ձայնում էր.

-Ժողովուրդ, սու՛ս, Հարությունյանը «Հայր մերն» է կարդում։

Ասում էր, որ Մորդովիայում նստած տարիներին ինքն էլ է փորձել դրանք կարդալ, բայց կեսից հրաժարվել է։

Հայ ընթերցողը չափազանց վատ գիտի Խորհրդային տարիների այլախոհական շարժումը եւ հաստատ լավ չգիտի կամ ընդհանրապես չգիտի Խորհրդային տարիների այլախոհական շարժման ամենալուսավոր կերպարներից Անատոլի Մարչենկոյին։ Երկու տողով ներկայացնեմ նրա կենսագրությունը։ Այս ազնվագույն մարդը, լավ ընկերը, ճիշտ կալանավորը, իր գործի կարեւորությունը մինչեւ վերջ հասկացած ու դրան աննահանջ նվիրված գործիչը ծնվել էր 1938-ին։ Առաջին անգամ ծեծկռտուքի համար երկու տարի ազատազրկման էր դատապարտվել 20 տարեկանում՝ 1958-ին։ Մեկ տարի անց կարողացել էր փախչել կալանավայրից։ Երկար ժամանակ թաքնված մնալուց հետո 1960-ին վճռում է անցնել սովետա-իրանական սահմանը, բայց բռնվում է։ Այս անգամ արդեն 1961 թ. Թուրքմենիայի գերագույն դատարանը՝ «հայրենիքի դավաճանություն» հոդվածով դատապարտում է 6 տարվա ազատազրկման ու, արդեն որպես պետական հանցագործ, պատիժը կրում է Մորդովիայում՝ հատուկ վտանգավոր պետական հանցագործների համար նախատեսված կալանավայրում, որտեղ նաեւ քաղաքական բանտարկյալներն են։ Այս նոր միջավայրում նա ձեւավորվում է որպես այլախոհ։ 1966-ին ազատ է արձակվում, իսկ 67-ին հրապարակում է «Իմ ցուցմունքները» գիրքը, որտեղ պատմում է հետստալինյան շրջանի կալանավայրերի մասին։ Գիրքը թարգմանվում է բազմաթիվ լեզուներով։ 1968-ին անձնագրային ռեժիմի խախտման համար նրան ձերբակալում ու մեկ տարվա ազատազրկման են դատապարտում։ Ապա մեկ տարի անց՝ եւս երկու տարի են տալիս։ Այս անգամ արդեն սովետական պետական

ու հասարակական կարգերն արատավորող ակնհայտ հերյուրանքներ տարածելու մեղադրանքով, ինչի համար հիմք էր ծառայել «Իմ ցուցմունքները» գիրքը։ Ազատ է արձակվում 1971-ին։ 1973 թ. «վարչական հսկողության կանոնները չարամտորեն խախտելը» հոդվածով դատապարտվում է 4 տարվա աքսորի։ Ապա 10 տարի ազատազրկման եւ 5 տարի աքսորի է դատապարտվում 1981-ին՝ «հակախորհրդային ագիտացիա եւ պրոպագանդա» հոդվածով։

Մարչենկոն դատապարտվել էր վեց անգամ, ընդհանուր հաշվարկով՝ 21 տարվա ազատազրկման եւ 9 տարվա աքսորի, որից կրել էր 16 տարի ազատազրկումը եւ 4 տարի աքսորը։

Երեք գրքի հեղինակ էր՝ «Իմ ցուցմունքները», «Ապրիր ինչպես բոլորը», «Տարուսից մինչեւ Չունա»։ Կատակով ասում էր՝ պատժաչափ՝ գիրք, գիրք՝ պատժաչափ։

Ազատազրկման վայրերում ձեռք բերած հիվանդության ու նորմալ բժշկական օգնության բացակայության պատճառով խլացել էր։ Ակնոցի տեսքով լսողական սարք էր կրում։

-Չես պատկերացնի, թե ինչ լավ բան է խուլ լինելը, - ասում էր նա, - տե՛ս, թե ինչքան շատ հիմարություններ ես ստիպված լինում լսել օրվա ընթացքում։ Իսկ ես լսում եմ միայն այն, ինչ ինձ է պետք։ Հանում եմ ակնոցս ու վերջ։

Քաղաքական կալանավայրերը սպասարկող ՊԱԿ-ի բարձրաստիճան սպաներից ոմանք, օրինակ՝ վարչության պետ, գնդապետ Պոմազը կամ նրա տեղակալ Աֆանասեւը, իրենց ողջ կարիերան կատարել էին, ինչպես Տոլիկն էր ասում, իր աչքի առաջ։ Դեռ սկսնակ լեյտենանտ էին եղել, երբ Տոլիկը հայտնվել էր քաղաքական կալանավայրում։ Նրանք լավ ճանաչում էին Տոլիկին, իսկ Տոլիկը՝ նրանց։

-Այ, օրինակ, երբ դու կալանավայր մտար, ի՞նչ արեցիր առաջինը, - ժպտալով հարցնում է Տոլիկը։

-Ոչ մի բան, զարմացած շուրջբոլորս էի նայում։

-Իսկ ես, քանի դեռ կալանավորներն աշխատանքային գոտուց չէին եկել, անցնում էի մահճակալների մոտով ու ծանոթ ազգանուններ էի փնտրում, - ծիծաղում է, - ահա, թե ինչ է նշանակում՝ լինել հին կալանավոր։

Կալանավայրի աշխատանքային գոտում ինձ ու Տոլիկին հանձնարարել են ինչ-որ փոս փորել։ Տոլիկը փոսի մեջ է, այնտեղից հողը վերեւ է նետում, իսկ ես հավաքում ու կույտ եմ անում։ Փոսն ահագին խոր է։ Գալիս է ՊԱԿ վարչության պետ Պոմազը։ Անհասկանալի է, թե ինչու է կալանավայրում ու մենակ։ Մոտենում է մեզ, բարեւում է ու, նկատելով Տոլիկին փոսի մեջ, մի տեսակ ուրախ ժպտալով, ինչպես կժպտան հին ծանոթին, հարցնում է.

- Մարչենկո, ի՞նչ ենք փորում։

- Գերեզման կոմունիզմի համար, պետ, գերեզման, - հնչում է Տոլիկի ծիծաղախառը պատասխանը։

1983-ի ընթացքում մեզ հաջողվեց բավականին շատ տեղեկություններ դուրս փոխանցել։ Փոքրիկ ընթերցարան ունեինք, որի լուսամուտը դեպի կալանավայրի տարածք էր նայում։ Դերերը հստակ բաշխված էին։ Սեղանի մոտ նստած Տոլիկը գրում էր տեքստը։ Դրսում՝ նստարանին, դեմքով դեպի լուսամուտը նստած՝ իր սիրելի տնտեսագիտական ամսագրերն էր կարդում Ստեփան Խմարան։ Տարածքի պարագծով քայլում էր Անդրեյ Շիլկովը։ Անդրեյը վտանգը չնկատել չէր կարող։ Վտանգ՝ նշանակում էր հսկիչի տարածք մտնելը։ Այս դեպքում նա պետք է նշան աներ Ստեփանին, նշանը տեսնելով՝ Ստեփանը պետք է գլխից գլխարկը հաներ։ Իսկ ես, որ կանգնած էի ընթերցարանի լուսամուտի մոտ՝ պետք է զգուշացնեի Տոլիկին։ Համակարգը հստակ ու անխափան աշխատում էր։ Փաթեթը հաջող դուրս ուղարկելուց հետո սկսեցինք նախապատրաստել տեղեկությունների հաջորդ խմբաքանակը։ Սպասվում էր, որ տեսակցություն է ստանալու Անդրեյ Շիլկովը։ Վտանգ կար, որ ադմինիստրացիան այնպես է անելու, որ Անդրեյը տեսակցության մասին իմանա ամենավերջին պահին։ Այս դեպքում արդեն նա չէր հասցնի իր հետ վերցնել տեղեկությունների փաթեթը։ Իսկ այդ փաթեթը տեսակցությունների սենյակ տանելու (խոսքը միայն երկարատեւ՝ մեկից երեք օր տեւող տեսակցությունների մասին է) եւ այդ սենյակից դուրս՝ Մոսկվա՝ «Խրոնիկային» առնչվող մարդուն հասցնելու մեկ ճանապարհ կար՝ մարդու օրգանիզմը, ավելի հստակ՝ հաստ աղին՝ հետանցքը։ Տեղեկությունները գրվում էին շատ բարակ թղթի վրա։ Խառատի հաստոցի կտրիչները ժանգոտելուց պաշտպանելու համար փաթաթված էին լինում բարակ ու յուղոտ թղթի մեջ։ Մենք այդ թուղթը եռացնում էինք, ինչի արդյունքում յուղը դուրս էր գալիս ու թղթի վրա հնարավոր էր լինում գրել։ Շատ մանր տառերով գրվում էր ողջ տեքստը, ապա մի քանի տակ փաթաթվում էր պոլիէթիլենով ու կապվում։ Փաթեթը պահվում էր հետանցքում եւ այլ աներեւակայելի տեղերում։ Ինձ պատմել են, որ մարդ է եղել, որը թելով կապած փաթեթը կուլ է տվել, իսկ թելի ծայրն ամրացրել է ատամին։ Տեսակցությունների սենյակում փաթեթն ուղղակի դուրս է քաշել։ Իրական ու հորինված շատ պատմություններ են շրջում։

Եւ ահա, որպեսզի անակնկալի չգանք, Անդրեյը հանձն առավ փաթեթն անընդհատ պահել իր ուղիղ աղիում։ Սա պետք է որ Անդրեյին աներեւակայելի անհանգստություն պատճառեր։ Այս ընթացքը շատ երկար տեւեց, երեւի ամսից ոչ պակաս։ Մի օր էլ տեղեկացրին, որ Անդրեյը զրկվում է տեսակցության իրավունքից։ Անդրեյի աղին վնասվել էր, արյունահոսություն էր սկսվել։ Այնքան բարդ էր նրա վիճակը, որ կալանավայրի ղեկավարությունն էր արդեն հասկանում, որ մի բան անել է պետք։ Հիվանդանոց տեղափոխեցին։ Նրա վիճակը կարգավորվեց միայն ազատ արձակվելուց հետո, երբ դրսում նորմալ բուժում ստացավ։ Փաթեթը վերադարձավ Տոլիկի մոտ։ Պետք է հուսալի թաքստոցում պահվեր։ Տոլիկը որոշել էր պահել հնոցում, ուղղաձիգ զոդված մի երկմետրանոց խողովակի մեջ։ Տեղը միայն ես ու ինքը գիտեինք։ Փաթեթին օղակ էր ամրացրել ու նետել խողովակի մեջ։ Հարկ եղած դեպքում երկար մետաղալարի կեռ ծայրով պետք էր բռնել օղակից եւ փաթեթը դուրս քաշել։ Բայց դեպքերը շատ ավելի արագ զարգացան։ Ինձ պատժախցում երկար պահելուց հետո 1984-ի, ինչքան կարողանում եմ հիշել, աշնան սկզբին 35-ից տեղափոխեցին 37-ի փոքր կալանավայր, իսկ իմ փոխարեն 35 բերեցին Մարզպետին։ Ստեփանին տարան 36։ Ժամանակ առաջ հիվանդանոցից 37-ի փոքր կալանավայր էին տարել Անդրեյ Շիլկովին։ Մի կարճ շրջան

այնտեղ միասին էինք։ Տոլիկը 35-ում 37-ից տեղափոխված Մարզպետ Հարությունյանի եւ Վյաչեսլավ Դոլինինի հետ էր։ Ավելի ուշ՝ ինձանից հետո, 37-րդ էին տեղափոխել Տոլիկին։

Շատ ավելի ուշ, արդեն 2000-ականներին 35-րդ կալանավայր էր այցելել Իվան Կովալյովը։ Նա ինձ պատմել է, որ կալանավայրին կից թանգարանում տեսել է գաղտնարանից գտնված տեքստ, որն, իր կարծիքով, Տոլիկի ձեռքով է գրված։ Չի բացառվում, որ դա հենց մեր փաթեթն է։ Չնայած՝ Տոլիկը կարող էր արդեն առանց մեզ մեկ այլ փաթեթ պատրաստել ու թաքցնել։

Տոլիկը դեմ է ծխելուն։

-Տես, - ասում էր, -խոսքը միայն առողջությանը չի վերաբերում։ Քեզ կախվածության մեջ ես դնում։ Երբ քեզ ցանկանում են պատժել՝ զրկում են սիգարետից, ու դու արդեն պատժված ես զգում քեզ։ Չպետք է հակառակորդիդ քեզ պատժելու լծակներ տաս։

Ինձ հերթական անգամ զրկում են գնումներ կատարելու իրավունքից։ Տոլիկը խոստացել է՝ մի կողմ է դնելու իր սկզբունքը եւ ինձ համար մի քանի տուփ սիգարետ է գնելու։ Տաք ու հաճելի օր է։ Կանգնած եմ ճաշարանի շենքի մոտ։ Սիգարետի մի տուփ վեր պարզած, իսկ մյուս ձեռքի մեջ՝ մի քանի հատ, արագ քայլերով դեպի ինձ է գալիս Տոլիկը եւ կանչում.

-Վերցրու, քեզ համար սիգարետ եմ գնել։

Ու հանկարծ ճաշարանի մոտի սյանը նստած ագռավը թռչում ու Տոլիկի վեր պարզած ձեռքից ճանկում է ծխախոտատուփը։ Մենք կարկամած ենք։ Ագռավը նստում է բուժկետի տանիքին ու փորձում ուղղել անհարմար բռնած տուփը, բայց սա ընկնում է ու տանիքի վրայով սահում ներքեւ։ Երեքս էլ դեպի տուփն ենք սլանում՝ ես, ագռավն ու Տոլիկը։ Մենք ագռավից ավելի ճարպիկ գտնվեցինք։ Իսկ ագռավը մեր Ֆրոսյան էր, ձեռնասուն մեր ագռավը։ Նա ամեն անգամ նստում էր ճաշարանի մոտի սյան վրա ու մեր ձեռքից ուտելիք էր վերցնում։ Տեղյակ էլ չեմ, թե ով էր ընտելացրել։ Կալանավայրում նաեւ կատու կար Վասյա անունով, որին կերակրում էինք։ Նրա խնամքով Աքսյոնով ազգանվամբ մի ծերունի էր հիմնականում զբաղվում։ Պատմում էին, որ մինչեւ իմ այստեղ գալն այս կալանավայրում կատուներ շատ են եղել։ Ադմինիստրացիայից ինչ-որ մեկը մտածել է, որ կալանավորները կատուների վրա կապելով տեղեկություններ կարող են դուրս ուղարկել ու որսացել են բոլոր կատուներին եւ ողջ-ողջ հնոցի մեջ են նետել։ Աքսյոնովը պատմում էր, որ դեռ կենդանի, բայց այրվող կատուները մինչեւ սատկելը խելակորույս վազում էին հսկայական ջերմություն արձակող հնոցի մեջ։ Չի բացառվում, որ մեր Ֆրոսյային էլ սպանած լինեն։ Ամեն դեպքում, մինչեւ իմ այնտեղից գնալը Ֆրոսյան կար։

Ձմռանը, եթե պատժախցում մարդ էր լինում, գիշերները հնոցում աշխատողներս ինչ-որ ժամանակով փակում էինք կալանավայրից դեպի ավան գնացող տաք ջրի խողովակը եւ ավելացնում տաք ջրի հոսքը դեպի պատժախուց, որ այնտեղ նստած մեր սոված ընկերը գոնե քիչ մրսեր։ Մեր հնոցն էր ջերմացնում ե՛ւ ավանը, ե՛ւ մեր կալանավայրը։ Գաղափարի հեղինակը Տոլիկն էր։ Փակում էինք որոշ ժամանակով, ապա կրկին բացում ու կրկին փակում։ Այսպես, մի քանի անգամ՝ ողջ գիշերվա ընթացքում։ Ցերեկը նման բան անել չէինք կարող։ Մի գիշեր էլ Մարչենկոյին բռնացրին այս գործի վրա ու պատժախուց տարան։ Տոլիկը խլության

պատճառով չէր լսել, թե ինչպես են իրենց մոտ սառը խողովակներ նկատած հսկիչներն ուշ գիշերով հնոցին մոտենում։

1985-ին, առանց հաշվի առնելու նրա առողջական վիճակը, 37-րդ կալանավայրում սկզբում փակում են կալանավայրի բանտում (ПКТ), ապա փոխելով նրա ռեժիմը՝ Չիստոպոլ են տեղափոխում։ 1986-ի օգոստոսի 4-ին Անատոլի Մարչենկոն հացադուլ է հայտարարում բոլոր քաղբանտարկյալներին ազատ արձակելու պահանջով։ Նրա հացադուլը 117 օր է տեւում։ 1986-ի դեկտեմբերի 8-ին 49 տարեկանում վախճանվում է։

Եվգենի Անդրյուշին

Ժենյա Անդրյուշինը ֆիզիկոս էր, գիտությունների թեկնածու։ Նաեւ փիլիսոփայություն էր ուսումնասիրել։ Բազմաբնույթ հետաքրքրություններով, բազմակողմանի զարգացած մարդ էր։ Նստած էր հակախորհրդային ագիտացիայի ու պրոպագանդայի համար։ Մոսկվայից էր։ Ծնվել էր 1951-ին, իսկ 1982-ին դատապարտվել էր 3 տարի ազատազրկման եւ 2 տարի աքսորի։

35-րդ կալանավայրում ես նորեկ եմ։ Անդրեյ Շիլկովի հետ կալանավայրի տարածքով քայլում ու զրուցում ենք հայ ժողովրդի պատմությունից։ Անդրեյը պատմաբան է ու ահագին բան գիտի մեր պատմությունից։ Խոսում ենք Եղեռնից, Հայաստանի կորսված տարածքներից։ Մեզ է մոտենում Ժենյան։ Անդրեյը կարճ տեղեկացնում է նրան մեր զրույցի բովանդակության մասին։ Զրուցում ենք միասին։ Միանգամից պարզում եմ՝ Անդրյուշինը հետաքրքիր զրուցակից է ու մտքում որոշում եմ՝ հաճախ եմ հետը քայլելու։

Գիտի, որ ինքնակրթությամբ եմ զբաղվում ու հետն էլ մարքսիզմ-լենինիզմ եմ ուսումնասիրում։ Պարզվում է՝ ինքն այս ամենը վաղուց, դեռ ուսանողական տարիներին, անցել է։ Բերում է երկու գիրք՝ Ալբերտ Շվեյցարի մասին եւ Շվեյցարի «Նամակներ Լամբարենեից»-ը, որոնք կարդում եմ մեծ հետաքրքրությամբ։

Հաջորդ օրերին սկսում ենք կարդալու եւ ուսումնասիրելու ենթակա գրականության նոր ցուցակ կազմել ինձ համար։ Ցուցակը շատ մեծ է ստացվում։ Ոչ մի կերպ չի տեղավորվում իմ ազատազրկման ժամկետի մեջ։

-Դիմում գրիր Հայաստանի ՊԱԿ, թող պատժաչափդ ավելացնեն, - ծիծաղում է Ժենյան։

Մեր ցուցակը հարուստ էր, մեծ, ու սրան զուգահեռ՝ հետաքրքիր, անչափ հետաքրքիր զրույցներ ու քննարկումներ։ Վստահորեն կարող եմ կյանքիս այս շրջանը իմ վերաձեւավորման շրջան անվանել։ Այն Հարությունյան Վարդանը, որ կար մինչեւ 1983 թվականը, էական փոփոխություններ կրեց այդ շրջանում, ու այսօրվա Հարությունյան Վարդանն ավելի շատ 1983-ի արդյունք է։

1985-ին, մի քանի ամսվա տարբերությամբ, մենք աքսորավայրում էինք։ Ես՝ Մագադանում, իսկ Ժենյան՝ Կոմի ինքնավար մարզում։ Իրար նամակ էինք գրում։ Ժենյան 1987-ին ազատ արձակվեց, իսկ մեկ տարի անց եկավ իմ ազատվելու ժամանակը։ Ժենյան գիտեր, որ Մոսկվայով եմ Հայաստան վերադառնալու եւ ինձ հրավիրեց իր տուն։ Խառը, բայց նաեւ անչափ հետաքրքիր ժամանակաշրջան էր 1988 թվականը։ Մեկ շաբաթ, գուցեեւ ավելի, մնացի Ժենյայենց տանը՝ մինչ Մոսկվայում նախաձեռնած մի քանի գործ ավարտելս։ Հիմա էլ մեր կապը խզված չէ։ Ժենյայի հետ բարեկամությունս իմ կարեւորագույն ձեռքբերումներից է։

Անդրեյ Շիլկով

Անդրեյ Շիլկովը, Անդրեյը, Անդրյուխան, երկու մետրանոց իմ ընկերը, որ այսօր այլեւս չկա։ Այնքան գոհ եմ ճակատագրից, որ նրա մահից առաջ վերջին հանդիպում ունեցանք։ 2007-ի դեկտեմբերին Իսրայել էի գնացել՝ Երուսաղեմ։ Անդրեյը հենց Երուսաղեմում էլ ապրում էր իր ընտանիքի հետ։ Նա ոչ միայն Երուսաղեմի բնակիչ էր, այլ նաեւ սիրահարված էր այդ քաղաքին ու ամենալավ էքսկուրսավարից շատ ավելի լավ գիտեր քաղաքը։ Օրերով կարող էր պտտել մարդուն այնպիսի վայրերով, որտեղ էքսկուրսավարները չեն էլ տանի։ Նա շատ էր սիրում հին քաղաքի տանիքներն ու այդ տանիքներից արված բազմաթիվ յուրօրինակ լուսանկարներ ուներ։

2008-ի նոյեմբերի 30-ին Իրինայից՝ Անդրեյի տիկնոջից, որն աքսորավայրում մշտապես ինձ նամակ գրող՝ հրեական շարժման ակտիվիստ Ասյա Լաշչիվերի դուստրն է, կարճ նամակ եմ ստանում.

-Մահացավ Անդրեյ Շիլկովը։

Սա այն դեպքն է, երբ սարսափելի լուրը լսելիս ոչ թե կարկամում, այլ զարմանում ես։ Չի կարող պատահել։ Անհնարին բան է։ Բայց մեր այս կյանքում նաեւ անհնարին բաներ են պատահում։ Անդրեյը 56 տարեկան էր։

Մենք ծանոթացանք 35-րդ կալանավայրում ու շատ արագ մտերմացանք։ Այնուհետեւ մի կարճ շրջան միասին էինք 37-ի փոքրում։ Նա 1985-ի ապրիլին՝ իր երեք տարի պատժաչափը կրելուց հետո աքսորի դուրս եկավ Տոմսկի, իսկ ես՝ նույն թվականի հուլիսին՝ Մագադանի մարզում։ Երկուսիս աքսորի ժամկետն էլ երեք տարի էր։ Մշտապես նամակագրական կապի մեջ ենք եղել։

Անդրեյը հագնում էր աներեւակայելի մեծ՝ 46, թե՞ ավելի մեծ համարի կոշիկ։ Աշնանը ձմեռային տաք կոշիկ գնելու նպատակով գնացել էր խանութ։ Նրան ասել էին, որ հույսը կտրի, այդքան մեծ կոշիկ իրենք չունեն, ու քիչ հավանական է, որ ունենան։ Գնացի խանութ։ Պարզվեց՝ Մագադանի մարզում այդ չափի կոշիկներ լինում են։ Ընտրեցի ցրտաշունչ

Մագադանին հարմարեցված ամենատաքը եւ ուղարկեցի Անդրեյին։ Մի քանի օրից նամակ եմ ստանում՝ լուսանկարով. մահճակալին պառկած է ժպտերես Անդրեյը, իսկ գլխավերեւում՝ իմ ուղարկած կոշիկներն են։ Գրել է.

-Ես դրանք միայն գլխավերեւում եմ պահելու։

Անդրեյը գրականություն շատ լավ գիտեր։ Ոչ միայն ռուս, այլ համաշխարհային գրականության մասին է խոսքս։ Ճապոնացիներից սկսած՝ մինչեւ եվրոպացիներ ու ամերիկացիներ, ու ըստ ժամանակաշրջանների։ Հետաքրքիր էր նրա հետ զրուցելը։ Իսկ պոեզիան նրա տարերքն էր։ Ե՛ւ սիրում էր, ե՛ւ լավ արտասանում էր, ե՛ւ շատ լավ գիտեր։ Ես էլ շատ բանաստեղծություններ անգիր գիտեի։ Ծխարանում նստած հերթով արտասանում ու ոգեւորում էինք իրար։

Մեր կալանավայրերում շատ էին գրականության ու պոեզիայի իսկական գիտակները, գնահատողներն ու սիրահարները։ 37-րդ գաղութում Մարկ Մորոզովն անընդհատ ասում էր, թե ինձ հետ պետք է մաթեմատիկա պարապի։ Ասում էր՝ քեզ մոտ կստացվի։ Ինձ համոզելու նպատակով ոգեւորված խոսում էր մաթեմատիկայի ու պոեզիայի նմանություններից ու գեղեցկությունից։ Այդ երկու տարբեր գեղեցկություններն իրար հետ համեմատելու ընթացքում ինձ համար անակնկալ սկսեց արտասանել Բլոկի «Ռեստորանում» բանաստեղծությունը։

Никогда не забуду (он был, или не был,
Этот вечер): пожаром зари
Сожжено и раздвинуто бледное небо,
И на жёлтой заре - фонари.

Այնքան խոր զգացմունք կար նրա արտասանության մեջ, որ զարմացած էի մնացել։ Ինքս էլ Բլոկից շատ բանաստեղծություններ անգիր գիտեի, բայց հիվանդ, հյուծված, դժվարությամբ շարժվող ու անատամ Մորոզովի այդքան խոր ու այդքան զգացմունքային արտասանությունը անսպասելի էր ու դաջվել է հիշողությանս մեջ։ Ամեն անգամ Բլոկ կարդալիս պարտադիր Մորոզովին եմ հիշում։

Անդրեյը հատուկ չէր նստում ու հավանած բանաստեղծությունն անգիր չէր անում։ Դրանք ավտոմատ էին հիշվում, եւ նա ինքնամոռաց արտասանում էր։ Հսկայական հատվածներ պոեմներից, անգամ՝ ամբողջական պոեմներ։ Նրա ասմունքը գեղեցիկ էր։ Այնպես, ինչպես նա էր կարողանում արտասանել, ես այլեւս որեւէ մեկից չեմ լսել։

Ես էլ շատ բանաստեղծություններ անգիր գիտեմ։ Ավելի ճիշտ՝ գիտեի։ Հիմա արդեն կամաց-կամաց մոռանում եմ։ Ճիշտ է, Անդրեյի պես գեղեցիկ արտասանել երբեք չեմ կարողացել, բայց ժամերով ու հաճույքով արտասանում էի։ Պոեզիան միշտ էլ ինձ հետ է եղել ու օգնել է ինձ։ Երբ փնթի ու կեղտոտ բանտերով էի անցնում կամ այս ու այն կալանավայրում էի գտնվում՝ մտքումս միշտ սիրածս բանաստեղծություններն եմ կարդացել, ու կյանքս անհամեմատ հեշտացել է։ Երբ մեծ հաջողություն է եղել, ու ինչ-որ պահի մենակ եմ եղել՝ կարդացել եմ բարձրաձայն, ինչը բանտերի համար մեծ շնորհ էի համարում.

-Թող աշխարհից կտրված ու աշխարհից մոռացված այս կեղտոտ պատերը, հազար տեսակի հայտնի ու անհայտ դաժանություններ, խեղված կյանքեր տեսած այս պատերը Տերյան լսեն։ Թող Տերյան լսեն ու մի քիչ մաքրվեն։

Ես էլ կանխամտածված երբեք չեմ նստել ու բանաստեղծություն անգիր չեմ արել։ Եթե հավանել եմ բանաստեղծությունն, ապա մի քանի անգամ կարդալուց հետո դարձել է իմը, եւ ես կարողացել եմ արտասանել։ Ե՛ւ հայերեն, ե՛ւ ռուսերեն։ Հիշում եմ՝ կալանավայրում մեկը Քիփլինգ ուներ։ Կարճ ժամանակով վերցրի։ «Արեւելքի եւ արեւմուտքի մասին բալլադը» առաջին անգամ էի կարդում։ Շատ հավանեցի։ Մտածեցի՝ պետք է արտագրել տետրում։ Գրքի տիրոջն ամեն վայրկյան կարող են մոտիցդ տանել, ու հետո շատ կզղջաս, որ չես արտագրել։ Արտագրելու ընթացքում արդեն պարզ էր, որ դաջվել է հիշողությանս մեջ։

Զարմանալի է, բայց պատահում էին բանաստեղծություններ, որոնք շատ էի հավանում, բայց դրանք ոչ մի կերպ չէին դառնում բերանացի հիշվող գործեր։ Արտագրել էի ու առիթի դեպքում միշտ էլ կարդում էի Ուայլդի «Ռեդինգյան բանտի բալլադը», բայց այդպես էլ հիշողությանս մեջ չտպավորվեց։ Հիմա էլ եմ դեպքից դեպք սիրով կարդում, բայց ինձ համար այդպես էլ ոչ թե որպես արտասանվող, այլ որպես կարդացվող գործ է մնում։

Հայաստանում հրապարակված որեւէ նոր նշանակալի գործ՝ անկախ ծավալից, ես ստանում էի։ Երկու քույր ունեմ՝ Նարինե ու Կարինե։ Իրենց առօրյա գործերից հետո՝ նրանք գիշերները նստած արտագրում էին գրքերից ու հանդեսներից ծավալուն հատվածներ եւ ուղարկում ինձ։ Ես շատ ու հաստափոր նամակներ էի ստանում քույրերիցս։ Արտագրում էին ե՛ւ իմ պատվիրած, ե՛ւ իրենց նախընտրած գործերը։

Հետագայում, երբ աքսորավայրում էի, Անդրեյն իր մոսկովյան կապերի միջոցով կազմակերպել էր, եւ ինձ շատ լավ գրականություն էին ուղարկում։

1987-ին Անդրեյը վաղաժամ ազատ արձակվեց։ Մոսկվայում Սերգեյ Գրիգորյանցը սկսել էր հրապարակել իր «Գլասնոստ» հանդեսը։ Անդրեյը «Գլասնոստ»-ում էր աշխատում։ Իսկ ավելի ուշ ընտանիքով Իսրայել տեղափոխվեց։

35-րդ կալանավայրում հիշատակման արժանի շատ լավ, հայտնի ու լուսավոր գործիչներ կային։ Այնտեղ էր ուկրաինական Հելսինկյան խմբի անդամ **Միկոլա Մատուսեւիչը**։ Ծնվել էր 1947-ին եւ եղել էր ուկրաինական Հելսինկյան խմբի անդամներից մեկը։ 1977-ին Միրոսլավ Մարինովիչի հետ միասին կալանավորվում են։ Երկուսն էլ դատապարտվել էին հոդվածով նախատեսված առավելագույն պատժաչափի՝ 7 տարի ազատազրկում եւ 5 տարի աքսոր։ Կալանավայրում ցուցաբերած ըմբոստ վարքի պատճառով Միկոլային 3 տարով Չիստոպոլի բանտ էին տեղափոխել։ Մենք ծանոթացանք, երբ նա իր 3 տարվա այդ պատժաչափն ավարտել ու 35-րդ կալանավայր էր վերադարձել։ Մինչեւ այսօր հրաշքով ինձ մոտ պահպանվել է նրա հումորիստական մակագրությամբ իրենց տան կատվի երկու լուսանկարը։ Եթե Միկոլայի լուսանկարները լինեին, անկասկած կառգրավեին, իսկ կատվի լուսանկարները գրքերի հետ մնացել ու պահպանվել են։

Իվան Կովալյովը նույնպես 35-ում էր։ Նրանց ընտանիքից նույն՝ «հակախորհրդային ագիտացիա եւ պրոպագանդա» հոդվածով նստած էին ինքը, հայրը՝ մոսկովյան հայտնի այլախոհ Սերգեյ Ադամի Կովալյովը, եւ կինը՝ Տատյանա Օսիպովան։ Հայրը կալանավորվել էր 1974-ին եւ դատապարտվել 7 տարվա ազատազրկման ու 3 տարվա աքսորի։ Իվանի կինը՝ Տատյանան, կալանավորվել էր 1980-ին եւ դատապարտվել 5 տարվա ազատազրկման ու 5 տարվա աքսորի, իսկ ինքը՝ Իվանը, կալանավորվել էր 1981-ին եւ դատապարտվել 5 տարի ազատազրկման եւ 5 տարի աքսորի։ Ահա այսպիսի ընտանիք։ Ես միշտ մտածել եմ, թե ինչքան ծանր պետք է լիներ տանը մնացած նրանց ընտանիքի անդամների վիճակը։ Մի բան հաստատ է՝ եւ ոչ միայն Կովալյով ընտանիքի դեպքում. ընտանիքի անդամներն անհամեմատ ավելի շատ են տառապում ու շատ ավելի ծանր են տանում իրենց հարազատի ազատազրկումը, քան ինքը՝ ազատազրկվածը։

Իվանը շատ հաճախ էր պատժիչ մեկուսարանում հայտնվում։ Նույնիսկ ավելի՛ քան հաճախ։ Հիմա չեմ հիշում նրա այնտեղ ընկնելու պատճառները, բայց նա ու Վալերի Սենդերովն այս հարցում առաջատարներ էին։ Ամենաչնչին ու ամենաանշան պատճառով Իվանին կարող էին փակել կարցերում։ Մի դեպք եմ հիշում։ Ես պատժիչ մեկուսարանում էի։ Այստեղ է նաեւ Իվանը։ Մի երկու օր առաջ են բերել։ Կանչում եմ.

-Վանյա, ինչի՞ համար։

-Սատանան գիտի։ Չգիտեմ, - պատասխանում է Իվանը։

Երբ ինձ աքսոր տանելուց առաջ՝ արդեն 1985 թվականին, 36-րդ կալանավայրից մեկուսացման նպատակով կալանավայրի հիվանդանոց տարան, այնտեղ էր նաեւ Իվանը։ Երեք քաղաքական կալանավայրերն ունեին մեկ ընդհանուր հիվանդանոց, որը 35-րդ կալանավայրին կից էր։

Լուսամուտից զրուցեցինք իրար հետ։ Վստահելի մարդու մոսկովյան հեռախոսահամար տվեց, որով կարող էի զանգահարել։ Երբ արդեն աքսորավայրում էի, զանգահարեցի։ Մոսկվացին, երբ իմացավ, թե ով եմ եւ որտեղից եմ զանգահարում, շատ չոր տոնով ասաց, որ այլեւս չզանգահարեմ իրեն։ Իմ աքսոր գնալուց հետո Վանյայի հետ ցավալի ու ինձ համար անհասկանալի բաներ էին կատարվել։ Նա գնացել էր ՊԱԿ-ի հետ համագործակցության։ Ինչպես հետո ինքն է բացատրել՝ Տանյայի՝ կնոջ փրկության համար, որին նոր պատժաչափ էր սպառնում։ Իրավիճակն, իհարկե, հեշտերից չէ։ Այստեղ յուրաքանչյուրն իր համար պետք է ընդունելի ելք գտնի։ Տարբերակները քիչ են։ Վանյանայլ ելք գտնել, երեւի, չէր կարողացել։ Ափսոս, իհարկե, շատ ափսոս։

Շատ լավ բարեկամներ էինք դարձել էստոնացի այլախոհ **Արվո Պեստիի** հետ։ Արվոն բանասեր էր, ռուս գրականության մասնագետ։ Ուսումը կիսատ էր մնացել, ազատ արձակվելուց հետո շարունակեց ու ավարտեց։ Նա ծնվել էր 1956-ին, իսկ 1983-ին կալանավորվել ու դատապարտվել էր 5 տարվա ազատազրկման ու 2 տարվա աքսորի։

Մեր կապը Արվոյի հետ չէր դադարել։ 1988-ից՝ իմ ազատ արձակվելուց հետո, մշտական կապի մեջ էինք։ 1989-ի ապրիլին Էստոնիայում ազգային շարժումների ներկայացուցիչների

հավաք էր կազմակերպվել։ Ինձ նույնպես հրավիրել էին։ Գիշերեցի ոչ թե հյուրանոցում, այլ Արվոյի տանը։ Ողջ գիշերը զրուցեցինք։

2010 թ. Արվոն Էստոնիայում այլախոհական պատմության մասին գիրքն էր հրապարակել։ Գրել էր, որ հրատարակված գրքի ողջ խմբաքանակը մեկ օրում վաճառվել է։ Ահա թե ինչքան մեծ է Էստոնիայում հետաքրքրությունը սեփական պատմության այդ շրջանի նկատմամբ։ Սա երեւի մեր ու էստոնացիների էական տարբերություններից մեկն է։ Նա ինձ համոզում էր թողնել ամեն ինչ ու գրել։ Բացատրում էի, որ չեմ կարող, որ մեր երկրում իրավիճակը շատ խառն է, եւ ես չեմ կարող այդ ամենին անմասն մնալով տանը հանգիստ նստել ու գրել։ Սրան ի պատասխան գրել էր. «Հա, լավ հոտ չի գալիս։ Չէ՞ որ դուք երկու հիանալի հարեւան ունեք՝ Ռուսաստանը եւ Ադրբեջանը։ Ինչպե՞ս եք կարողանում այդտեղ ապրել։ Ձեզ մոտ երբեք խաղաղություն չի լինելու»։ Համոզում էր ինձ Էստոնիա տեղափոխվել։

2010-ի սեպտեմբերին Արվոյի հասցեից նամակ ստացա. «Ձեր ընկեր Արվոն այլեւս չկա»։ Մահացել էր Արվոն քնած ժամանակ, իսկ դրա մասին ինձ հայտնում էր կինը։

Գավրիլյուկ

Կալանավայրում բնակելի գոտուց կալանավորներին առավոտյան աշխատանքային գոտի բաց են թողնում հաշվառելուվ։ ДПНК-ն կամ հսկիչը կարդում է կալանավորների անունները, ինչից հետո կալանավորները հերթով անցնում են աշխատանքային գոտի։ Եթե հարկ են համարում, ապա՝ ե՛ւ աշխատանքային գոտի թողնելուց, ե՛ւ հետ՝ բնակելի գոտի անցնելիս, խուզարկում են։ 35-րդ կալանավայր գալուս առաջին օրերին զարմանքով տեսա, որ այստեղ առավոտյան հաշվառումը կատարում է տարեց մի կալանավոր։ Այդ կալանավորը Գավրիլյուկն էր։

Գավրիլյուկը պատերազմի հանցագործ էր։ Ինքն իր մասին ոչինչ չէր պատմում, բայց նրա մասին տարատեսակ պատմություններ էին շրջում։ Բոլոր այդ պատմություններն էլ հաստատում էին, որ նա պատերազմի ժամանակ ծառայության էր անցել ֆաշիստների մոտ, անգամ՝ պաշտոններ էր զբաղեցրել։ Օկուպացված տարածքներում զբաղվել էր հրեաների ու կոմունիստների հայտնաբերման աշխատանքներով։ Մասնակցել էր զանգվածային սպանությունների։

Ֆաշիստական զորքերի նահանջից հետո կարողացել էր այլ փաստաթղթերով ու այլ անունով մնալ արդեն խորհրդային դարձած տարածքում ու աշխատանքի անցնել։ Դարձել էր կոմունիստ ու պաշտոնատար անձ։

1968-69 թթ. նրան բացահայտել, կալանավորել ու մահապատժի էին դատապարտել, բայց հետո՝ ինչ-որ հրաշքով 15 տարվա ազատազրկմամբ էին փոխարինել։

Կալանավայրում Գավրիլյուկը նույն ավյունով ու եռանդով ծառայում էր ադմինիստրացիային, ինչպես ծառայել էր ֆաշիստներին, ապա՝ կոմունիստներին։ 1984-ի գարնան-ամռան կողմերը նրա պատժաչափն ավարտվում էր։ Արդեն ազատ արձակվելու բոլոր պատրաստությունները տեսել էր։ Հավաքել էր իրերը, ոմանց՝ ում հետ շփվում էր, արդեն հաջողություն էր մաղթել։ Հաջորդ օրը պետք է դուրս գար։ Նախորդ օրը որոշել էր մի լավ լողանալ։ Դրա համար եկել էր աշխատանքային գոտի՝ հնոց, որտեղ մշտական տաք ջուր կա։ Իսկ գոլորշու առկայությունը շոգեբաղնիքի հնարավորություն էր ընձեռում։ Հնոցում աշխատողներս այդ հաճույքից մշտապես օգտվում էինք։ Գավրիլյուկը հանդերձարանում հանվում է, մտնում բաղնիք ու այնտեղից այլեւս դուրս չի գալիս։

Որոշ ժամանակ անց բացում են դուռը եւ հայտնաբերում նրա անշնչացած դին։

Գավրիլյուկը տարեց մարդ էր, բայց ֆիզիկապես ամուր էր եւ ուժեղ։ Բոլորն էլ վստահ էին, ես այսօր էլ եմ վստահ, որ նրան այնտեղ սպանել են։ Այլ բան լինել չէր էլ կարող։ Ճիշտն ասած, առանձնապես չէին էլ փորձում թաքցնել, որ սպանել են։ 15 տարի առաջ սովետները պետք է գնդակահարած լինեին նրան, ինչ-որ պատճառով այդ ժամանակ դա չէին արել, բայց նաեւ չէին մոռացել եւ 15 տարի անց իրենց դատավճիռն ի կատար ածեցին։

Պատերազմի հանցագործները հետաքրքիր պատմություններ ունեին։ Օրինակ, բելոռուս Բարկովսկին պատմում էր, որ ֆաշիստների մոտ ծառայելիս ներգրավված էր գնդակահարվածների դիակները թաղելու աշխատանքներում։ Ամեն կերպ փորձում էր ընդգծել, որ գնդակահարություններին չի մասնակցել, գերեզմաններն է հողով ծածկել։ Նաեւ պատմում էր, որ Մինսկի կենտրոնում առանձնացված մի հսկայական տարածքում մասնակցել է մարտական գործողությունների ժամանակ սպանված գերմանացի զինվորների թաղման աշխատանքներին։ Այդ տարածքը, փաստորեն, եղել է զոհված գերմանացիների գերեզմանոց։

Պատերազմից հետո երիտասարդ Բարկովսկին դարձել էր ակտիվ կոմերիտական ու վերեւից իջած հանձնարարականով, ի թիվս կոմերիտմիության այլ անդամների, մասնակցել էր գերմանական այդ հսկա գերեզմանի քանդման աշխատանքներին։ Պատմում էր, որ ջարդում էին գերեզմանաքարերը, հարթեցնում տարածքն ու ծառեր տնկում։

Հետո արդեն երեխաների հայր Բարկովսկին իր երեխաներին տարել էր այդ այգում խաղալու։ Իմ միամիտ հարցին՝ «բայց դու գիտեիր՝ գետնի տակ քո թաղած գերմանացիներն են, ի՞նչ էիր մտածում», ամենայն անկեղծությամբ պատասխանեց. «Այգի էր, բա ու՞ր գնայի»։

Հետաքրքիր էր նաեւ 37-րդ կալանավայրում նստած ծերուկ Բաբուշկինի պատմությունը։ Նա էր պատժիչ մեկուսարանում մեզ ուտելիք բերում, դրա պատճառով էլ баландеор էինք ասում նրան։ Баланда թարգմանաբար նշանակում է վռիկ՝ անյուղ ու ջրիկ կերակուր։ Ինքը՝ Բաբուշկինը, այնքան էլ հետաքրքիր չէր։ Սովորական դեպք էր։ Երկրորդ համաշխարհային պատերազմն սկսվելուց, նա 10-րդ դասարանցի էր եղել։ Խորհրդային քարոզչության արդյունքում, բոլորովին չհասկանալով սեփական քայլի լրջությունը, ինչպես հազարավոր իր հասակակիցներ, դասընկերների հետ գնում է զինկոմիսարիատ եւ կամավոր ռազմաճակատ գնալու դիմում գրում։ Պատանիներին զինվորագրում եւ ճակատ են ուղարկում։ Առաջին իսկ

մարտական գործողության ժամանակ ոմանք զոհվում, ոմանք էլ գերի են ընկնում: Գերիների թվում է լինում նաեւ Բաբուշկինն իր երկու ընկերների հետ միասին: Գերմանացիներն առաջարկում են ծառայել իրենց մոտ: Երեքն էլ համաձայնում են: Իսկ ծառայությունը, ինչպես պնդում էր Բաբուշկինը, պահեստների ու կամուրջների մոտ պահակություն անելն էր: Նրա ընկերներից մեկը գերմանացի սպայի ձեռքին թանկարժեք ժամացույց է նկատում: Մի գեղեցիկ օր էլ, ի թիվս այլ իրերի, գողանում է այդ ժամացույցն ու փախչում: Գերմանացիները հետապնդում են նրան, բռնում ու գողություն կատարելու մեղադրանքով գյուղամիջում սարքած կախաղանից կախում են: 1960-ականների երկրորդ կեսերին շատ գերի ընկածների էին «հայրենիքի դավաճանություն» հոդվածով դատապարտում: Պատժաչափը 15 տարուց պակաս չէր լինում: Բաբուշկինն այդ հազարավորներից մեկն էր:

-Նախաքննության փուլում ինձ տանում էին այն գյուղերը, որտեղ որպես գերմանական զինվոր ծառայել էի: По местам боевой славы, - ծիծաղելով ասում էր նա, - գյուղերից մեկում տեսնեմ՝ կանգնած է ժամացույց գողացող ընկերոջս արձանը: Իսկ արձանի պատվանդանին գրված է՝ Խորհրդային միության հերոս:

Ահա այսպիսի հերոսներ էլ կային Խորհրդային երկրում:

Կալանավայրում սեփական գրականություն ունենալու հարցը լուրջ էր: Ճիշտ է, կար բավականին հարուստ գրադարան, որը ձեւավորվել էր տարիներ շարունակ կալանավորների թողած գրականության շնորհիվ: Մարդիկ, ազատ արձակվելիս, թողել ու թողնում էին ոչ միայն իրենց ձեռքի տակ եղած գրքերը, այլեւ իրենք էին իրենց ստացած հանդեսներից, ամսագրերից ու թերթերից գրականություն «սարքում»՝ կարում էին ու թողնում գրադարանում: Բայց յուրաքանչյուր կալանավոր կարող էր իր մոտ 5-ից ոչ ավելի գիրք պահել: Մնացած գրքերը հանձնվում էր ադմինիստրացիային, ու դրանք պահվում էին կալանավայրի տարածքից դուրս գտնվող պահեստում: Այդ գրքերից օգտվելու համար հարկավոր էր կալանավայրի պետի անունով դիմում գրել եւ մի պատկառելի ժամանակ սպասել՝ մինչեւ կբերեն կամ չեն բերի:

Գրքեր էինք կարողանում գնել նաեւ խորհրդային տարիներին բավականին տարածված «Книга-почтой» ծառայության միջոցով: Լրացնում էիր համապատասխան քարտը, ուղարկում գրախանութի հասցեով, ու պատվիրված գիրքդ եթե կար այդ խանութում, ստանում էիր:

1983-ի գարնանը կամ ամռանը դրսից՝ Չուսովոյ քաղաքից հսկայական գրականություն բերեցին կալանավայր՝ վաճառքի նպատակով: Դե, պարզ է, նրանց մոտ կարդացողները քիչ են, գրքերը չեն գնվում ու կուտակվում են գրախանութի պահարաններում ու պահեստներում: Մի խելոք գլխում միտք էր ծագել, որ դրանք կարելի է վաճառել քաղբանտարկյալներին: Այդ հսկայական տարածքում կարդացողները միայն կալանավայրերում էին: Ցուցադրություն-վաճառքը մեկ օր տեւեց: Կալանավայրի ճաշարանում շարել էին գրքերը: Մենք մոտենում ընտրում ու գրանցում էինք կալանավայրի հաշվապահի մոտ, իսկ նա արդեն մեր հաշվի վրա եղած գումարից դրանց արժեքը հետո փոխանցելու էր գրախանութին:

Մեր աշխատանքի դիմաց վճարվում էր մեզ հասանելիք աշխատավարձի չնչին տոկոսը միայն։ Իրենից բան չէր ներկայացնում, բայց կուտակվում էր։ Մեր հաշվին գումար էր գոյանում նաեւ մեր հարազատների փոխանցումներից։ Հարազատների փոխանցած գումարից կարելի էր գրենական պիտույք ու գրքեր գնել, բայց սննդամթերք՝ չէր կարելի։ Կալանավայր բերված գրականության մեջ շատ լավ ու հետաքրքիր գրքեր կային, կային նաեւ «Համաշխարհային գրականության գրադարան»-ի բոլոր հատորները։ Մենք մեծ ու կազմակերպված գնումներ արեցինք։ Կազմակերպված այն առումով, որ նույն գրքերը չգնեցինք։ Որոշեցինք, որ գնելու ենք պետքական տարբեր գրքեր ու փոխանակելու ենք։ Արդյունքում՝ կալանավայրում ահագին լավ գրականություն կուտակվեց։

Ես սովորություն էի դարձրել՝ ինձ պետքական գործերը, եթե դրանք շատ ծավալուն չէին, ու գիրքն ունենալը բացառվում էր, արտագրում էի հաստ տետրերի մեջ։ Ծավալուն գործերից արտագրում էի միայն կարեւոր հատվածները։ Տետր ունենալու առումով սահմանափակումներ չկային։ Ահագին շատ տետր ունեի։ Դրանցից երեքը մինչ օրս պահպանվել են։ Երկուսը Լենինի չարաբաստիկ հատորներին եւ սոցիալ-դեմոկրատիայի դասականներին է վերաբերում։ Այնտեղ նշել եմ, թե որ հատորում որ գործն է արժեքավոր, որին ապագայում հարկ կլինի անդրադառնալ։ Երրորդ տետրը պոեզիային է վերաբերում։ Մնացած բոլոր տետրերս առգրավվեցին ու ոչնչացվեցին։ Սրա մասին իր տեղում. եթե չմոռանամ, կպատմեմ։



1901 г. . . . 201 руб	в 1906 г. . . 231 руб
1902 г. . . . 202 руб	в 1907 г. . . 241 р.
1903 г. . . . 208 руб	в 1908 г. . . 242 р.
1904 г. . . . 213 руб	в 1909 г. 236 р
905 г. . . . 205 руб	в 1910 г. . . 242 р.

Том 23 [. Перечитать]

рабочий класс и национальный во
лис. в 1913 г. «Чтобы разные нации свобо
ивались вместе или расходились (когда
удобнее), составляя разные государства
го необходимо полный демократизм.
ой привилегии ни для одной нации,
одного языка! Ни малейшего притес
малейшей несправедливости к нацио
му меньшинству! — вот принципы рав
мократии.

Проект платформы к IV съезду с-д латыш
ая" — „Национальный вопрос" — написано
ае 1913 г; напечат. в августе 1913 г на
нке. — Говорится о том, что августов
нференция ликвидаторов 1912 г признала
~~лозунг~~ тимый лозунг «культурно-н
й автономии» вопреки решению II съе
лозунг объединяет рабочих и помеща
ой нации. Дальше говорит: «Мы безусло
к демократы, враждебны всякому, хотя
алейшему, угнетанию какой-либо нац
ти, всякой привилегии той или иной на
ти. Мы требуем, как демократы, свобод
определения нацией в политическом
чие этого слова, т.е. свободу отделе
одновременно социалисты борются пр
ционализма, они против национальной
, они за «интернациональную культур
которую от каждой национальной

Տեսրեր Լենինի հատորից

Հսկիչները եւ նրանց ինֆորմատորներն անընդհատ պտտվում են կալանավայրում ու կասկածելի բան նկատելու դեպքում տեղեկացնում ադմինիստրացիային։ Քաղաքական կալանավայրում ամենակասկածելի գործը գրառում անելն է։ Եթե ինչ-որ բան ես գրում, ու դա թաքուն չես անում, ապա պետք է պատրաստ լինես, որ շատ շուտով գալու են խուզարկության, տանելու են գրառումներդ՝ մշտապես նույն նախադասությունն ասելով. «Կստուգենք, եթե հակախորհրդային ոչինչ չլինի՝ կվերադարձնենք»։ Ես աշխատում էի հայերեն չգրել, հակառակ դեպքում այդ ստուգում կոչվածն ամիսներ կարող էր տեւել։ Պետք է ուղարկեին Հայաստան, սրանք պետք է տային իրենց եզրակացությունը, նոր միայն որոշեին՝ վերադարձնե՞լ, թե ոչնչացնել։

Եւ ահա մի օր իմ ձեռքում է հայտնվում Ֆրանսուա Վիյոնի բանաստեղծությունների փոքրիկ գրքույկը։ Սկսում եմ տիրոջը խնդրել, որ ինձ նվիրի կամ վաճառի։ Թեյ եմ առաջարկում՝ կալանավայրի ամենաթանկ վալյուտան, իսկ նա ծիծաղելով ասում է՝ ոչ։ Որոշեցի՝ պետք է արտագրեմ։ Մի քանի օր գրում եմ։ Գիտեմ, որ շուտով խուզարկության են գալու, սպասում եմ։ Եկան։ Խուզարկեցին ու տարան։ Ինչպես որ կարգն է՝ խոստացան, որ կստուգեն, հակասովետական չլինի՝ կվերադարձնեն։

37-րդ կալանավայրում մի կապիտան ԴՊՀԿ ունեինք, եթե չեմ սխալվում՝ Ռոմանով ազգանվամբ։ Ամենավատերից չէր։ Սրան պաշտոնի բարձրացմամբ տեղափոխել էին 35։ Ջոկատի պետ էր եւ որպես պաշտոնյա մի փոքրիկ աշխատասենյակ ուներ։ Այս կալանավայրում հայտնվելուս հաջորդ օրը երբ ինձ տեսավ, այնպես ուրախացավ, ասես՝ հարազատի էր հանդիպել։ Մոտենալու ու զրուցելու առիթը բաց չէր թողնում։ Եւ ահա մի քանի օրից գալիս է այս կապիտանը եւ ինձ հրավիրում զրույցի։ Մտահոգ է։

- Հարությունյան, դուք ախր լուրջ մարդ եք։ Ձեզանից նման բան չէի սպասում։ Ինչպե՞ս կարող եք նման անպատկառություն գրել։ Ամոթ չի՞։

Ու սեղանին է նետում մոտիցս առգրավված թղթերը։

Զարմացած եմ։

-Ի՞նչ կա, պետ, ի՞նչ է պատահել։

Մատը դնում է Վիյոնի «Жалобы прекрасной оружейницы» բալլադի վրա, որտեղ այսպիսի տողեր կան.

Где белизна точеных рук
И плеч моих изгиб лебяжий?
Где пышных бедер полукруг,
Приподнятый в любовном раже,
Упругий зад, который даже
У старцев жар будил в крови,
И скрытый между крепких ляжек
Сад наслаждений и любви?

Ես փորձում եմ բացատրել նրան, որ բանաստեղծությունը գրվել է 1450-60-ական թվականների կողմերը, եւ ես դրա հետ ոչ մի կապ չունեմ, բայց նա հուզված է ու հիասթափված ինձանից։ Ոչինչ լսել չի ցանկանում։

-Մենք սա ոչնչացնելու ենք եւ վերջ։ Իմացեք, սա ձեզ չի սազում, - խիստ տոնով տեղեկացնում է կապիտանը։

Ահա այսպիսի զավեշտ։



И. В. ГЕТЕ

«Фауст». (перевод Б. Пастернак
Пермское издательство
1981 г.

После предложение Мефистофеля «рассе
оску?»:

Фауст. (ст. 58)

В любом нарде буду я по правду
оску существованья сознавать
Я слишком стар, чтоб знать одни забавы,
И слишком юн, чтоб вовсе не желать.
Что даст мне свет, чего я сам не знаю?
«Смиряй себя» — вот мудрость прописная,
Извечный, нескончаемый припев,
которым с детства прожужжала уши,
Нравоучительною этой сушью
Нам всем до тошноты осточертев.
Я утром просыпаюсь с содроганьем
И чуть не плачу, зная наперед,
Что день пройдет, глухой к моим желаньям,
И в исполненье их не приведет.
Намек на чувство, если он замечен,
Недопустим и дерзок чересчур:
Злословье все покроет грязью сплетен
И тысячью своих карикатур.
И ночь меня в покое не оставит.
Едва я не постели растянусь,
Меня кошмар ночным удушьем сдавит,
И я в поту от ужаса проснусь.
Бог, обитающий в груди моей,
Влияет только на мое сознанье.
На внешний мир, на общий ход вещей
Не простирается его влиянье.
Мне тяжко от немощности такой,
Я жизнь отверг и смерти жду с тоск

Տարրի եւս մեկ էջ «Ֆաուստից

37-րդ փոքր կալանավայր

Ինձ 35-րդ կալանավայրից ետ՝ 37 տանելը բավականին տարօրինակ էր։ Էտապ գնալու մասին կալանավորին նախապես երբեք չեն ասում։ Ես մի քանի ժամ առաջ էի դուրս եկել պատժիչ մեկուսարանից ու մեծ ախորժակով ինչ-որ բան էի ուտում, երբ ասացին, որ կալանավայրը սպասարկող չեկիստը զրույցի է հրավիրում։ Շատ հաճախ չեկիստի հետ զրույցներից ե՛ւ ես, ե՛ւ ինձ նման շատերը հրաժարվում էինք։ Բայց լինում էր նաեւ, որ գնում էինք զրույցի։ Առանց այն էլ լարված հարաբերություններն էլ ավելի լարելու ցանկություն չկար։ Գնացի զրույցի, եւ նա զրույցի ընթացքում ասաց, որ ինձ շուտով էտապ են տանելու։ Թե ուր են տանելու՝ չասաց։ Նրա մշուշոտ խոսքերից կարելի էր միայն կռահել՝ հեռու։ Այդ զրույցի մասին պատմեցի Ստեփան Խմարային ու Անատոլի Մարչենկոյին։ Քննարկեցինք ու եկանք եզրակացության, որ ինձ Չիստոպոլի բանտ տանելը քիչ հավանական է, որովհետեւ, ճիշտ է, պատժիչ մեկուսարաններում շատ էի եղել, շատ խախտումներ էին արձանագրվել ինձ վրա, բայց վերջին տարվա ընթացքում ՊԿՏ-ում չէի եղել, իսկ սա Չիստոպոլ տանելու կարեւոր նախապայմաններից մեկն է։ Մնում էր Երեւանը։ Վճռեցինք, որ Երեւան են տանելու՝ պրոֆիլակտիկայի։ Նման պրակտիկա կար։ Կալանավորին տանում են այնտեղ, որտեղ դատել են, ինչ-որ զրույցներ են ունենում, փորձում են համոզել, որ հրաժարվի ընտրած ճանապարհից ու ետ՝ կալանավայր են ուղարկում։ Սա իրենց աշխատանքների մեջ մտնող ձեւականություն էր, որ պրոֆիլակտիկա էր կոչվում։ Սրա վատն այն է, որ ավելորդ անգամ էտապ ես գնալու ու հետ գալու։ Նորից կեղտոտ առաքաբանտեր, նորից ոջիլներ, նորից անհայտություն։ Այս պատմության մեջ զարմանալին կամ, ավելի ճիշտ, անհավանականն այն էր, որ չեկիստն ինձ նախապես տեղեկացնում է էտապի մասին։ Նման բան, որպես կանոն, չէր լինում։ Երկար խորհելու ու գուշակություններ անելու կարիքը չկար։ Պարզ էր, նա այսպես է անում, որ էտապից նախապես տեղեկացված լինելով՝ հետս գրավոր տեղեկություններ վերցնեմ ճանապարհին դրանք դուրս ուղարկելու ակնկալիքով։ Իսկ իրենք կխուզարկեն ինձ եւ իմ մոտից կհայտնաբերեն պահված փաթեթը։ Պարզունակ հաշվարկ էր։ Հասկանալի դարձավ, որ ինձ ոչ թե Չիստոպոլ են ուղարկում կամ Երեւան են տանում, այլ նոր գործ են ցանկանում սարքել, բայց այնպես, որ իրենց ձեռքին իմ մոտից առգրավված հակախորհրդային ագիտացիա ու պրոպագանդա պարունակող նյութեր լինեն։ Վճռեցինք, որ ոչինչ չեմ վերցնելու ինձ հետ։ Ինչպես եւ խոստացել էր չեկիստը՝ մի քանի օրից եկան իմ հետեւից ու հանձնարարեցին հավաքել իրերս։ Մի 5-10 րոպեից պատրաստ էի։ Տարան ինձ մի առանձին սենյակ՝ խուզարկության։ Իսկ խուզարկությանը մասնակցում էր նաեւ կալանավայրի բժիշկը։ Հատ առ հատ ստուգեցին բոլոր իրերս, ապա՝ իր գործին անցավ բժիշկը։ Մի խոսքով, ստուգեցին բոլոր հնարավոր ներքին ու արտաքին օրգաններս ու ոչինչ չգտան։ Զարմացած են ու թեւաթափ։ Նրանց ասվել էր, որ խուզարկությունն արդյունք է տալու, բայց իրենք ոչինչ չեն գտել։

Տեղափոխեցին 37-րդ կալանավայր, որտեղ ինձ ամեն ինչ ավելի քան ծանոթ էր։ Ինձանից մի քանի օր հետո 35-ից 36 էին տեղափոխել Ստեփան Խմարային։ Մեր եռյակից 35-ում մնաց միայն Անատոլի Մարչենկոն։ Չեմ էլ հիշում, թե ինչ հորինված պատճառով, բայց առանց կալանավայր տանելու՝ ինձ պատժիչ մեկուսարանում փակեցին։ Այն նույն մեկուսարանը,

որտեղ ժամանակին այնքա՛ն շատ էի եղել։ Չարացած էին երեւի, որ չեկիստական իրենց պարզունակ օպերացիան տապալվել էր։ 1984-ի սեպտեմբերի կեսերին կամ վերջերին արդեն 37-ի փոքր կալանավայրում էի։ Այստեղ էին Անդրեյ Շիլկովը, Յուրա Սուրգուչովը, Սիգիտաս Տյամկյավիչուսը, Օլես Շեւչենկոն, Տարիել Գվինիիշվիլին։ Հոկտեմբերի 30-ը քաղբանտարկյալի օրն էր, եւ ինչպես կարգն է՝ պետք է հացադուլ հայտարարվեր։ Այս օրվա հացադուլը կասկածից վեր էր, ու որեւէ մեկի համոզելու ու հորդորելու կարիք չէր լինում։ Բայց 37-րդ փոքր կալանավայրի այդ տարվա մեր հացադուլին բոլոր քաղբանտարկյալները չէին, որ միացան։ Շատ բան է մոռացվել, բայց այս դեպքը չեմ մոռանում։ 1984-85-ի նոր տարին դիմավորեցի այստեղ, իսկ հունվարի առաջին օրերին արդեն 36-րդ կալանավայրում էի։

Օլես Շեւչենկո

Օլեսը ծնվել էր 1940-ին։ Այլախոհական գործունեությամբ սկսել էր զբաղվել 1960-ական թվականներից։ Վիտալի Շեւչենկոյի ու Ստեփան Խմարայի գործընկերն էր։ Միասին էին հրապարակել «Український вісник»-ը։ 1980-ին Օլեսը դատապարտվել էր 5 տարվա ազատազրկման եւ 3 տարվա աքսորի։ Դատապարտվելուց հետո նրան 36-րդ կալանավայր էին բերել։ Կալանավայրում կազմակերպված բողոքի ակցիաներին մասնակցելու համար հայտնվել էր պատժախցում, ինչից հետո նրան Կիեւ էին տարել՝ պրոֆիլակտիկայի։ Այդ պրոֆիլակտիկա կոչված արարողությունից հետո ետ էին ուղարկել կալանավայր, բայց արդեն՝ 37-րդ։ Այն ողջ կարճ շրջանում, որ եղել եմ Օլեսի հետ միասին, նա հիվանդ էր։ Տեղաշարժվում էր ձեռնափայտով ու դժվարությամբ։

Ազատ արձակվելուց հետո նրան հանդիպել եմ 1989-ին. Կիեւի կենտրոնում մեծ հանրահավաք էր։ Մոտեցա հարթակին, ինձ հետաքրքիր էր՝ կտեսնե՞մ յուրայինների։ Ի տարբերություն երեւանյան հանրահավաքների, կիեւյան հարթակում նախկին քաղբանտարկյալները շատ էին։ Խառն իրավիճակ էր։ Օլեսը մոտեցավ՝ առույգ, առողջ ու ոգեւորված։

Ինձ մոտ մինչ օրս պահպանվել է 1985 թ. նոր տարվա կապակցությամբ Օլեսի շնորհավորական բացիկը։ Առանց ստորագրության է։ Հարցրի.

-Օլես, բա ու՞ր է ստորագրությունդ։

-Բացիկի վրա Տարաս Շեւչենկոյի լուսանկարն է, էլ ստորագրության կարիք չկա։

Մեր շփումները չեն դադարել, եւ այսօր էլ տարբեր համաժողովների ժամանակ կամ երբ մեկնում եմ Կիեւ՝ հանդիպում ենք։

Քահանա Սիգիտաս Տամկյավիչուս

Սիգիտասը ծնվել էր 1938-ին, եկեղեցական էր՝ կաթոլիկ եկեղեցու քահանա։ 1962 թվականից՝ հոգեւոր ճեմարանը ավարտելուց հետո ծառայության էր անցել։ 1968-ին դարձել էր Խորհրդային միությունում արգելված ճիզվիտական միաբանության անդամ։

Բոլորին է հայտնի, որ խորհրդային իշխանությունները խառնվում էին եկեղեցական գործերին եւ եկեղեցին մշտապես պահում էին իրենց անմիջական հսկողության ներքո։ Սիգիտասը պատմում էր, որ 1961 թ. սկսած՝ ՊԱԿ-ը մի քանի անգամ փորձել է հավաքագրել իրեն, բայց ամեն անգամ մերժում է ստացել։ Ողջ խորհրդային միությունում եկեղեցու վրա հսկողությունն իրականացվում էր նաեւ գործակալ եկեղեցականների միջոցով ու օգնությամբ, եւ այն հոգեւորականները, որոնք հրաժարվում էին ՊԱԿ-ի գործակալ դառնալուց՝ հայտնվում էին հալածյալի կարգավիճակում։

Եկեղեցու նկատմամբ խորհրդային իշխանությունների ոտնձգությունների դեմ Սիգիտաս Տամկյավիչուսը, այլ ակտիվ եկեղեցականների հետ միասին, բողոքի պետիցիա են հրապարակում, որի տակ մեծ թվով եկեղեցականներ էին ստորագրել։

Այս կապակցությամբ խորհրդային իշխանությունները Տամկյավիչուսին մեկ տարով արգելել էին քահանայությամբ զբաղվել։ Հետագայում նա կապեր է հաստատում մոսկովյան այլախոհների հետ եւ Լիտվայում մարդու իրավունքների խախտման դեպքերի կապակցությամբ տեղեկություններ է փոխանցում «Ընթացիկ իրադարձությունների խրոնիկային»։

1972 թվականից ընդհատակում սկսում է «Լիտվայի կաթոլիկ եկեղեցու խրոնիկա» պարբերականը հրատարակել։ Մինչեւ 1983 թ. զբաղվել է դրա խմբագրմամբ։ Նաեւ «Հավատացյալների իրավունքների պաշտպանության կաթոլիկ կոմիտեի» հիմնադիրներից էր։

1983-ին նա հակախորհրդային ագիտացիայի եւ պրոպագանդայի համար կալանավորվել եւ դատապարտվել էր 6 տարվա ազատազրկման եւ 4 տարվա աքսորի։ 1985-ին, երբ Սիգիտասը կալանավայրում էր, Լիտվայում նրա պաշտպանության պետիցիայի տակ 50 000 ստորագրություն էր հավաքվել։

Ազատ է արձակվել 1988-ին։ 1989-ին Կաունասի հոգեւոր ճեմարանի տնօրենն էր, ապա՝ դրա ռեկտորը։ Այնուհետեւ եպիսկոպոս է ձեռնադրվում ու դառնում Կաունասի միտրոպոլիտը։

36-րդ կալանավայր

Այդպես էլ մինչեւ վերջ անհասկանալի մնաց, թե ինչու՞ չթողեցին ինձ 37-ի փոքրում ավարտել ազատազրկումս։ Բան չէր մնացել՝ մի 5-6 ամիս։

Նոր տարուց անմիջապես հետո ինձ եւ 37-ի մեծում գտնվող Իոսիֆ Բեգունին կալանավորներ տեղափոխող նույն ավտոմեքենայով տարան 36-րդ կալանավայր ու անմիջապես պատժիչ մեկուսարանում նստեցրին։ Նույն խցում էինք։ Այս մեկուսարանում էր նաեւ Իշխանը։ Նա Ալեքսեյ Սմիրնովի եւ Վյաչեսլավ Եվդոկիմովի հետ ՊԿՏ-ում էր։ Այսքան տարի անց նրա հետ խոսելու հնարավորություն ունեցա։ Հիշողությանս մեջ տպավորվել է նրա անհանգստությունը.

-Այստեղ շատ են շառ անում, զգույշ կլինես։ Քո պատժաչափը շուտով ավարտվում է, եւ քեզ բերել են այստեղ, որ պատժաչափդ երկարացնելու հիմքեր ստեղծեն, - իմ ճակատագրով մտահոգ ասում էր Իշխանը։

Մեր այս կարճ զրույցները եղան վերջինը մեր կյանքում։ Ես ու Իոսիֆը, ավարտելով մեր 10 կամ 15-օրյա պատիժը՝ հիմա արդեն լավ չեմ հիշում, դուրս եկանք կալանավայր, իսկ Իշխանը դեռ երկար պետք է մնար պատժախցում։ Սիստեմատիկ խախտումների համար նրա ռեժիմը 6 ամսով խստացվել էր։ Նա ՊԿՏ-ում էր՝ խցային տիպի կացարանում։ Մի բան հաստատ էր. քանի ես այս կալանավայրում եմ՝ Իշխանն այստեղից դուրս չի գալու։ Բոլորս էլ մտածում էինք, որ նրան կամ Չիստոպոլի բանտ են տանելու, որովհետեւ շատ խախտումներ կային նրա վրա արձանագրված, իսկ ՊԿՏ-ի ժամկետն էլ ավարտին էր մոտենում, կամ՝ մեկ այլ կալանավայր։ Այն ժամանակ ոչ ոք երեւակայել անգամ չէր կարող, որ 1985 թ. ապրիլի 24-ին Իշխանին կգտնեն իր խցում կախված։ 1989-ին հնարավոր եղավ Հայաստան տեղափոխել նրա աճյունը։ Այժմ Իշխանը թաղված է իր հայրենի Արթիկի շրջանի Սարատակ գյուղը շրջապատող բարձունքներից մեկի վրա։

36-րդ կալանավայրը երկու մասի էր բաժանված։ Նույն համարի տակ էր գտնվում հատուկ վտանգավոր ռեցիդիվիստների կալանավայրը, որն սկսել էր գործել 1980 թվականից։ Այստեղ էին այն քաղաքական կալանավորները, որոնք երկրորդ-երրորդ անգամ էին քաղաքական հոդվածով դատապարտվում։ Հայերից այնտեղ էին Նավասարդյան Աշոտը եւ Ազատ Արշակյանը։ Մեր եւ ռեցիդիվիստների կալանավայրերն իրարից մի 500 մետր հեռավորության վրա էին գտնվում։ Ադմինիստրացիան եւ սպասարկող չեկիստները նույն մարդիկ էին։ Հատուկ կալանավայրի եւ մեր կալանավայրի, որը կոչվում էր խիստ ռեժիմի կալանավայր, տարբերությունն այն էր, որ այնտեղ դատապարտյալները պահվում էին խցերում եւ կրում էին զոլավոր արտահագուստ։

Զոլավոր հագուստ

Խցերից դուրս էին բերվում միայն մեկ-երկու ժամով՝ հատուկ, առանց տանիքի մեկ այլ խցում զբոսանքի համար։ Այս կալանավորները թարմ օդ շնչելու հնարավորություն ունեին միայն այնտեղ։ Եթե կալանավորը, ադմինիստրացիայի տեսակետով՝ իհարկե, իրեն լավ էր դրսեւորում՝ խախտումներ չէր անում, չէր մասնակցում բողոքի ակցիաներին, իր եւ այլոց իրավունքների համար կռիվ չէր տալիս, ապա նա ինչ-որ պահից կարող էր դուրս գալ ընդհանուր ռեժիմ՝ հատուկ ռեժիմի կալանավայրի ներսում։ Սա նշանակում էր, որ նա կարող է ներգրավվել այնպիսի աշխատանքներում, որոնք խցային պայմաններ չեն նախատեսում։ Ասենք՝ հնոցապան կամ նման մեկ այլ բան։ Այս կալանավորներն օրվա ընթացքում խցից դուրս էին անցկացնում, իսկ գիշերները՝ խցերում։

Իմ նոր կալանավայրն էապես տարբերվում էր մյուս կալանավայրերից։ Նախ՝ տարածքը շատ ավելի մեծ էր։ Տարածքում ահագին շինություններ կային՝ առանձին բաղնիքի շենք, առանձին բուժկետ, առանձին ճաշարան եւ այլն։ Ինչ-որ բանով 35-ին էր նման, իսկ 37-ի հետ համեմատության եզր անգամ չկար։ Այստեղ կային մետաղամշակման արհեստանոց, սղոցարան, ցեխ, որտեղ պատրաստում էին արդուկի դետալներ ու արդուկի էլեկտրալար։ Մոտ էր Չուսովոյ գետին, դրա պատճառով էլ գարնանը հաճախ մեծ կամ փոքր հեղեղումների էր ենթարկվում։ Մարդկանց թվով նույնպես տարբերվում էր մյուս երկու կալանավայրերից։ Այստեղ անհամեմատ ավելի շատ մարդ կար։ Մի կարեւոր հանգամանք նույնպես՝ կալանավայրի բնակելի հատվածն ուներ ծառուղի։ Արդեն գրել եմ, որ 35-րդ կալանավայրի տարածքում նույնպես ծառեր կային, բայց դրանք կալանավայրի ընդհանուր տարածքից փշալարերով առանձնացված էին. դրանց նայել կարելի էր, դրանց հարեւանությամբ քայլել կարելի էր, բայց դրանց տակ լինել չէր կարելի։ Իսկ այստեղի ծառուղին տանում էր դեպի ճաշարան կամ դեպի բուժկետ։ Մենք հաճույքով զբոսնում էինք այդ ծառուղով։ Ահա այդ ծառուղին։

36-րդ կալանավայրի ծառուղին

Սա է՛ւ գեղեցիկ էր, է՛ւ զարմանալի։ Համաձայն գործող պահանջների՝ կալանավայրի տարածքը պետք է ամբողջությամբ տեսանելի լինի, եւ տարատեսակ խանգարող «գեղեցկությունները», աչք շոյող տեսարանները պետք է բացառվեին։ 1953-1972 թթ. այս կալանավայրում իրենց պատիժն են կրել ներքին գործերի եւ պետանվտանգության համակարգի դատապարտված նախկին աշխատակիցները։ Նրանց նկատմամբ, երեւի թե, հատուկ վերաբերմունք է եղել, ու թույլ են տվել հիմնել նման ծառուղի։ Շատ ավելի ուշ, երբ կալանավայրում սկսել են պահել հատուկ վտանգավոր պետական հանցագործներին, ասել է թե՝ մեզ, վճռել են ծառուղին չհատել։

Այլախոհներից այստեղ էին **Ալեքսանդր Օգորոդնիկովը** (Մոսկվայից), **Ռոստիսլավ Եվդոկիմովը** (Լենինգրադից), **Ալեքսեյ Սմիրնովը** (Մոսկվայից), **Զորյան Պոպադյուկը** (Լվովից), **Գրիգորի Իսաեւը** (Սամարայից. նրա մասին արդեն գրել եմ), **Միխայիլ Մեյլախը** (բանասեր՝ Լենինգրադից), **Վիտալի Պոգորիլին** (երաժիշտ՝ Լենինգրադից), **Ֆրայմանիս Գունարը** (բանաստեղծ՝ Լատվիայից), **Ալֆոնսաս Սվարինսկասը** (հոգեւորական՝ Լիտվիայից), **Բորիս Չերնիխը** (գրող՝ Իրկուտսկից), **Վախթանգ Զաբիրաձեն** (Թբիլիսիից), **Յուրիս Բումեյստերը** (ինժեներ՝ Լատվիայից. նրա մասին արդեն գրել եմ), **Վլադիմիր Բելիկովը** (մաթեմատիկ՝ Կիեւից), **Լեոնիդ Լուբմանը** (Լենինգրադից. նրա «հակախորհրդային

ագիտացիա եւ պրոպագանդա» հոդվածը փոխարինել էին «հայրենիքի դավաճանություն» հոդվածով միայն այն պատճառով, որ ինժեներ էր եւ, իբր, առնչվել էր գաղտնիություն պարունակող փաստաթղթերի)։ Կան, իհարկե, նաեւ մոռացված անուններ։ Իմ հին ծանոթներից, որոնց հետ եղել էի 35-ում, այնտեղ էին **Նորիկ Գրիգորյանը**, **Զուրաբ Գոգիան**, **Ստեփան Խմարան**։ Մինչեւ իմ այս կալանավայր գալը՝ այստեղից արդեն տարել էին այնպիսի հայտնի կալանավորների, ինչպիսիք էին՝ **Հենրիխ Ալտունյանը** (Խարկովից, տեղափոխել էին Չիստոպոլի բանտ), **Վիկտոր Նեկիպելովը** (Մոսկվայից, բանաստեղծ, տեղափոխել էին Չիստոպոլի բանտ), **Միրոսլավ Մարինովիչը** (Լվովից, դուրս էր եկել աքսոր)։

Հայր Ալֆոնսաս Սվարինսկաս

Հայր Ալֆոնս. այսպես էինք դիմում 1925 թ. ծնված այս բարձրահասակ ու լուսավոր մարդուն։ Նրա հենարանն իր հավատն էր։ Հավատի օգնությամբ աներեւակայելի դժվարություններ էր հաղթահարել ու հաղթահարում։

Առաջին անգամ կալանավորվել էր 20-21 տարեկանում՝ 1946-ին, հակախորհրդային ընդհատակի հետ կապեր ունենալու մեղադրանքով։ «Հակախորհրդային ընդհատակ» ասելով՝ խորհրդային իշխանությունները նկատի ունեին Լիտվայի անկախության համար ընթացող պարտիզանական դիմադրությունը, որ սկիզբ էր առել 1943-44 թթ. եւ շարունակվել մինչեւ 1950-ականների վերջը։ Այս պարտիզանական դիմադրությունը, որ սկզբնական շրջանում կոչվում էր Լիտվացի ակտիվիստների ճակատ, 1949-ին վերանվանվեց Ազատության համար պայքարի շարժում։ Ե՛ւ այս շարժման անդամներին, ե՛ւ մերձբալթյան ու արեւմտաուկրաինական պարտիզանական դիմադրությունների անդամներին պայմանականորեն «անտառային եղբայրներ» են անվանում։

Ահա այս անտառային եղբայրների հետ ունեցած կապերի պատճառով կամ այդ պատրվակով կալանավորում են երիտասարդ Ալֆոնսասին եւ դատապարտում 10 տարվա ազատազրկման։ 1954-ին կալանավայրում կատարված գաղտնի կարգով հոգեւորական է ձեռնադրվում ու այդ պահից էլ սկսում է իր ծառայությունը։ 10 տարի անց՝ 1956-ին ազատ է արձակվում։ Երկու տարի անց՝ 1958-ին՝ մինչեւ 1940 թ. հրատարակված թերթեր ու ամսագրեր պահելու մեղադրանքով կրկին կալանավորվում ու 6 տարվա ազատազրկման է դատապարտվում։

1964-ին ազատ արձակվելուց հետո սկսում է ծառայել որպես հոգեւորական ու ընդգրկվում է Լիտվայի կաթոլիկ եկեղեցու նկատմամբ խորհրդային իշխանությունների գործած ոտնձգությունների դեմ պայքարի մեջ։ Դառնում է Հավատացյալների իրավունքների պաշտպանության կաթոլիկ կոմիտեի անդամ։ Մեծ հեղինակություն է վայելում հավատացյալների շրջանում։

Հաջորդ անգամ կալանավորվում է 58 տարեկանում՝ 1983-ին ու հակախորհրդային ագիտացիայի ու պրոպագանդայի համար դատապարտվում 7 տարի ազատազրկման եւ 3 տարի աքսորի։ Երբ հանդիպեցի նրան, արդեն 60 տարեկան էր։

Նա գաղտնի հաղորդություն էր տալիս ու կնունքներ էր անում։ Ընդ որում, կարեւոր չէր, թե հավատացյալը որ եկեղեցուն է պատկանում։ Նույն սիրով ու նույն հարգանքով էր վերաբերվում ցանկացած եկեղեցու հետեւորդի ու մեծ պատրաստակամությամբ էր անում հոգեւորականի իր գործը։

Կալանավայրում սա միակ դեպքը չէր։ Հետաքրքիր էր 37-րդ մեծ կալանավայրում տեսնել հիսունական Նիկոլայ Գորետոյի եւ ուղղափառ եկեղեցու սպասավոր Գլեբ Յակունինի բարեկամությունը։ Ես ականատես եմ եղել, թե ինչպես էին միասին՝ թաքուն մի անկյունում, այնպես, որ ոչ ոք չնկատի, կնքում հավատացյալ դարձած երիտասարդ կալանավորներից մեկին։

-Դժվարն առաջին 10 տարին է, դրանից հետո նստելը հեշտանում է, - կատակով ասում էր հայր Ալֆոնսասն ու ժպտում էր այնպես, ինչպես միայն ինքն էր կարողանում։

Խորհրդային իշխանությունները նրան ազատ արձակեցին 1988-ին։ Ազատ արձակման նախապայմանը ԽՍՀՄ տարածքը լքելն էր, եւ հայր Ալֆոնսն արտասահման մեկնեց։ Դեպքերի նոր ու անակնկալ զարգացումները հանգեցրին այնպիսի իրավիճակի, որ խորհրդային իշխանություններն այլեւս չէին կարող նրա Լիտվա վերադարձին խոչընդոտել, եւ 1990-ին նա հայրենիք վերադարձավ։

Դարձավ Լիտվայի սեյմի՝ բարձրագույն օրենսդիր մարմնի պատգամավոր։ Այնուհետեւ՝ մի շարք եկեղեցիների հովվապետ։

Լիտվական պետության ամենաբարձր պարգեւներին արժանացած ու իր ծավալած գործունեության գնահատականից գոհ՝ 2014 թվականին նա վախճանվեց։

Ալեքսանդր Օգորոդնիկով

Ալեքսանդր Օգորոդնիկովը կալանավայրի ամենաակտիվ կալանավորներից էր։ Դժվար էր նրան պատկերացնել առանց ադմինիստրացիայի հետ առճակատման։ Ե՛ւ իր, ե՛ւ այլոց իրավունքների համար ամենավճռական քայլերի էր պատրաստ։

Ծնվել էր 1950 թ. Չիստոպոլ քաղաքում՝ այնտեղ, որտեղ գտնվում էր բանտը, ուր ուղարկում էին մեր կալանավայրերի անհնազանդ կալանավորներից շատերին։ Դպրոցն ավարտելուց հետո տարվել էր մարքսիստական ու կոմունիստական գաղափարներով։ Ընդունվում է Եկատերինբուրգի համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետ։ Կամաց-կամաց սկսում է

կոմունիզմից անցում կատարել դեպի ազատամտություն, ինչի համար էլ հեռացվում է համալսարանից։

Սկսում է հետաքրքրվել կրոնով։ 1974-ին իր մի քանի համախոհների հետ կրոնական ուսուցման սեմինար է կազմակերպում, իսկ 1976-ին արդեն կրոնական ուղղվածության ինքնահրատ հանդես են հրապարակում։

Սաշային առաջին անգամ կալանավորում են 1978 թ. եւ ՌՍՖՍՀ քր. օր. 209 հոդվածով՝ պորտաբուծություն, մտացածին մեղադրանքով դատապարտում են մեկ տարվա ազատազրկման։ Ազատ արձակման օրը նրան նոր մեղադրանք են առաջադրում՝ արդեն 70 հոդվածի՝ «հակախորհրդային ագիտացիա ու պրոպագանդա», հատկանիշներով եւ դատապարտում են 6 տարվա ազատազրկման ու 5 տարվա աքսորի։

1985-ին կալանավայրում նրան մեկ անգամ եւս 3 տարով դատապարտում են, այս անգամ արդեն ադմինիստրացիային, իբր, դիմադրություն ցույց տալու մեղադրանքով։ Այսպիսով, նրա պատժաչափը դառնում է 8 տարի ազատազրկում եւ 5՝ աքսոր։

Գորբաչովյան պերեստրոյկայի շրջանակներում 1987-ին ազատ է արձակվում ու Մոսկվայում հիմնվելով՝ սկսում է հասարակական ու քաղաքական գործունեությամբ զբաղվել։ Հրապարակում է քրիստոնեական ուղղվածության հանդեսներ։ Հիմնադրում է Ռուսաստանի Քրիստոնեա-դեմոկրատական միությունը եւ զբաղվում բարեգործությամբ։

Իմ ազատ արձակվելուց հետո մեր կապը վերականգնվեց։ Երբ լինում եմ Մոսկվայում, անպայման հանդիպում ենք։ Մի քանի տարի առաջ ինքն էր Երեւանում ու իմ հյուրն էր։

Վրացիներ

1983 թ. հետո վրացիների թիվը քաղաքական կալանավայրերում ավելացավ։ Կալանավայրերում միշտ էլ վրացիներ եղել են։ Եղել են ե՛ւ մորդովական կալանավայրերում՝ 1960-ականներին, ե՛ւ Պերմի մարզում՝ 1970-ականներին ու 1981-82 թթ.-ին, բայց 1984-ին նրանց թիվն էապես ավելացավ։ 1983-ի ամռանը եւ 1984-ի սկզբին Վրաստանում միանգամից երկու ընդհատակյա խումբ բացահայտվեց՝ «Ազգային ազատագրության» կազմակերպությունը եւ Վրաստանի հանրապետական կուսակցությունը։ Այս երկու կազմակերպությունների գործով «հակախորհրդային ագիտացիա եւ պրոպագանդա» հոդվածով 8 մարդ դատապարտվեց, եւ 1984-ից նրանք արդեն կալանավայրերում էին։ 1980-ականների առաջին կեսերին Վրաստանում գործել է ծավալուն դիմադրական շարժում, որի մասնակիցներից շատերը դատապարտվում էին կամ քրեական հոդվածներով, կամ «սովետական պետական ու հասարակական կարգերն արատավորող ակնհայտ հերյուրանքներ տարածելը» հոդվածով, իսկ այս հոդվածներով դատապարտվածներն իրենց պատիժը կրում էին ոչ թե քաղաքական, այլ քրեական հանցագործների համար

նախատեսված կալանավայրերում ու, որպես կանոն, մնում էին իրենց հանրապետությունների տարածքում։

«Ազգային ազատագրության» կազմակերպության անդամներից ճանաչել եմ 37-րդ փոքր կալանավայրում նստած Տարիել Գվինեիշվիլուն։ 1960 թ. ծնված Տարիելն իր ընկերների՝ Զաքարի Լաշկարաշվիլու (ծնվ. 1954 թ.) եւ Գուրամ Գոգբաիձեի (ծնվ.1949 թ.) հետ կարողացել էին հիմնել տպարան եւ թռուցիկներ ու այլ կարգի գրականություն տարածել Թբիլիսիում, Քութաիսիում եւ Վրաստանի այլ մեծ քաղաքներում։ Թռուցիկների բովանդակությունը հիմնականում վերաբերել էր Գեորգիեւյան համաձայնագրին, որը կնքվել էր 1783 թվականին։ Համաձայն այդ համաձայնագրի՝ Վրացական թագավորությունն ընկնում էր Ռուսական կայսրության ենթակայության տակ։ 1983-ին այդ փաստաթղթի 200-ամյակն էր, եւ Վրաստանի կոմունիստական իշխանությունները պատրաստվում էին մեծ շուքով նշել՝ որպես ռուս-վրացական անխախտ ու հավերժական բարեկամության դրսեւորում։ Ահա այս «տոնակատարությունն» էլ իրենց թռուցիկներով փչացրել էին Տարիելն ու իր ընկերները։

Տարիելն ու Գուրամ Գոգբաիձեն ստացել էին 4-ական տարի ազատազրկում, իսկ Զաքարի Լաշկարաշվիկին՝ 5 տարի ազատազրկում եւ 2 տարի աքսոր։

Իսկ Վրաստանի հանրապետական կուսակցության անդամներից ճանաչել եմ Վախթանգ Զաբիրաձեին։ Նա 36-րդ կալանավայրում էր։ Վախթանգը (ծնվ. 1953 թ.) իր ընկերների՝ եղբայրներ Լեւան (ծնվ. 1953 թ.) եւ Դավիթ (ծնվ. 1960 թ.) Բերձինիշվիլիների, Վախթանգ Շոնիայի (ծնվ. 1955 թ.) եւ Ֆրիդոն Չաչանիձեի հետ միասին անկախական ուղղվածությամբ «Սամրեկլո» (Զանգակ) խորագրով ամսագիր էին կարողացել մի քանի համար հրատարակել։ Սրա համար Վախթանգը դատապարտվել էր 3 տարի 6 ամիս ազատազրկման, Լեւան Բերձինիշվիլին եւ Վախթանգ Շոնիան ստացել էին 3-ական տարի, իսկ Դավիթ Բերձինիշվիլին եւ Ֆրիդոն Չաչանիձեն՝ 2-ական տարի։

Վախթանգը եւ Դավիթը, ի թիվս այլ նախկին քաղբանտարկյալների, հետագայում դարձան Վրաստանի պառլամենտի անդամներ։

Իոսիֆ Բեգուն

36-րդ կալանավայր 1985թ. հունվարի ամենասկզբին ինձ բերեցին Իոսիֆ Բեգունի հետ միասին։ Չնայած մեր տարիքների տարբերությանը՝ մենք շատ մտերմ էինք։ Ընդհանրապես, կալանավայրում տարիքային տարբերությունն այնքան էլ մեծ նշանակություն չուներ։ Ավելի կարեւոր էին մարդկային որակները։ Մարդիկ կարող էին ունենալ տարբեր կարծիքներ, դավանել տարբեր գաղափարներ, բայց լինել ազնիվ, լինել հպարտ, լինել պատրաստ իրենց եւ այլոց իրավունքների համար կռիվ տալու, չընկճվել։ Այս հատկություններն էին մարդկային հարաբերություններում որոշիչ դառնում։

Իոսիֆը տեխնիկական գիտությունների թեկնածու էր, աշխատել էր գիտատեխնիկական ինստիտուտներից մեկում, բայց ավելի ուշ՝ 1970-ականների սկզբին, տարվելով հրեական

մշակույթի քարոզչությամբ թողել էր այն եւ սկսել էր դասավանդել մաթեմատիկա։ Կազմակերպել էր հրեական մշակույթի ուսումնասիրման ու լեզվի դասավանդման խմբակներ, փորձել էր արտագաղթել Իսրայել, բայց ապարդյուն, ԽՍՀՄ-ից ելքի իրավունք ստանալ չէր կարողացել։ Բախվելով այս նոր իրականությանը նա հրեական մշակույթի ու լեզվի ուսումնասիրական կենտրոններ բացելուն զուգահեռ սկսել էր զբաղվել նաեւ «մերժվածների» (այսպես էին ԽՍՀՄ-ում կոչվում մարդիկ, ովքեր երկրի տարածքից ելքի իրավունք չէին ստանում) իրավունքներով։ 1972-ից սկսած ժամանակ առ ժամանակ ձերբակալվել է, բայց առաջին լուրջ պատժաչափն ստացել է 1977 թ.։ Նրան պորտաբուծություն հոդվածով շինծու մեղադրանք են ներկայացնում եւ երկու տարով աքսորում են Մագադանի մարզի Բուրկանդիա անվամբ այն նույն ավանը, ուր ժամանակ անց պետք է ես աքսորվեի։ Մենք, բնականաբար, դեռ չգիտեինք, թե ուր եմ ես աքսորվելու, երբ Իոսիֆը պատմում էր ինձ Կոլիմայի ու Բուրկանդիայի մասին։ Աքսորի ժամկետն ավարտելուց հետո կրկին դատապարտվում է, այս անգամ արդեն երեք տարով ու կրկին աքսորվում Մագադանի մարզ։ Իսկ 1982 թ. նա արդեն դատապարտվում է հակախորհրդային ագիտացիա ու պրոպագանդա հոդվածով ՝7 տարի ազատազրկում եւ 5 տարի աքսոր։ Սկզբում նա 37-ի մեծում էր, ապա ինձ հետ միասին 36-րդ կալանավայր տեղափոխեցին։ 1985 թ., երբ ես արդեն կալանավայրում չէր, նրա ռեժիմն էլ ավելի են խստացնում ու երեք տարով Չիստոպոլի բանտ են տեղափոխում։ Այնտեղից էլ նա վաղաժամ ազատ արձակվեց։

Երբ ես դուրս եկա աքսոր, այն ավան, որտեղ տարիներ առաջ եղել էր Իոսիֆը, ինձ առաջին նամակ գրողներից մեկը Իոսիֆի կինն էր։ Իմ կապն Իոսիֆի ընտանիքի հետ չի կտրվել մինչեւ 1987 թ.նրա վաղաժամ ազատ արձակումը եւ Իսրայել մեկնումը։ Ազատ արձակվելուց հետո Իոսիֆն ինձ նամակ գրեց, տեղեկացրեց, որ մեկնելու է Իսրայել եւ իր գրադարանից մի մեծ հատված ինձ ուղարկեց։ Հետո ես երկար մտածում էի, թե ինչպես եմ դրանք Մագադանից Երեւան հասցնելու։

Այսօր նա ապրում ու աշխատում է Երուսաղեմում։ Մեծ էր ուրախությունս, երբ հանդիպեցի նրան Լվովում տեղի ունեցող ուկրաինական հելսինկյան խմբի 40-ամյակի հետ կապված միջոցառումների ժամանակ։ 2018-ի ամռանը նա իմ հյուրն էր։ Մեր կապը չի ընդհատվում, մենք միշտ տեղյակ ենք իրարից։

Զորյան Պոպաղյուկ

Սա Զորյանի երկրորդ դատվածությունն էր։ Միայն առողջական վատ վիճակն էր պատճառ հանդիսացել, որ նրան հատուկ վտանգավոր ռեցիդիվիստ չէին ճանաչել։ Հակառակ դեպքում նա կգնար զոլավորների կալանավայր։ Զորյանը ծնվել էր 1953-ին ազատամիտների ընտանիքում։ Նրա մայրը Լվովի համալսարանում գերմաներենի դասախոս էր եղել եւ զբաղվել էր ինքնահրատ գրականության տարածմամբ։ Զորյանին շրջապատող մարդկանց գիտակցության մեջ թարմ էին ֆաշիստների եւ կոմունիստների պատճառած արհավիրքների

մասին հիշողությունները։ Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից այնքան էլ շատ ժամանակ չէր անցել, եւ մանուկ ու պատանի Զորյանը հաճախ էր լսում պատմություններ այդ սարսափելի դեպքերի մասին։

Մի անգամ՝ հեղեղից հետո Դնեստր գետի ափին եղբայրական գերեզման է բացվում, որտեղ 1939 թ.Արեւմտյան Ուկրաինայի ԽՍՀՄ-ին միանալուց անմիջապես հետո կոմունիստները գնդակահարել ու թաղել էին 117 գիմնազիստների։ Զորյանը պատմում էր, որ իր հիշողությունից չի ջնջվում, թե ինչպես էր կիսախելագար մի տարեց մարդ պտտվում այդ գերեզմանի շուրջը։ Այնտեղ էին նրա երկու որդիները։

Նրա հարազատները Զորյանին ցույց էին տվել եղբայրական մեկ այլ գերեզման, որտեղ 900-ից ավելի մարդ էր թաղված։ Այս մարդկանց խորհրդային իշխանությունները սպանել էին 1941 թվականին՝ Զորյանի հայրենի Սամբոր քաղաքի բանտում, գերմանական հարձակումից ու խորհրդային զորքերի նահանջից օրեր առաջ, իսկ քաղաքը շրջապատող անտառում նա գիտեր մի քանի հարյուր հրեաների եղբայրական գերեզմանի տեղը, որոնց սպանել էին ֆաշիստները։

Այս ամենը չէր կարող չազդել նրա ձեւավորման վրա։ Դեռ դպրոցական տարիներից Զորյանն արդեն գիտեր, որ պետք է պայքարել խորհրդային օկուպացիայի դեմ։ Դպրոցի բարձր դասարաններում ընկերների հետ հիմնում են «Ուկրաինական ազգային-ազատագրական ճակատ» կազմակերպությունը եւ սկսում տարածել ինքնահրատ գրականություն ու թռուցիկներ։

Հատկապես ակտիվ է գործում նրանց կազմակերպությունը 1968 թ. Չեխոսլովակիայի դեպքերի ժամանակ, երբ խորհրդային զորքերը ներխուժեցին Չեխոսլովակիա ու տանկերով ճնշեցին Պրահայան գարունը։

Այս դեպքերի 49-րդ տարեդարձին կազմակերպված միջոցառումներին Չեխիայի արտաքին գործերի նախարարությունից մասնակցելու հրավեր էր ստացել նաեւ Զորյանը։ Նա իր հետ տարել էր ՊԱԿ-ի արխիվից վերցված թռուցիկները։ Թռուցիկներ, որ գրել էր 15-ամյա Զորյան Պոպադյուկը 1968-ին։ Ահա հատված դրանցից.

«Քաղաքացիներ, մի հավատացեք սովետական ռադիոյի սուտ հայտարարություններին։ Լեհաստանի, ԳԴՀ-ի, Հունգարիայի, Բուլղարիայի եւ խորհրդային բանակները զավթիչներ են, այլ ոչ Չեխոսլովակիայում սոցիալիզմի պաշտպաններ։ Դատապարտեք ռազմական ներխուժումը։ Բողոքեք»։

-Խորհրդային զորքերը գնում էին Պրահայի վրա իմ տան կողքով, - այս թեմայով հարցազրույցում ասում է Զորյանը։

1973 թ. 20-ամյա Զորյան Պոպադյուկը, որն արդեն սովորում էր Լվովի համալսարանի բանասիրական ֆակուլտետում, իր ընկերների հետ միասին կալանավորվում է։ Կալանավորման համար հիմք էին հանդիսացել ընդհատակյա գործունեությունը եւ տարածած թռուցիկները։ Թռուցիկներից մեկում այսպիսի կոչ կար.

«Մարտնչեք, համոզվեք, ապացուցեք։ Ձեզ ու ձեր մտերիմներին ամեն ինչ, անգամ կյանքը զոհելու պատրաստակամության մղեք։ Հանուն այլ ժողովուրդների, հանուն ազատ ու հավասար իրավունքներով ժողովուրդների բարեկամության։ Կեցցե՛ն ազատ Ուկրաինան, ազատ Վրաստանը, ազատ Լատվիան, Լիտվան, Էստոնիան»։

«Հակախորհրդային ագիտացիա եւ պրոպագանդա» եւ «առանձնապես վտանգավոր պետական հանցագործությունների կատարմանն ուղղված կազմակերպական գործունեությանը մասնակցելը» հոդվածներով Զորյանը դատապարտվում է նախատեսված առավելագույն՝ 7 տարի ազատազրկում եւ 5 տարի աքսոր պատժաչափի։

Պատիժը կրելու համար նրան տեղափոխում են Մորդովիայում գտնվող քաղաքական կալանավայր, որտեղ աչքի է ընկնում իր չափազանց ակտիվ վարքագծով։ 1975-ին նրա ռեժիմը խստացնում եւ 3 տարով Վլադիմիրի բանտ են տանում։

Ազատազրկման պատժաչափն ավարտելուց հետո աքսորվում է Մագադան։ Կալանավայրում ձեռք բերած թոքերի տուբերկուլոզ հիվանդության պատճառով լուրջ վիրահատության է ենթարկվում՝ հեռացվում է թոքի մի հատվածը։ Աքսորի շարունակությունը կրելու համար տեղափոխում են Ղազախստան։ 1984-ին Զորյանը պետք է ազատ արձակվեր, բայց 1982-ի աշնանը նրան կրկին կալանավորում ու նույն «հակախորհրդային ագիտացիա եւ պրոպագանդա» հոդվածով դատապարտում են՝ այս անգամ արդեն 10 տարվա ազատազրկման եւ 5 տարվա աքսորի։ Մեղադրանքի համար հիմք էին հանդիսացել մտերիմներին ու հարազատներին գրած նրա նամակները։

Զորյանն իմ ճանաչած ամենակազմակերպված մարդկանցից մեկն էր։ Նրա համար դիմացինին համոզելու ամենաընդունելի ճանապարհը սեփական օրինակն էր։

1987 թ. գորբաչովյան պերեստրոյկայի շրջանում, ի թիվս բազմաթիվ քաղաքական կալանավորների, Զորյանը նույնպես ազատ արձակվեց։

1990-ականներին նա իր հայրենի Սամբոր քաղաքի քաղաքապետն էր, ապա՝ Ուկրաինայի նախագահի ներկայացուցիչն այդ շրջանում։ Այժմ չի աշխատում։

Մեր կապը շարունակվում է ու չի կտրվելու։ Ժամանակ առ ժամանակ զրուցում ենք հեռախոսով։ Զորյանը դժվարությամբ է ընդունում 21-րդ դարի ընձեռած կապի նոր հնարավորությունները։ Ֆեյսբուքում պասիվ է։ 2017 թ. Լվովում կայացած կոնֆերանսի ժամանակ հանդիպեցինք։ Հուսամ՝ հանդիպելու առիթներ դեռ ունենալու ենք։

Ալեքսեյ Սմիրնով

Ալեքսեյ Սմիրնովը՝ Լեշան, մեկն է այն խիստ սակավաթիվ ռուսներից, որոնք ռուսական մեծապետական շովինիզմով չեն տառապում: Մի քանի հարյուր տարի ռուսներին ուսուցանել, համոզել ու փորձել են ապացուցել ու դեռ ապացուցում են, որ ավելի քան բնական են հարեւան ժողովուրդների նկատմամբ վերահսկողություն սահմանելու Ռուսաստանի ձգտումը եւ ցանկությունը : Մի քանի հարյուր տարի ռուս մարդուն բացատրել են ու դեռ շարունակում են բացատրել, որ Ռուսաստանը համաշխարհային տերություն է, եւ փոքր ժողովուրդները պետք է կախման մեջ լինեն իրենցից: Մի քանի հարյուր տարի ռուս մարդու ուղեղը լցրել են ու շարունակում են լցնել, որ Ռուսաստանն այլ ժողովուրդների տարածքներ ներխուժելու, այլ ժողովուրդների ստրկացնելու եւ այլ ժողովուրդների ճակատագրերն ըստ իր քմահաճույքի վճռելու իրավունք ունի:

Այս պարագայում միայն լայնախոհ ռուս մարդը կկարողանա չընկնել նման խոր արմատներ ունեցող, հզոր ու ականջ շոյող քարոզչության ազդեցության տակ: Ալեքսեյն այդ սակավաթիվներից է:

Վերջերս նա հրապարակել է իր «Ազգային հարցը» հոդվածը: Գրում է, որ այս հարցում վերջնական եզրահանգումներ է արել կալանավայրում, հատկապես՝ Չիստոպոլի բանտում անցկացրած շրջանում, երբ սկսել է կարդալ ու խորանալ այս հարցի էության մեջ: Դատելով այս թեմայով նրա հետ ունեցած բազմաթիվ զրույցներից ու իր այս հոդվածից՝ «ազգային հարցը» նա կարողանում է տեսնել ոչ միայն ռուսի, այլեւ «ազգային փոքրամասնության» աչքերով ու հասկանալ, որ «ազգային հարցը» առաջին հերթին ոչ թե ազգություններին վերաբերող հարց է, քաղաքական հարց է, այլ, ինչպես ինքն է գրում՝ ԷԹԻԿԱՅԻ հարց է, այսինքն՝ Վատի ու Լավի, Բարու ու Չարի հարց է:

Ալեքսեյ Սմիրնովը ծնվել է 1951 թ. Մոսկվայում: Նրա պապը գրող Ալեքսեյ Կոստերինն էր՝ 30-40-ական թվականների բանտարկյալ: Նա եղել է 1960-ականներին Մոսկվայում նոր սկիզբ առնող այլախոհական շարժման առաջամարտիկներից մեկը եւ լրջորեն զբաղվել է ազգային փոքրամասնությունների խնդիրներով: Նրա ուշադրության կենտրոնում են եղել ստալինյան շրջանում Հյուսիսային Կովկասի տեղահանված ու աքսորված ժողովուրդների, ինչպես նաեւ Ղրիմի թաթարների խնդիրները: Այնպես որ՝ Ալեքսեյը դեռ փոքրուց է այս հարցերին առնչվել: 60-ականների այլախոհական շարժման մասնակից է եղել նաեւ նրա մայրը:

1969 թ. Ալեքսեյ Սմիրնովը ներգրավվել է մոսկովյան այլախոհական շարժման մեջ: Իվան Կովալյովի հետ միասին զբաղվել է «Ընթացիկ իրադարձությունների խրոնիկայի» եւ «Լուրեր ԽՍՀՄ-ից» պարբերականների նախապատրաստման աշխատանքներով: Հենց նրանք են հավաքել, համակարգել ու հրապարակման համար վերջնական տեսքի բերել այս պարբերականներում հրապարակվելիք ողջ նյութը:

1982-ին նա կալանավորվել եւ «հակախորհրդային ագիտացիա եւ պրոպագանդա» հոդվածով դատապարտվել է 6 տարի ազատազրկման եւ 4 տարի աքսորի:

Կալանավայրում ցուցաբերած ըմբոստ վարքի պատճառով 1986 թ. նրա ռեժիմը խստացվել է, եւ Ալեքսեյին տեղափոխել են Չիստոպոլի բանտ։ Սա արդեն տեղի է ունեցել իմ բացակայությամբ՝ ես աքսորավայրում էի։ 1987 թ. գորբաչովյան պերեստրոյկայի ժամանակ, ի թիվս շատ քաղբանտարկյալների, նա նույնպես ներում է ստանում։

Ազատ արձակվելուց հետո շարունակել է զբաղվել իրավապաշտպանությամբ։

Մեր կապը երբեք չի դադարել։ Երբ աքսորավայրում էի, ինձ՝ ի թիվս նաեւ բազմաթիվ մոսկովյան այլախոհների, նամակներ էին գրում ու ինձ հետ «կապի մեջ» էին նրա ընտանիքի անդամները։ 1988-ին՝ իմ ազատ արձակվելուց հետո մեր շփումները դարձան մշտական։ Այսօր էլ լավ ընկերներ ենք, ու մեր շփումները չեն դադարում։ Ճիշտ է, հաճախ չենք հանդիպում, բայց 21-րդ դարի ընձեռած կապի հնարավորությունները, փառք աստծո, օգնում են։

Կալանավայրերի կենսապայմանները

ԽՍՀՄ քաղաքական բանտարկյալներն իրենց պատիժը կրում էին խիստ կամ հատուկ ռեժիմի կալանավայրերում, եւ եթե դատավճիռը նախատեսում էր՝ նաեւ փակ տարածքում՝ բանտում։ Արդեն գրել եմ, որ խիստ ռեժիմի կալանավայրի ադմինիստրացիայի առաջարկով դատարանը կարող էր վճիռ կայացնել եւ մինչեւ երեք տարի ժամկետով փոխել կալանավորի ռեժիմն ու նրան տեղափոխել բանտ։

Խիստ ռեժիմի գաղութներում պահվող կալանավորները
- պահվում էին սովորական կացարաններում։ Սովորական կացարան ասվածը զորանոց է հիշեցնում՝ բարաք, որտեղ իրար կողքի շարված են մահճակալները, եւ յուրաքանչյուր մահճակալին կից կան փոքրիկ պահարան ու առանց թիկնակի աթոռ։
- կարող էին սննդամթերքի եւ առաջին անհրաժեշտության ապրանքների համար ծախսել ամսական մինչեւ հինգ ռուբլի գումար։ Սա նշանակում է, որ ամիսը մեկ անգամ բացվում է խանութ կոչված փոքրիկ սենյակը, որտեղ կալանավորը 5 ռուբլու սահմաններում կարող էր իր գնումները պատվիրել։ Բնական է, որ իր ձեռքում կալանավորը գումար չուներ։ Գումարը կուտակվում էր նրա հաշվեհամարին՝ իր կատարած աշխատանքի դիմաց։ Դեռեւս աքսորավայրում ձեռք բերված ու մինչեւ այսօր մոտս մնացած «ՌՍՖՍՀ ուղղիչ աշխատանքային կոդեքսը» գրքույկի մեջ ազատազրկման վայրերում կալանավորներին աշխատանքի ներգրավման ու աշխատանքի դիմաց վճարման կարգում ասվում է, որ աշխատել պարտավոր են բոլոր կալանավորները՝ անկախ տարիքից ու առողջական վիճակից։ Ե՛ւ թոշակառուները, ե՛ւ հաշմանդամները պարտավոր էին աշխատել ու աշխատում էին։ Հանգստանում էին միայն կիրակի օրերը։ Ադմինիստրացիան կարող էր կալանավորներին ներգրավել նաեւ անվճար աշխատանքներում, ինչը նրանք հաճախ էին անում։ Այս կոդեքսի 39-րդ հոդվածում ասվում է՝ դատապարտյալի հաշվեհամարին, եթե նա ռեժիմի խախտումներ թույլ չի տվել եւ եթե պահանջվող աշխատանքային պլանը կատարել է, փոխանցվում է նրա աշխատավարձի 10 տոկոսից ոչ պակաս մասը։ Այսինքն՝ եթե խախտումներ էին արձանագրում, ապա կարող էին եւ ողջ աշխատավարձը պահել իրենց։ Ճիշտ նույնկերպ էին վարվում, եթե կալանավորը պահանջվող աշխատանքային պլանը չէր կատարել։ Իսկ աշխատանքային պլանը կատարելը դժվար էր։ Կալանավորների աշխատանքի հաշվին էին ապրում կալանավայրերը եւ կալանավայրերի աշխատակիցները։ Լավագույն դեպքում նա ստանում էր միայն իր աշխատանքի չնչին տոկոսը։ Այդ տոկոսից էլ 5 ռուբլու սահմաններում կարելի էր գնումներ կատարել, որը բավականացնում էր մեկ կամ երկու բանկա ջեմ, ամսվա համար առանց ֆիլտր սիգարետ ու մանր-մունր մեկ-երկու այլ բան գնելու համար։ Խախտումներ թույլ տված կալանավորը կարող էր զրկվել գնումներ կատարելու իրավունքից։
- տարվա ընթացքում իրավունք ունեին երկու կարճաժամկետ եւ մեկ երկարաժամկետ տեսակցության։ Կարճաժամկետ տեսակցության տեւողությունը մինչեւ երեք ժամ էր, երկարաժամկետը՝ մինչեւ երեք օր։ Տեսակցությունը դրսի հետ կապի հնարավորություն էր։ Սա գիտեին ե՛ւ կալանավորները, ե՛ւ ադմինիստրացիան։ Դրա պատճառով էլ ակտիվ կալանավորները շատ հաճախ զրկվում էին տեսակցությունից։ Բայց կալանավայրերում միշտ էլ լինում էին ազնիվ կալանավորներ, որոնք իրենց խառնվածքով կամ որեւէ այլ պատճառով խիստ ակտիվություն չէին ցուցաբերում։ Հնարավոր էր նաեւ նախապես պայմանավորվել, որ կոնկրետ մեկը սկսի պասիվություն դրսեւորել, չմասնակցել ակցիաներին, շատ չշփվել

ակտիվների հետ միայն այն նպատակով, որ տեսակցություն ստանա եւ կարողանա կալանավայրի կյանքի մասին կուտակված տեղեկությունները դուրս փոխանցել։ Իսկ փոխանցման ձեւն արդեն ասել եմ՝ տեսակցության գնացող եւ տեսակցության եկած մարդկանց օրգանիզմն էր։ Փոխանցված տեղեկատվության հրապարակումից հետո ՊԱԿ-ը որոշ դեպքերում կարողանում էր հաշվարկել, թե ում միջոցով է փոխանցվել, բայց նաեւ լինում էին դեպքեր, որ չէր կարողանում։
- կարող էին ստանալ տարվա ընթացքում երկու փաթեթից ոչ ավելի։ Փաթեթը, որ կարող էր կալանավորը տարին երկու անգամ ստանալ, չպետք է գերազանցեր մեկ կիլոգրամը։
- պատժաչափի կեսը կրելուց հետո կալանավորին թույլատրվում էր տարվա ընթացքում ստանալ մեկ ծանրոց կամ հանձնուք։ Ծանրոցը, որ կարելի էր ստանալ միայն պատժաչափի կեսն ավարտելուց հետո տարեկան մեկ անգամ՝ չպետք է գերազանցեր հինգ կիլոգրամը, բայց դրանից նույնպես ադմինիստրացիան կարող է կալանավորին զրկել, եւ շատ հաճախ զրկում էր։
-կարող էին ուղարկել ամսական երկու նամակից ոչ ավելի։ Նամակները նույնպես մեծ խնդիր էին։ Դրանք պետք է գրվեին ու դրվեին ծրարի մեջ եւ բաց վիճակում գցվեին փոստարկղ։ Գրաքննիչը պետք է կարդար դրանք եւ որեւէ կասկածելի բան չնկատելու դեպքում՝ ուղարկեր հասցեատիրոջը։ Ամենաչնչին կասկածը նամակները բռնագրավելու հիմք կարող էր հանդիսանալ։

Մնունդը, որ տալիս էին կալանավայրում, բավարար չէր։ Չհագեցվածության զգացումը մշտական ուղեկից էր։ Սրանից բացի, ուտելիքը կարող էր անորակ կամ փչացած լինել։ Հաճախ էր պատահում, երբ ուտելիքի, ձավարեղենի կամ մակարոնեղենի մեջ որդեր էինք հայտնաբերում։ Այս դեպքում բողոքի ակցիաներ էին սկսվում, ինչին հետեւում էին պատիժները։ Նորիկ Գրիգորյանը 36-րդ կալանավայրում ճաշի մեջ որդ էր հայտնաբերել ու այդ կապակցությամբ դիմում էր գրել՝ առաջարկելով, որ սանիտարական ստուգում կատարվի ճաշարանում։ Նման դիմում գրելու համար նրան պատժախուց էին տարել։ Մասնագիտությամբ բժիշկ Ստեփան Խմարան 35-ում առաջարկել էր ման լվացողին սպունգ եւ սոդա տալ, որպեսզի ամանները մաքուր լինեն, եւ այս, թվում է, ավելի քան տրամաբանական առաջարկի համար Ստեփանին պատժախուց տարան։

1985-ի ապրիլի վերջերին՝ հաստատ ապրիլի 24-ից հետո, չնայած այն հանգամանքին, որ իմ պատժաչափն ավարտվում էր հունիսին, ինձ 36-րդ կալանավայրից անսպասելի տարան։ Իշխանն արդեն մահացել էր, բայց դրա մասին կալանավայրում դեռ չգիտեինք։ Դատելով այն հանգամանքից, որ մեզ հանձնարարել էին հավաքել Իշխանի իրերը, կարելի էր եզրակացնել, որ նրան Չիստոպոլի բանտ են տանում։ Նա 6 ամսով գտնվում էր ՊԿՏ-ում, իսկ այնտեղից նրան, լավագույն դեպքում, կարող էին 35 կամ 37-րդ կալանավայր տեղափոխել եւ կամ խախտումների համար Չիստոպոլի բանտ տանել։ Նրա մահվան մասին ես տեղեկացա շատ ավելի ուշ՝ երեւի 1985-ի օգոստոսին, Մագադանի մարզի իմ աքսորավայրում։

Կալանավայրի աշխատանքային հատվածից ընդմիջման ժամին մեզ բերեցին ճաշելու, որից հետո կրկին պետք է աշխատանքային հատված տանեին։ Աշխատանքային հատված անցնում էինք անցակետով, որին шмоналовка էինք անվանում, քանի որ այդտեղ մեզ դեպի աշխատանքային գոտի անցնելիս եւ այդ գոտուց բնակելի գոտի վերադառնալուց խուզարկում էին։ Шмон բառը կալանավորական ժարգոնում խուզարկություն է նշանակում։ Ամենայն հավանականությամբ՝ եբրայական ծագում ունի։ «Շմոնե»-ն եբրայերենից «ութ» է թարգմանվում։ Մինչեւ հոկտեմբերյան հեղափոխությունը Օդեսայի բանտում, որտեղ հրեաները շատ էին, ամեն առավոտ ժամը 8-ին խուզարկություն է իրականացվել։ Այդտեղից էլ՝ որպես խուզարկության հոմանիշ ձեւավորվել եւ այդ բանտի կալանավորների միջոցով այլ կալանավայրեր է փոխանցվել ու հասել մեր ժամանակներ։ Նման անցակետ-շմոնոլովկաներ կային բոլոր կալանավայրերում։

Շմոնոլովկա 36-րդ կալանավայրում

Հերթով կարդում էին կալանավորների անուններն ու բաց թողնում։ Երբ հասան իմ անվանը, հանձնարարեցին, որ դուրս գամ շարքից ու սպասեմ։ Բոլորին աշխատանքային հատված ուղարկելուց հետո ինձ հանձնարարեցին հավաքել իրերս ու սպասել հրահանգների։ Արդեն պարզ էր, որ վերջին օրս է կալանավայրում։

Շատ քիչ իրեր ունեի։ Ողջ հարստությունս հայերեն ու ռուսերեն գրառումներով լի տետրերս էին։ Հայերեն գրառումներով տետրերս դեռ մի վեց ամիս առաջ փաթեթավորել եւ գրությամբ ուղարկել էի կալանավայրի պետին։ Խնդրել էի դրանք գրաքննության համար նախապես ուղարկել Հայաստան, պարզել, որ հակախորհրդային ոչինչ չկա դրանցում եւ պահել կալանավայրից դուրս գտնվող պահեստում՝ աքսորի գնալիս ինձ տալու պայմանով։ Սա էր տետրերս փրկելու միակ ու ամենաճիշտ ճանապարհը։ Իմ պահարանում ռուսերեն գրված միայն երեք տետր էր մնացել, ապա 37-րդ կալանավայրում անցած՝ 1985-ի նոր տարվա շնորհավորանքներով մի 10 հատ բացիկ ու մի քանի գիրք։ Համաձայն կալանավայրի չգրված կանոնների, գրքերս պետք է թողնեի կալանավայրում։ Տասնամյակներ շարունակ կալանավորների թողած գրքերի հաշվին է, որ կալանավայրերն ունեին հարուստ եւ

բազմազան գրականություն։ Իմ գրքերի մեծ մասը, ինչպես եւ կարգն է, թողեցի կալանավայրում, բայց մի քանիսը, որոնք ինձ համար շատ կարեւոր էին, վերցրի ինձ հետ։ Վստահ էի, որ բացիկները կառգրավեն։ Միշտ այդպես էին վարվում. Խուզարկությունից հետո տանում էին իրար ուղղված մեր շնորհավորական բացիկներն ու գրությունները եւ չէին վերադարձնում։

Մի երկու տարի առաջ ծնողներս տնից՝ տարին երկու անգամ թույլատրվող 1 կգ փաթեթով բրդյա շատ տաք ձեռնոց էին ուղարկել։ Սա դրեցի Ստեփան Խմարայի բարձի տակ, իսկ Սլավիկ Եվդոկիմովի բարձի տակ դրեցի Աննա Ախմատովայի երկհատորյակը։ Դրանք Սլավիկինն էին, վերցրել էի ու չէի վերադարձնում։ Դեպքից դեպք Սլավիկը խնդրում էր, իսկ ես ամենայն լրջությամբ հայտարարում էի, թե ինքը դրանք նվեր է տվել ինձ ու հետ պահանջելու իրավունք չունի։ Սլավիկն արդեն հույսը կտրել էր ու վստահ էր, որ երկհատորյակը հետս տանելու եմ։ Արդեն չէր էլ պահանջում։ Գրքերը նրա բարձի տակ դնելիս պատկերացնում էի, թե ինչքան կզարմանա ու կուրախանա։ Ես, իհարկե, դրանք չէի կարող ինձ հետ տանել։ Նախ՝ ուրիշինն էին, եւ հետո՝ չէի կարող կալանավայրից նման գրականություն դուրս տանել։ Դրանք կալանավայրին ավելի էին պետք։

Իրերս ուսապարկիս մեջ դասավորելուց հետո շարժվեցի դեպի դրսում սպասող հսկիչները։ Նրանք ինձ ուղեկցեցին իրենց անցակետում գտնվող մի առանձին սենյակ ու սկսեցին խուզարկել։ Գրառումներով տետրերս վերցրին, իսկ գրքերը եւ, որքան էլ զարմանալի է՝ շնորհավորական բացիկները տվեցին։ Տետրերս վերադարձնելու խնդրանքիս ի պատասխան ասացին, որ համապատասխան մարդիկ կստուգեն, եւ եթե խնդիր չլինի՝ կտան։ Իմ բողոքին, որ ես գնում եմ՝ ծիծաղելով պատասխանեցին.

- Հեռու չես գնա։

Եւ իրոք, կալանավորներ տեղափոխող ավտոմեքենայով ինձ տարան 35-րդ կալանավայրին կից հիվանդանոց, որ, ինչպես արդեն ասել եմ, միակն էր բոլոր չորս քաղաքական կալանավայրերի համար։ Իսկ մի քանի օրից բերեցին ռուսերեն գրված իմ այս երեք տետրերը։ Առաջարկեցի, որ դրանք պահեն իրենց մոտ, որպեսզի դուրս գալուց կրկին ստուգելու կարիք չլինի։ Առաջին անգամ էի կալանավայրի հիվանդանոցում։ Ուտելու համար տալիս էին սպիտակ հաց ու կարագ։ Հիվանդանոց էր վերջին հաշվով, չնայած ես հիվանդ չէի։ Այդքան տարիների ընթացքում առաջին անգամ սպիտակ հաց ու կարագ կերա։

Մի քանի օրից ինձ մոտ՝ հիվանդանոց այցելության եկան Հայաստանի չեկիստները։ Բակում գտնվող զբոսարանում էի, երբ հսկիչը տեղեկացրեց, որ չեկիստներն սպասում են։ Սա միակ դեպքն է եղել, որ Հայաստանից եկած չեկիստներին ես հարց ու ասելիք եմ ունեցել։ Գնացի հանդիպման։ Երկուսով էին։ Տարին մեկ անգամ գալիս էին։ Ընդհանուր հարցուփորձից հետո հատուկ ընդգծեցին՝ տեղյակ են, որ ժամանակս իզուր չեմ վատնել ու լուրջ ինքնակրթությամբ եմ զբաղվել։ Ասացին, որ սխալ ճանապարհ եմ ընտրել ու եթե շարունակեմ այնպես, ինչպես եղել եմ կալանավայրում, ապա ինձ որեւէ լավ բան չի սպասվում։ Ինձ նրանց մտահոգություններն այնքան էլ չէին հետաքրքրում։ Ես նրանց ասացի իմ տետրերի մասին։ Ասացի, որ ամեն ինչ արել եմ, որ դրանք ինձ վերադարձվեն, որ 6 ամիս առաջ եմ ուղարկել ստուգման եւ այլն։ Նրանք, իհարկե, տեղյակ էին ու խոստացան, որ տետրերս ստանալու եմ։

Ապա՝ Իշխանից հարցրի։ Որտե՞ղ է եւ ինչպե՞ս է։ Բոլորս էլ անչափ մտահոգ էինք նրա ճակատագրով։ Ստեցին՝ ասելով, որ մինչեւ ինձ հանդիպելը՝ կարճ ժամանակ առաջ զրուցել են Իշխանի հետ, եւ որ՝ ամեն ինչ լավ է։ Նրանց այս պատասխանից եզրակացրի, որ Իշխանը 35-ում կամ 37-ում է։ Եթե Չիստոպոլում լիներ, չէին ասի՝ «կարճ ժամանակ առաջ»։ Հանգստացա։ Իշխանը լավ է եւ բանտում չէ։ Երկու դեպքն էլ դրական էր։ Ավելի քան դրական էր նաեւ տետրերս վերադարձնելու մասին նրանց խոստումը։

Եկավ հիվանդանոցից դուրս գալու օրը։ Ինձ կրկին հանձնարարվեց հավաքել իրերս։ Ուսապարկիս մեջ հերթով դրեցի այլումինե գդալս, այլումինե գավաթս, ատամի խոզանակը, մի քանի տուփ ատամի փոշին (ո՞վ գիտի՝ ինչքան եմ անցկացնելու ճանապարհին), օճառը, սրբիչս։ Այդպես էլ ինձ անհասկանալի է մնացել, թե ինչու էր խորհրդային կալանավայրում արգելված ատամի մածուկը։ Սրանք ամենա-ամենակարեւորներն են։ Ապա՝ վերցրի ընտրածս մի քանի գիրքն ու դուրս եկա։ Վստահ էի, որ տարածքից դուրս գալուց առաջ տալու են նաեւ տետրերս։ Եւ իրոք, կանգնած էր կալանավայրի ղեկավարներից մեկը՝ Ֆրանսուա Վիյոնի բանաստեղծությունն ինձ վերագրողը։ Տվեց ռուսերեն գրված երեք տետրերն, ապա մի տեսակ հանդիսավոր բացեց ձեռքի ծալված թուղթը եւ սկսեց մոտավորապես այսպիսի տեքստ կարդալ. «Հայերեն գրված տետրերում որեւէ հակախորհրդային կամ արգելված գրառում չի հայտնաբերվել, բայց, քանի որ հիմնավոր կասկած կա, որ դրանցում կարող են չնկատված գաղտնագրեր պարունակվել, կալանավայրի ղեկավարությունը որոշել է դրանք այրման միջոցով ոչնչացնել»։ Ահա եւ քեզ բաց երկնքից ամպրոպ։ Ահա՛ քեզ չեկիստի խոստում։ Ահա՛ քեզ միամտություն, որ ամեն ինչ ճիշտ հաշվարկելու եւ 6 ամիս առաջ դրանք գրաքննության ուղարկելու դեպքում դուրս կբերես։

Այնուհետեւ հսկիչներից մեկը վերցրեց ուսապարկս, բացեց, ու կրկին սկսեցին խուզարկել։ Թերթեցին գրքերը, ստուգեցին բոլոր ծալքերը, բացեցին ատամի փոշու տուփերը, ստուգեցին ուսապարկիս բոլոր կարերը։ Այս «արարողությունը» 2 ժամից ավելի տեւեց։ Ապա ինձ հանձնարարեցին մերկանալ ու իմ կանգնած տեղում թողնել իմ վրա եղած ողջ հագուստը եւ մերկ վիճակով անցնելով միջանցքը՝ մտնել դիմացի սենյակը։ Դիմացի սենյակում ինձ կալանավորի նոր հագուստ ու նոր կոշիկ էին սպասում։ Հագա դրանք ու ուսապարկս գրկած, առանց հսկիչներին հրաժեշտ տալու (չարացած էի) դուրս եկա։

Միշտ էլ զարմացել եմ, երբ ընկերներս, հատկապես հայ ընկերներս, ասել են, որ կարողացել են կալանավայրից հսկայական քանակությամբ արխիվ դուրս բերել։ Շեշտում եմ հայ ընկերներիս պարագան, որովհետեւ հայերից եմ նման բաներ շատ լսում։ Օտարներից շատերն, ընդհակառակը, իմ վիճակում են եղել։ Հայ ընկերներս նամակներ են ցույց տալիս ոչ միայն հարազատներից ստացած, այլեւ՝ իրար գրած։ Գործնական նամակների մասին են խոսում, որոնք կալանավայրի կյանքին ու իրենց փոխհարաբերությունների ճշտումներին են առնչվում։ Այնպիսի թեմաներ են պարունակում ու այնպիսի հասցեատերերից են, որ խուզարկության ժամանակ տեղում պետք է առգրավվեին, բայց ինչպես պնդում են արխիվի երջանիկ տերերը՝ դրանք դուրս են բերվել ու իրենց մոտ են։ Այդ ինչպե՞ս է, որ նրանք կարողացել են, իսկ ես՝ ոչ։ Անգամ ինձ հասցեագրված նամակները, որ գրաքննությունն անցել ու ինձ էին հասել տնից՝ իմ հարազատներից, վերցրին ու չվերադարձրին։ Պատճառաբանեցին, որ ես կարող էի գրաքննությունն անցած նամակների մեջ, քանի որ դրանք տարիներ շարունակ ինձ մոտ են եղել, գրառումներ կատարել կամ կոդավորել։ Իմ

գրառումները, իմ տետրերը, ցանկացած գիրք, որի վրա գրիչով որեւէ նշան կար՝ առգրավեցին, եւ բոլոր բողոքներս անհետեւանք մնացին։

Դեպի Մագադան

Հիվանդանոց կոչվող այդ վայրից կալանավորներ տեղափոխող ավտոմեքենայով ինձ տարան Պերմի բանտ։ Մոտավորապես 3-4 ժամվա ճանապարհ է՝ 150 կմ։ Չորս տարի առաջ այստեղ Մարզպետի հետ էի։ Շատ բան էր փոխվել։ Արդեն փորձառու կալանավոր էի եւ դեպքերին ու դեմքերին այլ կերպ էի նայում։ Մի 15-20 օր, եթե ոչ ավելի՝ մնացել եմ այդ բանտի առաջին հարկում գտնվող խցերից մեկում։

Սկզբում խցում մենակ էի։ Ավելի ուշ ինձ մոտ բերեցին Օստրոգյյադ ազգանունով մի «զոլավոր» կալանավորի։ Նրա մարմինը ծածկված էր խոր սպիներով։ Նա Ազատ Արշակյանի եւ Աշոտ Նավասարդյանի հետ հատուկ վտանգավոր ռեցիդիվիստների համար նախատեսված կալանավայրից էր։ Տարիների ձեռք բերած փորձս ինձ հուշում էր, որ նրա ներկայությունը պետք է հանգիստ ընդունեմ, բայց նաեւ չափազանց զգույշ լինեմ։ Ամեն ինչ՝ ցանկացած տեսակի սադրանք հնարավոր էր։ Սովորական կռվից սկսած մինչեւ ինքնավնասում եւ հայտարարություն, որ ես եմ վնասել իրեն։ Շատ ավելի ուշ՝ արդեն Երեւանում Աշոտից ու Ազատից տեղեկացա, որ կասկածներս ճիշտ են եղել, եւ որ այդ Օստրոգյյադը իրենց գաղութում հայտնի սադրիչ է եղել եւ հաճախ է ինքնավնասման ակցիաներ իրականացրել։

Ինձ շատ էր հետաքրքրում, թե որտեղ եմ աքսորվելու։ Հինգ տարուց ավելի հարազատներիս չէի տեսել։ Մշտապես տեսակցության իրավունքից զրկված եմ եղել։ Մտածում էի՝ եթե հարմար ու համեմատաբար մոտ տեղ լինի, ապա հայրս կկարողանա այցելել ինձ։ Օստրոգյյադը հանձն առավ հսկիչներից մեկի միջոցով ճշտել ու ինձ ասել։ Մի քանի օրից ասաց, որ մնալու եմ Պերմի մարզի հյուսիսում գտնվող Կրասնովիշերսկի շրջանում։ Նորությունն ինձ շատ ուրախացրեց։ Ճիշտ է, Կրասնովիշերսկը Պերմից 300 կմ հյուսիս է, բայց, բոլոր դեպքերում, Պերմի մարզ հասնելն այնքան էլ դժվար չի լինի մերոնց համար։ Ինքնաթիռ կա, գնացքներ կան։

Կարճ ժամանակ անց Օստրոգյյադին մոտիցս տարան, իսկ մի քանի օրից ինձ հանձնարարեցին պատրաստվել եւ իրերով դուրս գալ։ Հավաքվեցի ու դուրս եկա։ Ուշ երեկո էր, կալանավորներ տեղափոխող ավտոմեքենան արդեն սպասում էր։ Ես բարձրացա մեքենա, ինձ ուղեկցող երկու զինվորները՝ մեկը սլավոնական, իսկ մյուսը, որ շատ հաղթանդամ էր, միջին ասիացու արտաքինով, փակեցին իմ դուռն ու նստեցին իրենց համար նախատեսված միջանցքում, նրանց հրամանատար կապիտանը նստեց վարորդի կողքին, ու մենք շարժվեցինք։

Ինձ համար ամենաանցանկալի տարբերակը ավտոմեքենայով մինչեւ աքսորավայր հասնելն էր։ Ցանկալին գնացքն էր։ Ավտոմեքենայի թափքում 300 կմ ճամփա կտրելը դաժան էր լինելու։ Բայց մեծ եղավ զարմանքս, երբ կարճ ժամանակ անց մեքենան կանգ առավ, ու զինվորները դուրս եկան։ Լսվող աղմուկը հուշում էր, որ օդանավակայանում ենք։ Անսահման ուրախացա։ Ուրեմն ինձ օդանավով են աքսորավայր տանելու։ Ուրախացա, բայց նաեւ զարմացա։ Ոչ մի կերպ գլխումս չէր տեղավորվում, որ հնարավոր է ինձ օդանավով տանեն Պերմի մարզի մի քաղաքից մյուս քաղաք։ Դա բացառվում էր։ Զինվորներն սկսեցին զրուցել իրենց մոտեցած մեկի հետ։ Դատելով զրույցի ոճից՝ մոտեցողը նույնպես պետք է զինվորական լիներ։

Վերջապես հնչում է երկար սպասված «ու՞ր եք գնում» հարցը։ Լարվում եմ, որ հանկարծ բառ բաց չթողնեմ ու լսում եմ կարճ պատասխանը.

- Մագադան։

Կրասնովիշերսկը սուտ դուրս եկավ։ Թե նրանց ինչի՞ն էր պետք այդ խաղը, այդպես էլ ինձ համար մութ մնաց։ Չի բացառվում, որ չեկիստներն այստեղ որեւէ դեր չեն էլ ունեցել, եւ սա ուղղակի Օստրոգլյադի նախաձեռնությունն է եղել։ Իսկ Օստրոգլյադին ինձ մոտ բերելն այլ նպատակ էր հետապնդում։ Նա պետք է վստահություն ձեռք բերեր ինձ մոտ՝ ներկայանալով որպես Ազատի ու Աշոտի ընկեր, ապա պետք է հասցե տար ինձ, որի հետ աքսորից նամակագրական կապ պետք է հաստատեի։ Նա ե՛ւ հասցե տվեց ինձ, ե՛ւ ծածկագիր, որով պետք է իրականացվեր նամակագրությունը, բայց ես մեր զրույցի ընթացքում արդեն գիտեի, որ այդ հասցեով նամակ չեմ գրելու եւ այդ ծածկագրից չեմ օգտվելու։ Մագադան, ուրեմն՝ Մագադան, բոլորովին էլ դեմ չեմ։ Արդեն պարզ է, թե ինչու օդանավով։ Մագադան գնացք չի գնում։ Այնտեղ հավերժական սառցակալված գոտի է, եւ երկաթգիծ չկա։

Կարճ ժամանակ անց արդեն օդանավում էինք։ Սրահի այն հատվածը, որտեղ մենք էինք, մյուս հատվածից առանձնացված էր վարագույրով ու բացարձակ դատարկ էր։ Այնտեղ միայն ես էի ու իմ ուղեկցորդները։ Մի նստարանին՝ լուսամուտի մոտ, ես էի նստած ձեռնաշղթայով, կողքս նստած էր կապիտանը, առջեւի նստարանին զինվորներից մեկը, իսկ մյուսը՝ հետեւի նստարանին։ Հետեւում՝ մինչեւ վարագույրը, կար եւս մի քանի դատարկ նստարան։ Այսպես՝ ուղղություն վերցրինք դեպի արեւելք։ Վստահ էի, որ սրահում ձեռնաշղթան հանելու են, բայց չհանեցին։ Ստյուարդեսան ուտելիք բերեց մեզ։ Հարկ չհամարեցի խնդրել ու շղթայված էլ իմ բաժինը կերա։ Վրդովված էի, որ սրահում չեն հանում ձեռնաշղթան։ Դրա պատճառով էլ մինչեւ մեր համատեղ թռիչքի ավարտը նրանց հետ երեւի հինգ բառ չեմ փոխանակել։ Ստյուարդեսան մոտեցավ ամանները տանելու եւ հարցրեց.

- Որեւէ բան էլի կցանկանա՞ք։

Կապիտանը բոլորիս փոխարեն կարճ կապեց.

- Ոչ։

- Ես ձեզ չեմ հարցնում, - անսպասելի վրա բերեց ստյուարդեսան։

Նրան, անկասկած, վրդովեցրել էր իմ ձեռնակապված վիճակը։ Ժպտացի ու ասացի, որ ոչինչ չեմ ցանկանում, եւ նա հեռացավ։

Քիչ անց օդաչուների խցիկից դուրս եկավ մեկը, մոտեցավ մեզ եւ մտերմիկ տոնով հարցրեց.

- Տղերք, սիգարետ ունե՞ք։

Օդանավում, բնական է, ծխել չէր կարելի։ Ուտելուց հետո, սովորության համաձայն, ես հանել էի ծխախոտի տուփը ու ծխելու ցանկությունը սպանելու նպատակով՝ ձեռքիս մեջ շուռումուռ էի տալիս։ Օդաչուի հարցին ի պատասխան՝ շղթայված ձեռքերով նրան մեկնեցի տուփը։ Նա

«Պրիմա», իհարկե, չէր ծխի, շնորհակալություն հայտնեց, բայց գլանակ չվերցրեց, ապա հայացքը կապիտանին ուղղելով ասաց.

- Ամոթ է, ու՞ր է փախչելու օդանավից։

Երեւի կապիտանը հասկացավ վիճակի ողջ անհեթեթությունը եւ հանեց ձեռնակապս։ Ինքս մինչեւ վերջ կապած ձեռքերով գնալուն արդեն պատրաստ էի։

Մեր օդանավը վայրէջք կատարեց Նովոսիբիրսկի օդանավակայանում։ Ձեռնակապ հագցրին ինձ, դուրս բերեցին օդանավից ու տարան դեպի օդանավակայանի ոստիկանական հենակետ։ Կապիտանը ներս մտավ ու ինչ-որ բան էր երկար բացատրում ոստիկաններին։ Պարզ է, առաջարկում էր, որ մինչեւ թռիչքն ինձ փակեն իրենց հենակետում։ Ոստիկանները, ամենայն հավանականությամբ, տեղեկանալով թե ով եմ, ինչ հոդվածով եմ դատված, տեսնելով անձնական գործիս վրայի կարմիր գիծը՝ մերժեցին։ Ու կապիտանը, առանց երկար մտածելու, ձեռնակապով շղթայեց ինձ ոստիկանական հենակետի առջեւում գտնվող ջեռուցման խողովակին, հանձնարարեց, որ զինվորները կողքիցս չհեռանան, ու գնաց։ Հանուն արդարության պետք է ասեմ, որ աթոռ կար, եւ նստած էի։ Այդ օդանավակայանում մնացինք մի 4-5 ժամ՝ մինչեւ հաջորդ օդանավի թռիչքը, որը պետք է մեզ Յակուտսկ հասցներ։ Շատ արագ օդանավակայանում լուր տարածվեց, որ ջեռուցման համակարգին շղթայված մարդ կա, ու ուղեւորներն, ինչպես գազանանոցում, մոտենում, դիտում ու հեռանում էին։ Հետաքրքիր էին ծիկրակող երեխաները։ Ինձ թվում էր՝ այդ օրն օդանավակայանում անսահման թվով երեխաներ կային, որովհետեւ ինձ դիտելու եկածների վերջը չէր երեւում։ Զինվորներից մեկը գնաց պաղպաղակի հետեւից, ինձ նույնպես հարցրին՝ ցանկանու՞մ եմ արդյոք։ Մերժեցի։ Անհիշելի ժամանակներից պաղպաղակ չէի կերել, եւ երկար ու անհայտ ճանապարհին օրգանիզմս փորձության ենթարկելը սխալ կլիներ։ Վերջապես եկավ կապիտանը, արձակեց ինձ, ու գնացինք դեպի օդանավ։ Այս անգամ արդեն օդանավում ձեռնակապս հանեցին։ Օդանավը լիցքավորման համար վայրէջք կատարեց Յակուտսկում։ Լիցքավորման ընթացքում ես եւ ուղեկիցներս մնացինք սրահում։ Կրկին օդ բարձրացանք ու վայրէջք կատարեցինք Մագադան քաղաքի օդանավակայանում, որտեղ կապիտանն ինձ հանձնեց այլ ուղեկցորդների։ Նրանք ինձ կալանավորներ տեղափոխող ավտոմեքենայով տեղափոխեցին Մագադանի բանտ առանց ձեռնաշղթայի։ Արդեն մայիսի վերջերն էր։ Չնայած այն հանգամանքին, որ պատժաժամկետս ավարտվում էր հունիսի 6-ին, այս բանտում մնացի շատ ավելի երկար՝ երեւի մինչեւ հուլիս։ Պատճառն այդպես էլ անհայտ մնաց։ Աքսորավայր հասնելիս տեղեկացա, որ այնտեղ է եղել էստոնացի քաղբանտարկյալ Վիկտոր Նիիտսոն, ու վճռեցի, որ բանտում մնալս կապված է եղել նրա ազատ արձակման հետ, բայց ավելի ուշ պարզեցի, որ Վիկտորը շատ ավելի վաղ էր ազատ արձակվել, եւ նրա պարագան այստեղ որեւէ դեր խաղալ չէր կարող։

Արդեն ընտելացել էի կալանավորական կյանքին եւ աքսորիս հաշվին բանտում մնալու հետ կապված անհանգստության նշաններ չէի ցուցաբերում, հսկիչներին ճակատագրիս առնչվող անիմաստ հարցեր, որոնց պատասխանել չէին կարող՝ չէի տալիս։ Հանգիստ սպասում էի։ Գիտեի, որ ինձ հետ կապված հարցերը լուծվում են ոչ թե այստեղ՝ այս բանտում, այլ ՊԱԿ-ականների աշխատասենյակներում։ Կգա օրը՝ կտանեն։ Նաեւ գիտեի, որ բանտային այս օրերս կորած չեն։ Մագադանի բանտը սովորական խորհրդային բանտ էր՝ իր բոլոր

անհարմարություններով հանդերձ։ Օրը երեք անգամ կերակրում էին, մեկ ժամով զբոսանքի էին տանում, երբ գրիչ էի խնդրում՝ տալիս էին, անգամ թողնում էին ինձ մոտ եւ, ի տարբերություն Պերմի բանտի կամ այլ կալանավայրերի՝ անմիջապես չէին գալիս խուզարկության, որ գրածս տանեն։ Սա է պատճառը, որ մոտս մինչեւ այսօր պահպանվել են Մագադանի բանտում արված որոշ գրառումներ։ Կանանց հարկաբաժինը կից էր իմ խցին, եւ ես նրանց բարձրաձայն զրույցների ու քրեական աշխարհում տարածված պարզաբանում-կոդիվների մշտական ունկնդիրն էի։ Խուցս անկյունային էր։ Հատուկ էին այսպես ընտրել, որ մյուս կալանավորների հետ քիչ շփումներ ունենամ։ Կողքիս խցում կանայք էին, ու շփումներս նրանց հետ էր։ Խցերից մեկի լուսամուտից պարանի օգնությամբ իմ խուց փոխանցեցին կոնֆետներ ու մի գրություն, որտեղ պատը ծեծելով իրար հետ զրուցելու պայմանական նշաններն էին։ Այդ բանտից ամենաշատը մի կալանավոր աղջիկ է տպավորվել։ Այդ աղջիկը կարողանում էր տարբեր երգչուհիների նմանակելով երգել նրանց կատարած երգերը։ Հատկապես տպավորիչ էր ստացվում, երբ զբոսարանում էր երգում։ Հսկիչները չէին խանգարում, ու նա ոգեւորված երգ երգի հետեւից նմանակում էր։

- Հե՛յ, քաղաքակա՛ն, ի՞նչ ես ուզում, որ քեզ համար երգեմ, - ուրախ գոռում էր նա, երբ հանգամանքներն այնպես էին դասավորվում, որ զբոսարանի տարբեր խցերում հայտնվում էինք նույն ժամին։

Ավելի ուշ խցակից բերեցին ինձ մոտ։ Մի տարեց մարդ էր, որից փորձում էի տեղեկանալ մագադանյան կյանքի նրբությունների մասին։ Առաջին տեղեկությունս այն էր, որ այստեղ ապրողների ճնշող մեծամասնությունը խմում է, եւ որ հարբեցողների ու թմրամոլների համար Մագադանից ոչ հեռու մի փոքր ավանում, որը, չգիտես ինչու, կոչվում էր Արարատ, առանձին կալանավայր կա։ Եւ երբ թմրամոլներից կամ հարբեցողներից որեւէ մեկի նկատմամբ այդ ընդհանուր ռեժիմի կալանավայր տանելու վճիռ է կայացվում, ասում են՝ այսինչին կամ այնինչին տարան Արարատ։ Այսօր այդ Արարատ ավանն արդեն չկա։

Հնացած տպավորություն է, թե Մագադանի մարզն ամբողջությամբ լցված է կալանավայրերով։ Իրականում 1980-ական թվականներին այնտեղ քիչ կալանավայրեր կային։ Այսօր էլ ավելի են քչացել, որովհետեւ կենսական վատ պայմանների պատճառով, մարդիկ լքում են այդ վայրերը։ Ամբողջական ավաններ ու քաղաքներ են դատարկվում՝ վերածվելով ուրվական-բնակավայրերի, ինչպես, օրինակ, նշածս Արարատը։ Արդյունքում փակվում են նաեւ կալանավայրերը։ Այն ավանը, որտեղ իմ աքսորն եմ անցկացրել, այսօր նույնպես ավան-ուրվական է։ Այնտեղ ապրող չկա։ Մինչեւ 1960-ականներն, իրոք, այնտեղ ամեն քայլափոխի կալանավայր է եղել։ Հիմա էլ՝ տայգայում զբոսնողն ամենուր կարող է տեսնել նախկին կալանավայրերի հետքեր՝ փշալարերի կամ վանդակաճաղերի մնացորդներ, ցանկապատերի սյուներ եւ այլն։

Լքված կալանավայր Մագադանում

Դեպի Բուրկանդիա

Մի գեղեցիկ օր ինձ հրահանգեցին հավաքել իրերս եւ դուրս գալ խցից։ Կալանավորներ տեղափոխող ավտոմեքենայի մեջ մի 15-20 կալանավոր կար։ Ինձ առանձին նստեցրին մեկտեղանոց նեղլիկ խցում ու փակեցին դուռը։ Դռան վրա՝ վերին հատվածում շնչելու համար մի քանի ոչ մեծ անցք էր բացված։ Դուռը փակելուց հետո մարդն իրեն զգում է դագաղում։ Ոչ մի ազատ շարժում անել հնարավոր չէ։ Կարճ ժամանակ անց սկսում են ցավել բոլոր մկաններդ ու հոդերդ։ Չես կարող ոտքերդ մեկնել, չես կարող կանգնել, չես կարող ձեռքերդ տարածել։ Էլի լավ է, որ փոքրամարմին եմ։ Պատկերացնում եմ, թե ինչ չարչարանք է հաղթանդամ մարդու համար նման խցում երթեւեկելը։ Յուրաքանչյուր կալանավոր տեղափոխող ավտոմեքենայի մեջ հատուկ վտանգավոր հանցագործների համար կա նման մեկ կամ երկու խուց։ Այս խցերն օգտագործում են նաեւ կանանց տեղափոխելիս, երբ ընդհանուր խցում տղամարդիկ են։ Դրանց մեջ երկար մնալը բարդ է, բայց ոչինչ անել չես կարող, պետք է դիմանաս։

Մեկ տեղանոց խուց «սեւ ագռավում»

Մագադանյան տարածությունները հազարավոր կիլոմետրեր են։ Կալանավորներ տեղափոխող ավտոմեքենայով նման տարածություն անցնելը շատ դժվար է։

Հռչակավոր Կոլիմյան մայրուղով մի 100 կմ գնալուց հետո ավտոմեքենան կանգ առավ հանգստի նպատակով։ Ընդհանուր խցի կալանավորներին դուրս հանեցին, որ մի քիչ շարժվեն ու հանգստանան, իսկ իմ խցի միայն դուռը բացեցին։ Ուղեկցող վաշտի հրամանատարը պահանջեց, որ մնամ խցում նստած, եւ միայն ոտքերս կարող եմ բացված դռնից մեկնել դեպի միջանցք։ Կանգառը վիճակս բարելավելու հնարավորություն էր ստեղծել, եւ ես որոշեցի օգտվել առիթից ու դիմեցի վաշտի հրամանատարին, որ ինձ էլ մյուսների պես դուրս թողնի։ Համաձայնեց՝ հավելելով, որ ձեռնաշղթա է հագցնելու։ Դեմ չէի, բայց ասացի, որ անիմաստ միջոցառում է, բացատրեցի, որ ազատազրկումս ավարտվել է, գնում եմ աքսոր եւ փախուստի դիմելն, այն էլ այս անծանոթ ու անծայրածիր տայգայում, իմ կողմից հիմարություն կլինի։ Հավաստիացրի, որ որեւէ բան չի պատահելու։ Ինձ միացան նաեւ մյուս կալանավորները.

- Հրամանատար, այդ վիճակում ճամփա գնալ հնարավոր չէ, մարդ եղիր, - հորդորում էին նրանք, ու վաշտի հրամանատարը տեղի տվեց։ Ես ոչ միայն դուրս եկա մենախցից ու մյուսների պես ներքեւ իջնելով՝ շարժվելու ու հանգստանալու հնարավորություն ստացա, այլեւ մեքենայի մեջ ինձ արդեն տեղավորեցին ընդհանուր խցում։

Մեզ հետ Չուկոտկայից երկու երիտասարդներ էին, որոնց համար ամենահետաքրքիր բանը ծառերի գոյությունն էր։ Ընթացքի ժամանակ նեղլիկ լուսամուտից ծառ տեսնելիս իրար ասում էին.

- Տե՛ս, տե՛ս, ծառ է։

Կալանավորները ծիծաղում էին նրանց այս բացականչությունների վրա, բայց, ընդհանուր առմամբ, նորմալ մարդիկ էին։ Հիմնականում առաջին անգամ դատվածներ էին, որոնցից ոմանք կալանավայր էին ընկել, ինչպես իրենք էին ասում՝ «ոսկու համար»։ Գալիս են այստեղ աշխատելու ու գումար վաստակելու, բայց չեն դիմանում գայթակղությանը եւ ոսկի են գողանում։ Ոսկին այնտեղ ամենուր է, բայց գողանալ, իհարկե, չի կարելի։ Հատուկ ծառայությունների գործակալները շատ են, ու չբռնվելու հավանականությունն աննշան է։ Գողացողները շատ շուտ բռնվում են, ինչից հետո փակվում են նրանց գումար վաստակելու բոլոր ծրագրերն, ու սկսվում է կալանավորի ոդիսականը։

Մի 250-300 կմ անցնելուց հետո մեզ գիշերելու համար տեղավորեցին ճանապարհին գտնվող բանտերից մեկի մեծ ու ընդհանուր խցում։ Խցի միայն մի պատի երկայնքով ձգվում էր մետաղյա երկհարկանի իրար կպած մահճակալների՝ մահճակալ-տախտակամածների շարքը։ Արդեն ուշ էր, տեղավորվեցինք այդ մահճակալ կոչվող կոնստրուկցիաների վրա ու քնեցինք։ Գիշերվա մի պահի արթնացա սարսափելի ու սրտխառնուք առաջացնող հոտից։ Մարդիկ քնած էին։ Ինձանից ոչ հեռու մի երկուսը ցածրաձայն զրուցում էին։ Հարցրի, թե ի՞նչ հոտ է, բայց նրանք միայն ուսերը թոթվեցին։ Կամ չէին զգում այդ զզվելի հոտը, կամ նշանակություն չէին տալիս։ Ողջ գիշեր չքնեցի։ Առավոտյան մեզ ուտելիք հիշեցնող ինչ-որ բան բերեցին, որից նույն հոտն էր փչում։ Ես չկերա։ Այդ հոտն անգամ իմ գրպանի սիգարետից

էր փչում։ Մեզ խցից հանեցին ու տեղափոխեցին մի մեծ սրահ, որտեղ մեզ միացավ կալանավորների ոչ մեծ խումբ։ Սրանք արդեն կրկնահանցագործներ էին։ Իմանալով, որ գալիս եմ խիստ ռեժիմի կալանավայրից ու քաղաքական եմ, առաջարկեցին միասին ճաշել։ Հենց տեղում, հատակին դրված ուսապարկերի ու տոպրակների վրա ուտելիք դրեցին։ Ամենահիսկական տնական ուտելիքներ էին։ Այսքան տարի անց առաջին անգամ նորմալ ու տնական ուտելիք կերա։

Մեզ հանձնարարվեց հավաքել իրերը։ Երբ բանտի ղեկավարներից մեկը հերթով կարդում էր դեպի կալանավորներ տեղափոխող մեքենա ուղղվելու ենթակա կալանավորների անունը, իմ անվանը հասնելուց եւ հոդվածս տեսնելուց հետո մի տեսակ չարացած վրա բերեց.

- Էս քեզ գնդակահարելը քիչ է։

Ես վրդովված հակադարձեցի նրան՝ ասելով, որ ավելի լավ է աչքերը լայն բացի եւ իր ձեռքում եղած թղթում գրված տեղեկությունը մինչեւ վերջ ու ուշադիր կարդա։ Բանն այն է, որ Ռուսաստանի քրեական օրենսգրքում 65-ը լրտեսության հոդվածն էր, իսկ 67-ն էլ տեռորիզմի հետ էր կապված։ Հայաստանում 65-ը հակախորհրդային ագիտացիա եւ պրոպագանդան էր, իսկ 67-ն՝ առանձնապես վտանգավոր պետական հանցագործության ուղղված կազմակերպության ստեղծումը։ Ցուցակում իմ անվան դիմաց պետք է գրված լիներ 65 եւ 67 հոդվածներ՝ ըստ Հայկական ՍՍՀ քր. օր.-ի։ Նա հաստատ բաց էր թողել «Հայկական ՍՍՀ» բառակապակցությունը եւ ինձ որպես լրտես կամ տեռորիստ էր դիտարկում։

Լարվածությունը մեղմեց կրկնահանցագործներից մեկը՝ տեղից բղավելով.

- Քաղաքացի պետ, նա Հայաստանից է, քաղաքական է, այնտեղ նշված են Հայաստանի հոդվածները։

Սպան, իհարկե, զգաց իր սխալը, բայց որպեսզի չստացվի, թե ինքը նահանջում է, հանձնարարեց ուսապարկս խուզարկել։ Ես հանգիստ բացեցի ուսապարկս, ոտքով առաջ հրեցի ու մի կողմ քաշվեցի։ Սպան նույնպես մոտեցավ ոչ մեծ ուսապարկս խուզարկող հսկիչին ու մի քանի գրքից, ատամի խոզանակից ու մի քանի տուփ ատամի փոշուց բացի այլ բան չտեսնելով՝ մի կողմ քաշվեց, եւ ես ուսապարկս վերցրած դուրս եկա։ Դրսում ինձ սպասում էր նախորդ օրվա ուղեկցող վաշտը։ Այս անգամ արդեն առանց ավելորդ խոսքուզրույցի ինձ տեղավորեցին ընդհանուր խցում, եւ շարունակեցինք մեր ճանապարհը Կոլիմյան մայրուղով։

Լեռնային արդյունաբերության զարգացմանը զուգահեռ, 1920-ական թվականներից սկսած խորհրդային իշխանությունները Հեռավոր Արեւելքում սկսեցին տեղական ճանապարհների ցանց կառուցել։ Տեղանքը հարուստ է ոսկով եւ այլ թանկարժեք օգտակար հանածոներով։ Քանի որ հավերժական սառցակալված գոտի է, երկաթգիծ կառուցելը բացառվում էր։ Մնում էր ավտոճանապարհը։ Խորհրդային իշխանություններն իրենց առջեւ խնդիր դրեցին կառուցել մայրուղի, որը Յակուտսկ քաղաքը կմիացնի Մագադան քաղաքին։ Որպես ձրի աշխատուժ օգտագործվում էին կալանավորները, որոնց ձմռանը 40-50 աստիճան սառնամանիքի, իսկ ամռանը մոծակների ու տարատեսակ այլ մժեղների խայթոցների

պայմաններում ստիպում էին կառուցել այդ ճանապարհը: 1931-ից սկսած՝ ճանապարհի շինարարությունը տեւել է մինչեւ 1953 թվականը: Այդ ընթացքում սպանվել են հազարավոր կալանավորներ: Ամենեւին էլ ծայրահեղություն չէ, երբ ասում են, որ այդ ճանապարհը կառուցվել է մարդկային ոսկորների վրա ու խորհրդային իշխանության համար ոչինչ չարժեցող մարդկային կյանքերի գնով: Այսօր այդ ճանապարհն ունի 2032 կմ երկարություն, որից 1197 կիլոմետրը ձգվում է Յակուտիայի տարածքով, իսկ 835-ը՝ Մագադանի:

Հանգստի նպատակով ընդամենը մեկ կանգառ կատարելով, անցնելով 630 կմ ճանապարհ՝ հասանք Սուսուման քաղաքի բանտ: Սուսումանը համանուն շրջանի կենտրոնն է եւ գտնվում է Կոլիմյան մայրուղու վրա: Առաջին միտքը, որ ծնվեց գլխումս, երբ լսեցի «Սուսուման» տեղանունը, Շալամովի մասին էր: Այստեղ, ի թիվս բազմաթիվ հայտնի մարդկանց, ինչպես նաեւ ինձ ծանոթ հայտնի այլախոհների, իր կալանավորման տարիներն էր անցկացրել, իմ կարծիքով, ստալինյան շրջանի կալանավորական կյանքը լավագույն ու անգերազանցելի ներկայացնող, գրող Վառլամ Շալամովը: Ինձ առանձնացրին բոլորից եւ տեղավորեցին բացարձակապես դատարկ մոտ 10-15 տեղանոց խցում: Այդ հսկա խուցը միայն մեկ չափազանց փոքր վանդակապատ լուսամուտ ուներ, այն էլ՝ գետնից այնքան բարձր, որ դեպի լուսամուտ ձգվելու ու այնտեղից ինչ-որ բան տեսնելու ոչ մի հնարավորություն չկար: Դատելով լուսամուտի բարձրությունից, խուցս պետք է որ նկուղային հարկում լիներ: Գիշերը կրկին սկսեցի զգալ նույն անտանելի հոտը: Հատկապես սաստկանում էր, երբ ծխել էի փորձում: Մտքովս անցավ, որ սա կարող է ծխելը թողնելու լավ առիթ դառնալ, ինչը ես ավելի ուշ արեցի: Ուշադրությունս շեղելու նպատակով որոշեցի այդ մեծ խցի միակ լամպի կիսախավար լույսի տակ նստած կարդալ, բայց չէր ստացվում: Ոչ մի կերպ չէի կարողանում կենտրոնանալ: Պարզ էր արդեն, որ գիշերն այստեղ եմ մնալու: Ամբողջ ցավն այն է, որ առջեւում շաբաթ-կիրակի է: Կասկածներս հիմնավոր դուրս եկան: Երկու օր մնացի այդ խցում: Ոչ մեկը հետս բառ չէր փախանակում: Միայն օրը երեք անգամ ուտելիք էին բերում ու լուռ հեռանում: Անկասկած, հսկիչներին հանձնարարված էր զրույցի չբռնվել հետս: Հակառակ դեպքում հետաքրքրասեր հսկիչները պետք է արդեն անհաշիվ հարցեր տված լինեին:

Երկուշաբթի առավոտյան 11-ի կողմերն ինձ դուրս բերեցին: Գեղեցիկ, տաք ու լուսավոր ամառային առավոտ էր: Դիմավորեց Սուսումանի շրջանի պետական անվտանգության կոմիտեի պետն իր տեղակալի հետ: Ողջունեցին որպես հին ծանոթի, ու նստեցինք իրենց գազիկը: Նման ճանապարհորդությունից հետո փափուկ մեքենան անսովոր էր: Ուղեւորվեցինք դեպի Սուսուման քաղաքի ոստիկանություն: Մինչ ես նստած էի ոստիկանության հերթապահ մասում, չեկիստները փաստաթղթերս էին ձեւակերպում: Ապա ինձ տարան աքսորյալի նկատմամբ հսկողություն իրականացնող բաժնի պետի մոտ, որը կին էր: Նա տեղեկացրեց, որ իմ ազատազրկման ժամկետը քանի որ ավարտվել է հունիսի 6-ին, բայց ես դրանից հետո շարունակել եմ բանտում փակված մնալ, ուրեմն իմ բանտում անցկացրած յուրաքանչյուր մեկ օրը երեք է հաշվվելու: Կատարեց բոլոր թվաբանական հաշվարկներն ու տեղեկացրեց, որ ազատ եմ արձակվելու երեք տարի անց, բայց ոչ թե հունիսին, ինչպես նախատեսում էր դատավճիռս, այլ՝ ապրիլին: Բանտում անցկացրած հավելյալ օրերը տվեցին իրենց արդյունքը: Ապա պետանվտանգության կոմիտեի պետի տեղակալի հետ միասին ուղեւորվեցինք դեպի իմ աքսորավայր: Ավտոմեքենան վարում էր նա: Աքսորավայրս Սուսումանից 90 կմ հեռու էր: Այնտեղ հասնելու համար պետք էր շեղվել Կոլիմյան մայրուղուց եւ ուղեւորվել հյուսիս-արեւմուտք՝ դեպի Յակուտիայի սահմանները:

Սա վերջին բնակավայրն է այս տեղանքում, ապա անսահման ու անվերջանալի տայգան է՝ իր աներեւակայելի գեղեցկությամբ։

Ճանապարհի կեսին կանգ առանք ճաշելու համար։

-Այլ հագուստ չունե՞ս, - կալանավորական շորերիս նայելով հուսահատ հարցրեց չեկիստը։

Այլ հագուստ, իհարկե, չունեի ու այդպես էլ ճաշարան մտա։ Ճաշի համար, բնականաբար, վճարեց նա։ Ես ոչ մի կոպեկ փող չունեի։ Ճանապարհին նրանից 5 ռուբլի վերցրի։

-Հասնենք տեղ՝ կհեռագրեմ, տնից գումար կուղարկեն՝ կվերադարձնեմ։

Մի քանի օրից նրա գումարն ինձ այցելության եկած մեկ այլ չեկիստի միջոցով արդեն վերադարձրել էի։

Տեղ հասանք ժամը երեքի-չորսի կողմերը։ Ինձ տեղավորեցին ավանում եղած երկու հանրակացարաններից մեկում։ Հանրակացարաններից մեկը հայտնի էր իր փնթիությամբ ու անկարգությամբ, իսկ մյուսը՝ շատ ավելի բարեկարգ էր։ Ես բարեկարգում էի՝ երկտեղանոց մի սենյակում։ Պարզ է՝ սենյակակիցս պատահական մարդ չէ։ Սվերդլովսկից էր, երիտասարդ ինժեներ-լեռնագործ։ Այստեղ բոլորն են լեռնագործ։ Իրերս տեղավորելուց հետո կալանավորական հագուստով դուրս եկա բակ։ Փառք Աստծո, բանվորական արտահագուստից դրանք քիչ են տարբերվում։ Հանրակացարանի հերթապահուհու գլխավորությամբ մի քանի հոգի շրջապատեցին ինձ։ Ավանում ինձանից առաջ քաղաքական աքսորյալներ եղել էին, ես նորություն չէի, բայց մարդիկ, բնականաբար, փորձում են նորի ու նախկինի տարբերությունը պարզել։ Ինձանից առաջ այստեղ եղած Վիկտոր Նիիտսոն բարդ հարաբերություններ էր ունեցել։ Որոշեցի դուրս գալ ուսումնասիրվող ցուցանմուշի դերից եւ հարցրի, թե որտեղ է խանութը։ Գնացի խանութ ու չեկիստի տված գումարով գնեցի սիգարետ, երկու փոքր սալիկ 25 կոպեկանոց շոկոլադ, այնուհետեւ պարզելով, թե որտեղ է փոստը, գնացի ու հեռագիր ուղարկեցի հարազատներիս։ Գիտեի, որ շատ անհանգիստ կլինեն։ Ապրիլին գաղութից դուրս գալուց հետո ինձանից լուր չունեին։ Մի քանի օրից ստացա հորս ուղարկած գումարը։

1985-ի ամառն էր։ Մոծակներ, մժեղներ, արեւից տաքացած հավերժական սառցակալության վերին բարակ շերտի հալոցք եւ ավելորդ ու խանգարող խնդիրների բացակայություն։ Իրոք, 1985-ի ամռան ու աշնան ամիսները շատ բարեհաջող էին եւ առանց ավելորդ բարդությունների։ Շատ արագ ծանոթացա մարդկանց հետ։ Դրա համար ինքս ջանք չէի թափում։ Իրենք էին մոտենում։ Ամենակարեւորը՝ զգում էի, որ մարդիկ բարեկամաբար են տրամադրված։ Մի գիշեր խոր քնած եմ։ Հարեւանս գիշերային հերթափոխում է, սենյակում մենակ եմ։ Դուռը ներսից չեմ փակել։ Միշտ գլուխ եմ գովել, թե այնպես եմ քնում, որ ամենաչնչին աղմուկից կարող եմ արթնանալ, բայց՝ առավոտյան արթնացել, անկողինս եմ հարդարում ու բարձիս տակ 25 ռուբլի գումար եմ հայտնաբերում։ Փաստորեն ինչ-որ մեկը, այդպես էլ չիմացա, թե՝ ով, մտել է իմ սենյակ, բարձիս տակ գումար է դրել, իսկ ես՝ այդքան ուշադիր քնողս, բանից անտեղյակ։

Միակ խնդիրն այն էր, որ չեկիստները ոչ մի կերպ չէին կարողանում հանգիստ վերաբերվել այն հանգամանքին, որ ես մարդկանց հետ լավ հարաբերություններ ունեմ, եւ մարդիկ ինձ հարգում ու սիրում էին: Խաղաղության այդ մթնոլորտը, չնայած ձեռնարկած փորձերին, 1985 թվականի ընթացքում փչացնել չկարողացան: Ասենք՝ դրանից հետո էլ այս ճակատում նրանք միայն պարտություն են կրել:

Թուրք Ալին

Ալին թուրք է: Աքսորավայրի առաջին ծանոթներիցս էր: Հենց առաջին օրն այս փոքրամարմին մարդը՝ տեսնելով ինձ հանրակացարանի մուտքի մոտ, մոտեցավ եւ հայտարարեց՝ մեռանք սպասելով, էս ու՞ր ես՝ չկաս: Տարակուսած հարցիս ի պատասխան տեղեկացրեց, որ մոտ մեկ ամիս առաջ չեկիստները եկել են հանրակացարան, ուսումնասիրել են տարածքը: Նրանց գնալուց հետո «պարտորգը»՝ ավանի կոմունիստական կուսակցության քարտուղարը, հանրակացարանի բնակիչներին հենց հանրակացարանի տարածքում ժողովի է հրավիրել եւ տեղեկացրել, որ շուտով չափազանց վտանգավոր մեկի են բերելու, եւ որ այդ մեկը հենց այդ հանրակացարանում է բնակվելու, եւ պետք է ուշադիր լինել ու այդ մեկի ազդեցության տակ չընկնել: Ալին այս ամենն ասաց առանց ավելորդ զգուշության, ու միասին ծիծաղեցինք: Նա 60-նն անց մարդ էր, անցել էր ԳՈՒԼԱԳ-ով՝ Խորհրդային միության բանտային համակարգով: Աներեւակայելի կենսագրություն ուներ: Ծնվել էր Թուրքիայում: Պատանեկության տարիներին՝ 15-16 տարեկանում, ծանոթացել էր Խորհրդային միության դեսպանատան աշխատակցի հետ, որը նրան անընդհատ պատմել էր, թե ինչքան լավ երկիր է Խորհրդային միությունը: Ու Ալին վճռում է՝ եթե Խորհրդային երկիրն այդքան լավն է, ապա ինքը պետք է այնտեղ ապրի, ու Հայաստանի կողմից անցնում է ԽՍՀՄ-Թուրքիա սահմանը: Հենց այստեղ էլ կալանավորվում է: Բացատրությունը, որ եկել է այս երջանիկ երկրում ապրելու՝ բավարար չի համարվում, եւ Ալիին դատապարտում ու Սիբիր են ուղարկում: Մի քանի տարի անց, երբ ազատ է արձակվում՝ փորձում է սահմանը նույնկերպ հատել եւ Թուրքիա վերադառնալ: Կրկին կալանավորվում է ու այս անգամ արդեն շատ ավելի մեծ պատժաչափ են տալիս: Պատիժը կրում է Մագադանում՝ Կոլիմայում: Ազատ արձակվելուց հետո՝ մոտ 40 տարեկանում, տեղափոխվում է Հայաստան՝ Արմավիրի շրջան, որ Թուրքիային մոտ լինի: Նամակ է գրում հարազատներին, տեղեկացնում է, որ ողջ է: Զարմանալի է, բայց նամակը տեղ է հասնում, ու պատասխան էլ է ստանում: «Բայց Կոլիման, - ինչպես նա էր ասում, - ձգում էր»: Եւ նա՝ թողնելով Թուրքիայի սահմանը, հետ է գալիս Կոլիմա: Արդեն թոշակի էր անցել ու պատրաստվում էր հեռանալ այստեղից: Նալչիկում տուն էր գնել, կին ուներ, որն այնտեղ էր ապրում: Ալիին մնում էր միայն թոշակավորման փաստաթղթերը վերջնական տեսքի բերել:

-Շաբաթ օր բաղնիքի օր է, միասին բաղնիք ենք գնալու, - հանրակացարանի դռան մոտ կանգնած՝ բարձր-բարձր ձայնով ասում էր նա, - քո վրայից բանտի հոտը պետք է քերենք:

Ամեն օր մեկը ճաշարան էր հրավիրում: Վստահ էի՝ Ալին էր կազմակերպել: Ճաշարանում ուտելը մեծ գումար չէր պահանջում, բայց՝ չունեի: Բոլորն էլ գիտեին սա: Այնպիսի անմիջականությամբ էին հրավիրում, որ ինձ բոլորովին վատ չէի զգում:

Մի տասն օրից հայրս արդեն ահագին մեծ գումար էր ուղարկել։ Կարողացա ինձ համար հագուստ գնել։ Կարճ ժամանակից սկսեցի աշխատել ու գումարի հետ կապված խնդիրներ էլ երբեք չունեցա։

Զարմացած էի. գաղտնի, իսկ ոմանք բացահայտ իրենց աջակցությունն էին հայտնում ու փորձում էին օգնել։ Գիտեի, իհարկե, որ ինձ հետ մտերմություն անողներից ոմանք հանձնարարություն են կատարում, բայց դա ինձ չէր խանգարում մարդկանց հետ շփումներում։ Թող նաեւ նրանք լինեն, խնդիր չկա։ Մարդկանց մեծամասնությունը լավն է։ Այս հանգամանքն ինձ համար միշտ շատ ավելի կարեւոր է եղել, եւ իմ գործողություններում սա եմ որպես ելակետ ունեցել։ Երբեք իմ հարաբերությունները մարդկանց հետ չեմ պայմանավորել մատնիչների հնարավոր գոյությամբ։ Իմ շրջապատում նրանց ներկայությունը համարել եմ ավելի քան բնական, հաշվի եմ առել նրանց ներկայությունը, բայց նաեւ ամեն ինչ նրանցով չեմ պայմանավորել։ Հեռու եմ եղել բոլորին կասկածելու ու բոլորից զգուշանալու սխալ կեցվածքից։

Այն տարիներին այդ կողմերում ջինսի տաբատ չկար, իսկ ես ուզում էի ջինս գնել։

-Միայն Մագադանում են ջինս վաճառում, Մագադան գնացող պետք է ճարես, - ասում էին տեղյակները։

Մի օր էլ գալիս է հանրակացարանի հերթապահ կինը ու թե.

-Հայրենակիցդ է եկել։ Նա նախկինում այս հանրակացարանում է ապրել։ Վարորդ է եւ հաճախ Մագադան է գնում։ Ջինսի համար կարող ես նրա հետ պայմանավորվել։

Մտնում եմ այն սենյակը, որտեղ հայրենակիցս է։ Սենյակում հավաքված խմում են։ Ներկաներից ոմանց արդեն ճանաչում եմ։ Ծանոթանում եմ։ Զրուցում ենք հայերեն։ Ասում է, որ Երեւանից է՝ Նորքի զանգվածից։ Ասում է, որ մեկ շաբաթից նորից գալու է եւ ինձ համար ջինս, իհարկե, կարող է բերել։ Տալիս եմ գումարը։ Պայմանավորվում ենք հանդիպել նույն սենյակում մեկ շաբաթ անց, եւ ես դուրս եմ գալիս։ Սա մեր վերջին հանդիպումն էր։ Նա չեկավ ոչ մեկ շաբաթից, ոչ մեկ ամսից եւ ոչ էլ մեկ տարուց։ Միակ մարդը, որ այդ տարիներին խաբել է ինձ՝ եղել է այս հայը։

Յուրաքանչյուր ամսվա 1-ին, 8-ին, 16-ին եւ 24-ին ես պետք է ավանում գտնվող միլիցիայի բաժին ներկայանայի, իսկ բաժնի պետը՝ միլիցիայի կապիտանը, պետք է աքսորյալի իմ գրքույկի մեջ ստորագրեր, որ ես կամ ու ներկայացել եմ։ Ինձ հետ ծանոթանալուց ու որոշ ժամանակ շփվելուց հետո միլիցիոները մի օր ասաց.

-Արի պայմանավորվենք՝ դու այնպես ես անում, որ քո պատճառով ինձ վրա խոսակցություն չգա, իսկ ես քեզ որեւէ բանով չեմ խանգարում։ Ապրիր՝ ոնց ուզում ես։

Տղամարդկային մեր այս պայմանավորվածությունը մինչեւ վերջ գործեց։

1985-ի դեկտեմբերին ավանի բոլոր բնակիչներին նոր տարվա համար խմիչքի կտրոններ էին բաժանում։ Այդ տարիներին խորհրդային երկրում հարբեցողության դեմ պայքար էր

ընթանում, եւ սպիրտային խմիչք գնելը դժվար էր։ Յուրաքանչյուր չափահաս մարդու տալիս էին մեկական շիշ օղի կամ կոնյակ (ըստ ցանկության), գինի եւ շամպայն։ Բոլոր կտրոն ստացողները հերթով գալիս ու հարցնում էին ինձ.

-Քեզ չե՞ն կանչելու կտրոնի համար։

Մոտեցավ դեկտեմբերի վերջը։ Ինձանից բացի, բոլորը կտրոններ ունեն։ Խանութի աշխատակցուհին ինձ տեսնելով, երբ խանութում մարդ չէր լինում, զայրացած անիծում էր կտրոն հորինողին էլ, ինձ կտրոն չտվողին էլ։ Ադմինիստրացիայի մի աշխատակցուհի շշնջում է ականջիս՝ «ընկերներդ» են հանձնարարել։ «Ընկերներս» չեկիստներն են։ Այս տարբերակով էին չեկիստներին անվանում նրանց մասին ինձ հետ բոլոր զրուցողները։ Անգամ՝ պաշտոնյաները։ Երբ մոտեցա տեղամասի պետին, որտեղ աշխատում էի, ու խնդրեցի, որ ինձ բուլդոզերիստի կուրսերի ուղարկի, ասաց՝ ընկերներիցդ թույլտվություն բեր։ Բայց մի քիչ մտածելուց հետո ավելացրեց.

-Կարո՞ղ է մերժեն։

Ասացի, որ մերժումն, իհարկե, ավելի հավանական է, եւ նա, առանց աչքը թարթելու պատասխանեց.

-Դե՛ որ այդպես է, մենք նրանց փաստի առաջ կկանգնեցնենք, - ու ինձ կուրսերի ուղարկելու որոշում կայացրեց։

Արդեն վճռել եմ՝ նոր տարվա օրերին չկամ այս ավանում։ Ինքս ինձ բացակա եմ դնելու։ Փակելու եմ դուռս ու դուրս չեմ գալու։ Դեկտեմբերի 31-ի երեկոյան, փառք Աստծո, սենյակակիցս արձակուրդ էր գնացել, եւ ես մենակ էի, ներսից փակեցի դուռս, վերցրի մի հետաքրքիր գիրք ու պառկեցի մահճակալիս։ Գիշերվա ժամը 12-ից մի աներեւակայելի աղմուկ սկսվեց հանրակացարանում։ Բոլորը բոլորի դռներն էին ծեծում ու շնորհավորում իրար։ Լսում եմ՝ մոտենում են իմ դռանը։

-Բաց արա, գիտենք, որ ներսում ես։

Երկար դիմադրել չէի կարող։ Բացեցի դուռս, ու մի 7-8 հոգի ներխուժեցին՝ բերելով իրենց հետ ե՛ւ գինի, ե՛ւ կոնյակ, ե՛ւ շամպայն, ե՛ւ ուտելիք։ Ասացին, որ դեռ մի քանի օր առաջ են որոշել, որ այս նոր տարին իմ սենյակում ու ինձ հետ են նշելու։ Չեկիստները վճռել էին ինձ ապացուցել, որ այս հասարակության շրջանում ես յուրային չեմ, որ մեկուսացված եմ լինելու, որ օտար եմ, բայց, ինչքան էլ տարօրինակ է՝ այդ նոր տարին դարձավ երեւի իմ ողջ կյանքի ամենաաներեւակայելի տոնակատարությունը։ Էլ երբեք նման բան չի եղել։ Երգեցին, պարեցին ու ուրախացան իմ սենյակում, ապա հայտարարեցին, որ բոլորով գնում ենք ակումբ։ Ես նման զվարճանքներ երբեք չեմ սիրել ու չեմ էլ սիրում, բայց դիմադրելն անիմաստ էր՝ իմ չեմուչումները նրանց ծրագրերին խանգարել չէին կարող։ Մինչ այդ՝ «ակումբ» կոչված այդ վայրը մտնում էի միայն գրադարանի համար։ Գնացինք։ Ծանոթ-անծանոթները մոտենում ու շնորհավորում էին։ Այնտեղից հյուր տարան ինձ։ Հայտնվեցի տարբեր բնակարաններում։ Խմած ու չխմած, հարբած ու դեռ չհարբած մարդկանցով շրջապատված

անցավ իմ այդ գիշերը։ Միայն հաջորդ օրվա կեսօրին կարողացա իմ սենյակ վերադառնալ ու մի քիչ հանգստանալուց հետո նոր հյուրերի սկսեցի ընդունել։

Նոր տարվա այս բուռն իրադարձություններն անսպասելի էին ինձ համար, իսկ իմ կուրատոր չեկիստների համար ոչ միայն անսպասելի, այլեւ լուրջ նախազգուշացում էին։ Իրենք լավ չեն աշխատում։ Ես ինձ լավ եմ զգում աքսորավայրում, մարդիկ ինձ լավ են վերաբերվում, եւ ինձ մեկուսացնելու իրենց ծրագրերը տապալվում են։ Հունվարի տոներից հետո ՊԱԿ երիտասարդ աշխատակիցներից մեկը շաբաթը մեկ Բուրկանդիա էր գալիս ու կադրերի բաժնի պետի սենյակում նստած՝ երկարատեւ զրույցներ էր վարում ինձ շրջապատող մարդկանց հետ։ Նրանցից ոմանք այդ զրույցների մասին լռում էին, իսկ ոմանք՝ տարբեր առիթներով, հատկապես երբ մի քիչ խմած էին լինում, պատմում էին։ Ավելի համարձակները դա անում էին հրապարակավ։ 1986 թվականն էր, նոր-նոր թափ էր առնում գորբաչովյան «պերեստրոյկա» ու «հրապարակայնություն» կոչվող գործընթացը, մարդիկ սկսում էին կռահել, որ երկրում իրավիճակ է փոխվում։ Ինձ հետ նույն բուլդոզերի վրա աշխատող ուկրաինացի Նիկոլայ Գոլովկոյին, որը կոմունիստական կուսակցության շարքերն ընդունվելու դիմում էր գրել, կանչել էին զրույցի։ ՊԱԿ աշխատակիցն առաջարկել էր պատմել, թե ես ինչ եմ ասել իրեն՝ երկրում տիրող կարգերի մասին, իսկ Կոլյան հակադարձել էր, թե ինքը տեղյակ չէր, որ կոմունիստական կուսակցության շարքերն ընդունվելու համար պետք է մատնությամբ զբաղվի։ Եւ նա հուզված ու վրդովված սրա մասին պատմում էր մարդկանց։

Վադիմ անունով մոսկվացի մեկը, որը հերթափոխի պետ էր, նոր տարվա տոնակատարությունների ազդեցության տակ խոստովանեց, որ համաձայնել է իմ մասին տեղեկություններ փոխանցել նրանց։ Ե՛ւ նրան, ե՛ւ այլոց, որոնք ինձ խոստովանել են սրա մասին, ոչինչ չեմ ասել։ Նույնիսկ՝ այլեւս նման բան չանելու խորհուրդ չեմ տվել։ Չեմ էլ փորձել նրանց խոստովանությունը հօգուտ ինձ օգտագործել։ Լսել ու լռել եմ։ Թողել եմ, որ իրենք որոշեն։ Նաեւ՝ հարաբերություններս չեմ խզել նրանց հետ։ Մի օր Վադիմը որոշում է զանգահարել ՊԱԿ-ի այդ նույն երիտասարդ աշխատակցին եւ տեղեկացնել, որ իրենից այլեւս մատնագրեր չսպասի։ Չեկիստը Վադիմին խնդրում է հապշտապ վճիռներ չկայացնել եւ խոստանում է մի քանի ժամից լինել Բուրկանդիայում ու անձամբ զրուցել նրա հետ։ Դեպի Բուրկանդիա ճանապարհին նրանց ավտոմեքենան ձորն էր գլորվել, իսկ ՊԱԿ-ի երիտասարդ աշխատակիցը մահացել էր։

Աքսորավայրս այսօր՝ ավան-ուրվական:

Երիտասարդ աշխատակցի ողբերգական մահը ՊԱԿ-ում ինչ որ բան էր փոխել: Նրանք երեւի վճռել էին, որ ես եմ կազմակերպել Վաղիմի հրաժարումը եւ զանգը: Մի քանի օրից միլիցիոներն ասաց, որ ինձ ՊԱԿ են կանչում: Գնացի: Այնտեղ ինձ պաշտոնապես տեղեկացրին, որ ես ավանի բնակիչների շրջանում հակախորհրդային ագիտացիա-պրոպագանդայով եմ զբաղվում, որ «ազդում եմ» մարդկանց վրա, իսկ թե ինչպես եմ ազդում՝ չասացին: Փոխարենը խոստացան, որ այսուհետ խիստ են լինելու, եւ իմ յուրաքանչյուր քայլը փաստաթղթավորվելու է: Հասկացա. առջեւում բարդություններ են սպասվում:

1986 թվականն սկսվեց ու ընթացավ խնդրառատ: Մարդկանց հետ մտերմությունս չեկիստներին ցանկալի չէր, բայց նրանք անկարող էին որեւէ բան անել: 1986-ին խորհրդային մարդը բոլորովին նման չէր 1985-ի կամ 84-ի մարդուն: Դեպքերը շատ արագ էին զարգանում: Ինձ հասած կցկտուր տեղեկություններից արդեն եզրակացրել էի, որ իմ նկատմամբ նոր գործ է սարքվում ու նույն՝ «հակախորհրդային գործունեություն» հոդվածով: Սա նշանակում էր, որ ազատ չեմ արձակվելու եւ եթե դատապարտվեմ, ապա ճանաչվելու եմ հատուկ վտանգավոր ռեցիդիվիստ ու ուղեւորվելու եմ նույն Պերմի մարզի 36-րդ գաղութ, բայց՝ «զոլավորների» բաժին ու երկար, անչափ երկար ժամանակով: Ինչքան էլ որ դեպքերն արագ էին զարգանում, բայց 1986-ի առաջին ամիսներին ոչ ոք չէր կարող կռահել, թե ինչ փոփոխություններ են

լինելու։ Սովետը դեռ հավերժ էր թվում, իսկ իմ կրկին դատապարտվելու հնարավորությունն՝ ավելի քան հավանական։

1986-ի մայիսին 49 տարեկանում վախճանվել էր հայրս։ Հարազատներս Երեւանում դիմել էին ՊԱԿ-ի ղեկավարներին, որպեսզի հորս թաղմանը մասնակցելու համար ինձ մի քանի օրով Հայաստան գալու իրավունք տրվի։ Հորեղբայրս պատմում էր, որ ստացել են ոչ թե կտրուկ, այլ շատ կոպիտ մերժում։ Մոտավորապես՝ «էլ Վարդանի հարցով մեզ չդիմեք» տարբերակով։ Նույն շրջանում Պարույր Հայրիկյանը, որ աքսորի էր Իրկուտսկի մարզում, աքսորից Հայաստան արձակուրդ էր եկել, ապա նաեւ աշխատանքային գործուղում՝ Իրկուտսկի համապատասխան գործարանից Երեւանի գործարան։ Ահա այսպիսի տարբերակված մոտեցումներ կարող էին ցուցաբերել չեկիստները։

Մարդիկ կային, որ առանց քննարկման կատարում էին նրանց հանձնարարությունները։ Ինձ ե՛ւ անիմաստ ու անտեղի վեճերի մեջ էին ներքաշում, ե՛ւ կռիվներ էին հրահրում, եւ, որ ավելի կարեւոր էր՝ նորմալ մարդկանց հետ հարաբերություններս էին փորձում փչացնել։ Հիմա ես պետք է կենտրոնանամ ու լարեմ հիշողությունս այս կարգի մարդկանց ու սրանց սարքած ծուղակներն ու սադրանքները հիշելու ու պատմելու համար, իսկ նորմալ մարդկանց, որոնք իմ շրջապատում միշտ էլ՝ իմ ողջ կյանքի ընթացքում, նաեւ աքսորավայրում, շատ են եղել, հիշում եմ առանց ավելորդ ջանքերի։ Սա է պատճառը, որ իմ այս ողջ պատմությունը՝ մի քանի բացառությամբ, լավ մարդկանց մասին է։ Վատերը շատ չեն ու չկան։ Ասենք՝ նրանց հիշելու ու նրանց մասին պատմելու մեծ ցանկություն էլ չկա։

Ինչպես Խորհրդային միության ողջ տարածքում, այնպես էլ իմ աքսորավայրում կազմակերպվում էին շաբաթօրյակներ, խաղաղության ֆոնդի համար կամավոր-պարտադիր գումար էր հավաքվում, անիմաստ ժողովներ էին հրավիրվում ու նման այլ բաներ։ Մեր խորհրդային անցյալը հիշողներն այս սովորույթները չհիշել չեն կարող։ Ես, բնականաբար, հրաժարվում էի մասնակցել շաբաթօրյակներին, խաղաղության ֆոնդին ոչ միայն գումար չէի տալիս, այլեւ դրա մասին գրավոր հայտնում էի ավանի ադմինիստրացիային, որ հանկարծ իմ հաշվից այդ նպատակով գումար չգանձեն, ժողովներին չէի մասնակցում։ 1986-ի ապրիլի վերջին վթարվեց Չերնոբիլի ատոմակայանը։ Ինչքան էլ սովետները ցանկանում էին քողարկել, բայց սրա մասին հրապարակված առաջին տեղեկություններն արդեն լուրջ աղետի մասին էին վկայում։ Բացվեց Չերնոբիլի ֆոնդ, եւ մարդկանցից սկսեցին հօգուտ այդ ֆոնդի 3-ական ռուբլի գանձել։ Ես դիմում գրեցի մեր լեռնագործական ընկերության տնօրենի անունով եւ խնդրեցի, որ հօգուտ այդ ֆոնդի գանձվի ապրիլ ամսվա ողջ աշխատավարձս։ Դիմումը տվեցի քարտուղարուհուն ու գնացի իմ գործին։

Մի քանի օրից տեղի է ունենում մի բան, ինչի մասին պատկերացնել չէինք կարող ոչ ես, ոչ «իմ ընկեր» չեկիստները եւ ոչ էլ ինձ շրջապատող մարդիկ։ Մի աներեւակայելի տրագիկոմեդիա։ Այ, այս կարգի դեպքերի մասին է, որ ասում են՝ անակնկալ։ Լույս է տեսնում նրանց շրջանային թերթը՝ մեր ավանի մասին մի մեծ հոդվածով, որտեղ, ի թիվս այլ ապուշությունների, մոտավորապես գրված էր. «Իսկ կոմերիտական եւ աշխատանքի մեջ մշտապես աչքի ընկնող Վարդան Հարությունյանն իր մեկ ամսվա ողջ աշխատավարձն է փոխանցել Չերնոբիլի ֆոնդին»։ Ստացել են տեղեկությունն այն մասին, որ այսինչ ավանում այսքան գումար է հավաքվել Չերնոբիլի ֆոնդին, իսկ մեկն էլ ողջ աշխատավարձն է տվել ու,

առանց որեւէ բան ճշտելու, գործի են անցել։ Խորհրդային շրջանին խիստ յուրահատուկ ոգով՝ ուռա՛, ընկերներ, մեզ մոտ ամեն ինչ ավելի քան լավ է։ Թերթը ձեռքից ձեռք է անցնում։ Բոլորը կատակում ու ծիծաղում են։ «Կոմերիտական Վարդան Հարությունյան»՝ խայտառակություն։ Մի բան պետք է անել։ Նրանց հեգնելու ու ծաղրելու փայլուն հնարավորություն էի ստացել։ Մի քանի ժամով փակվեցի իմ սենյակում ու մի մեծ պատասխան հոդված գրեցի։ Ափսոս, որ չեմ պահել այդ հոդվածիս կրկնօրինակը։ Իրոք, լավ բան էր ստացվել։ Այնտեղ մեջբերումներ կային Քաջարի զինվոր Շվեյկից, դրվագներ իմ հակախորհրդային կենսագրությունից, կոմերիտմիության մասին իմ պատկերացումներից։ Նյութը ե՛ւ սուր էր ստացվել, ե՛ւ տեղին, ե՛ւ լի էր խայթոցներով։ Ես, իհարկե, գիտեի, որ չի տպագրվելու։ Դրա պատճառով էլ հավաքեցի հանրակացարանում ապրող մարդկանց, ասենք՝ մի 10-15 հոգու, սա լիովին բավարար էր, որ ոչ միայն Բուրկանդիա ավանը, այլեւ ողջ Սուսումանի շրջանը, որի տարածքը 47 000 քառակուսի կիլոմետր էր եւ այդ տարիներին ուներ մոտ 46 000 բնակիչ, տեղեկանար իմ պատասխան հոդվածի մասին։ Հավաքեցի ու կարդացի հոդվածս։ Մարդիկ լսում ու ծիծաղում էին հաջողված սրամտությունների վրա։ Եղան նույնիսկ կրկին կարդալու առաջարկներ, ինչը տեղում ի կատար ածեցի, ապա՝ տեղեկացրի, որ հաջորդ օրը տանելու եմ թերթի խմբագրություն։ Տարա։ Սարսափած խմբագիրը ոչինչ չասող ապակյա աչքերով ինձ էր նայում։ Ես պատկերացնում եմ, թե այս կապակցությամբ չեկիստներն ինչ լափ են թափել նրանց գլխին։

Աքսորավայրում շատ էի նամակ ստանում։ Երեկոները հիմնականում զբաղված էի նամակներին պատասխանելով։ Ստանում էի նամակներ տարբեր աքսորավայրերում գտնվող իմ ընկերներից։ Շատ էի ստանում Մոսկվայից։ Ինձ անչափ ուրախացնում էին կալանավայրերում գտնվող ընկերներիս ընտանիքների անդամների նամակները։ Ստանում էի փաթեթներ, ծանրոցներ։ Գրքեր էի պատվիրում, որ սիրով գնում ու ուղարկում էին ինձ։ Իսկ Հայաստանից ինձ գրում էին միայն իմ հարազատները։

Այնտեղ ծանոթացա իմ ապագա կնոջ՝ Օլյայի հետ։ Նա ինձ Դավիթ անունով հոյակապ որդի պարգեւեց։ Իսկ Դավիթն իր հերթին՝ շատ տարիներ անց Աննա անունով սքանչելի հարս եւ Եվա ու Նելլի անուններով չքնաղ թոռնուհիներ պարգեւեց։ Ահա, այսքան հարուստ ու կյանքից գոհ պատմում եմ իմ այս պատմությունը։

Չեկիստները վերջապես կարողացան ստանալ ինձ վրա բոլոր օրինական հիմքերով քրեական գործ հարուցելու առիթ։ Առիթն էլ, կարելի է ասել, ես տվեցի։ Աշխատողները վրդովված էին, որ իրենց ուտելիք չեն բերել ու սոված են թողել։ Առաջարկեցի գործադուլ անել։ 1986-ի աշունն էր։ Մեկ օր չաշխատեցին։ Չեկիստները, բնական է, իմացան, որ նախաձեռնությունն իմն էր։ Գործադուլի մասնակիցներից ոմանք տվել էին իմ «հայտարարությունների» ու իմ արած «կոչերի» կապակցությամբ անհրաժեշտ բացատրություններ։ Գործը պատրաստվում էր մեծ արագությամբ։ Արդեն սպասում էի, որ կկալանավորեն ինձ։ Բայց ժամանակները փոխվում էին, ու ամեն ինչ չէր, որ կարող էր ընթանալ չեկիստների նախանշած հունով։ Դանդաղ ընթացքով մոտենում էր ու վերջապես տեղ հասավ ու հաստատվեց 1987 թվականը։ Երկրում իրավիճակ էր փոխվում։ Գորբաչովը խոստացավ միջազգային հանրությանը, որ սովետում քաղբանտարկյալներ չեն լինելու, իսկ եղածներն էլ, բավարար հիմքերի առկայության դեպքում, ազատ կարձակվեն։

Սկսվեց մի նոր գործընթաց։ Ինձ այցելության եկան այն նույն չեկիստները, որոնք մեկ-երկու ամիս առաջ ինձ համար նոր կալանավորման հիմքեր էին նախապատրաստում։ Խոսեցին իմ արած գործադուլի կոչերից, հակախորհրդային ագիտացիայից, բայց նրանց զրույցի մեջ արդեն թշնամություն չկար։ Ավելի շատ հետաքրքրվում էին, թե ազատ արձակվելուց հետո իմ ապագան ինչպես եմ պատկերացնում։ Ես միայն մեկ հետեւություն կարող էի անել՝ ինչ-որ բան է փոխվել, բայց թե ինչ՝ կռահելը դժվար էր։

Մեկ ամիս էլ չէր անցել այս զրույցից հետո, երբ իմ աշխատավայր, որը մոտ 20 կմ հեռու էր մեր ավանից, իրենց «Վոլգայով» եկան չեկիստները։ Ղեկին նույն այն չեկիստն էր՝ ՊԱԿ-ի պետի տեղակալը, որն ինձ պարտքով 5 ռուբլի էր տվել։ Ասացին, որ շտապ պետք է դադարեցնեմ աշխատանքը եւ իրենց հետ ավան գնամ։ Այնքան յուղոտ ու կեղտոտ էի, որքան յուղոտ ու կեղտոտ կարող է լինել անսարք բուլդոզերի վրա աշխատող բուլդոզերիստը։ ՊԱԿ-ի աշխատակիցը ջուր էր լցնում, որ ես լվացվեմ, իսկ «սովետական ժողովուրդը»՝ իմ աշխատանքային ընկերները, մի 20-30 հոգի, հեռվում կանգնած դիտում էր այդ տեսարանը։ Զրույցի ու քննարկումների լավ թեմա էր՝ այլախոհի լվացվելու համար չեկիստը ջուր է լցնում։

Ավանում հասկացա չեկիստների շտապողականության պատճառը։ Այնտեղ նստած մեզ էին սպասում մարզային դատախազության աշխատակիցները։ Հնարավոր է նույնիսկ մարզի դատախազը լիներ։ Սովորական հարցուփորձից հետո նրանց ղեկավարն առանց ավելորդ նախաբանի ասաց, որ բոլոր քաղբանտարկյալներին էլ այս շրջանում այցելում են, եւ տեղեկացրեց՝ եթե ներման խնդրանքով դիմեմ խորհրդային իշխանությանը, ապա անհապաղ, մի քանի օրվա ընթացքում ազատ կարձակվեմ։ Առանց երկար մտածելու մերժեցի։ Երբեք եւ ոչ մի պարագայում ներում չեմ խնդրելու՝ ասացի ու նրանց հաջողություն մաղթելով հեռացա։ Այս այցելությունը երեւի 1987-ի մարտի սկզբին էր։ Մի 10-15 օր հետո կրկին եկան չեկիստները, բայց արդեն առանց դատախազների եւ տեղեկացրին, որ ներում գրելու պարտավորություն չունեմ, ընդամենը պետք է խոստում գրեմ, որ հակախորհրդային գործունեություն չեմ ծավալի եւ՝ վերջ։ Սա բավարար է լինելու, որ ես ոչ միայն ազատ արձակվեմ, այլեւ իմ նկատմամբ սկսված նոր քրեական գործը փակվի։ Կրկին մերժեցի։ Երրորդ անգամ եկան մարզային դատախազությունից։ Այս այցելություններին ու իմ մերժումներին հաջորդում էին տարատեսակ սադրանքները։ Անգամ ծեծկռտուք եղավ։ Ինձ պետք էր դրա մասին տեղեկություն հաղորդել դրսի աշխարհ։ Վստահ էի, եթե տեղեկությունը հրապարակվի՝ կյանքս հանգիստ ու անվտանգ կդառնա։ Ձկնորս ծանոթներիցս մեկին խնդրեցի, որ ինձ համար կարմիր ձուկ բերի։ Մագադանում շատ կա, իսկ երկրի եվրոպական մասերում ե՛ւ չի ճարվում, ե՛ւ թանկ է։ Իսկական նվեր է։ Նախապես պատրաստված նամակս խցկեցի դեռ ահագին թարմ ձկան մեջ եւ խնդրեցի ծանոթիս, որ աղ դնի, ինչպես որ անում են ձկնորսները։ Այս դեպքում ամենաուշադիր զննողն անգամ ոչինչ չէր նկատի։ Միայն ձուկը կտրելուց հետո նամակս կհայտնաբերվեր։ Նամակիս հայտնաբերումը չէր վախեցնում ինձ։ Ուղարկում էի 50/50 հավանականությունն աչքիս առաջ ունենալով։ Ընկերներիցս շատերն էին համաձայնել խորհրդային իշխանություններին ներման խնդրագրով դիմելու ու ազատ արձակվելու առաջարկին։ Հաշված մարդիկ էին հրաժարվել։ Ես այդ քչերից էի։ Համաձայնվողներից էին նաեւ Անդրեյ Շիլկովը եւ Ալեքսեյ Սմիրնովը։ Ձկներն ուղարկեցի Ալեքսեյ Սմիրնովի հասցեով։ Ալեքսեյը ձկներից մեկը վերցրել էր, մյուսը տվել էր Անդրեյին։ Ու, ինչպես շատ ավելի ուշ ինձ պատմել է Ալեքսեյը, շնչակտուր գալիս է Անդրեյը եւ հայտարարում.

-Рыба была затарена.

Նամակս հրապարակվեց այդ օրերին Մոսկվայում նոր հրապարակվող «Гласность» հանդեսում, ապա՝ վերահրապարակվեց բազմաթիվ լրատվամիջոցներում, զարմանալի է, անգամ՝ եվրոպական ու ամերիկյան հայկական մամուլում: Այս հրապարակումը վերջ դրեց իմ նկատմամբ սկսված բոլոր ոտնձգություններին: Անկասկած համապատասխան տեղից ասել էին՝ հանգիստ թողեք: Ահա իմ այդ նամակը.

«1987 թ. գարնանը (մարտին) ինձ մոտ եկան Մագադանի մարզի Սուսումանի շրջանի ՊԱԿ-ի աշխատակիցները: Առաջարկեցին գրել նամակ-խոստում այն մասին, որ ապագայում կապրեմ խորհրդային օրենքներին համապատասխան՝ չխախտելով դրանք, եւ ազատություն ստանալ: Ես հրաժարվեցի: Երկու օր անց ինձ մոտ եկան երկուսը եւ, ներկայանալով որպես մարզային դատախազության աշխատակիցներ, առաջարկեցին նույն բանը, երկար համոզում էին, ասում էին, որ ձեւակերպումները կարեւոր չեն, որ հետո ընդհանրապես ինձանից դատվածությունը կհանեն, բայց ես կրկին հրաժարվեցի: Սրանից հետո ՊԱԿ-ի աշխատակիցները եւս մեկ նման առաջարկ արեցին: Հերթական անգամ մերժում ստանալով, ընդհանրապես դադարեցին դրա մասին խոսել, փոխարենը սկսվեցին գժտություններ աշխատանքի վայրում. վեճ ու կռիվ սադրեցին, չէին վճարում աշխատանքիս դիմաց: Ստիպված եղա տեղափոխվել այլ աշխատանքի:

Ինչու՞ հրաժարվեցի գրել: Որովհետեւ իմ քաղաքական համոզմունքները հակախորհրդային են, եւ, բնականաբար, շարունակելով ապրել ԽՍՀՄ-ում՝ ես չեմ կարող լռել եւ ենթարկվել խորհրդային բոլոր օրենքներին, չընդունելով դրանցից շատերը: Քանի դեռ ապրում եմ ԽՍՀՄ-ում, ես կունենամ հակասություններ իշխանությունների եւ օրենքների հետ: Խոստանալ լռել՝ ես չեմ կարող, իսկ տալ սուտ խոստում եւ ազատություն ստանալուց հետո շարունակել պայքարը՝ համարում եմ անպատվաբեր գործ:

Վերակառուցումը եւ հրապարակայնությունը համարում եմ անօգուտ եւ սուտ քաղաքական խաղ: Իմ նպատակների մեջ չի մտնում կոմունիստական հասարակության վերակառուցումը: Ես գտնում եմ, որ կոմունիստական հասարակարգը պետք է ոչ թե վերակառուցել, այլ վերածել ազատ, ժողովրդավարական հասարակության, եւ պետք չէ «մտցնել» հրապարակայնություն, այլ տալ կամ ավելի ճիշտ՝ հասնել ազատության: Հասնել երկրի քաղաքական կյանքի ժողովրդավարացման, որպեսզի երկրում կոմունիստական կուսակցության հետ միասին, լիովին ազատ գոյություն ունենան այլ կուսակցություններ ու կազմակերպություններ եւս:

Քանի դեռ Խորհրդային Միությունում գոյություն ունի մեկ կուսակցություն՝ կոմունիստների կուսակցությունը, խոսել ազատության, անգամ հրապարակայնության մասին՝ վաղ է: Կոմունիզմը չի ընդունում այլակարծություն, ցանկացած միջոցներով ճնշել է ու ճնշելու է ազատ միտքը: Պետք չէ մոռանալ, որ այսօր էլ քրեական օրենսգրքում գոյություն ունի 70 հոդվածը, իսկ Սահմանադրության մեջ՝ 47, 50, 51 հոդվածները, որոնք ազատություն են երաշխավորում միայն սոցիալիզմի եւ կոմունիզմի ամրապնդման նպատակ հետապնդողներին: Այլ նպատակներ ունեցող մարդը Խորհրդային միությունում

ինքնաբերաբար դառնում է օրինախախտ եւ կարող է բանտում հայտնվել: Այն, որ բոլոր այս եւ մյուս օրենքները մնում են ուժի մեջ, հաստատեց Գորբաչովը: Ֆրանսիական հասարակության հետ հանդիպման ժամանակ նա ասաց, որ երկրում ամեն ինչ արվում է սոցիալիզմի եւ սոցիալիստական ժողովրդավարության ամրապնդման համար, իսկ թե ինչ է նշանակում «սոցիալիստական ժողովրդավարություն»՝ աշխարհն արդեն գիտի: Նրա խոսքով՝ ԽՍՀՄ-ում «պայքար է մղվում նրանց դեմ, ում սոցիալիզմը դուր չի գալիս»:

Չկա եւ չի կարող խոսք լինել ԽՍՀՄ-ում ազատության մասին, քանի դեռ գոյություն ունեն վերը թվարկված հոդվածները եւ Գորբաչովի խոսքերը: Ես չեմ կարող ապրել ԽՍՀՄ-ում՝ չխախտելով խորհրդային օրենքները»:

1987-ի վերջերին կամ 88-ի սկզբին, հիմա արդեն լավ չեմ հիշում, Մոսկվայից ինձ առաջարկեցին հեռակա կարգով մասնակցել մարդու իրավունքների թեմայով կազմակերպված սեմինարին: Սիրով համաձայնեցի ու «Ազգային հարցը ԽՍՀՄ-ում» վերնագրով ելույթի տեքստ ուղարկեցի նրանց: Այդ տեքստի օրինակն, իմ ազատ արձակվելուց հետո, երբ արդեն Մոսկվայում էի, Ալեքսեյ Սմիրնովն ինձ տվեց, որն ինչ-որ հրաշքով պահպանվել է թղթերիս մեջ:

1988-ին՝ իմ ազատ արձակվելուց մի քանի օր առաջ, չեկիստները սիրով տեղեկացրին ինձ, որ պատրաստ են ինձ համար հայրենիք վերադառնալու ինքնաթիռի տոմս գնել: Կարգն այնպես էր, որ իմ տոմսն արդեն ես պետք է գնեի: Ես աքսորավայրում էի եւ աշխատում ու աշխատավարձ էի ստանում: Գումար էլ ունեի: Բայց նրանք, չգիտես ինչու, որոշել էին անել ինձ այդ «լավությունը»: Ես պետք է միայն տեղեկացնեի իմ երթուղին: Եւ տեղեկացրի՝ Մագադան-Մոսկվա-Կիեւ-Երեւան: Այնպես ստացվեց, որ նրանք իրենց հաշվին ինձ հասցրին աշխարհի ծայրն ու իրենց հաշվին էլ տուն վերադարձրին: Իմ մեջ նրանց նկատմամբ մեկ կաթիլ անգամ չարություն չի մնացել: Կարծում եմ՝ չի էլ եղել: